ԷՋՄԻԱԾԻՆ



Դ

2010

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Ապրիլ

2010
Ս. Էջմիածին

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Լրացաւ Հայոց ցեղասպանութեան 95 տարին: Մարդկութեան դէմ նիւթուած այդ յանցանքի սկիզբը չէր 1915-ը: 1915-ը նոր ընթացք, բեկում էր, երբ վերջնականապէս «ժամանակը դուրս սողաց շաւղից»: Ծրագրուած հալածանքներն ու կոտորածներն անհամեմատ շուտ են սկսուել եւ նոյնպէս կատարուել են քաղաքակիրթ Արեւմուտքի ուղեկցող հայացքի ներքոյ: Ողբերգական պատմութեան դարպտեւ այդ ճանապարհի մարդկութիւնն անցաւ առանց նշանակալից հոգեւոր նուաճումների. այսօր եւս մեծ տերութիւնները հետամուտ են ոչ թէ արդարութեան, այլ այսրոպէական շահի: Եթէ ոճիրը դատապարտել են՝ միայն խօսքով, հարեւանացի: Թուրքը մշտապէս օգտուել է նրանց լուռ աջակցութիւնից: Քանի դեռ պաշտօնական արեւմուտքը չի խոստովանում, չի դատապարտում եղեռնագործութիւնը՝ քաջալերուած թրքութիւնը մնալու է նոյնը: Այլապէս անբացատրելի են նրանց այսօրուայ պետութեան մեծամեծ ծախսերն ու ճիգերը՝ հերքելու անհերքելին: Ուժը կորցրած չէ ԺԹ. դարավերջին արուած հետեւեալ նկատումը. «Օսմանեան կառավարութեան բարի սովորութիւնն է՝ խեղաթիւրելով եղծել ճշմարտութիւնը, եղծել ջանալ մինչեւ անգամ ապացուցուած իրողութիւնները»: Ահաւասիկ, մերօրեայ Թուրքիայի առաջնորդներն «աչքակապուկ» են խաղում մարդկութեան հետ, ուրանալով Ցեղասպանութիւնը՝ առաջարկում են «ճշմարտութիւնը պարզելու նպատակով» ինչ-որ յանձնաժողովներ ստեղծել: Ուրացութեան այս երեւոյթին մասնակից ու յանցակից են բոլոր նրանք, ովքեր սատար են կանգնում ցեղասպանին: Չէ՞ որ ոճիրն ուրանալը կամ արդարացնելը նոյնպէս յանցանք է:

Սովորաբար վիրաւորական է համարւում անգլիական ասացուածքը՝ «Թուրքին կոխած տեղը խոտ չբուսնիր»: Աւելի շոյող չէ մեծն Հիւգոյի «Այստեղով թուրք է անցել» թեւաւոր խօսքը: Բայց ահա, երիտթուրք կուսակցութեան գործիչ Զիա Գեօք-Ալփը ոչ առանց հպարտութեան առաջին աշխարհամարտի նախօրէին գոհունակութեամբ է յիշել Վ. Հիւգոյի խօսքը. «Ես պարտաւոր եմ ոչնչացնել ամեն բան, չթողնելով քարը քարի վրայ, ո՛չ կանգուն ծառ եւ ո՛չ իսկ կանաչ տերեւ նրա վրա: Ես պարտաւոր եմ այնպիսի աւերակներ թողնել ինձնից յետոյ, որ իրաքանչիւր տեսնող իրաւունք ունենայ ասելու՝ «Այստեղով թուրք է անցել»: Սա բազմաթիւ ապացոյցներից մէկն է, որ անժխտելի է կացուցանում եղեռնագործութեան ծրագրուած լինելը: Սոյն մտայնութեան կրողները զանգուածային բնաջնջում կազմակերպած դահիճներին փասնամեակներ անց ազգային հերոս հռչակեցին: Հանգամանք, որ մարդ արարածի համար պարզապէս անհասկանալի է:

Բարեբախտաբար այժմ բոլոր թուրքերը չէ, որ այսպէս են մտածում: Բոլորը չէ,

որ ժխտում են Յեղասպանութիւնը: Ժամանակի հետ, թէպէտ դանդաղ, աւելանում է արդարամիտ, իրերն իրենց անունով կոչելուն հետամուտ թուրք մտաւորականների թիւը: Ռագիպ Զարաքօլուն, օրինակ, 1915-ը բնութագրում է իբրեւ «մարդկային մտաւոր ուժի անհաւատալի ոչնչացում»: Նրան համակարծիք են շատերը եւ ընդունում են, որ կոտորածից ու խստրական վերաբերմունքից չեն վրիպել կայսրութեան միւս ժողովուրդները եւս (յոյն, ասորի, արաբ, եզդի...):

Դատական ճշմարտութիւնը, ի տարբերութիւն պետական պաշտօնէութեան, բազմիցս արձանագրել են աշխարհի մեծագոյն գրողներն ու մտաւոր գործիչները, իսկ, օրինակ, կարդինալ Մերսիյէն աւելի անմիջականօրէն է արտայայտել իր վերաբերմունքը. «Եթէ հայերն աշխարհն այրեն, ե՛ս պիտի ըլլամ իրենց թողութիւն շնորհողը»:

Եղեռնագործութեան 100-ամեակի նախադռանը շատ երկրներ պաշտօնապէս ճանաչել են երեւոյթն իբրեւ Յեղասպանութիւն: Այս հարընթացը աճման միտում ունի: Եւ մերօրեայ թրքական կառավարողները սրտնեղում են ամեն անգամ, երբ նոր մի պետութեան խորհրդարանի քննարկման է դրւում հիմնահարցը: Սրտնեղում են՝ պատճառաբանելով, թէ որեւէ պետութիւն իրաւունք չունի իրենց ներպետական խնդիրներին խառնուելու: Մինչդեռ ՄԱԿ միջազգային դատարանի եզրակացութեան տրամաբանութեամբ ցեղասպանութիւնն այնպիսի յանցանք է, որը կանխելը, խափանելը եւ պատժելն աշխարհի «ամեն մի պետութեան պարտականութիւնն է»՝ լինի այդ երկիրը միջազգային համապատասխան դաշնագրի մասնակից կամ ոչ: Կարեւոր չէ նաեւ՝ եղեռնագործութիւնը դաշնագրի կնքումից առաջ, թէ յետոյ է տեղի ունեցել: Սրանով լիովին հիմնաւորուած են շատ երկրների, կառաւարութիւնների արձագանքը եւ այլ խորհրդարանների ընդունած օրէնքները ցեղասպանութեան ժխտումը պատժելու վերաբերեալ:

Երկրի բնիկ ժողովուրդների բնաջնջման հրեշաւոր ծրագիրը ԺԹ. դարավերջին յղացել էր «Արիւնոտ սուլթանը»: Նրա ոճրապարտ հետնորդները՝ երիտթուրքերը, հպարտ էին իրենց արարքով, դժգոհում էին նրանից, սնափառօրէն շեշտելով, թէ Համիդը 37 տարում աւելի քիչ հայ է սպանել, քան իրենք 1915-ի առաջին ամիսներին: Հետաքրքիր է այս պնդումը նաեւ այնու, որ ըստ էութեան խոստովանում է ծրագրուած Յեղասպանութեան իրողութիւնը: Եւ եթէ Համիդի զոհերի թիւն ընդունենք 300.000 ու բազմապատկենք 5-ով, կստանանք 1.500.000, որ նուազագոյն լինելով՝ այնուամենայնիւ պաշտօնական պատմագրութեան համար խրտնեցնող է:

Իրար յաջորդող թրքական իշխանութիւնների ոճրամրցումից տոյժի իր բաժինն է ստացել իւրաքանչիւր արեւմտահայ ընտանիք: Բնաջնջուել են ամբողջ գերդաստաններ: Դրանցից են Հնձացեանները: «Պզտի դէպքերի» ժամանակ Կարինի ԺԹ. դարի նշանաւոր աշուղական ընտանիքը հերթական հարուածն ստացաւ: Աշուղ Նիմային գլխատուեց Կարնոյ Երկաթաղբիւր թաղամասի իր տան շեմին: Նրա որ-

դի Յակոբը կարողացաւ առժամայն փրկուել ջարդից՝ Ջաւախք փոխադրելով ընտանիքի մնացորդ դստերն ու թոռնուհիներին: 1918-ին «քեմալիստները» նրան եւս գլխատեցին, այս անգամ Ախալքալակում: Տողերիս գրողի տատիկը՝ տոհմի վերջին մոհիկան Հռիփսիմէ Հնձացեանը, միակն էր, որ վախճանուեց բնական մահով 1953-ին:

Ցեղասպանութիւնը, սակայն, չի հազենում լոկ մարդասպանութեամբ, հետեւողականորեն ոչնչացնում, բնաջնջում է նաեւ բնիկների մշակութային յուշարձանները, աղաւաղում, թրքացնում տեղանունները: 1916-ին, երբ հիմնական գործը կատարուած էր, Էնվերը հրամանով պարտադրում էր «օսմանեան երկրում հայկական, յունական, բուլղարական եւ այլ ոչ մահմեդական ժողովուրդներին պատկանող նահանգի, գաւառի, գիւղաքաղաքի, գիւղի սարի, գետի... եւ այլ բոլոր անունների վերածումը թրքերէնի»:

Եւ այսօր, երբ մարդկութեան համար գնալով աւելի ու աւելի ակնյայտ է դառնում Ցեղասպանութեան իրողութիւնը, ուրացողները հասկանում են, անշուշտ, որ դա ամոթալի փաստ է, «բոլոր ոճրագործութիւններից ամենաամօթալին», ինչպէս ձեւակերպել է Հենրիխ Ֆիրբիւխերը: Ճշմարտութիւնից խուսափողներն ու վրիպածները խոստովանելո՛վ միայն կարող են հասնել բնականոն կեանքի, ազատուել բարդոյթներից, անհանգիստ տագնապներից: Ուստի նրանց միակ ճանապարհը Աւետարանի մատնանշածն է. «Ծանիջիք զճշմարտութիւն, եւ ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ» (Յովհ. Ը 32): Ճանաչեցէ՛ք ճշմարտութիւնը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ
(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 4 ապրիլի 2010 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Հաւատի բարի մարտը մղիր եւ պինդ կառչիր
յաւիտենական կեանքից, որին կանչուեցիր»
(Ա Տիմ. Զ 12)

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Քրիստոսի սուրբ եւ հրաշափառ Յարութեան տօնը վերստին խնդութիւն եւ ուրախութիւն է բերել մեր սրտերին, ցնծութիւն՝ բոլոր քրիստոնեաներին, ովքեր Տիրոջ փրկագործութեամբ կանչուած են յաւիտենական կեանքի: Այսօր օրհնաբանում ենք յարուցեալ Փրկչին եւ յուսավառ հոգով ընդունում կեանքի յաղթանակի եւ մարդկութեան փրկութեան աւետիսը:

Կեանքի յաղթանակը մահուան դէմ հնարաւոր դարձաւ Աստուծոյ մարդասիրութեամբ, Աստուծոյ Որդու՝ մարդկութեան Փրկչի յանձն առած չարչարանքներով, խաչելութեամբ եւ յարութեամբ: Պիղատոսի անիրաւ դատի ընթացքում ամբոխը Քրիստոսի փոխարէն նախընտրեց աւազակ Բարաբբային՝ խաչելութեան մատնելով Աստուածորդուն: Անմեղի փոխարէն ընտրուեց մեղաւորը, արդարի փոխարէն՝ չարագործը, որովհետեւ իրենց գործերը չար էին, որովհետեւ ով չարիք է գործում, ատում է լոյսը (հմմտ.՝ Յովհ. Գ 19-20): Խաչի մոտ Քրիստոսին հաւատացողներն ու հետեւորդները ողբում էին, մինչ շատերը ծաղրում էին Նրան՝ ասելով. «Եթէ Աստծու Որդի ես, իջիր այդ խաչից... եւ... կհաւատանք» (Մտթ. ԻԷ 40-42): Խաչից չիջաւ երկնային Հօր ծոցից աշխարհ եկած, մարդացած ու մահկանացու դարձած Բարերար մեր Տէրը, այլ գերեզմանից յարութիւն առաւ, որպէսզի նորոգի մարդկային բնութիւնը եւ պարգեւի յաւիտենական կեանքի շնորհը: Ահա բաց են յաւիտենութեան դռները, եւ կանչուած ենք ժառանգորդը լինելու երկնքի արքայութեան՝ Աստուծոյ մշտագոյ ներկայութիւնը ունենալու ուրախութեանն ու

երանութեանը: Առանց երկիւղելու գնանք Նրա մոտ, ով Տէրն է կեանքի եւ գթառատ է ու սիրով լի: Մեղքերով բեռնաւորուած աշխարհը Նա կարող է նորոգել միայն մէկ խօսքով՝ տեսնելով զղջումը, վերափոխուելու ցանկութիւնն ու ջանքը մարդկային հոգիների: Նա գիտի մարդկանց սրտերը, նրանց խորհուրդները, գիտի բոլոր գործերի նպատակներն ու պիտի շնորհի իւրաքանչիւրին առ Աստուած ունեցած հաւատի եւ յոյսի համեմատ: Այս վստահութեամբ է յարուցեալ Փրկչին տեսած առաքեալը հորդորում Յիսուս Քրիստոսով կառչած մնալ յաւիտենական կեանքի յոյսին եւ հաստատուն ու անզիջում մղել հաւատի բարի մարտը:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, աւետարանական խօսքի համաձայն՝ հաւատացեալներիս համար կեանքը այս աշխարհում հոգեւոր պատերազմ է, եւ իւրաքանչիւր քայլափոխին, ամեն մտածումի ու խօսքի մէջ անհրաժեշտ է, որ ընտրենք ճշմարիտն ու բարին, արդար գտնուենք միմեանց ու Աստուծոյ առջեւ, որ կեանքում միշտ փայլի տիրաւանդ սէրը: Հաւատի մարտում չկայ երկընտրանք, չկայ զիջում, քանզի այն պատերազմ է սատանայի դէմ, որ կամենում է մարդկանց կործանումն ու մահը: Սատանան թուացեալ յաղթանակեց, երբ Քրիստոս խաչուեց ու գերեզման դրուեց: Տիրոջ սքանչելի, անճառելի յարութեամբ, սակայն, կործանուեցին չարը եւ չարի իշխանութիւնը, քանզի Աստուծոյ կամքը մարդկանց փրկութիւնն է՝ շնորհուած Քրիստոսի յարութեամբ:

Քրիստոս յարուցեալ կեանքի ճանապարհն է, Քրիստոսով զօրութիւնն ունենք նորոգուելու եւ կեանքը բարեփոխելու: Ինչպէս Քրիստոսի երկրային կեանքը բարիք էր մարդկութեան համար, այդպիսին պիտի լինի Նրան հաւատացողի կեանքը, քանզի հաւատի ուղին այն առանձնայատուկ սխրանքն է, որով մարդիկ հրաւիրուած են աներկմտօրէն լինելու Աստուծոյ փրկարար կամքի իրականացնողները երկրի վրա, լինելու Քրիստոսի բուրմունքը Աստուծոյ առջեւ (հմմտ.՝ Բ Կորնթ. Բ 15):

Սիրելի՛ բարեպաշտ հաւատացեալներ, Քրիստոսի յարութիւնից մինչ այսօր շուրջ երկու հազար տարի մարդկութիւնն անցել է հասարակական, տնտեսական, գիտատեխնիկական զարգացման տարբեր հանգրուաններով, բայց արձանագրած բոլոր ձեռքբերումներով հանդերձ՝ բազմիցս թերացել է հաւատի բարի մարտը մղելու: Այսօր էլ յաճախ այս կեանքի բարիքները, ժամանակաւորը առաջնային են համարւում յաւիտենականից, այսօր էլ աշխարհը զերծ չէ պատերազմներից, աղքատութիւնից, անհաշտութիւններից՝ հասարակութեան մէջ, ընտանիքներում, միջանձնական յարաբերութիւններում: Եւ, ճշմարտապէս, չի լինի երբէք խաղաղութիւն, անխափան բարգաւաճում եւ խնդութիւն այնտեղ, որտեղ չի մղւում հաւատի բարի մարտը, որտեղ Քրիստոսի փոխարէն նախընտրում են Բարաբբային:

Մեր ժողովուրդը Քրիստոսին է ընդունել որպէս իր Տիրոջ ու Փրկչի եւ Նրան ապաւինած՝ դարերի մէջ բազում փորձութիւններ է յաղթահարել եւ իր համար փորուած գերեզմաններից հաւատքով յառնել: Քրիստոսի յարութեան խորհուրդը այսօր փառքով բարձրանում ու շողարձակում է հայ կեանքում, քանզի Հայոց Ցեղասպանութեան 95-րդ տարելիցը յիշատակում ենք ինքնիշխան հայոց պետականութեան եւ վերազարթօնք

ապրող Սփիւռքի իրականութեամբ: Այո՛, Ի. դարը մեր ժողովրդի ողբերգութեան, բայց նաեւ վերածնունդի դարը եղաւ: Ցեղասպանութեան գողգոթայից անցնելով, Սփիւռքում եւ Հայրենիքում անհուն զրկանքներ ու զոհողութիւններ յաղթահարած մեր ժողովուրդը վերընձիւղեց իր նոր կեանքը, շարունակեց ստեղծել եւ մնայուն ձեռքբերումներով այսօր քայլում է ժամանակին համընթաց: Քրիստոսին ապաւինած՝ մեր ժողովուրդը եղաւ հաւատարիմ խաղաղ ու բարօր աշխարհի յոյսին եւ հաւատաց ազատութեան ու արդարութեան յաղթանակին: Այս տեսիլքով ու վստահութեամբ պիտի շարունակենք պաշտպանել մեր արդար դատը, որն այսօր արձագանք է գտնում աշխարհի շատ ժողովուրդների սրտերում՝ թէեւ դեռեւս համընդհանուր ճանաչում չի գտել Հայոց ցեղասպանութիւնը: Պիտի շարունակենք մեր ջանքերը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան եւ նրա քաջարի ժողովրդի ազատ ապրելու ապրուածաշնորհ իրաւունքի եւ մեր երկիրը շրջափակումից դուրս բերելու համար:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ հայոց,

Այսօր եւս անհրաժեշտ է հաւատի բարի մարտը մղել, որպէսզի մեր կեանքում հաստատուն լինեն ապրուածպաշտութիւնը, սէրն ու համերաշխութիւնը, մնայուն՝ բարօրութիւնը, արդիւնաւոր՝ գործերը՝ յանուն մեր ներկայի եւ գալիքի: Այսօր մեր պատմութեան կարեւոր այն հանգրուանն ենք ապրում, երբ վերակերտւում ու բարձրանում է պետական եւ ազգային մեր կեանքը Հայրենիքում եւ Սփիւռքում, երբ ներկայացել են հնարաւորութիւնները մեր իղձերը մարմնաւորելու, յաղթանակի առաջնորդելու հայրենի երկրի զօրացմանը, ազգային նպատակների իրագործմանն ու մեր ժողովրդի առաջընթացին ուղղուած ջանքերը: Իւրաքանչիւր ոք իր ծառայութեան վայրում, իր գործունէութեան մէջ պիտի ընթանայ Աստուծոյ փրկարար կամքով եւ հայրենեաց սիրոյ ապրուածահաճոյ ճանապարհով, որ բարի արգասիքներ է բերում մեր կեանքին եւ մեզ սիրելի դարձնում Տիրոջը, քանզի ինչպէս յարուցեալ Քրիստոսին առաքեալը ճանաչեց ողջ մարդկութեան համար կրած չարչարանքների նշաններով, նոյնպէս Քրիստոս ճանաչում է մեզ՝ Իր հետեւորդներին, հաւատքի վկայութիւններով, հրաժարումով այն ամենից, ինչ հակառակ է ապրուածային կամքին՝ բարուն, արդարութեանն ու ճշմարտութեանը:

Սիրելիներ՛, իւրաքանչիւրիս համար է հնչում առաքեալի խօսքը. «Հաւատի բարի մարտը մղիր եւ պի՛նդ կառչիր հաւիտենական կեանքից, որին կանչուեցիր»: Հաւատարիմ մնանք մեր բարեպաշտ հայրերի քրիստոնէական սուրբ եւ արդար կեանքի ընտրութեանը: Ընտանիքում, անձնական յարաբերութիւններում եւ թէ ազգային կեանքին մեր մասնակցութեան մէջ պայծառ պահենք հաւատքի լուսաւոր ջահը եւ, ինչպէս հորդորում են առաքեալները, «պահենք մենք մեզ Աստծու սիրով՝ սպասելով մեր Տէր Յիսուս Քրիստոսի ողորմութեանը յաւիտենական կեանքի համար» (Յուդա Ա 21)՝ նմանուելով «նրանց, որ հաւատով եւ համբերութեամբ ժառանգեցին խոստումները» (Եբր. Զ 12):

Քրիստոսի սուրբ Յարութեան փօնի ուրախութեամբ Մեր բարեմաղթանքներն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների Գահակալնե-

ին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեանին եւ մեր Եկեղեցու ուխտապահ ողջ հոգեւոր դասին:

Ի Քրիստոս սիրով ողջունում ենք քոյր Եկեղեցիների հոգեւոր Պետերին՝ հայցելով, որ Տէրն Իր ամենառատ շնորհները պարգեւի իրենց բանաւոր հօտին:

Տիրոջ սուրբ Յարութեան աւետիսով ողջունում ենք Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Տիար Սերժ Սարգսեանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Բակօ Սահակեանին, հայոց պետական ողջ աւագանուն՝ հայցելով Բարձրեալի օրհնութիւնը իրենց կեանքին եւ ջանքերին՝ յանուն հայրենի մեր երկրի եւ աշխարհասփիւռ մեր ժողովրդի բարօրութեան:

Մեր ողջոյնն ու բարեմաղթանքներն ենք բերում Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկաւարներին ու ներկայացուցիչներին՝ մաղթելով, որ Տիրոջ օրհնութեամբ արգասաբեր լինի իրենց գործունէութիւնը ի նպաստ խաղաղ աշխարհի, ժողովուրդների բարեկամութեան եւ համագործակցութեան:

Զատկական այս ողջունաբեր օրը յարուցեալ մեր Փրկչի Իջման Սուրբ Սեղանի առջեւ աղօթք ենք բարձրացնում, որ Աստուած առատ բարիքներով բարգաւաճում ու ծաղկում շնորհի Հայոց աշխարհին, խաղաղութեան ու բարօրութեան մէջ պահպանի Իր փոքրիկ հօտը՝ ազգս հայոց: Հայցում ենք, որ Տէրը մեր ժողովրդին պահի միաբան մեր սուրբ հաւատքով, նոր ուժ եւ զօրութիւն տայ մեր արդար իղձերի իրականացման համար:

Թող յարուցեալ Քրիստոսի շնորհները սփռուեն համայն աշխարհում, որպէսզի բարեկամութեան ու եղբայրութեան մէջ բոլոր ազգերը յոյսով ու հաւատով կերտեն մարդկութեան երազած կեանքը՝ լի սիրով, համերաշխութեամբ եւ անվրդով խաղաղութեամբ այսօր եւ յաւիտեանս, Ամէն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՒԵՏՄԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում աշխարհասփիւռ մեր ժողովրդին Աւետման շնորհազարդ տօնի առիթով եւ շնորհաւորում կանանց ու մայրերին՝ Մայրութեան եւ գեղեցկութեան օրուայ կապակցութեամբ:

Փրկչի Մարդացման մասին Սուրբ Աստուածածնին տրուած հրեշտակաձայն Աւետիսը աշխարհի փրկութեան ապտուածային խոստումի բարի լուրն էր՝ վկայութիւնը մարդու նկատմամբ Բարձրեալի անսահման սիրոյ ու հոգածութեան:

Մեր մաղթանքն է, որպէսզի կենսապարգեւ այս տօնի խորհուրդով Աստուածամօր լուսաւոր կերպարը այսօր եւ միշտ ոգեշնչի եւ առաջնորդի կանանց՝ ապրելու առ Աստուած հաւատքով, ծառայելու իրենց ընտանիքների բարօրութեանն ու ամրութեանը, մայրական հոգածութեամբ դաստիարակելու արժանաւոր զաւակներ մեր Հայրենիքի եւ մեր Սուրբ Եկեղեցու համար:

Թող Սուրբ Աստուածածնի բարեխօսութեամբ Միածին Որդին մայրութեան շնորհով զարդարի բոլոր կանանց եւ խաղաղութեան ու բարօրութեան մէջ պահպանի մեր մայրերին ու քոյրերին՝ միշտ խինդով լեցուն ու երջանիկ, միշտ գեղեցիկ՝ օրհնուած առաքինութիւններով:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹԵՅԱՄԲ (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 24 ապրիլի 2010 թ.)

«Արդար է Տերը, արդարություն է սիրում,
ճշմարտությանն է նայում երեսը Նրա»
(Սղմ. Ժ 8):

Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ,

Այսօր Հայրենիքում եւ Սփյուռքում մեր եկեղեցիներում Սրբազան Պատարագի մատուցմամբ, հուշակոթողների մոտ խոնարհումով եւ աղոթքով հիշատակում ենք 95-րդ տարելիցը Հայոց ցեղասպանության:

Տասնամյակների ընթացքում մեր ժողովուրդը միայնակ է կրել Ի դարի իր մեծագույն ողբերգության խորը վիշտը: Այսօր բյուրավոր մարդիկ մեզ հետ նշում են հիշատակը Ցեղասպանության, որ մարդկության կյանքում բացառվեն այդօրինակ ոճիրները, զորանան խաղաղությունը, արդարությունը եւ երջանկությունը աշխարհում: Տարիներ շարունակ մեր ժողովուրդը միայնակ է հետամուտ եղել արդար իր դատի պաշտպանությանը՝ մնալով «ամեն կողմից ճնշված, բայց ոչ՝ ընկճված, կարոտյալ, բայց ոչ՝ հուսահատ, հալածված, բայց ոչ՝ լքված» (Բ Կորնթ. Դ 8-9), այլ ապավինած քրիստոնեական իր հավատքին, մարդկության համար խաչված եւ հարություն առած Փրկչին աշխարհի, ուժ եւ զորություն է գտել Հայրենիքում եւ Սփյուռքում նոր կյանքով հառնելու եւ իր իրավունքները պաշտպանելու: Այսօր Հայոց ցեղասպանությունը ճանաչված է շատ ժողովուրդների, պետությունների, պետական եւ հասարակական կառույցների կողմից՝ համոզումով, որ խաղաղ ապագայի հույսը արդարության իրագործումն է, որի ճշմարիտ դրսեւորումը երկրային այս կյանքի մեջ մարդկանց եւ ազգերի իրավունքների պաշտպանությունն է: Միածնաէջ այս Սուրբ Տաճարում Աստծո եւ մեր նահատակ բյուրավոր զոհերի հիշատակի առջեւ աղոթք բարձրացնելով՝ շնորհակալության Մեր խոսքն ենք հղում բոլոր պետություններին, հասարակական կառույցներին եւ անձանց, ովքեր ճանաչում եւ դատապարտում են Հայոց ցեղասպանությունը եւ այսօր մեր ժողովրդի հետ են իրենց աղոթքներով:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփյուռս, այսօր մեր արդար դատը ներկայացնում ենք վերականգնված մեր պետականությամբ եւ աշխարհի բազմաթիվ երկրներում հարգված ու վստահելի, հոգեւոր ու ազգային կյանքով ամուր մեր համայնքներով: Այո՛, մեր ժողովուրդը կարողացել է ոտքի կանգնել, բայց դեռ ամոքված չէ կրած կորուստների ցավը: Ցեղասպանության զոհեր են սփյուռքահայ տարագիր մեր զավակները, ովքեր տուն, ընտանիք կորցրած, Հայրենիքից զրկված՝ ապրեցին տարբեր երկրներում իրենց նոր կյանքը կառուցելով զրկանքներով ու բազում դժվարություններով: Ցեղասպանության զոհեր են սրիպողաբար իսլամ ընդունած հայերը եւ նրանց սերունդները, ովքեր վախենում են խո-

սել իրենց ինքնության մասին: Ցեղասպանության գոհ է Հայոց Եկեղեցին՝ հարյուրավոր եկեղեցիների ու վանքերի ավերումով, վերածումով մզկիթների, հազարավոր եկեղեցականների կորուստով, մշակութային դարավոր գանձերի մոխրացումով ու ոչնչացմամբ:

Իններեկես տասնամյակ մեր ժողովուրդը հավատացել եւ հավատում է իր հանդեպ գործված ոճիրի համընդհանուր դատապարտմանը եւ արդարության հաղթանակին: Մեր ժողովրդի ակնկալությունն է տեսնել հաղթանակը արդարության՝ ի դիմաց իր հանդեպ գործված չարիքի, իր կրած կորուստների, վշտերի ու տառապանքների: Անցած տասնամյակներում աշխարհում էական տեղաշարժեր են կատարվել, ձեւավորված միջազգային օրենքները, քաղաքացիական եւ սոցիալական հասարակություններ կառուցելու ժողովուրդների ձգտումը բարեհույս են դարձնում ընթացքները դեպի ավելի բարօր ու խաղաղ աշխարհ: Բարեփոխված այս աշխարհում առատանում է եւ հույսը մեր, որ համընդհանուր ճանաչում ու դատապարտում պիտի գտնի մեր ժողովրդի հանդեպ գործված Ցեղասպանությունը եւ իսպառ պիտի բացառվեն իրավունքների ոտնահարման, հալածանքով, կեղծիքով հարցերը վճռելու մտածողության դրսեւորումները, որոնցից ծնունդ են առնում միայն չարիք, բախումներ ու ողբերգություններ: Հայաստանը շրջափակված պահելը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազատ ապրելու իրավունքը մերժելը, սպառնալիքով հնչող կոչերը համահունչ չեն տարածաշրջանում կայունության ու ապահովության հաստատման գործընթացներին ու ձգտումներին, չեն նպաստում խաղաղության եւ համագործակցության հեռանկարին: Այսօր ենք կրում պատասխանատվությունը վաղվա օրվա եւ գալիքի համար: Եւ այսօր պիտի հետամուտ լինենք արդարությանը, քանզի արդարությունը բարիքներով է զարդարում մարդկային կյանքը եւ ինչպես սաղմոսերգուն է ասում՝ «Արդար է Տերը, արդարություն է սիրում, ճշմարտությանն է նայում երեսը Նրա» (Սղմ. Ժ 8):

Սիրելի՛ ժողովուրդ հայոց, Հայրենիք եւ Սփյուռք միասնությամբ հետեւողականորեն շարունակենք պաշտպանել մեր իրավունքները՝ վստահությամբ, որ արդարություն պիտի լինի մեր ժողովրդի համար եւ բոլոր պետությունների, նաեւ՝ Թուրքիայի կողմից պիտի ճանաչվի եւ դատապարտվի Ցեղասպանությունը: Նվիրված մնանք մեր Հայրենիքը շենացնելու, ամենուր մեր ժողովրդի հոգեւոր եւ ազգային կյանքը բարօր դարձնելու, ավելի ու ավելի պայծառացնելու լուսավոր մեր իդեալներին ու նպատակներին: Հաստատուն ու աննկուն մնանք խաղաղության Ավետարանի հույսին ու մեր ջանքերը բերենք բռնությունից ազատ, արդար եւ համերաշխ աշխարհի կառուցման ընթացքներին: Հիշատակի այս օրը խունկ եւ աղոթք մատուցենք վերստին, որ Տերը երկնային հավիտենության երանության մեջ պահի հոգիները Հայոց Ցեղասպանության բյուրավոր զոհերի: Եւ թող Բարձրյալի օրհնությունը լինի մեր եւ բոլոր ժողովուրդների վրա ու խաղաղության երկնային շնորհները եւ սերը մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի բաշխվեն աշխարհին այսօր եւ միշտ. Ամեն:

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԷԴՈՒԱՐԴ ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆ ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Հայոց հաւատքի նուիրական կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ:

Մեծարգոյ պրն. Տէր-Ղազարեան,

Ուրախ ենք մեծապէս գնահատանքի խօսք ուղղել փաղանդաշատ հայորդուդ, որ երկնապարգեւ Ձեր շնորհները անյոգնաբեկ ու փքնաջան աշխատանքով ծառայեցնում էք հայ մշակոյթի զարգացմանը: Հայ ժամանակակից արուեստի մէջ ուրոյն տեղ ու մեծ ճանաչում ունեն Ձեր մանրաքանդակները: Խոշորադիտակով միայն տեսանելի Ձեր զարմանահրաշ գործերը փասնեակ փարիներ ցուցադրւում են բազմաթիւ երկրների յայտնի թանգարաններում ու ցուցասրահներում, այդ թւում Մայր Աթոռիս թանգարանում՝ հիացմունք պարգեւելով այցելուներին եւ արժանացնելով Ձեզ միջազգային մրցանակների, բարձր կոչումների ու պարգեւների: Ձեր անունն արժանապէս դասուած է փաղանդաւոր ու շնորհալի հայորդեաց շարքին, ովքեր իրենց գործունէութեամբ պատիւ ու հռչակ են բերել Հայրենի մեր Երկրին ու ժողովրդին ամբողջ աշխարհում:

Արուեստասէր հասարակութեանը Դուք ծանօթ էք նաեւ որպէս նուիրեալ ու շնորհալի երաժիշտ: Կէս դար շարունակ Հայաստանի սիմֆոնիկ նուագախմբում Դուք Ձեր գործընկերների հետ միասին բարձրարուեստ կատարումներով մեր ժողովրդին մատուցել էք դասական երաժշտութեան գոհարները:

Մեծարգոյ պրն Տէր-Ղազարեան, լինելով քահանայի թոռ, Դուք կրթուել ու մեծացել էք Քրիստոսասէր ոգով, հաւատարմութեամբ առ ազգային մեր սրբութիւններն ու հայրենական արժէքները: Մենք ճանաչում ենք Ձեզ անձնապէս եւ մշտապէս ականատես ենք եղել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ Ձեր անկեղծ սիրուն ու նուիրումին:

Արուեստի ասպարէզում Ձեր բեղմնաւոր գործունէութեան եւ Հայրենի մեր երկրին ու սիրեցեալ մեր ժողովրդին մատուցած ծառայութեանց բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Մայր Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքով հայցում ենք, որ Բարձրեալ Տէրն Իր ամենազօր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահի ու պահպանի Ձեզ եւ պարգեւի կեանքի արեւշատ տարիներ եւ ուժ ու եռանդ՝ կերտելու նոր, զարմանահրաշ մանրաքանդակներ:

Մաղթում ենք նոր ներշնչանքներ եւ փառքի մշտական վերընթաց ուղի:

Ո՛ղջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 12-ն Ապրիլի
յամի Տեառն 2010եւ ի թուին հայոց ՌՆԾԹ·
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 552

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՁՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ ՈՐ ՅԱՐՅԱԽ

Մեծապէս ուրախ ենք համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհարանի նուիրական յարկի ներքոյ ընդունելու Ձեզ եւ բերելու Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնը, սէրն ու բարեմաղթանքները:

Սիրելի պրն Բալայեան,

Ազգային, հասարակական, գրական-ստեղծագործական տասնեակ տարիների բեղմանաւոր գործունէութեան շնորհիւ Ձեր անունը ծանօթ ու սիրելի է մեր ժողովրդի զաւակներին: Արցախեան հերոսամարտի ակունքներում էք Դուք՝ որպէս գաղափարական պայքարի առաջամարտիկ: Հաւատաւոր ու հայրենասէր Ձեր հոգու կանչով Դուք նուիրուեցիք հայրենի մեր Արցախ աշխարհի ազատագրման սրբազան գործին եւ մեր մտաւորականութեան ներկայացուցիչների հետ միասին արցախահայութեան ու համայն մեր ժողովրդի ձայնը խիզախօրէն հնչեցրեցիք Խորհրդային Միութեան բարձր ատեաններում, պաշտպանելով ազգային մեր արդար դատը: Հայրենի մեր Երկրին ու Արցախին պարտադրուած պատերազմի տարիներին մշտապէս եղաք Աստուածպարգեւ մեր հայրենիքը պաշտպանելու ելած հայրենասէր նուիրեալների կողքին՝ ոգեշնչելով քաջորդի Մեր զաւակներին ու մասնակցելով մեր յաղթանակների կայացմանը:

Ներկայիս Դուք աննուազ եռանդով շարունակում էք Ձեր ազգանուէր գործունէութիւնը՝ տարբեր յանձնառութիւններով ու նախաձեռնութիւններով ծառայելով ի խնդիր Հայրենի մեր Երկրի բարգաւաճման ու առաջընթացի, Արցախի անկախութեան ճանաչման, Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնների զօրացման ու առաւել արգասաւորման եւ համայն մեր ժողովրդի միասնականութեան ամրապնդման: Առանձնակի գոհունակութիւն է Հայրապետիս համար նշել, որ կեանքի ողջ ընթացքին Դուք դրսեւորել էք Ձեր հոգու ջերմ սէրն ու նուիրումը՝ հանդէպ մեր Եկեղեցին եւ հոգեւոր մեր սրբազան կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Հայրենի մեր երկրին ու հարազատ ժողովրդին մատուցած Ձեր բազմարդիւն ծառայութեանց բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակաւ շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Ս Ա Հ Ա Կ – Ս Ո Ւ Ր Բ Մ Ե Ս Ր Ո Պ

պատուոյ բարձր շքանշանը:

Աղօթում ենք առ Ամենակալն Աստուած, հայցելով, որ միշտ շնորհառատ պահի Ձեր հաւատաւոր հոգին եւ պարգեւի երջանկութեամբ ու նորանոր ձեռքբերումներով լեցուն արեւշատ կեանքի տարիներ:

Թող Բարձրեալ Տէրը Ամենախնամ Իր Աջի հովանու ներքոյ պահպանի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 21-ն Ապրիլի
Յամի Տեառն 2010 եւ ի թուին հայոց ՌՆԾԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 555

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեծ հանդիսավորությամբ նշվեց Հիսուս Քրիստոսի հրաշափառ Սուրբ Հարության տոնը:

Տերունական տոնի առիթով Միածնաէջ Մայր Տաճարում պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Patրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Զանգեզուրի ավետարեր զողանջների ներքո խաչվառներով զարդարյալ եկեղեցականաց թափորը Վեհարանից դեպի Սուրբ Տաճար առաջնորդեց Վեհափառ Հայրապետին եւ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանին:

Հայրապետական ամպհովանակիրներն էին ՀԲԸՄ Վարչության անդամներ Արիս Ադամյանը եւ Վազգեն Յակոբյանը, «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի նախագահ Լեւոն Սարգսյանը եւ ԱԺ պատգամավոր Արա Բաբլոյանը: Սուրբ եւ Անմահ Պատարագի ընթացքին Նորին Սրբության առընթերականներն էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը եւ Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը:

Պատարագի սրբազան արարողության ընթացքին Նորին Սրբությունը Հայրապետական իր պատգամը հղեց Փրկչի Հարության տոնի առիթով համայն հայ ժողովրդին՝ ամենքին փոխանցելով «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» կենդանարար ավետիսը:

Ս. Հարության ավետիսով Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքները հղեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին եւ ողջ հոգեւոր դասին: Ապա իր ողջույնը բերեց Ս. Պատարագին ներկա ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանին եւ պետական ավագանուն՝ հայցելով Բարձրյալի օրհնությունն իրենց կյանքին եւ ջանքերին՝ հանուն հայրենի մեր երկրի եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի բարօրության:

Սուրբ Պատարագի արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանը եւ ՀԲԸՄ Վարչության անդամներ, ԱԺ պատգամավորներ, ՀՀ կառավարության անդամներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, բարերար հայորդիներ, գիտության, կրթության եւ մշակույթի գործիչներ:

Հավարտ Սուրբ Պատարագի Վեհարանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հրավիրյալներին վերստին բերեց Հայրապետական իր օրհնությունն ու բարեմաղթանքները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 7-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով:

Օրակարգում ընդգրկված էին Հայ Եկեղեցու ներեկեղեցական եւ միջեկեղեցական կյանքին առնչվող մի շարք հարցեր:

Նորին Սրբությունը Խորհրդի անդամներին տեղեկացրեց նոր նշանակումների մասին: Հայրապետական տնօրինությամբ Կենտրոնական Եւրոպայի եւ Շվեդիայի Հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը հունիսի 1-ից ազատվում է իր պարտականություններից եւ կոչվում հանգստի: ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի փոխառաջնորդ Տ. Հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանը, ազատվելով իր պարտականություններից, հունիսի 1-ից նշանակվում է Կենտրոնական Եւրոպայի եւ Շվեդիայի Հայրապետական պատվիրակ (նստավայրը՝ Վիեննա, Ավստրիա): Մեկ այլ տնօրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանն ազատվել է իր պարտականություններից եւ առաջիկային կստանձնի այլ պաշտոն:

Ծանուցվեց նաեւ, որ ապրիլի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի կունենա եպիսկոպոսական ձեռնադրություն եւ օծում: Եպիսկոպոսության աստիճան կստանան Մայր Աթոռի Վանորեից տեսուչ Տ. Արտակ վարդապետ Տիգրանյանը, Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Մկրտիչ վարդապետ Պոռշյանը եւ Մայր Աթոռի միջեկեղեցական գրասենյակի տնօրեն Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը: Վեհափառ Հայրապետը ժողովականներին ներկայացրեց եպիսկոպոսության երեք թեկնածուներին՝ արժանի նկատելով պատասխանատու այդ աստիճանին:

Այնուհետեւ Գերագույն հոգեւոր խորհուրդն ունկնդրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անդամակցությամբ գործող միջեկեղեցական կազմակերպությունների պատասխանատուների եւ դրանցում Մայր Աթոռի ներկայացուցիչների հաշվետու զեկույցները:

Հայաստանի Աստվածաշնչային ընկերության գործունեության մասին զեկուցեց ընկերության խորհրդի նախագահ Տ. Եգնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը: Եգնիկ Սրբազանը հանգամանորեն ներկայացրեց կատարված աշխատանքները եւ առաջիկա ծրագրերը: Մեծ կարեւորություն ընծայվեց ներկայիս իրականացվող հիմնական չորս ծրագրերին՝ «Շրջող Ավետարան» նախաձեռնությանը, որով հոգեւոր գրականություն է բաշխվում սահմանամերձ գյուղերում եւ թատերական ներկայացումներով քարոզվում Ս. Ավետարանը, «ՀՀ գինվորականներին՝ Ս. Գիրք» ծրագրին, ըստ որի ներկայիս 10000 Նոր Կտակարան է բաժանվում գինվորներին, կույրերի համար բրայլյան լեզվով Ավետարանի հրատարակությանը, ինչպես նաեւ Աստվածաշնչի գրաբար բնագրի պատրաստությանը:

«Ջինիշյան հիմնադրամի» գործունեության մասին զեկուցեց հիմնադրամի խորհրդում Հայ Եկեղեցու ներկայացուցիչ Տ. Պարույր քահանա Ավետիսյանը: Հիմնադրամը 1999 թվականից սկսյալ ամեն տարի կանոնավոր կերպով իր օժանդակությունն է բերում ամառային

ճամբարների կազմակերպման ծրագրին, որոնցից օգտվում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հայորդյաց տների սաները եւ Հայաստանի հեռավոր շրջանների առավել կարիքավոր ընտանիքների երեխաները: 2006 թվականից Գուգարաց, Սյունյաց, Գեղարքունյաց եւ Արմավիրի թեմերի հետ համագործակցաբար իրականացվում է «Հոգեւոր կրթություն եւ դաստիարակություն երեխաների համար» ծրագիրը՝ ի նպաստ մատաղ սերնդի հոգեւոր դաստիարակության:

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի ծրարգրերը ներկայացրեց գործադիր տնօրեն դոկտ. Կարեն Նազարյանը: Կլոր սեղանը ներկայիս գործում է չորս ուղղությամբ՝ համայնքային համապարփակ սոցիալական զարգացում եւ դիակոնիա (հիմնականում՝ Շիրակի, Գեղարքունիքի եւ Տավուշի մարզերում սոցիալական կենտրոնների հասարակությամբ), հմտությունների զարգացում՝ ծրագրերի եւ սոցիալական աշխատանք իրականացնելու համար, «Երկխոսության խթանում հանուն տարածաշրջանային հաշտեցման» ծրագիր, ինչպես նաեւ հրատարակչական գործունեություն:

Ջեկույցով հանդես եկավ նաեւ ԷԿԼՕՖ հիմնադրամի (Էկումենիկ ունիվերսալ վարկային կազմակերպություն) տնօրեն Տիգրան Հովհաննիսյանը: Հիմնադրամը ներկայիս ծրագրեր է իրականացնում ՀՀ ութ մարզերի 146 համայնքներում՝ նպատակ ունենալով աջակցել քաղաքացիներին՝ իրենց տնտեսություններն ընդլայնելու, աշխատատեղեր ստեղծելու եւ այդպիսով բարելավելու իրենց սոցիալական վիճակը:

Գերագույն հոգեւոր խորհուրդը զոհունակություն եւ գնահատանք հայտնեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո եւ մասնակցությամբ միջեկեղեցական կազմակերպությունների կողմից իրականացվող լայնածավալ սոցիալական ծառայության համար՝ մաղթելով արդյունաշատ գործունեություն ի բարօրություն ժողովրդի եւ զորացումն Հայրենիքի:

Այնուհետեւ միջեկեղեցական հարաբերությունների ծիրից ներս Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը ժողովականներին տեղեկացրեց, որ հունիս ամսին նախատեսվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնական այցը Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդին, որից հետո Նորին Սրբությունը Հովվապետական այցով կլինի Վիրահայոց թեմում՝ Թբիլիսիում եւ Ջավախքում:

Ժողովն ավարտվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով եւ աղոթքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Ապրիլի 7-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Թուրքմենստանի փոխվարչապետ Խիդիր Սապարլիեւին:

Վեհափառ Հայրապետը ողջունեց փոխվարչապետի այցը համայն հայության հոգեւոր

կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ապա, նմանօրինակ այցերը կարեւոր խթան նկատելով երկուստեք հարաբերությունների զարգացման համար, կարեւորեց երկու երկրների միջեւ սերտացող համագործակցությունը, ինչը պիտի նպաստի հայ եւ թուրքմեն ժողովուրդների բարօրությանը:

Նորին Սրբությունը նաեւ վերահիշեց պրն Խիդիր Սապարլիեւի պաշտոնավարման շրջանը Հայաստանում իբրեւ Թուրքմենստանի արտակարգ եւ լիազոր դեսպան՝ մասնավորապես անդրադառնալով Մայր Աթոռի եւ Թուրքմենստանի դեսպանատան միջեւ առկա ջերմ հարաբերություններին:

Իր երախտագիտությունը հայտնելով Վեհափառ Հայրապետին ընդունելության համար՝ փոխվարչապետ Սապարլիեւը ուրախությամբ հաստատեց, որ այցը լավ առիթ էր վերանորոգելու իր բարեկամությունը: Փոխվարչապետը Նորին Սրբությանը ներկայացրեց նաեւ իր այցի մանրամասները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Ապրիլի 14-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում իր աշխատանքները շարունակող «Կոմունիզմի «դասերն» եկեղեցիներին» միջազգային գիտաժողովի մասնակիցներին ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հանդիպմանը Հայոց Հայրապետը ներկայացրեց Մայր Աթոռի եւ առհասարակ Հայ Եկեղեցու դերն ու նշանակությունն աշխարհասփյուռ հայության կյանքում: Ի մասնավորի Նորին Սրբությունն անդրադարձավ Եկեղեցու հանդեպ խորհրդային իշխանությունների դրսեւորած ժխտական վերաբերմունքին եւ բացասական ազդեցությանը հոգեւոր կյանքի վրա, ինչպես նաեւ այդ շրջանում Եկեղեցու առջեւ ծառացած դժվարություններին: «Այդ ժխտական կեցվածքի պայմաններում նույնիսկ մենք կարողանում էինք գոնե նվազագույն գոյապահպանություն ապահովել Եկեղեցու համար շնորհիվ լուսահոգի Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ով կարողացել էր տեղի պետական եւ կուսակցական առաջնորդների հետ իր հարաբերությունների շնորհիվ մեղմացնել Եկեղեցու վրա դրված որոշ սահմանափակումներ», - ասաց Վեհափառ Հայրապետը՝ հավելելով, որ Եկեղեցին դեռ շատ անելիքներ ունի՝ կոմունիստական իշխանությունների ժամանակաշրջանին գործված հոգեւոր ավերները վերացնելու ուղղությամբ:

Գիտաժողովի մասնակիցներն երախտագիտություն հայտնեցին Վեհափառ Հայրապետին իրենց ընդունելու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հյուրընկալելու համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

Ապրիլի 14-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Սլովակիայի Հանրապետության Խորհրդարանի Քրիստոնեա-դեմոկրատական խմբակցության առաջնորդ Պավել Ռուշեւսկուն:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը վերահիշեց 2008 թ. նոյեմբերին Սլովակիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման փաստը, ինչում, իբրեւ Սլովակիայի Խորհրդարանի խոսնակ, մեծ դերակատարություն ունեցավ պրն Ռուշեւսկին: «Երբ քաղաքական առաջնորդների մեջ առկա է ասպվածասեր հոգին, նրանց որոշումները, վստահաբար, ունեն Սուրբ Հոգու առաջնորդությունը, եւ նման դեպքերում մարդկությունը ստիպված չի լինում ճաշակելու իր դեմ ուղղված հանցանքներ ու ոճիրներ: Մարդկության դեմ ոճիրները կարելի է կանխել նաեւ դրանց դատապարտումով», - նշեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ իր գնահատանքը հայտնելով Սլովակիայի իշխանություններին:

Անդրադարձ կատարվեց նաեւ երկու երկրների միջեւ բարի հարաբերությունների ձեւավորման եւ զարգացման գործընթացին, ինչին մեծապես նպաստում են փոխայցելությունները:

Երախտագիտություն հայտնելով հյուրընկալության համար՝ պրն. Ռուշեւսկին նշեց, որ իր համար մեծ պատիվ է լինել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ հոգեւոր առումով նոր լիցքեր ստանալ՝ շփվելով Նորին Սրբության հետ: Իր խոսքում Պավել Ռուշեւսկին ընդգծեց, որ մարդկությունը կարող է խուսափել իր առջեւ ծառացած բազում մարտահրավերներից, եթե ուշադրության կենտրոնում պահի հոգեւոր եւ բարոյական արժեքները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնադրություն: Հընթացս Ս. Պատարագի Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ եպիսկոպոսական ձեռնադրություն եւ օծում ստացան Մայր Աթոռի Վանորեից տեսուչ Տ. Արտակ վարդապետ Տիգրանյանը, Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Մկրտիչ վարդապետ Պռոշյանը եւ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը:

Սրբազան արարողության ընթացքին Վեհափառ Հայրապետի ընթերակաները էին Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը եւ Հայոց բանակի հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը: Ընծայացուների խարտավիլակն էր Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը:

Հայրապետական Ս. Պատարագի ընթացքում, Ս. Ստեփաննոս Նախասարկավագի խորանի առջեւ կատարվեց ընծայացուների հավատքի ուղղափառության քննությունը: Ձեռնադրվելիք եպիսկոպոսների արժանավորության մասին Ամենայն Հայոց Հայրապետին վկայեցին Հայ Եկեղեցու նվիրապետության ներկայացուցիչները՝ դպիրներ, կիսասարկավագներ, սարկավագներ, քահանաներ, եպիսկոպոսներ, ինչպես նաեւ ժողովրդը ներկայացնող աշխարհականներ: Ապա Ս. Պատարագը շարունակվեց Մայր Տաճարի Ավագ Խորանին:

«Աստվածային եւ երկնային շնորհ» շարականի երգեցողության ներքո վարդապետները դարձան դեպի հավատացյալ ժողովուրդը եւ վեր բարձրացրեցին իրենց ձեռքերը՝ ի նշան իրենց հրաժարման աշխարհից: Ապա Նորին Սրբությունն Արտակ, Մկրտիչ եւ Հովակիմ Հայր Սուրբերին կոչեց եպիսկոպոսության եւ Մայր Տաճարի մկրտության ավազանից հանդիսավոր թափորով բերված Սրբալույս Մյուռոնով օծեց նրանց ճակատներն ու աջ ձեռքերի բութ մատները:

Ձեռնադրության արարողության ավարտին նորաօծ եպիսկոպոսներին հանձնվեցին նաեւ եպիսկոպոսական իշխանության խորհրդանիշները՝ եպիսկոպոսական գավազաններ եւ մատանիներ, ինչպես նաեւ Ս. Ավետարան՝ ի նշան քարոզչության:

Օծումից հետո Ամենայն Հայոց Հայրապետն իր պատգամն ուղղեց նորաօծներին եւ ներկա բարեպաշտ ժողովրդին: Նորին Սրբությունը ժողովրդին ներկայացրեց ձեռնադրյալներին, ապա անդրադարձավ եպիսկոպոսի կոչմանը: «...Տիրոջ հավատացյալ հոտի բարձրաստիճան հոգեւոր սպասավորն է եպիսկոպոսը, ով իր Քրիստոսապատվեր առաքելության մեջ կոչված է առավել պատասխանատվությամբ եւ անձնվիրումով ծառայելու Աստծուն, ազգին եւ Հայրենիքին: Քրիստոսի առաքյալները աշխույժ ու ջանադիր ծառայության մշտահունչ հորդորներ են ուղղել հոգեւոր սպասավորներին եւ հատկապես ձեռնադրյալ եպիսկոպոսներին: Եպիսկոպոսի առաքելության մեծ կարեւորության մասին է խոսում ասվածատես Պողոս առաքյալը, ով ի դեմս իր կողմից եպիսկոպոս ձեռնադրված Տիմոթեոսի՝ հորդորում է բոլոր եպիսկոպոսներին. «Զգործս աւետարանչի գործեա՛. զպաշտօնդ քո կատարեալ կալ»(Բ Տիմոթ. Դ 5):

Հայոց պատմության ընթացքում մեր երանյալ հոգեւորականները, Առաքելական Սուրբ Եկեղեցու պայծառ գործիչներ հանդիսացող շնորհառատ եպիսկոպոսները առաքյալի հորդորի համաձայն իրենց ծառայության կատարյալ իրագործումով են հովվել մեր բարեպաշտ եւ Քրիստոսասեր ժողովրդին, տարածել Ավետարանի Բանն Կենաց, հսկել եւ աշխույժ պահել հոգեւորականաց ծառայությունը եկեղեցական անդաստանում, օրինակ եղել իրենց անբասիր հավատքով ու վարքով, արժանահիշատակ բագում գործերով»,- ասաց Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը:

Ապա Նորին Սրբությունն անդրադարձավ եպիսկոպոսական դասի կարեւոր առաքելությանը մեր օրերում. «Այսօր, երբ գարթոնք է ապրում հոգեւոր-եկեղեցական կյանքը

աշխարհասփյուռ հայության, հիմնվում են նոր համայնքներ եւ թեմեր, վեր հառնում նորանոր աղոթավայրեր, փերուսալեմվեր առաքելության արգասավորման, եկեղեցավարչական գործունեության լավ կազմակերպման, ինչպես նաեւ եկեղեցական մեր կյանքում առկա լուծման կարոտ հիմնախնդիրների հաղթահարման համար առավել է կարեւորվում մեր Սուրբ Եկեղեցու եպիսկոպոսաց դասի դերը: Գոհություն եւ փառք ենք հայտնում Ամենակալ Աստծուն, որ այսօր նորաօծ եպիսկոպոսներով զորանում է մեր Եկեղեցին, ովքեր պիտի առաքյալի պատվերի համաձայն արժանի գործերով լիուլի կատարեն իրենց պաշտոնը, որ անձնուրաց ծառայություն է, նախանձախնդրություն է, նվիրում է Քրիստոսին անշեղորեն հետեւելու բարի ճանապարհին: Նորոգ ձեռնադրյալ եպիսկոպոսները Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ ուխտեցին այսուհետ եւս անսայթաք ընթանալ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու վարդապետության ու պատվիրանների համաձայն եւ արդյունաշատ գործունեություն իրականացնել Աստծո փառքի եւ Եկեղեցու պայծառության համար: Մենք հավատում ենք, որ իրենց ուխտին հավատարիմ՝ եպիսկոպոսացյալ մեր եկեղեցականները բեղուն գործունեությամբ պիտի մեծապես նպաստեն նոր առաջընթացին եւ բարգավաճմանը աշխարհասփյուռ հայոց ազգային-եկեղեցական կյանքի, քանզի «ամեն ինչ գործակից է լինում նրանց բարիքի համար, ովքեր սիրում են Աստծուն, որոնք եւ կանչվեցին նրա նախասահմանումով» (Հռոմ. Ը 28)»: Հայրապետը նաեւ ուրախության հայտնեց այն փաստի առիթով, որ իր իսկ հիմնադրած Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցը Հայ Եկեղեցու անդաստանից ներս տալիս է իր առաջին եպիսկոպոսները՝ ի դեմս Մկրտիչ եւ Հովակիմ Սրբազանների:

Հայցելով Բարձրյալի օրհնությունն ու օգնականությունը՝ Վեհափառ Հայրապետը մաղթեց երեք եպիսկոպոսներին նոր հանձնառությամբ առավել արդյունավորել իրենց ծառայությունը մեր Սուրբ Եկեղեցուն եւ հավատավոր ժողովրդին, Տիրոջ կենարար վարդապետության մշտարթուն քարոզչությամբ ավետարանչի գործեր կատարել եւ կատարելապես իրականացնել եպիսկոպոսական առաքելությունը հայոց ազգային-եկեղեցական անդաստանում՝ հավելելով պայծառությունը Հայաստանյայց Եկեղեցու եւ ուրախություն ու մխիթարություն բերելով համայն հավատացյալ հայ ժողովրդին:

Այնուհետեւ «Ողջույնի» ընթացքում բոլոր եկեղեցականները բարձրացան Սուրբ խորան՝ սրանալու նորաօծների ողջույնը եւ շնորհավորելու ձեռնադրության առիթով:

Հավարտ Ս. Պատարագի Մայր Աթոռում տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում Հայոց Հայրապետը նորաօծ Սրբազան Հայրերին նվիրեց եպիսկոպոսական պանակներ:

Ձեռնադրության արարողությանը ներկա էին Հայ Եկեղեցու թեմակալ առաջնորդները, Մայր Աթոռի միաբանները, ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը, Աժ պատգամավորներ Լյովա Խաչատրյանը, Արտակ Զաքարյանը, Արամ Սաֆարյանը եւ Արմեն Մարտիրոսյանը, ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաներ, Արագածոտնի մարզի իշխանությունների ներկայացուցիչներ, բարերար հայորդիներ, ձեռնադրյալների բարեկամներ եւ ուխտավորներ:

Առաջիկա օրերին նորաօծ եպիսկոպոսներն ուխտի պատարագներ կմատուցեն Մայր Տաճարում:

Տ. ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Ծնվել է 1971 թ. ապրիլի 12-ին Արտաշատի շրջանի Դիմիտրով գյուղում:

1978-88 թթ. սովորել է տեղի ռուսական թեքումով միջնակարգ դպրոցում:

1988 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարան:

1993 թ. դեկտեմբերի 28-ին Ս. Ստեփաննոս Նախավկա սարկավագի տոնին, ձեռամբ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1994 թ. մայիսի 26-ին պաշտպանել է ավարտաճառ «Խաչվերացի տոնի ավանդությունը» թեմայով եւ արաժանացել է «լավ» գնահատականի:

1994-95 թթ. պաշտոնավարել է «Ալեք եւ Մարի Մանուկյան Գանձատուն» թանգարանում՝ որպես պատասխանատու տնօրեն:

1995 թ. հուլիսի 23-ին՝ Պայծառակերպության տոնին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1995-99 թթ. ծառայել է Վեհարանում՝ որպես Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի անձնական քարտուղար եւ գավազանակիր:

1999 թ. հոկտեմբերի 8-ին պաշտպանել է վարդապետական թեզ «Գարեգին Ա Կաթողիկոս Հովսեփյանց. կյանքը եւ հոգևոր-գիտական գործունեությունը» թեմայով: Նույն թվականի հոկտեմբերի 10-ին Մայր Տաճարում Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի կողմից շնորհվել է վարդապետական գավազան կրելու մասնավոր աստիճան:

1999-2000 թթ. ծառայել է Ֆրանսիայի թեմի՝ Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում:

2000-2001 թթ. Մայր Աթոռում պաշտոնավարել է որպես Լուսարարապետի օգնական: 2001-2005 թթ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ՝ Մայր Աթոռի Լուսարարապետի պաշտոնակատար:

2006-2008 թթ. Գուգարաց թեմի փոխառաջնորդ եւ Հաղպատավանքի վանահայր:

2008-2009 թթ. պաշտոնավարել է որպես Մայր Աթոռի Լուսարարապետի օգնական:

2009 թ. հունիսի 15-ից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ նշանակվել է Մայր Աթոռի Վանորեից տեսուչ:

Տ. ՄԿՐՏԻՉ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՌՈՇՅԱՆ

Ծնվել է 1975 թ. օգոստոսի 13-ին Էջմիածին քաղաքում:

1981-1992 թթ. սովորել է Էջմիածնի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 4 միջնակարգ դպրոցում:

1985-1990 թթ. սովորել է Էջմիածնի Ե. Թադեւոսյանի անվան նկարչական դպրոցում:

1991-1993 թթ. եղել է Հայ Եկեղեցու երիտասարդաց միության Էջմիածնի մասնաճյուղի ատենապետ:

1993-1998 թթ. սովորել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում:

1998-1999 թթ. ուսումը շարունակել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Զ լսարանում:

1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալփաքյանի:

1999-2001 թթ. աշխատել է Հայ Եկեղեցու ՔԴՔԿ-ում՝ իբրեւ կրոնի ուսուցիչների պատրաստման գրասենյակի պատասխանատու:

2000 թ. Գեւորգյան հոգեւոր ճեմարանում պաշտպանել է ավարտաճառ՝ «Խոսրով Անձեւացու «Պատարագի մեկնության» աստվածաբանությունը» թեմայով, եւ արժանացել լավ գնահատականի:

2001 թ. գրաբարից թարգմանել եւ տպագրել է Խոսրով Անձեւացու «Պատարագի մեկնություն» աստվածաբանական գործը եւ Վարդան Այգեկցու «Խրատ բոլոր քահանաներին» քարոզիչական երկը:

2001 թ. հունվարի 14-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

2001- 2003 թ. սովորել է Լիցցի (Leeds) Համալսարանում (UK)՝ ստանալով BA (with Honours) աստիճան: Միեւնույն ժամանակ եղել է Մանչեստրի հայկական համայնքի այցելու հովիվը:

2003-2004 թթ. սովորել է Քարդիֆի (Cardiff) համալսարանում (UK)՝ ստանալով MTh (with distinction) աստիճան: Թեման՝ "Classical Redemption and Feminist Theology: Does Feminist Theology "de-soteriologises" Christian doctrine?"

2004 թ. հոկտեմբերի 1-ից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր կարգադրությամբ նշանակվել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում՝ որպես տեսուչի պաշտոնակատար:

2005 թ. նշանակվել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի տեսուչ եւ պաշտոնավարել մինչեւ 2008 թ. մարտի 1-ը:

2004-2008 թթ. դասավանդել է «Վարդապետական աստվածաբանություն» Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում եւ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում:

2006 թ. պաշտպանել է «Ֆեմինիստ փրկաբանության վերլուծության փորձ» վերնագրով վարդապետական թեզը եւ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանի ձեռամբ արժանացել մասնավոր վարդապետական գավազանի:

2007-2008 թթ. սովորել եւ ավարտել է Քաղաքական դասընթացների երեւանյան դպրոցը:

2008 թ. մարտի 19-ից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր կարգադրությամբ նշանակվել է ԱՄՆ-ի Արեւելյան թեմի, Ֆիլադելֆիայի Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ եկեղեցու առժամյա հոգեւոր հովիվ:

2009թ. սեպտեմբերի 1-ից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր կարգադրությամբ նշանակվել է Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ:

Տ. ՀՈՎԱԿԻՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ծնվել է 1976 թ. հոկտեմբերի 19-ին Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում:

1983-1993 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1994-1999 թթ. սովորել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում:

1999-2000 թթ. ուսումը շարունակել է Գեորգյան հոգեւոր ճեմարանի Զ լսարանում:

1998 թ. սովորել է ԵՀԽ Բոսսեի Էկումենիկ դպրոցում (Շվեյցարիա, Ժնեւ):

2001 թ. սովորել է Դանիայի Արհուս քաղաքի Դիակոնալ դպրոցում՝ ուսումնասիրելով սոցիալական ասպվածաբանություն:

2000 թ. հուլիսի 16-ին, ձեռամբ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2000 թ. հուլիսից աշխատել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնում:

2001 թ. հոկտեմբերի 22-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Դրվագներ Ղպտի Ուղղափառ Եկեղեցու պատմությունից» թեմայով՝ արժանանալով «քաջալավ» գնահատականի:

2001 թ. նոյեմբերի 11-ին ձեռամբ Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալփաքյանի ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

2002-2004 թթ. ուսանել է Մոսկվայի հոգեւոր ակադեմիայում (Սերգիեւ Պասադ)՝ ստանալով ասպվածաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2004 թ. հունիսից կրկին ծառայության է անցել Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնում:

2004 թ. դասախոսում է Ընդհանրական եւ Հայ Եկեղեցիների պատմություն Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում եւ Գեորգյան հոգեւոր ճեմարանում:

2004 – 2009 թթ. եղել է Եւրոպական Եկեղեցիների կոնֆերանսի «Եկեղեցի եւ հասարակություն» հանձնախմբի անդամ:

2004-ից ԵՀԽ Էկումենիկ պաշտոնյաների ցանցի անդամ է:

2005 թ. ԵՀԽ Հայաստանյան Բարեգործական Կլոր Սեղան հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է:

2005 թ. օգոստոսին Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ նշանակվել է Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ:

2006 թ. ապրիլի 21-ին Մայր Աթոռում պաշտպանել է վարդապետական թեզ «Էկումենիզմը Ի դարում եւ Հայ Եկեղեցին» թեմայով եւ ապրիլի 23-ին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանի, ստացել է մասնավոր վարդապետության չորս աստիճանները:

2008- 2009 թթ. հաճախել է քաղաքական դասընթացների երեւանյան դպրոց:

2009 թ. Եւրոպական Եկեղեցիների կոնֆերանսի կենտրոնական կոմիտեի անդամ է:

Մասնակցել է 2006 թ. Բրազիլիայի Պորտո Ալեգրե քաղաքում տեղի ունեցած ԵՀԽ 9-րդ համագումարին, 2007 թ. Ռումինիայի Սիբիու քաղաքում համաեւրոպական երրոդ էկումենիկ ասամբլեային եւ 2009 թ. Լիոնում կայացած Եւրոպական եկեղեցիների կոնֆերանսի 13-րդ համագումարին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՊՐԻԼԻ 24՝ ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ ՋՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ

Ապրիլի 24-ի առավոտյան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուղեկցությամբ թեմական առաջնորդների եւ Մայր Աթոռի միաբանների այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու բյուրավոր հայ նահատակների հիշատակին:

Հուշահամալիրում Ամենայն Հայոց Հայրապետը եւ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը ծաղկեպսակներ գետնեղեցին, ապա Նորին Սրբության նախագահությամբ եւ ՀՀ Նախագահի եւ հայոց պետական ավագանու ներկայությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

Նույն օրը Մայր Աթոռի Միածնաէջ Սուրբ Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանը: Արարողության ընթացքում օրվա խորհրդի մասին Ամենայն Հայոց Հայրապետն աշխարհասփյուռ հայ ժողովրդին հղեց իր պատգամը:

Ս. Պատարագի ավարտին Մայր Տաճարի հարեւանությամբ ի հիշատակ 1915 թ. Հայոց Եղեռնի նահատակների կանգնեցված Աղոթքի եւ ուխտի խաչքարի մոտ կատարվեց հոգեհանգիստ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԲԱՔՎՈՒՄ ՄԱՄՆԱԿՑԵՑ ԿՐՈՆԱՊԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻՆ

Ապրիլի 26-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շքախմբի ուղեկցությամբ ժամանեց Ադրբեջանի մայրաքաղաք Բաքու՝ մասնակցելու Բաքվում գումարված կրոնապետների համաշխարհային գագաթնաժողովին՝ նվիրված կրոնների եւ ավանդական արժեքների վրա համաշխարհայնացման ազդեցության խնդիրներին:

Այցի ընթացքին Նորին Սրբությանն ուղեկցում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եգնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը, միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը, Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ քահանա Մելիքյանը: Համաժողովին մասնակցում է նաեւ ԱՄՆ Արեւելյան թեմի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը՝ որպես ԱՄՆ եկեղեցիների ազգային խորհրդի նախագահ:

Ժամանումից հետո Նորին Սրբությունը մեկնեց «Գյուլիստան» պալատ, ուր տեղի ունեցավ գագաթնաժողովի պաշտոնական բացումը: Բացման արարողությանն Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքն ուղղեց ներկաներին:

Նորին Սրբությունը, հանուն Հայ Եկեղեցու եւ աշխարհասփյուռ հայ ժողովրդի ողջունելով համաժողովի մասնակիցներին՝ արդյունավետ աշխատանք մաղթեց համագումարին:

«Գոհություն ենք մատուցում Տիրոջը, որ բարի կամքի վկայությամբ Մենք՝ կրոնական առաջնորդներս, համախմբվել ենք միասնաբար խորհելու եւ համագործակցության ուղիներ փնտրելու արդի աշխարհում հոգեւոր արժեքների պահպանությանն ու ամրապնդմանն ի խնդիր եւ սիրո, համերաշխության ու համագործակցության մեր կոչն ուղղելու մեր ժողովուրդներին եւ ողջ աշխարհին՝ հանուն մարդկությանը հուզող ներկա կյանքի մարտահրավերների եւ հիմնախնդիրների հաղթահարման:

Ողջունելի է նախաձեռնությունը զգաթնաժողովում քննարկելու համաշխարհայնացման, կրոնի, ավանդական արժեքների վերաբերյալ հարցերը, եւ այս շրջանակներում անդրադառնալու մշակույթների եւ կրոնների երկխոսության, ինչպես եւ՝ աշխարհի արդար ու խաղաղ ընթացքը խաթարող վտանգները հաղթահարելու խնդիրներին: Մեր սրբազան պարտականությունն է ամեն ջանք, ուժ եւ եռանդ բերել պատերազմների եւ ահաբեկչությունների դադարեցման, աղքատության եւ դրանից բխող սոցիալական խնդիրների վերացման ուղղությամբ՝ հանուն մարդկության ապահով, բարօր ու խաղաղ կյանքի, ինչը կամենում է նաեւ Աստված, որովհետեւ, ինչպես Սուրբ Գիրքն է ասում, «Աստված խռովության Աստվածը չէ, այլ՝ խաղաղության» (Ա Կորնթ. ԺԴ 33)»,-նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Խոսելով համաշխարհայնացման վտանգների մասին՝ Վեհափառ Հայրապետն ասաց. «Մեր օրերում շարունակ առավել մեծ շրջագիծ ընդգրկող հաղորդակցության եւ համագործակցության գործընթացները քաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական, կրթամշակութային ու այլ ասպարեզներում եւ ժողովուրդների մեջ մշտապես սերտացող առնչություններն ու կապերը, ցավոք, դեռ չեն գծագրում հեռանկարը այնպիսի աշխարհի, ուր թագավորում է մարդասիրությունը, արդարությունը, աստվածադիր պատվիրանն ու օրենքը, ուր գերագույն արժեք է մարդը, եւ հարգվում է նրա իրավունքը: Այսօր համընդհանուր մտահոգություն են տեխնոլոգիական փորձարկումների, մթնոլորտային արտանետումների արդյունքում առաջ եկող կլիմայական եւ բնապահպանական խնդիրները, որ վկայում են արարչասպեղծ աշխարհի հանդեպ մարդկային հարգանքի եւ հոգածության պակասի մասին: Բազմահազար մարդկանց ապահովությունն ու կյանքը վտանգում են ահաբեկչությունը, միջպետական եւ տարածաշրջանային հակամարտությունները, ազգամիջյան բախումները: Հավելյալ սպառնալիքներ են ստեղծում տեղեկատվական սադրանքները եւ կրոնական գործոնի շահարկումը՝ խեղաթյուրված փաստերով եւ հավատացյալների կրոնական գիտակցության խաթարումով առավել բորբոքելով աղետների եւ բախումների կրակը եւ առիթ ծառայում մշակութային արժեքների ոչնչացման համար: Համաշխարհայնացման ընթացքներում առաջ են գալիս կրոնական եւ մշակութային ավանդական արժեքների համահարթեցման վտանգները, որոնք սպառնում են ազգային ինքնություններին, մարդկանց հոգեւոր կերտվածքին, ընտանիքի ավանդական սրբագործված ընկալումներին, աճող սերնդի բարոյականության անաղարտությանը:

Մենք հավատում ենք աշխարհում առկա խնդիրների դիմագրավմանը, մարդկության բարօրությանն ու բարգավաճմանն ուղղված կրոնների եւ մշակույթների երկխոսությանը: Բոլոր ժողովուրդների համար՝ ազգային առանձնահատկություններով ու ավանդույթներով

հանդերձ, ընդհանուր են մարդասիրության, ազնվության ու արդարության արժեքները, ընդհանուր է խաղաղ, ազատ ու երջանիկ կյանքի ձգտումը: Ո՞ր մշակույթում չեն գովերգված հարգանքը, սերն ու աջակցությունը միմյանց հանդեպ, եւ ո՞ր մշակույթում գնահատված ու մեծարված չեն ազնիվն ու առաքինին, մարդկանց համար բարիք գործողները: Մեր՝ հոգեւոր առաջնորդներիս եւ Աստծո Խոսքի բոլոր սպասավորների առաքելությունն է մեր ժողովուրդներին համամարդկային այդ արժեքների մեջ ամրացնելը, հավատքի մեջ զորացնելը, աստվածահաճո ուղիներով առաջնորդելը, որպեսզի այս աշխարհում երկնապարգեւ բարին ու բարիքը առատանան, առաքյալի խոսքի համաձայն՝ «որպեսզի զորության գերազանցությունը Աստծուց լինի եւ ոչ մեզնից» (Բ Կորնթ. Դ 7), քանզի համերաշխության, խաղաղության ու բարօրության համար մարդկային ջանքերը ունայն պիտի լինեն առանց աստվածային զորակցության»:

Իր խոսքում Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձավ նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացին՝ մեծապես կարեւորելով խնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված բոլոր ջանքերը: «Գտնվելով Բաքվում՝ Մենք այսօր փառք ու գոհություն ենք մատուցում Բարձրյալին, որ շարունակվում են ջանքերը խաղաղ կարգավորման առաջնորդելու համար Ղարաբաղյան հակամարտությունը: Այս ուղղությամբ հարկ է կարեւորությամբ ու գնահատանքով նշել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների կողմից հետեւողական տարվող աշխատանքները: Մենք գոհունակությամբ ենք անդրադառնում նաեւ հարցի հանգուցալուծմանն ի խնդիր Ռուս Ուղղափառ Եկեղեցու՝ ի սկզբանե ներդրած միջնորդական ջանքերին: Մեր երկրների իշխանությունները հանրապետությունների նախագահների բարձր մակարդակով նույնպես շարունակում են բանակցային գործընթացը: Ուրախ ենք նաեւ, որ շփումներ կան, եւ երկխոսություն է իրականացվում մեր երկու երկրների քաղաքացիական եւ հասարակական կառույցների ներկայացուցիչների մակարդակով, որի շրջանակում իրականացվում են ֆիլմերի համատեղ նկարահանումներ, երիտասարդական, սպորտային ծրագրեր: Լիահույս ենք, որ ջանքերը պիտի շարունակվեն, որպեսզի հարցի վերջնական կարգավորումը նույնպես ընթանա բացառապես խաղաղ ուղիներով՝ խնդրահարույց հարցերը վճռելով միջազգային օրենքներին ու չափանիշներին համահունչ եւ համապատասխան ժողովուրդների իրավունքների նորմերին: Մենք՝ որպես Հայրապետ Ամենայն Հայոց, կարեւոր ենք նկատում Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ Շեյխ Ուլ Իսլամ Ալլահշուքյուր Փաշա Զադեի հետ հարցի լուծմանն ի խնդիր մեր ջանքերի ու գործունեության շարունակումը: Մեր պարտականությունն է հորդորել մեր ժողովուրդներին, աջակցել մեր պետությունների նախագահներին՝ խաղաղությամբ ընթանալու դեպի առկա խնդիրների լուծում եւ հարցի վերջնական կարգավորում: Մենք հույս ունենք, որ Կովկասյան տարածաշրջանում առկա մարտահրավերների հաղթահարման եւ խաղաղ ու ստեղծագործ կյանքի ապահովության համար համընդհանուր ջանքերը պիտի պսակվեն ցանկալի արդյունքներով, եւ հայ ու ադրբեջանցի ժողովուրդների համերաշխ կյանքի ու համագործակցության փորձառությունը վերստին պիտի վերընձյուղվի խաղաղության շիվերով: Մենք աղոթում ենք՝ տեսնելու այն գեղեցիկ օրը, երբ բաց կլինեն բոլոր փակ սահմանները տարածաշրջանում եւ ազատ՝ տեղաշարժը մարդկանց, ինչպես ժամանակին Մենք առիթ ենք ունեցել այցելել Բաքու եւ կարճաժամկետ ծառայություն մատուցել հայկական

եկեղեցում: Հավատարիմ մնանք Քրիստոսի առաքյալի պատվիրանին, որը նաեւ կոչ է ուղղված ողջ մարդկությանը. «Խաղաղությո՛ւն արեք. եւ խաղաղության ու սիրո Աստվածը թող լինի ձեզ հետ» (Բ Կորնթ. ԺԳ 11)»:

Խոսքի ավարտին Նորին Սրբությունը հրավեր ուղղեց կազմակերպիչներին կրոնապետների հաջորդ գագաթնաժողովը գումարելու Հայաստանում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Վեհափառ Հայրապետը նաեւ հրավիրեց Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ Շեյխ Ուլ Իսլամ Ալլահշուքյուր Փաշա Զադեին այցելելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Այնուհետեւ տեղի ունեցավ տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների եռակողմ հանդիպում՝ մասնակցությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մոսկվայի եւ Համայն Ռուսիոց Պատրիարք Կիրիլ Ա-ի եւ Կովկասի մահմեդականների վարչության նախագահ Շեյխ Ուլ Իսլամ Ալլահշուքյուր Փաշա Զադեի:

Հանդիպմանը քննարկվեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտությանն առնչված հարցեր:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մոսկվայի եւ Համայն Ռուսիոց Պատրիարքը եւ Կովկասի մուսուլմանների վարչության նախագահը ստորագրեցին համատեղ հայտարարություն:

Հայտարարության մեջ ասվում է.

«Հանուն Ամենազոր Արարչի, ի կատարումն մեր ժողովուրդների խաղաղության, բարօրության եւ երջանկության նվիրական երազանքների, մենք՝ ադրբեջանցի եւ հայ ժողովուրդների հոգեւոր առաջնորդներս, Ռուս Ուղղափառ Եկեղեցու հովվապետ Նորին Սրբություն Կիրիլ Պատրիարքի բարձր միջնորդությամբ հանդիպեցինք Բաքվում՝ հավաստելու մեր հարգանքը միմյանց հանդեպ եւ քննարկելու մեր ժողովուրդների ու պետությունների միջեւ ճշմարիտ խաղաղության եւ համաձայնության ձեռքբերման համար անհետաձգելի միջոցառումները:

Դիտարկելով այս հանդիպումը որպես խաղաղարարական երկխոսության ծավալում Հայ Առաքելական Եկեղեցու եւ Կովկասի մահմեդականների վարչության միջեւ՝ սկիզբ առած Ռուս Ուղղափառ Եկեղեցու միջնորդությամբ 1988 թ., հավատարիմ նախորդ հայտարարությունների ոգուն, մենք հույս ունենք հետագայում եւս աջակցել մեր ժողովուրդների խաղաղ համագոյակցության սկզբունքների առաջնթացին եւ փոխընդունելի որոշումների մշակմանը՝ բացառապես բանակցային ճանապարհով: Ուրախալի է վկայել, որ նման ձեւաչափով հանդիպումները քիչ չեն նպաստել Ղարաբաղյան խնդրով սկզբնավորված հայ-ադրբեջանական գինված հակամարտության դադարեցմանը: Այս հանդիպումները, անկասկած, օգնել են, խուսափել հակամարտությունը միջկրոնական դիմակայության վերածվելուց:

Այսօր հատկապես կարեւոր ենք համարում համագործակցության հոգեւոր կողմնորոշիչներին հետեւելը՝ մեր ժողովուրդների միջեւ առկա խորթությունը հաղթահարելու համար: Կրոնի ուժը, որ կոչում է բարու, խաղաղության, կարեկցանքի, համբերության, պիտի դառնա հաշտեցման գործոն: Հավատում ենք, որ մեր համատեղ ջանքերը կնպաստեն հաղթահարելու ազգամիջյան թշնամությունը: Կենսականորեն անհրաժեշտ է թույլ չտալ ռազմական

ճանապարհով վիճահարույց հարցերի լուծման վերադարձը: Մեր խաղաղարարական ջանքերով պետք է սպառ կանգնենք մարդկանց՝ ներկայիս բաժանումների, պատնեշների եւ թշնամության վերացման հույսերին, քանզի պատերազմը, եթե այն շարունակես, ավարտ չի ունենա:

Մենք սպառում ենք հակամարտության կարգավորմանն ուղղված միջազգային ջանքերը: Խաղաղության եւ բարիդրացիության հասնելու համար անհրաժեշտ է ընդլայնել շփումները՝ վստահության ամրապնդման նպատակով: Դայուն խաղաղությունը հնարավոր է միայն բարի կամքի եւ անկեղծ մտադրությունների առկայության պարագայում: Սպառ կանգնելով Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների ջանքերին՝ մենք մտադիր ենք աջակցել նրանց ձգտումներին: Այս կապակցությամբ կարեւոր ենք համարում հոգեւոր առաջնորդների միջեւ ուղիղ երկխոսության շարունակումը՝ նպատակ ունենալով նպաստել հակամարտության հանգուցալուծմանը, ինչը հնարավորություն կտա մարդկանց վերադառնալու այն վայրերը, որտեղից նրանք քշվել են պատերազմի պատճառով: Մենք աջակցում ենք կողմերի բարի կամքը՝ գերիների ազատ արձակումը, եւ կոչ ենք անում ինչպես քաղաքական, այնպեսեւ կրոնական գործիչներին ակտիվացնել ջանքերն այս ազնիվ եւ մարդասիրական գործընթացում: Մեզանից յուրաքանչյուրը պետք է ցույց տա, որ բարի գործերը, ծառայումը գթասրտությանը, նվիրումը խաղաղությանն ու արդարությանը կարող են անել ավելին, քան ռազմական հակամարտությունը: Մենք դատապարտում ենք վանդալիզմի ակտերը եւ կարեւոր ենք համարում մեր ժողովուրդների կրոնական հուշարձանների եւ սրբությունների պահպանումը:

Խաղաղության եւ համաձայնության հասնելու ճանապարհը դյուրին չէ, պահանջում է մեծ ջանքեր եւ հզոր կամք: Սակայն մենք ունենք հաջողության հասնելու ջերմ հույսեր եւ, համատեղելով մեր ջանքերը, հույս ունենք հաղթահարելու խորթացումը եւ կանխակալությունները: Դատապարտվությունն ու պարտքը Բարձրյալի եւ մեր ժողովուրդների առջեւ մղում են մեզ՝ հոգեւոր առաջնորդներիս, ջանքեր գործադրել հանուն խաղաղության, բարու իդեալների երկար սպասված հաղթանակի եւ առկա խնդիրների արդար հանգուցալուծման: Թող Կովկասի բարերեր հողում ամուր եւ արդար խաղաղություն հաստատվի, իսկ մեր ժողովուրդները ժառանգեն բարօրություն եւ բարգավաճում»:

Եռակողմ հանդիպումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնակցեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցության խորհրդակցական մարմնի աշխատանքներին, որի նպատակն է առկա խնդիրների շուրջ երկխոսություն սկսել կրոնական համայնքների եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջեւ: Կրոնապետները ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներկայացուցչին ներկայացրեցին իրենց մտահոգությունները եւ համագործակցության ոլորտները:

Այնուհետեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Ադրբեջանի Նախագահ Իլհամ Ալիեւի հետ: Հանդիպմանը ներկա էին Կովկասի մահմեդականների վարչության նախագահ Շեյխ Ուլ Իսլամ Ալլահշուքյուր Փաշա Զադեն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը եւ տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ քահանա Մելիքյանը:

Մեկ ժամ տեւած հանդիպմանը ընթացքում խոսվեց Բաքվում գումարված կրոնապետ-

ների համաշխարհային գագաթնաժողովի մասին եւ կարեւորվեց կրոնների եւ մշակույթների երկխոսությունը՝ ի խնդիր ժողովուրդների համար ավելի խաղաղ, ապահով ու բարօր կյանքի կերտման: Այնուհետեւ անդրադարձ եղավ Լեռնային Ղարաբաղի հակամարտության առնչվող հարցերին: Այս առումով կողմերը ողջունեցին հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերը՝ դրանցում կարեւոր նկատելով կրոնապետերի եւ հոգեւոր սպասավորների դերը: Մեծ նշանակություն տրվեց երկու ժողովուրդների փոխայցելություններին եւ շփումներին, որոնք ավելի պիտի զորացնեն փոխվստահության եւ համագործակցության ոգին:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսը շքախմբի ուղեկցությամբ այցելեց Բաքվի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցի, որը ներկայիս գործածվում է իբրեւ գրապահոց: Նորին Սրբությունը ծանոթացավ 1990 թ. հրդեհից վնասված եկեղեցու վիճակին եւ հույս հայտնեց, որ Աստծո ողորմությամբ եկեղեցին վերստին դռները կբացի հավատացյալների առջեւ՝ շարունակելով իր առաքելությունը: Ապա եկեղեցում տասնամյակներ անց հնչեց հայոց աղոթքն ու շարականը:

Երեկոյան Ադրբեջանի Նախագահի կողմից կրոնապետերին ի պատիվ տրված ճաշկերույթից հետո Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Օդանավակայանում Նորին Սրբությանը ճանապարհում էին Կովկասի մահմեդականների վարչության նախագահ Շեյխ Ուլ Իսլամ Ալլահշուքյուր Փաշա Զադեն, Ադրբեջանի կրոնից նախարարը եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչը:

Բաքվում գագաթնաժողովի աշխատանքներին շարունակեցին մասնակցել Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը եւ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿՐՕՆԱԳԻՏԱԳԱՆ

ԱՐԹՈՒՐ ՍԱՐԳԱՎԱԳ ՍԱՐԳՍՅԱՆ

Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ՎԱԽՃԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Մկրտության եւ ապաշխարության միջոցով հրեա հանրությանը (ինչու չէ նաեւ հեթանոսներին) դարձի կոչելով՝ Սուրբ Հովհաննեսը մեկ նպատակ էր հետապնդում՝ պատրաստել մարդկանց վաղուց սպասված Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի գալստյանը[1]: Մյս է պատճառը, որ Մկրտիչն իրեն հայտարարում է լոկ նախապատրաստող սպասյալ Մեսիայի տնօրինական գործունեության, ուստի հաճախ անվանվում է «Կարապետ», այսինքն՝ առաջնորդ: Մկրտչի քարոզչության այս վերջին՝ ամենակարեւոր մասն իր մեջ նաեւ ընդգծված վախճանաբանական կողմնորոշում է ամփոփում[2]: Հովհաննեսը տողերի միջեւ անընդհատ խոսում է դատաստանի մասին, հայտարարելով, թե դրա ժամն արդեն իսկ հասել է՝ խոստովանում է, որ իր պարտականությունը լոկ ցածր, նախապատրաստական աշխատանքներն են, բուն գործը՝ դատն ու դատաստանը, վերապահված է իր ետեւից Եկողին[3]:

Կարապետի վախճանաբանական հայացքները ունեն հետեւյալ պատկերը՝

ա. «Ապաշխարեցէ՛ք՝ զի մերձեալ է արքայութիւն երկնից» (Մատթ. Գ 2)[4],

բ. «Բայց ահաւասիկ տապար՝ առ արմի՛ն ծառոց կայ. ամենայն ծառ որ ո՛չ առնէ զպտուղ բարւոք, հատանի եւ ի հո՛ւր արկանի» (Ղուկ. Գ 9, Մատթ. Գ 10),

գ. «Որոյ հեծանոցն ի ձեռին իւրում սրբե՛լ զկալ իւր, եւ ժողովե՛լ զցորեանն ի շտեմարանս իւր, եւ զյարդն՝ այրեսցէ՛ անշէջ հրով» (Ղուկ. Գ 17, Մատթ. Գ 12):

Զգուշացնելով, որ երկնքի արքայությունը մոտենում է՝Հովհաննեսը կոչ է անում ապաշ-

---

1 Առավել մանրամասն տես մեր հոդվածը՝ «Հովհաննես Մկրտչի քարոզչությունը». «Էջմիածին», 2009, Թ, էջ 32-43:

2 Տե՛ս **William Barclay,** The Gospel of John, In 2 vol., vol. 1, Edinburgh, 1975, էջ 76-77 (այսուհետեւ՝ **Barclay.** The Gospel of John 1). Иисус и Евангелия, Словарь под редакцией Джоэля Грина, Скота Макнайта, Говарда Мармалла, ББИ, Москва, 2003, էջ 267 (այսուհետեւ՝ Иисус и Евангелия), «Քրիստոնյա Հայաստան», Եր., 2002, էջ 628:

3 Տե՛ս "Толковая Библия, или комментарии на все книги Св. Писания Ветхого и Нового Завета", под редакцией А. П. Лапухина, Новий Завет, том 1, Москва, 2007, էջ 73 (այսուհետեւ՝ Толковая Библия):

4 Այստեղ եւ այսուհետեւ սուրբգրային մեջբերումները տրվում են ըստ հետեւյալ հրատարակության. «Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց ի հելլենական հաւատարմագոյն բնագրէ ի հայկականս բարբառ, Յաշխատասիրութենէ Տեառն Հ. Յովհաննու Զոհրապեան վարդապետի ի միաբանութենէ մէծին Մխիթարայ բարեւնապետի եւ առաջին աբբայի», Վենետիկ, 1805 (այսուհետեւ՝Զոհրապեան Աստուածաշունչ):

խարել՝ ծանր դատապարտի չարժանանալու համար, քանի որ վախճանը մոտ է եւ անխուսափելի: Վերջին խոսքերի հիմնավորումը մարգարեն տալիս է գեղեցիկ եւ ազդու պատկերավոր դրվագներով: Առաջին դրվագում նա մի քանի բառով պատկերում է բերքահավաքի տեսարան. յուրաքանչյուր եղանակի ավարտին հողագործն այգու տիրոջ հետ շրջում էր այգում եւ ուշիուշով ուսումնասիրում բոլոր ծառերը եւ որոնք առողջ չէին լինում եւ «բարի» պտուղ չէին տալիս, արմատապես կտրվում էին՝ հողում ավելորդ տեղ չզբաղեցնելու համար եւ նետվում էին այրվելու[5] (հմմտ. Ղուկ. ԺԳ 6-7): Այս պարագային Մկրտիչը չի անդրադառնում, թե ում է պատկանում կացինը, եւ ով է ծառը կտրողը, սակայն հաջորդ պատկերում նա խոսում է իրենից հետո Եկողի մասին եւ նշում է, որ Նրա ձեռքում է գտնվում հեծանոցը կամ քամահարը, որով «սրբեսցէ զկալ իւր, եւ ժողովեսցէ զցորեանն ի շտեմարանս իւր, եւ զյարդն այրեսցէ անշէջ հրով» (Մատթ. Գ 12): Հեծանոցը փայտե թիակ էր, որով հողի վրայից վերցնում էին ցորենը եւ օդ էին նետում. օդում ծանր հատիկները առանձնանում էին քամուց քշված թեփից, հարդից ու փոշուց, եւ մաքրված ցորենը թափվում էր գետնին: Այնուհետեւ ցորենը հավաքում էին շտեմարանում, իսկ մնացյալ հարդն ու թեփը այրում կրակի մեջ[6]:

Այս օրինակով Մկրտիչն իր հավատքն է ցույց տալիս գալիք այն օրվա հանդեպ, երբ իր հետեւից Եկողը կհավաքի հավատարիմ մնացած արդարների համայնքը մի տեղ՝ «ի շտեմարանս իւր», իսկ բոլոր անհնազանդներին, մկրտությամբ չապաշխարածներին, բոլոր նրանց, ովքեր բարի պտուղ չեն տալիս, «այրեսցէ անշէջ հրով»[7]:

Հովհաննեսի ողջ քարոզչությունը, ինչպես նշում է Ղուկաս Ավետարանիչը, սպասման մեջ էր դրել ժողովրդին, եւ նրանք մտածում էին, թե արդյո՞ք հենց Հովհաննես Մկրտիչը չէ Քրիստոսը (Ղուկ. Գ 15): Այս հարցը հուզում է անգամ հրեա առաջնորդներին[8], ովքեր «առաքեցին առ նա ... քահանայս եւ Ղեւտացիս, զի հարցցեն ցնա՝ թէ դու ո՞ւ ես» (Յովհ. Ա 19): Հետաքրքրական է, որ Հովսեփոս պատմիչը (թեեւ առհասարակ ձգտում էր հռոմեացիներից թաքցնել իր կրոնական ձգտումների եւ պատկերացումների կասկածելի կողմերը) «Հրեական հնախոսությունների» 18/5:2 հատվածում անուղղակիորեն ակնարկում է մեսիական սպասման մասին[9]: Նախ Փլաբիոսն ասում է, որ Հովհաննեսը հրեաներին կոչ էր անում լվացման հավաքվելու եւ այդպիսով թույլ կերպով ակնարկում էր՝ միանալ ու միավորվել: Բայց այն, որ Հովհաննեսի մկրտությունը շատերին հավաքում էր իր շուրջ, արդեն սկսում էր անհանգստացնել Հերովդես Անտիպասին, որ հանկարծ չլինի, թե «յապստամբութիւն ինչ

5 **William Barclay,** The Gospel of Matthew, In 2 vol., vol. 1, Edinburgh, 1975, p. 48 (այսուհետեւ՝ **Barclay,** The Gospel of Matthew):

6 The Gospel of Matthew 1, p. 51, William Barclay. The Gospel of Luke, Edinburgh, 1975, p. 34 (այսուհետեւ՝ **Barclay**. The Gospel of Luke):

7 Հմմտ. **Давид Штраус**, Жизнь Иисуса, **Эрнест Ренан**, Жизнь Иисуса, Харьков, Москва, 2000, էջ 232 (այսուհետեւ՝ "Жизнь Иисуса"):

8 «Հրեայքն» ասելով (Յովհ. Ա 19) Հովհաննես Ավետարանիչը հիմնականում նկատի ունի հրեա առաջնորդներին, որ այս Ավետարանում հանդիպող շուրջ 70 հատվածներում որպես ընդդիմադիր են հանդես գալիս (տես "Толковая Библия", էջ 999. The NIV Bible, Hodder և Stoughton, London, Sydney, Auckland, 2003, էջ 1562-ի փողատակ (այսուհետեւ՝ NIV Bible). **Barclay,** The Gospel of John 1, էջ 76):

9 Այս մասին ակնարկ կա նաեւ Հովսեփոս Փլաբիոսի «Հրեական պատերազմ» գրքում (4/5:4), սակայն դարձյալ կիսաձայն ասված (տես **Д. Мережковский**, Иисус неизвестный, Харьков, Москва, 2000, էջ 176 (այսուհետեւ՝ Иисус неизвестный)):

բերեցին»[10], ինչի համար էլ Հովհաննեսը բանտարկվեց: Սա իր հերթին է հուշում, որ մեսիական գաղափարախոսությունը՝ հրեական ընդվզումների այդ անդադրում աղբյուրը, Մկրտչի քարոզչությանը օտար չէր[11]:

Այսպես, Հովհաննեսին ուղղված հարցից՝ «Դու ո՞վ ես», նրա եւ Սանհեդրինի պատվիրակության ու փարիսեցիների[12] (Յովհ. Ա 24) միջեւ երկար խոսակցություն է ծագում. «Եւ խոստովան եղեւ՝ եւ ո՛չ ուրացաւ. եւ խոստովա՛ն եղեւ եթէ ես՝ ո՛չ եմ Քրիստոսն: Եւ հարցին ցնա. Իսկ՝ ո՞վ ես դու, Եղիա՞ ես: Եւ ասէ. Ո՛չ եմ: Իսկ մարգարէ՞ն ես դու: Պատասխանի եւ, թէ ո՛չ: Իսկ ասա՛ մեզ. Դու ո՞վ ես, զի պատասխանի՛ տարցուք որոց առաքեցինն զմեզ. զի՞ ասես վասն քո: Ասէ. Ես՝ ձա՛յն բարբառոյ յանապատի. ուղի՛ղ արարէք զճանապարհն Տեառն, որպէս ասա՛ց Եսայի մարգարէ: Եւ որք առաքեցանն՝ ի փարիսեցւո՛ց անտի էին: Հարցին ցնա՝ եւ ասեն. Իսկ՝ զի՞ մկրտես՝ եթէ դու չե՛ս Քրիստոսն, եւ ո՛չ Եղիա, եւ ո՛չ մարգարէն: Պատասխանի՛ եւ նոցա Յովհաննէս՝ եւ ասէ. Ես՝ մկրտեմ զձեզ ջրո՛վ. ի միջի ձերում կայ զոր դուքն ո՛չ գիտէք. որ զկնի իմ գալոցն է, որում չե՛մն արժանի՝ եթէ լուծից զխրացս կօշկաց նորա» (Յովհ. Ա 20-27):

Առաջին հարցը, որ տալիս են Հովհաննեսին, անորոշ է, սակայն Հովհաննեսը, կարծես հասկանալով հարցի բուն իմաստը, միանգամից պատասխանում է, որ ինքը Քրիստոսը, այսինքն՝ Մեսիան չէ: Ա դարում կեղծ մեսիական «հայտնություններն» այնքան շատ էին, որ, բնականաբար, հրեաներն առաջնահերթ նման ուղղությամբ պետք է հարց տային: Սակայն տարօրինակ է, որ գիտենալով մարգարեությունը (Ես. ԺԱ 1, Երեմ. ԻԳ 5), ըստ որի Մեսիան պետք է լինի Դավթի շառավիղ, նրանք հարցով դիմում են Ահարոնի զարմից (հմմտ. Ղուկ. Ա 5-6) սերած Հովհաննես Մկրտչին: Վաղ մեկնիչները կարծում են, թե դրա նպատակը «ա-յդ» լսելն էր Հովհաննեսի շուրթերից եւ ձերբակալել նրան ապտվածհայհոյիչ նկրտումների պատրվակով[13]: Ինչ վերաբերում է Մկրտչի կտրուկ հրաժարմանը, ապա պարզ է, որ Հովհաննեսը, որպես ճշմարիտ մարգարե, պիտի հրաժարվեր իր վրա վերցնել մեսիականությունը, սակայն նկատենք, որ պատասխանի նման ձեւակերպման մեջ կա նաեւ Դ Ավետարանչի «մեղավորությունը»: Բանն այն է, որ Ա դարում ոմանք, ինչ-ինչ հանգամանքներից ելնելով, Հովհաննեսին ավելի էին գնահատում, քան Քրիստոսին[14] եւ անգամ կարծիք գոյություն ունի, թե Հովհաննեսի հետեւորդներն աղանդ էին ձեւավորել (հմմտ. Գործք ԺԹ 3-5)[15], ուստի Հովհաննես Ավետարանիչը Դ Ավետարանն սկսում է ապտվածաբանական մոտեցմամբ՝ ցույց տալով, որ Մկրտիչը Քրիստոսը չէ՝ ի տարբերություն մյուս երեք ավետարանիչների,

10 Տե՛ս **Մկրտիչ վրդ. Ալգերեան**, Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, Հատոր Ապայից, Վենետիկ, 1810, էջ 34-45 (այսուհետեւ՝ **Ալգերեան** Ա), հմմտ. **Иосиф Флавий**, Иудейские Древности, В 2-х томах. Москва, 1996, т. 2, էջ 223 (այսուհետեւ՝ «Иудейские Древности»), **Ն. Ալեքսանդր Մեն,** Մարդու Որդին, Եր., 2007, էջ 320 (այսուհետեւ՝ Մարդու Որդին):

11 «Жизнь Иисуса», էջ 232-233:

12 Փարիսեցիների՝ այնտեղ գտնվելու հարցի մասին մանրամասն տես "Толковая Библия", էջ 1000-1001:

13 Տե՛ս "Толковая Библия" էջ 999:

14 Տե՛ս **Դոկտ. Ներսէս աւագ քհն. Ներսեսեան,** Նոր Կտակարանական ուսումնասիրութիւններ (Բնագիրը եւ Ապտվածաբանութիւնը), Եր., 1993, էջ 81-87 (այսուհետեւ՝ «Նոր Կտակարանական ուսումնասիրություններ»):

15 **Կրեյգ Քիներ,** Ապտվածաշունչ՝ հենքի մեկնություն. Նոր Կտակարան, Հայ Ավետարանչական ընկերություն, Եր., 2004, էջ 298 (այսուհետեւ՝ **Քիներ**): New Bible Commentary, Inter-Varsity Press, Leicester, England, 2005, էջ 1026 (այսուհետեւ՝ "New Bible Commentary"):

ովքեր պատմական մոտեցում են ցուցաբերում՝ սկսելով իրենց գրվածքները Հովհաննես Մկրտչի կյանքի նկարագրությամբ[16]: Հովհաննես Կարապետը Դ. Ավետարանում հանդես է գալիս միանգամայն անդեմ՝ երևալով որպես լոկ Մեսիայի վկա եւ Նրան մատնանշող. թեեւ նրա տեղն ու դերը շատ բարձր է, սակայն կա իրենից բարձր Մեկը[17]: Այնուհետեւ պատվիրակները հարցնում են. «Իսկ՝ ո՞վ ես դու, Եղիա՞ ես» (Յովհ. Ա 21), որին Հովհաննեսը դարձյալ բացասաբար է պատասխանում: Հիմք ընդունելով Մաղաքիայի մարգարեության Դ 5 համարը[18]. «Եւ ահա ե՛ս առաքեմ առ ձեզ զԵղիա Թեզբացի. մինչեւ եկեալ է օր Տեառն մեծի եւ երեւելւոյ»՝ հրեա օրենսգետները Մեսիայի գալուստից առաջ[19] սպասում էին նախ Եղիա մարգարեին (հմմտ. Մարկ. Թ 10)[20], որ պիտի գար որպես գալիք Արքայության սուրհանդակ[21]: Հավատալիքը մեծապես կապված էր Եղիայի՝ անմահ լինելու գաղափարի հետ (տե՛ս Դ Թագ. Բ 11), ուստի նրա վերադարձի ակնկալիքը չէր լքում հրեաներին[22]: Նման ակնկալիքի հետքեր ենք գտնում նաեւ Քումրանի ձեռագրերից մեկում, ուր ասվում է. «Սկզբում ես կուղարկեմ Եղիային», սակայն տեքստն այսքանով ավարտվում է[23]: Ոմանք ենթադրում էին, թե Եղիայի հետ կգան նաեւ Ենոքը կամ Իսրայելի պաշտպան Երեմիան[24]: Ի՞նչ ակնկալիքներ ունեին հրեաները Եղիայից: Մարգարեն ապաշխարության ճանապարհով Աստծուն պիտի հաշտեցներ մարդկանց հետ[25], որպեսզի ժողովուրդը պատրաստ լիներ Մեսիային ընդունելու: Նա պետք է վերացներ բոլոր անհաշտությունները, զատեր մաքուրներին անմաքուրներից, հաստատեր թե ո՞վ է հրեան եւ ով՝ ոչ հրեան, վերամիավորեր մասնատված ընտանիքները (հմմտ. Մաղաք. Դ 6): Եղիային համարելով հրեական օրենքի վարդապետ՝ հրեաներն անլուծելի թվացող հարցերի ու թնջուկների լուծումները հետաձգում էին մինչեւ նրա գալուստը[26]: Գոյություն ուներ նաեւ կարծիք, թե Եղիան պիտի օծեր Մեսիային թագավորության համար[27] եւ լիներ ավարտի ազդարարողը[28]: Մինչեւ այսօր էլ հրեաները սեղան նստելիս ազատ են թողնում Եղիայի աթոռը, դրա դիմաց գինի են դնում եւ լայն բացում են տան դռները՝ հույս ունենալով, որ Եղիան պիտի մտնի եւ ազդարարի Մեսիայի գալուստը[29]:

---

16 «Նոր Կտակարանական ուսումնասիրություններ», էջ 86:

17 Տե՛ս "Жизнь Иисуса", էջ 485. **Barclay.** The Gospel of John 1, էջ 49-50:

18 «Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանների», Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, 2004 (այսուհետեւ՝ «Աստուածաշունչ Մատեան») արեւելահայերենում գոյություն ունի համարների տարբերություն. Եղիայի մասին հատվածը Դ 4-ն է:

19 Նկատենք, որ Մաղաքիա մարգարեն ասում է. «մինչչեւ եկեալ է օր Տեառն», որը մեծ մասամբ կապում են Մեսիայի գալստյան օրվա հետ, բայց ենթադրելի վարկածներ են նաեւ Ահեղ դատաստանի օրը (հմմտ. Հր ԺԱ 3-12) եւ մեռյալներից հարության օրը ("Иисус и Евангелия", էջ 266. "Мифы народов мира", Энциклопедия, том 1, Москва, 1986, էջ 551 (այսուհետեւ՝ "Мифы народов мира")):

20 Տե՛ս "Иисус и Евангелия", էջ 266. New Bible Commentary, p. 1027, "The Oxford Bible Commentary", Oxford, 2007, էջ 888 (այսուհետեւ՝ The Oxford Bible Commentary).

21 Տե՛ս **Barclay.** The Gospel of Matthew 1, էջ 45:

22 Տե՛ս **Քիներ**, էջ 299:

23 Տեղեկությունը քաղել ենք "Иисус и Евангелия", էջ 266-ից:

24 Տե՛ս "Жизнь Иисуса", էջ 852:

25 Տե՛ս անդ:

26 Տե՛ս **Barclay.** The Gospel of John 1, էջ 78, **Քիներ**, էջ, 299, "Жизнь Иисуса", էջ 800:

27 Տե՛ս **Barclay.** The Gospel of John 1, էջ 78, "Мифы народов мира", էջ 551:

28 Տե՛ս **Barclay**. The Gospel of Mark, Edinburgh, 1977, 213 (այսուհետեւ՝ **Barclay.** The Gospel of Mark):

29 Տե՛ս **Barclay.** The Gospel of Mark, p. էջ 147. **William Barclay**. The Gospel of Matthew, In 2 vol., vol. 2, Edin-

Ընդհանուր առմամբ պատմական Եղիայի կերպարը բավական մոտ է Հովհաննես Մկրտչի ասկետիկ կերպարին: Դրա ապացույցն են հատկապես անապատական կենցաղը, մարգարեական շնորհը, բոցաշունչ քարոզչությունն ու նախանձախնդրությունը, ինչպես նաեւ հագուստը՝ կաշվե գոտի եւ ուղտի մազից գգեստ (Մատթ. Գ 4, Մարկ. Ա 6, հմմտ. Դ Թագ. Ա 8)[30]: Այս էական հանգամանքներից ելնելով է սանհեդրինի պատվիրակությունը հարցնում՝ գուցե Հովհաննեսը սպասված Եղիան: Տարօրինակ է Մկրտչի ժխտումը. դեռեւս նրա ծննդյան ավետիսի ժամանակ էր Գաբրիել հրեշտակապետն ասել, որ Հովհաննեսը «եկեսցէ՛ ... հոգւով զօրութեամբ Եղիայի» (Ղուկ. Ա 17), ինչն ուղղակիորեն օրհներգել էր նաեւ Զաքարիան. «Երթիցե՛ս առաջի երեսաց Տեառն՝ պատրաստել զճանապարհս նորա» (Ղուկ. Ա 76)՝ հենվելով Մաղաքիայի մեկ այլ մարգարեությանը (Մաղ. Գ 1): Հետագայում Հիսուսն էլ, ինչպես նշում են համատեսները, շեշտում եւ ասում է, որ Եղիան եկել է, եւ նա հենց Հովհաննես Մկրտիչն է (տե՛ս Մատթ. ԺԱ 14, ԺԷ 11-13, Մարկ. Թ 11-12): Այդ դեպքում ինչո՞վ էր պայմանավորված Կարապետի կտրուկ հրաժարումը: Մեկնիչները դրա պատճառ են համարում այն, որ Մկրտիչը Հովհաննեսն էր եւ ոչ Եղիան ուղղակի իմաստով. նա եկել էր «հոգւով զօրութեամբ Եղիայի». նա Հին Կտակարանի Եղիան չէր, այլ երկրորդ Եղիան, նա Եղիա էր հոգեւոր իմաստով: Բացի այդ Հովհաննես Մկրտիչը կարծես միշտ խոնարհաբար է հանդես գալիս՝ հրաժարվելով որդեգրել մարգարեական որեւէ կոչում[31] եւ առավելաբար բարձրացնել իր ետեւից Եկողին՝ Քրիստոսին[32]: Լսելով, որ Հովհաննեսը Եղիա մարգարեն չէ՝ պատվիրակությունը հարցնում է. «Իսկ՝ մարգարէ՞ն ես դու» (Յովհ. Ա 21): Հիմնվելով Բ Օր. ԺԸ 15, 18 համարներին՝ հրեաները սպասում էին, որ Մեսիայի հետ (կամ նրանից առաջ) պիտի գան Եսայի եւ հատկապես Երեմիա մարգարեները (հմմտ. Մատթ. ԺԶ 14): Այս խոստումը հրեաները երբեք չէին մոռանում եւ հույսով սպասում էին (հմմտ. Յովհ. Զ 14): Սակայն Մկրտիչը ժխտական է պատասխանում նաեւ այս հարցին[33]:

Տեսնելով, որ չեն կարողանում Հովհաննեսից լսել վերջնական պատասխան՝ պատվիրակության անդամները հարցնում են. «Իսկ ասա՛ մեզ. Դու ո՞վ ես» (Յովհ. Ա 22): Հարցին Հովհաննեսն անվարան պատասխանում է. «Ես՝ ձա՛յն բարբառոյ յանապատի» (Յովհ. Ա 23): Եսայիի այս մարգարեությունը (Ես. Խ 3) քիչ հավելումներով նշում են նաեւ համատեսները (Մատթ. Գ 3, Մարկ. Ա 3, Ղուկ. Գ 4-5), սակայն մի փարբերությամբ. այն դեպքում, երբ համատեսները Կարապետին վերագրում են Եսայիի մարգարեությունը, Հովհաննեսի Ավետարանում Մկրտիչն ինքն է իրեն այն վերագրում՝ հանդես գալով որպես Տիրոջ ճանապարհը պատրաստող: Հնում Արեւելքում ճանապարհ անցնելը բավական խնդրահարույց էր. դժվարանցանելի այդ ճանապարհի անվանվածներն ընդամենը միեւնույն վայրով անցած մարդկանց, կենդանիների եւ սայլերի ստեղծած խորդուբորդ ու փոշոտ շավիղներ էին:

burgh, 1975, p. 5 (այսուհետեւ՝ **Barclay**. The Gospel of Matthew 2).

30 Հմմտ. "Мифы народов мира", էջ 551. **Barclay,** The Gospel of Matthew 1, էջ 45. **Քիներ**, էջ 50, 80: "Жизнь Иисуса" էջ 800. **Barclay.** The Gospel of Mark, էջ 16, "The Oxford Bible Commentary", էջ 888:

31 Հմմտ. "Толковая Библия", էջ 280, 367:

32 Հմմտ. "Жизнь Иисуса", էջ 482:

33 Տես **Barclay,** The Gospel of John 1, 78. Толковая Библия, էջ 1000:

Դրանց կապակցությամբ հին արեւելյան ասացվածքն ասում էր. «Գոյություն ունի երեք դժբախտություն՝ հիվանդությունը, քաղցած որովայնը, ճանապարհորդությունը»: Սակայն գոյություն ունեին նաեւ մի քանի հարթ ճանապարհներ՝ խճուղիներ, որոնք կառուցում էին արքաները՝ ի նշան թագավորության մեծության եւ հարստության. ճանապարհներն այդպես էլ կոչվում էին՝ «արքայական»: Դրանք վերանորոգվում էին հատկապես այն ժամանակ, երբ թագավորները պիտի ճամփորդեին: Այդ նպատակով նրանց ճամփա ընկնելուց առաջ հրաման էր տրվում պատրաստել թագավորի ճանապարհները[34]: Հետեւելով այս օրինակին՝ Հովհաննեսը պատվիրում է պատրաստվել արքային դիմավորելու: Կարծես չբավարարվելով Հովհաննեսի պատասխանով՝ հրեա պատվիրակները դարձյալ դիմում են հարցով. «Իսկ՝ զի՞ մկրտես՝ եթէ դու չե՛ս Քրիստոսն, եւ ո՛չ Եղիա, եւ ո՛չ մարգարէն» (Յովհ. Ա 25): Մերժելով իր՝ Մեսիան, Եղիան եւ մարգարեն լինելու հանգամանքը՝ Հովհաննես Մկրտիչը փորձում էր շեշտած լինել իր փոքրությունը Հիսուսից[35]: Ի պատասխան վերոնշյալ հարցի՝ ասում է. «Ես՝ մկրտեմ զձեզ ջրո՛վ. ի միջի ձերում կայ զոր դուքն ո՛չ գիտէք. որ զկնի իմ գալոցն է, որում չե՛մն արժանի՝ եթէ լուծից զիտրացս կօշկաց նորա» (Յովհ. Ա 26): Այս հատվածի զուգահեռները գտնում ենք նաեւ մյուս երեք Ավետարաններում եւ անգամ Գործք Առաքելոցում (Մատթ. Գ 11, Մարկ. Ա 7, Ղուկ. Գ 16, Գործք ԺԳ 25), ուր վերջիններս փոքր, բայց չափազանց կարեւոր հավելումներ են անում: Այսպես, եթե ամենավաղ գրված Ավետարանի՝ Մարկոսի վրա հավելենք մյուս ավետարանիչների լրացումները, կստանանք հետեւյալ պատկերը. «Գայ զօրագոյնն քան զիս զկնի իմ (Մարկ. Ա 7), զոր՝ի միջի ձերում կայ զոր դուքն ո՛չ գիտէք (Յովհ. Ա 26), որում չե՛մ բաւական խոնարհել՝ լուծանե՛լ զիտրացս կօշկաց նորա (Մարկ. Ա 7, հմմտ. Յովհ. Ա 27) կամ բառնալ զկօշիկս նորա (Մատթ. Գ 11, հմմտ. Ղուկ. Գ 16): Ես՝ մկրտեցի զձեզ ջրո՛վ, եւ նա մկրտեսցէ զձեզ Հոգո՛վ Սրբով (Մարկ. Ա 7) եւ հրով (Ղուկ. Գ 16, հմմտ. Մատթ. Գ 11)»: Ակնհայտ է, որ Այստեղ Հովհաննեսը խոսում է նախ իր եւ իր, ապա իր ու եւ իր Եկողի մկրտությունների ու գործունեության մասին՝ շեշտը դնելով իր նվազեցման վրա, ինչպես եւ մինչեւ այդ էր արել՝ վկայելով. «Սա՛ է՝ զորմէ ասէի. Որ զկնի իմ գալոցն էր, առաջի իմ եղեւ, զի նա՝ն քան զիս էր» (Յովհ.Ա 15):

Այն, որ իրենից Զորեղն իրենից հետո է գալիս, կարելի է հասկանալ մի քանի կերպ: Նախ դա կարող է ունենալ զուտ ժամանակագրական իմաստ[36]. Հովհաննեսն ասպարեզ ելավ ավելի վաղ (Քրիստոսից շուրջ վեց ամիս առաջ)[37] պատրաստելու Հիսուսի ճանապարհը: Հնարավոր է նաեւ, որ Մկրտիչը նկատի ունենար այն, որ Հիսուսն իրենից հետո է ծնվել: Բայց ամենահավանական վարկածը, ըստ մեզ, բացահայտում է Յովհ. Ա 15-ը, ուր նրբորեն առաջ է քաշված աստվածաբանական իրողություն՝ Քրիստոս Աստծո հավիտենական առաջնությունը, այսինքն՝ Հորից անճառելի ծնունդը[38]: Սա՛ է կարծես հաջորդող պատկե-

34 Տե՛ս **Barclay.** The Gospel of Matthew 1, էջ 45:

35 Տե՛ս «Նոր Կտակարանական ուսումնասիրություններ», էջ 83:

36 Տե՛ս **Քիներ**, էջ 300:

37 Տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան**, Համապատում, Ս. Էջմիածին, 1997, էջ 64 (այսուհետեւ՝ Համապատում), **Բ. Եղիայեան**, Քննական պատմութիւն սուրբգրական ժամանակներու, Դ գիրք, Ներածութիւն Նոր Կտակարանի, Անթիլիաս-Լիբանան, 1974, էջ 922 (այսուհետեւ՝ **Եղիայեան**):

38 Տե՛ս**Barclay,** The Gospel of John 1, էջ 70-71:

բավոր օրինակում ապացուցում Հովհաննեսը, երբ իրեն անարժան է համարում խոնարհվելով հանել կամ արձակել Եկողի կոշիկները: Նման աշխատանքն առհասարակ ստրուկների գործն էր՝ ամենանվաստացուցիչը նրանց ծառայության մեջ: Ռաբբիներն ասում էին, որ աշակերտը պարտավոր է իր ուսուցչի համար անել ամեն ինչ, բացի կոշիկների կապերն արձակելուց: Հովհաննեսն այս պատկերով ցույց է տալիս իր բացառիկ խոնարհությունը եւ հնազանդությունը Եկողի մեծության հանդեպ՝ ցածր համարելով իրեն անգամ ստրուկից[39]: Դրանից հետո, կարծես հետեւելով նույն սկզբունքին՝ Հովհաննեսը հայտարարում է, որ իր կատարած՝ ջրով մկրտությունը ոչինչ է՝ համեմատած այն մկրտության հետ, որն իր ետեւից Եկողը պիտի բաշխի. սա արդեն լինելու է Սուրբ Հոգու եւ կրակի՝ հրի մկրտություն: Պարզ է, որ հրեաները չէին ունենա Սուրբ Հոգու վերաբերյալ այն գաղափարը, ինչ այսօր քրիստոնյաները, սակայն հինկտակարանյան մի շարք վկայություններ (Ծնն. Ա 2, ԽԱ 38, Դատ. Գ 10, Բ Թագ. ԻԳ 2, Սաղմ. Ծ 13-14, Ես. ԼԲ 15, ԿԳ 10-11, Յովհ. 29, Եզ. 14) հուշում են, որ Աստծո Հոգու կամ Սուրբ Հոգու մասին որոշ պատկերացում, այնուամենայնիվ, եղել է: Ողջ պատմության ընթացքում հրեա ժողովուրդը սպասել է, թե ե՛րբ պիտի գար նոր Հոգին: Եբրայերենում հոգին רוח (ruah) է, որ թարգմանվում է նաեւ շունչ, քամի[40]: Ըստ հրեաների՝ Հոգին մարդկանց աստվածային ճշմարտության է բերում: Այն մուտք է գործում մարդկային գիտակցության մեջ եւ մարդկային ենթադրությունները վերածում է աստվածային հաստատման, մարդկային անգիտությունը՝ աստվածային գիտության: Երբ այն մտնում է սրտերից ներս, մարդու աչքերից ընկնում են կուրացնող նախապաշարումները, եւ մարդը կարողանում է տեսնել ճշմարտությունը: Հոգին հրեական պատկերացումներում կենսատու եւ ստեղծող ուժ էր ու զորություն[41]:

Շատ ավելի դժվար էր հասկանալ, թե ի՞նչ նկատի ուներ Կարապետը հրով մկրտություն ասելով: Եթե հարցին մոտենանք բարոյագիտական տեսանկյունից, ապա «կրակ» բառն ամփոփում է լույսը, ջերմությունը եւ մաքրագործելու հատկությունը, որոնք մարդ արարածը կարող էր ձեռք բերել, երբ Քրիստոս մտներ նրա սրտից ներս: Մյուս կողմից, հավանաբար, «կրակ» բառով Մկրտիչը պատկերավորում էր Սուրբ Հոգու զորությունը եւ մաքրագործող հատկությունը: Ոմանք կարծում են, թե Կարապետը նկատի ունի գեհենի կրակը կամ դատաստանը[42], եւ կամ Գործք Բ 2-17-ում նկարագրված Սուրբ Հոգու էջքը կրակի լեզուների տեսքով առաքյալների վրա (հմմտ. Գործք Ա 5)[43]: Ենթադրություն կա նաեւ որ «Հոգով եւ հրով մկրտությունը» փոխաբերություն է, որ օգտագործում էր Հովհաննեսը սպասված (Զաք.

39 Տե՛ս **Barclay,** The Gospel of John 1, էջ 79-80. **Barclay.** The Gospel of Matthew 1, էջ 48, "Толковая Библия", էջ 73:

40 Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ Աբբահօր Հ. Գաբրիէլի Ալեպիքեան, Հ. Խաչատրոյ Սիւրմէլեան, Հ. Մկրտչի Ազերեան», հ. Բ, Վենետիկ, 1837, էջ 503 (այսուհետեւ՝ ՆՀԲ, հ. 2), **Տր. Աճառյան,** Հայերեն արմատական բառարան, հ. 3, Եր., 1977, էջ 107-108, **Հակոբ Քյոսեյան**, Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Ս. Էջմիածին, 1995, էջ 36 (այսուհետեւ՝ Դրվագներ):

41 Տե՛ս **Barclay.** The Gospel of Matthew 1, էջ 48-50, **Barclay.** The Gospel of John 1, էջ 83-84, 84-85:

42 Տե՛ս "New Bible Commentary", p. 986. The Oxford Bible Commentary, էջ 851, "Толковая Библия", 73-74. "Всемирная Энциклопедия. Христианство", Минск, 2004, էջ 271 (այսուհետեւ՝ "Христианство"), **Джеймс Д. Данн,** Единство и многообразие в Новом Завете, Москва, 1997, էջ 192 (այսուհետեւ՝ **Данн**):

43 "New Bible Commentary", էջ 986. The Oxford Bible Commentary, էջ 851. "Толковая Библия", էջ 73-74.

ԺԴ 12-15, Դան. ԺԲ 1) գալիք մեսիական արհավիրքների եւ ծանր փորձությունների մասին խոսելիս[44]:

Գոյություն ունեն Մկրտչի եւ հրեա կրոնավորների խոսակցությունների այլ՝ ոչ կանոնական տարբերակներ: Նիկոդեմոսի պարականոն ավետարանում ի պատասխան Հովհաննես Մկրտչին տրված «Ո՞վ ես դու» հարցին Կարապետը պատասխանում է. «Ես Հովհաննեսն եմ, Բարձրյալի ձայնը եւ մարգարեն, որը նախորդում է Նրա գալուստին, որպեսզի պատրաստի Նրա ժողովրդի փրկության ընդունումը՝ ի թողություն մեղքերի»[45]: Մեկ այլ ավանդություն գտանք Ալեքսանդր Մենի «Մարդու Որդին» գրքում. մի անգամ Մկրտիչն այցելել է Երուսաղեմ եւ այնտեղ հանդես է եկել խորհրդի անդամների դեմ (ամենայն հավանականությամբ Սանհեդրինի - *Ա.Ս.*): Երբ նրան հարցրել են, թե ով է եւ որտեղից, Հովհաննեսը պատասխանել է. «Ես մարդ եմ եւ ապրում եմ այնտեղ, ուր առաջնորդում է ինձ Աստծո Հոգին, սնվել եմ արմտիքով եւ բնձյուղներով»: Ներկաները մահվան սպառնալիքով պահանջում են Հովհաննեսից՝ դադարի մոլորեցնել ժողովրդին, իսկ Հովհաննեսը համարձակ պատասխանում է. «Դուք պետք է վերջ տաք ձեր ստոր արարքները գործելուն եւ կապվեք ձեր Տեր Աստծուն»: Մկրտչի խոսքի վրա Սիմոն անվամբ մի եսենական քամահրանքով նկատում է. «Մենք ամեն օր կարդում ենք Սուրբ Գիրքը, իսկ դու հանց գազան նոր ես անտառից դուրս ելել, համարձակվում ես մեզ սովորեցնել եւ զայթակղեցնել մադկանց քո խռովարար խոսքերով»[46]: Այս խոսակցությունից հետո Մկրտիչն այլեւս ոտք չի դնում Երուսաղեմ:

Ավարտելով Մկրտչի քարոզչությունը ներկայացնելը՝ Ղուկաս Ավետարանիչը գրում է. «Բազում եւ ա՛յլ ինչ մխիթարութեամբ աւետարանէր ժողովրդեանն» (Ղուկ. Գ 18): Ղուկասի այս խոսքը մասնակիորեն արդարացնում է Հովհաննես Ավետարանիչը՝ խոսելով նաեւ Սանհեդրինի ուղարկած պատվիրակության հետ Մկրտչի ունեցած զրույցին հաջորդող մի քանի օրերի մասին: Այսպես Դ Ավետարանիչը գրում է. «Ի վաղիւ անդր տեսանէ զՅիսուս զի գա՛յր առ նա, եւ ասէ. Ահաւասիկ Գա՛ռն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշխարհի: Սա՛ է՝ վասն որոյ ասի. Զկնի իմ գայ՝ այր, որ առաջի իմ եղեւ, զի յառա՛ջ իսկ էր քան զիս: Եւ ես՝ ո՛չ գիտէի զնա. այլ զի յայտնի լինիցի Իսրայէլի, վասն ա՛յնորիկ եկի ես ջրով մկրտել» (Յովհ. Ա 29-31): Միեւնույն բովանդակությամբ համառոտ տեքստի հանդիպում ենք նաեւ Նիկոդեմոսի Ավետարանում. «Եւ տեսնելով Նրան ինձ մոտ գալուց Սուրբ Հոգով լցվեցի ես ու ասացի. «Ահա Գառն Աստծո, ահա նա, ով Իր վրա կրում է համայն աշխարհի մեղքերը»[47]: Թեեւ երկու աղբյուրները չեն բացահայտում Հիսուսի՝ Հովհաննեսի մոտ գնալու նպատակը, սակայն երկուսն էլ Հիսուսին անվանում են «Գառն Աստուծոյ», որ կրում կամ վերացնում է աշխարհի մեղքերը: Այս մտքի մասին կարծիքները բազմազան են.

---

44 Տե՛ս **Данн**, էջ 192:

45 “Книга Апокрифов” (Неканонические Евангелия), Москва, 2006, էջ 286. (այսուհետեւ՝ “Книга Апокрифов”).

46 «Մարդու Որդին», էջ 58-59: Այս ավանդությունը, ըստ հ. Ալ. Մենի, առկա է Հովսեփոս Փլաբիոսի «Հրեական հնախոսությունների» սլավոնական տարբերակում: Շարահյուսական ճշգրտությունից ելնելով՝ ուրիշի ուղղակի խոսքում կատարել ենք աննշան փոփոխություններ (*Ա. Ս.*):

47 “Книга Апокрифов”, с. 286.

ա. Հնարավոր է՝ Հովհաննեսը[48] Զատկի գոնի մոտ լինելու (հմմտ. Յովհ. Բ 13) համար նկատի ուներ զատկական գառը: Ելից գրքում (ԺԲ) պատմվում է Զատկի գոնի հաստատման մասին, ուր Տերը խնայում է բոլոր այն բնակիչներին, որոնց տների դռներին զետված գառան արյունով նշան կար դրված (ԺԲ 11-13): Հետագայում Հիսուսին «զատիկ» անվանեց նաեւ Պողոս Առաքյալը (Ա Կորնթ. Ե 7): Ինչպես Զատկի գառը փրկեց Իսրայելացիներին ոչնչացումից, այդպես այս Գառը պիտի վերացներ աշխարհի մեղքերը[49]:

բ. Լինելով քահանայի որդի՝ Հովհաննեսը պետք է ծանոթ լիներ զոհաբերային բոլոր ծեսերին եւ զոհաբերություններին: Համաձայն Ելք ԻԹ 38-42-ի՝ յուրաքանչյուր առավոտ եւ երեկո (անգամ սովի եւ պատերազմի պայմաններում) զոհաբերվում ժողովրդի մեղքերի համար: Գուցեեւ Հովհաննեսը ուզում էր ասել, որ միայն Հիսուս կարող է լիովին ազատել մեղքերից[50]:

գ. Հնարավոր է նաեւ, որ Հովհաննեսը հիշեցնում էր Աստծո Գառի մասին մարգարեությունները՝ «Ես իբրեւ զգառն անմե՛ղ վարեալ ի սպանդ. ո՛չ գիտացի թէ զինէն խորհեցան խորհուրդ չար, եւ ասեն. Եկա՛յք արկցուք փա՛յտ ի հաց նորա, եւ ջնջեսցուք զնա յերկրէն կենդանեաց. եւ անուն նորա մի՛ եւս յիշեսցի» (Երեմ. ԺԱ 19) եւ «Իբրեւ ոչխա՛ր ի սպանդ վարեցաւ. իբրեւ որոջ առաջի կտրչի անմռունչ կայ» (Ես. ԾԳ 7): Հովհաննեսը նկատի ունի, որ դրանք վերջապես կատարվում են եւ «Տէր մատնեաց զնա առ մեղս մեր» (Ես ԾԳ 6)[51]:

դ. Մակաբայեցիների շրջանում եղջյուրավոր գառը (հայերենում դա հավանաբար «խոյ» կենդանի - *Ա.Ս.*) խորհրդանիշն էր մեծ հաղթանակողի. Հուդա Մակաբայեցուն նկարագրում էին այնպես, ինչպես ժամանակին Դավիթ մարգարեին կամ Սողոմոն թագավորին: Հնարավոր է, որ «Գառ» ասելով՝ Հովհաննեսը նկատի չուներ թույլ ու խոնարհ մի կերպար, այլ՝ ուժեղ եւ հաղթանակող[52]: Հետագայում «Գառն Աստուծոյ» արտահայտությունը դարձավ Հիսուս Քրիստոսի տիտղոսներից մեկը (հմմտ. Ա Պետր. Ա 19, Յայտ. Է 17, ԺԷ 14, ԻԱ 22-23):

Այնուհետեւ ներկաներին Հովհաննեսը կրկնում է այն խոսքերը, որոնք հանդիպում ենք դեռեւս Յովհ. Ա 15 համարում եւ ավելացնում է. «Եւ ես՝ ո՛չ գիտէի զնա. այլ զի յայտնի լինիցի Իսրայէլի, վասն այնորիկ եկի ես ջրով մկրտել» (Յովհ. Ա 31): Այն, որ նա չգիտեր, չէր ճանաչում Հիսուսին, կրկնվում է նաեւ Յովհ. Ա 33-ում եւ շատ պարադոքսալ է երեւում. ինչպե՞ս կարող էր Հովհաննեսը չճանաչել Հիսուսին, Ով իր ազգականն էր[53], ինչպե՞ս կարող էր չիմանալ Նրան, երբ դեռ չծնված՝ ճանաչել եւ խաղացել էր մոր որովայնում Տիրոջ առաջ (Ղուկ.

48 Չանտեսենք այն, որ որոշ գիտնականներ կարծում են, թե այս խոսքերն իրականում Մկրտիչը չի ասել (պատճառն այն է, որ նրանք Մկրտչի խոսքերում կասկած են նկատում Հիսուսի մեսիականության հանդեպ (հմմտ. Մատթ. ԺԱ 2-3, Ղուկ. Է 18-19), այլ նրան այդ վերագրել է Ավետարանիչը (New Bible Commentary, p. 1028)).

49 Տե՛ս **Barclay.** The Gospel of John 1, էջ 80-81, "The Oxford Bible Commentary", էջ 964, "Толковая Библия", с. 1002.

50 Տե՛ս **Barclay.** The Gospel of John 1, էջ 81. **Архиепископ Аверкий**, Четвероевангелие, Москва, 1999, էջ 77 (այսուհետեւ՝ "Четвероевангелие"). New Bible Commentary, p. 1027.

51 Տե՛ս **Barclay.** The Gospel of John 1, էջ 81, Четвероевангелие, с. 77, New Bible Commentary, էջ 1027, "The Oxford Bible Commentary", էջ 964:

52 Տե՛ս **Barclay.** The Gospel of John 1, էջ 82:

53 Այս հարցի առթիվ Օրմանյան պատրիարքը եւ Ալ. Մենը կարծիք են հայտնում, թե պատճառը դեռեւս մանուկ հասակից ազգականների երկարամյա բաժանումն էր (Տե՛ս «Համապատում», էջ 64: «Մարդու Որդին», էջ 60):

Ա 41): Հիմնական կարծիքն այս հարցի կապակցությամբ այն է, որ Հովհաննեսը նկատի չուներ անճանաչողություն բացարձակ իմաստով, այլ՝ հոգեւոր. նա չգիտեր Հիսուսին որպես Աստծո Որդու եւ Մեսիայի: Նոր միայն նա ճանաչեց Նրան, ինչպես Պողոս առաքյալն է մեկ այլ առիթով ասում. «...զի թէպէտ եւ գիտէա՛ք մարմնով զՔրիստոս, այլ արդ ո՛չ եւս նո՛յնպէս գիտեմք» (Բ Կորնթ. Ե 16)[54]: Հովհաննեսն ասում է, որ ինքն էլ չգիտեր, բայց Աստծուց ուղարկվեց մկրտելու, որպեսզի Մեսիան հայտնի դառնա Իսրայելին[55]:

Ամենայն հավանականությամբ արդեն իսկ այս ժամանակ Քրիստոսի մկրտությունն ավարտվել էր, եւ Կարապետը խոսում էր որպես հիշողություն[56]: Հիսուսի մկրտության մասին խոսում են չորս Ավետարանները. համատեսները գրեթե կրկնում են մեկը մյուսին, իսկ Հովհաննես Ավետարանիչը ներկայացնում է այն որպես Աստվածային բացահայտում Մկրտչի առաջ: Բավական առատ են նաեւ պարականոն գրվածքներն այդ մասին: Այսպես՝ Եբրայեցիների Ավետարանում գրված է. «Տիրոջ մայրը եւ եղբայրները ասացին Նրան. «Հովհաննես Մկրտիչը մկրտում է հապաշխարություն մեղքերի, գնանք եւ մկրտվենք»: Բայց Նա ասաց. «Ի՞նչ մեղք եմ գործել, որ Ես պիտի մկրտվեմ նրանից: Միայն, թերեւս, Իմ խոսքերն են մեղք անգիտության պատճառով»[57]: Այնուամենայնիվ Հիսուսն, ըստ պարականոնի տեղի է տալիս հարազատների թախանձանքին եւ մկրտվում է: Ավետարանիչներն այդ մասին լռկ գրում են, որ երբ ժողովուրդը մկրտվեց[58] (Ղուկ. Գ 21) Հիսուս այդ օրերին Գալիլիայի Նազարեթ քաղաքից եկավ Հորդանան՝ Հովհաննեսից մկրտվելու (Մարկ. Ա 9, Մատթ. Գ 13): Այս ժամանակ Հիսուս «էր ամաց իբրեւ երեսնի՛ց» (Ղուկ. Գ 23), իսկ այդ օրը, ըստ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հաստատած Մկրտության օրվա՝ հունվարի 6-ն է՝ Աստվածահայտնության օրը[59]. «Եւ Յեսր Լ (30) ամի, ի սոյն աւր յունվար ամսոյ, ի Զ յաւուր կիրակէի գայ Յիսուս ի մկրտութիւն ի Յորդանան առ Յովհաննէս»[60]:

Ավետարանիչների շարքում ամենից ընդարձակը Քրիստոսի Մկրտության մասին խոսում է Մատթեոսը. «Եւ Յովհաննէս արգելո՛ւ զնա՝ եւ ասէ. Ինձ պիտոյ է ի քէն մկրտել՝ եւ դու՝ առ ի՞ս գաս: Պատասխանի եւ Յիսուս՝ եւ ասէ ցնա. Թո՛յլ տուր այժմ, զի ա՛յսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւնս: Եւ ապա թո՛յլ եւ նմա: Եւ իբրեւ մկրտեցաւ Յիսուս, ե՛լ վաղվաղակի ի ջրոյ անտի. եւ ահա բացա՛ն նմա երկինք. եւ եղեւս զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի եւ գա՛յր ի վերայ նորա: Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր. Դա՛ է Որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ»: Փոքրիկ տարբերություններ հայտնում է Ղուկասը՝ նշելով, որ Հիսուս մկրտվելու ժամանակ աղոթքի կանգնեց (Ղուկ. Գ 21), եւ որ Սուրբ Հոգին «մարմնաւոր տեսլեամբ» էր որպես աղավնի իջնում (Ղուկ. Գ 22):

---

54 New Bible Commentary, p. 1028. «Մարդու Որդին», էջ 60: **Barclay.** The Gospel of John 1, p. 82. “Толковая Библия”, с. 1003. Иисус неизвестный, с. 177-178.

55 “Толковая Библия”, с. 1002.

56 Տե՛ս **Barclay.** The Gospel of John 1, էջ 80, Մարդու Որդին, էջ 60-62:

57 “Апокрифы древних христиан” (Иследование, тексты, комментарии), Москва, 1989, с. 68 (այսուհետեւ՝ “Апокрифы древних христиан”).

58 Այսպես է գրված նաեւ Էբիոնիտների Ավետարանում (տե՛ս “Апокрифы древних христиан”, էջ 66):

59 Տե՛ս «Գիրք թղթոց», Երուսաղեմ, 1994, էջ 651-652, **Արամ Դիլանյան**, Տերունական տոներ, Ս. Էջմիածին, 2006, էջ 53-54 (այսուհետեւ՝ «Տերունական տոներ»):

60 «Համաբարբառ Յայսմաւուրք», Ա, Յունուար, (նախաձեռնեցյան 7 խմբագրությունների), Ս. Էջմիածին, 2008, էջ 87, 89 (այսուհետեւ՝ «Համաբարբառ Յայսմաւուրք»):

Այն, որ Հիսուսը, այսինքն՝ եկեղից եկող ավելի Զորեղը պետք է մկրտվեր իրեն ստրուկից ցածր դասող Հովհաննեսից, զարմացնում[61] է նաեւ Հովհաննեսին[62], եւ նա պնդում է, որ ինքը պիտի մկրտվի Քրիստոսից եւ ոչ թե հակառակը, սակայն «Պատասխանի եւ Յիսուս՝ եւ ասէ ցնա. Թո՛յլ տուր այժմ, զի ա՛յսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւնս[63]» (Մատթ. Գ 15): Լսելով այս խոսքերը՝ Հովհաննեսը կարծես համակերպվում է իրականության հետ (Մատթ. Գ 15):

Ինչ արդարության մասին էր Հիսուսի խոսքը, դժվար է ասել. կարծիքները բազմազան են, սակայն դրանք բոլորը հանգում են մեկ ընդհանուր զաղափարի՝ Քրիստոսի խոնարհ հնազանդությանը ապրվածադիր օրենքին[64]: Այնուհետեւ Քրիստոս, որպես կարգն է, մտնում է ջուրը եւ սկսում է աղոթել: Աղոթքը հավանաբար սկսվելիք գործունեությունն օրհնելու

61 Այստեղ է հստակ դառնում, թե ում էր սպասում Մկրտիչը: Դա առավել լավ է երեւում աղավնու էջքի դրվագում, (Յովհ. Ա 33-34), **Данн**, с. 340. "Жизнь Иисуса", стр. 478, "Четвероевангелие", с. 72-73:

62 Սա խնդրահարույց է եղել եւ մնում նաեւ քրիստոնյա համայնքների համար, քանի որ հաճախ ընկալվում է որպես Մկրտչի գերակայություն Հիսուսի հանդեպ (**Вальтер Каспер**, Иисус Христос, Москва, 2005, с. 71-72, Иисус и Евангелия, с. 267, "Жизнь Иисуса", с. 478. **Данн**, с. 193): Առհասարկ այս զաղափարը իր զարգացումն ապրեց Ի դարում, երբ պատմական Հիսուսի վերականգման աշխատանքում մեծ կարեւորություն տրվեց Հովհաննես Մկրտչի պատմական կերպարի վերականգնմանը: Արդյունքում ակնհայտ դարձան մեծաթիվ նմանություններ երկուսի քարոզչության եւ գործելակերպի միջեւ. Հիսուս գնաց եւ քարոզեց այնտեղ, որտեղ քարոզում ու մկրտում էր Հովհաննեսը (Յովհ. Ժ 40-42), տե՛ս **Barclay**, The Gospel of John 1, էջ 79, նմանություններ նրանց խոսքերի միջեւ (Մատթ. Գ, հմմտ. Մատթ. Դ 17, Մատթ. Գ 10, հմմտ. Մատթ. Է 19, Մատթ. Գ 7, հմմտ. Մատթ. ԺԲ 34, ԻԳ 34, Մատթ.տ Գ 7-10, հմմտ. ԺԳ 24-30, Յովհ. Գ 6, 11, հմմտ. Յովհ. Գ 31-32), նրանք երկուսն էլ հանդիմանող խոսքերով հանդես եկան փարիսեցիների եւ սադուկեցիների դեմ (Մատթ. Գ 7-10, հմմտ. Մատթ. ԺԲ 1-14, 34), երկուսին էլ ժողովուրդը մարգարե էր համարում (Մատթ. ԺԱ 9, ԻԱ 26, հմմտ. ԺԴ 5, ԻԱ 11, 46), երկուսն էլ ձերբակալվեցին (Մատթ. ԺԴ 6-11, հմմտ. Մատթ. ԻԷ 11-26) եւ սպանվեցին (Մատթ. ԺԴ 1-12, հմմտ. Յովհ. ԺԹ 17, 30): Հիսուսի եւ Հովհաննեսի միջեւ նմանությունն ընդգծվում է նաեւ Մարկ. Զ 14, 16: Այս նմանությունները եւ Մկրտչի քարոզության ժամանակագրական առաջնությունը Հիսուսի քարոզչությունից առիթ տվեցին կարծելու, թե Հովհաննեսը՝ որպես արդեն իսկ հաստատված հեղինակություն, իր աշակերտների շարքում պետք է ունեցած լինի նաեւ (թեկուզ եւ ժամանակավորապես) Հիսուս Նազովրեցուն, իսկ ավետարանիչները, ելնելով դոգմատիկ պատկերացումներից, ակնարկ անգամ չունեն դրա վերաբերյալ (տե՛ս "Жизнь Иисуса", с. 240): Դ. Շտրաուսին անհավանական է թվում այն, որ Հովհաննեսը որպես «սահմանափակ» աշխարհայացքի տեր եւ ասկետիկ կյանքի կողմնակից, ընդուներ այնպիսի մեկի գերակայությունը, ով իրենից պարբեր աշխարհընկալում ուներ. Մկրտիչն իր վարքով ու կենցաղով ցույց տվեց, որ ինքն իսկական ուղղադավան եսենական է (թեեւ սա ապացուցված չէ), ուստի Հիսուս, որ յուրացրել էր եսենների լավագույն ու ճշմարիտ բոլոր մտքերը եւ հերքում էր դրանցում սահմանափակությունները, Մկրտչին պիտի թվար ոչ թե ուսուցիչ, այլ անհաջողակ մի աշակերտ ("Жизнь Иисуса", с. 233): Մյուս կողմից Հիսուսի եւ Մկրտչի միջեւ նմանությունները ենթադրել են տալիս, որ հովհաննյան եւ հիսուսյան դպրոցները երկար ժամանակ գործում էին համաձայնեցված, ուստի Հովհաննեսի մահից հետո Հիսուս՝ որպես նրա հավատարիմ գործընկեր, առաջինն է իմանում այդ մասին (հմմտ. Մատթ. ԺԴ 12, տե՛ս "Жизнь Иисуса", с. 805): Ուղղափառ տեսանկյունից իրականությունն այն է, որ Հիսուս քարոզում էր մեծ կարեւորություն ունեցող ապաշխարությունը ոչ թե շարունակելով Հովհաննեսի գործը, այլ անելով այն, ինչի պատրաստությունը կատարում էր Հովհաննես Մկրտիչը ("Толковая Библия", с. 93):

63 «Աստուածաշունչ Մատեան» արեւելահայերեն-ը տալիս է «Աստծու ամէն արդարութիւն»: «Աստծու» բառը, սակայն, չկա հունարենում եւ մյուս տարբերակներում: Իսկ Էրիոնիտների Ավետարանը միանգամայն այլ կերպ է ներկայացնում այս տեսարանը՝ տեղադրելով երկնքից հնչող ձայնից հետո. «Եւ այդ ժամանակ Հովհաննեսը երկրպագեց Նրան ու ասաց. «Աղաչում եմ Քեզ, Տե՛ր, Դո՛ւ մկրտիր ինձ»: Բայց Հիսուս կասեցրեց նրան՝ ասելով. «Այն ինչ պիտի լինի, պետք է կատարվի» ("Апокрифы древних христиан", с. 66):

64 Տե՛ս **Քիներ**, էջ 51, "Четвероевангелие", էջ 72-73. "Иисус и Евангелия", էջ 267. "Толковая Библия", с. 75.

խնդրանք էր պարունակում[65]: Հավարտ մկրտության Քրիստոս արագ ելնում է ջրից (արագ, որովհետեւ մեղքերը խոստովանելու կարիք չուներ)[66]: Այնուհետեւ ավետարանիչները նշում են, որ երկինքը բացվեց կամ պատռվեց եւ «եկեալ» Սուրբ Հոգուն, որ որպես աղավնի իջնում էր Քրիստոսի վրա (սա, ի դեպ, կանխասված էր մարգարեությամբ. Ես. ԺԱ 2, ԽԲ 1, ԿԱ 1): Թե ո՞վ էր տեսնողն աղավնու, համատեսները չեն հստակեցնում: Նույն խնդիրը առկա է նաեւ Էբիոնիտների Ավետարանում[67]: Առաջին հայացքից թվում է, թե տեսանողը Հիսուսն էր, սակայն Հովհաննես Ավետարանիչը նշում է, որ աղավնու էջքը նշան էր Մկրտչի համար, որով պիտի ճանաչեր, որ Հիսուսն է Աստծո Որդին (Յովհ. Ա 32-34[68]): Թե իջնելով ինչ արեց աղավնակերպ Սուրբ Հոգին, դարձյալ գրում է Դ Ավետարանիչը՝ նշելով, որ Հոգին հանգչում էր Քրիստոսի վրա (Յովհ. Ա 32): Իսկ եբրայեցիների պարականոն ավետարանն այլ ընդարձակ դրվագ է ներկայացնում՝ Սուրբ Հոգուն (այստեղ, ի դեպ, աղավնին բացակայում է) վերագրելով նաեւ խոսք. «...Սուրբ Հոգին իջավ եւ լցրեց Նրան եւ հանգեց Նրա մեջ ու ասաց. «Ի՛մ Որդի, բոլոր մարգարեներից ես սպասում էի Քեզ, որ Դու գայիր, եւ Ես կարող եմ հանգչել քո մեջ, զի Դու Իմ հանգիստն ես, Իմ Միածին Որդին եւ Դու պիտի իշխես հավիտյան»[69]:

Քանի որ հրեական միջավայրում Ա դարում կարծիք կար, թե մարգարեությունները մարել են, եւ Հոգին չի գործում այնպես, ինչպես հինկտակարանյան շրջանում, ապա Հիսուսի վրա Հոգու էջքը մեծ խորհուրդ պիտի ունենար. այն խորհրդանշում էր մեսիական դարաշրջանի սկիզբը[70]:

Աղավնին, որ բարության եւ խոնարհության խորհրդանիշն[71] է, ըստ Ղուկաս Ավետարանչի՝ իջավ «մարմնաւոր տեսլեամբ»[72]: Այս թռչունը Պաղեստինում սուրբ էր համարվում. նրան չէին ուտում, չէին որսում ու չէին սպանում[73]: Ըստ հրեա ռաբբիների՝ Ծննդոց գրքի Ա 2 համարում ջրերի վրա շրջող Աստծո Հոգին աղավնու նման էր ճախրում՝ գեղեցկություն եւ կարգավորություն մուծելով տիեզերքի մեջ, ուստի պատահական չէր, որ Հիսուսի վրա Հոգին աղավնակերպ իջավ[74]:

Սուրբ Հոգու էջքից հետո Ղուկաս եւ Մարկոս ավետարանիչները խոսում են Երկնքից հնչող ձայնի մասին. «Դո՛ւ ես Որդի իմ սիրելի, ընդ քե՛զ հաճեցայ»[75] (Մարկ. Ա 11, Ղուկ. Գ 22): Երկնքից հնչող ձայնի մասին խոսում են նաեւ պարականոնները՝ հավելելով մի շարք

65 Տե՛ս "Четвероевангелие", էջ 73.

66 Անդ: Նկատենք, որ Ղուկասը նշում է, թե աղավնու էջքը եղել է աղոթելու ժամանակ. հնարավոր է, աղոթքը եղել է մկրտությունից հետո:

67 Տե՛ս "Апокрифы древних христиан", էջ 66:

68 Այս համարի զուգահեռը գտնում ենք Նիկոդեմոսի Ավետարանում. «Եւ ես մկրտում էի Նրան Հորդանան գետում եւ տեսա Սուրբ Հոգուն՝ Նրա վրա աղավնու կերպարանքով նստած» ("Книга Апокрифов", с. 286), Апокрифы древних христиан", с. 71. "Толковая Библия", с. 76, Համապատում, էջ 65:

69 "Апокрифы древних христиан", с. 68.

70 Տե՛ս **Քիներ** էջ 51, 300, New Bible Commentary, էջ 910:

71 Տե՛ս **Barclay,** The Gospel of Mark, էջ 21, New Bible Commentary, էջ 1028:

72 Սուրբ Հոգու՝ որպես աղավնի իջնելու մասին մանրամասն տե՛ս "Толковая Библия", էջ 76-77:

73 Նկատենք, սակայն, որ Սուրբ գրքում առկա են տեղիներ, ուր խոսվում է աղավնու ծիսական զոհաբերությունների մասին (տե՛ս Ղեւտ. Ե 7, ԺԲ 6-8, Ղուկ. Բ 24):

74 Տե՛ս **Barclay,** The Gospel of John 1, 83, "The Oxford Bible Commentary", էջ 889.

75 Մատթեոսի Ավետարանում՝ «Դա՛ է Որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ» (Մատթ. Գ 17):

իրենց հպարտ փոփոխություններ եւ մուծումներ: Ըստ Էրիոնիտների Ավետարանի՝ երկնքից լսված ձայնն այսպիսին էր. «Դու ես Իմ սիրելի Որդին (սա, ի դեպ, Սաղմ. Բ 7-ից է - *Ա.Ս.*), Քո մեջ է Իմ բարեհաճությունը: Եւ նորից. Այսօր Ես ծնեցի Քեզ: Եւ նույն ժամին մեծ լույս լուսավորեց ամեն ինչ շուրջը: Երբ Հովհաննեսը այդ տեսավ, նա ասաց Նրան. «Ո՞վ ես Դու, Տե՛ր»: Եւ նորից երկնքից ձայնը հայտնեց նրան. «Դա իմ սիրելի Որդին է, Նրանում է Իմ բարեհաճությունը»[76], իսկ Նիկոդեմոսի Ավետարանը մատթեոսյան հատվածին հավելում է «Նրա՛ն լսեցեք» պատվերը, ինչպես Հիսուսի Պայծառակերպության պահին (Մատթ. ԺԷ 5, Մարկ. Թ 6, Ղուկ. Թ 35), որից հետո Մկրտիչը դարձյալ խոսում է իր մասին. «Եւ այժմ ես Նրա կարապետն եմ, ես իջա հայտնելու ձեզ, որ մի փոքր ժամանակ եւս եւ Ինքը՝ Որդին Աստծո, կիջնի բարձունքից, կայցելի ու կգա մեզ՝ խավարի եւ մահվան ստվերի մեջ ապրողներիս մոտ»[77]: Երկնքից հնչող ձայնը հրեաների համար նորույթ չէր. այն հանդիպում է նաեւ Սաղմոս ԻԸ 3-ում: Հուդայականության մեջ գոյություն ուներ “בת כל” (bath Qol, թրգ.՝ «ձայնի դուստր») գաղափարը: Հրեաները հավատում էին, որ գոյություն ունի մի քանի երկինք, որոնցից ամենավերինում բազմած է Աստված: Եզակի դեպքերում այդ երկինքը բացվում էր, եւ Աստված խոսում էր այնտեղից, սակայն ժողովրդին հասնում էր լոկ արձագանքը: Քրիստոսի պարագայում ձայնը եկավ հստակ ու հասկանալի[78]: Կարծիք կար, որ ձայնը գալիս էր այն մարդկանց համար, ովքեր եկել էին մարգարեանալու[79]: Ամեն դեպքում հստակ է, որ երկնքից հնչած ձայնը ապացուցում էր Հովհաննեսին ու ժողովրդին Հիսուսի աստվածային արժանիքը:

Քրիստոսի Մկրտության հետ կապված մեկ հարց, սակայն, դեռ մեզ համար բաց է մնում. ինչո՞ւ Հիսուս եկավ մկրտության: Ենթադրելի պատճառները շատ են.

ա. Դրա նպատակ է դիտվում Քրիստոսի ինքնաբացահայտումն Իսրայելի եւ Հովհաննես Մկրտչի առջեւ որպես Մեսիա, որպեսզի պարզ դառնար վերջապես, թե ո՞վ էր «ետեւից Եկողը» (հմմտ. Յովհ. Ա 31)[80]:

բ. Որոշ աղբյուրներ նշում են, որ մկրտվելով՝ Հիսուս ցույց էր տալիս իր բացառիկ խոնարհությունը[81]:

գ. Իր մկրտությամբ Հիսուս ցույց էր տալիս եւ հիմնադրում էր ճշմարիտ՝ քրիստոնեական մկրտությունը[82]:

դ. Հիսուսի մկրտությունը նախապատրաստություն էր Իր գործունեությունը սկսելու համար[83]:

«Ի վաղիւ անդր կայր Յովհաննէս, եւ յաշակերտաց անտի նորա՝ երկու: Եւ նայեցեալ

76 “Апокрифы древних христиан”, с. 66.
77 “Книга Апокрифов”, с. 286.
78 Տե՛ս **Barclay,** The Gospel of Mark, էջ 20. Толковая Библия, էջ 77. **Քիներ**, էջ 148:
79 Տե՛ս **Քիներ**, էջ 52:
80 Տե՛ս **Barclay,** The Gospel of Luke, էջ 37:
81 Տե՛ս “Толковая Библия”, էջ 75-76, “The Navarre Bible”, Saint Mark's Gospel, Second edition, 1989, էջ 70 (այսուհետեւ՝ “The Navarre Bible”):
82 Տե՛ս «Տերունական տոներ», էջ 63:
83 Տե՛ս **Данн**, էջ 193:

ընդ Յիսուսի՝ զի գնայր, ասէ. Ահա՛ասիկ Քրիստոս Գառն Աստուծոյ: Լուա՛ն ի նմանէ երկու աշակերտքն՝ զի խօսէր, եւ գնացի՛ն զհետ Յիսուսի» (Յովհ. Ա 35-37): Բնական է, որ Հովհաննեսը՝ որպես ժողովրդի մեջ ընդունված մարգարե, ունենար իր հետեւորդներն ու աշակերտները, ինչպես հինկտակարանյան որոշ մարգարեներ[84]: Հովհաննես Ավետարանիչը նշում է, որ Մկրտիչն իր երկու աշակերտներին մատնացույց արեց Քրիստոսին՝ նրան վերստին Աստծո Գառ անվանելով, եւ նրանք հետեւեցին Հիսուսին ու դարձան Նրա աշակերտները: Այդ երկուսի անունները բացահայտելը դժվար չէ. առաջինը Սիմոն Պետրոսի եղբայր Անդրեասն էր (Յովհ. Ա 40), մյուսը՝ իր մասին միշտ անհայտությամբ խոսող (հմմտ. Յովհ. ԺԳ 23, ԺԸ 15) Հովհաննեսը՝ Ավետարանի հեղինակը[85]: Որոշակիորեն բացահայտված է նաեւ Հովհաննեսի աշակերտների կենցաղը, այն է՝ աղոթքը (հմմտ. Ղուկ. ԺԱ 1) եւ ժուժկալ պահեցողությունը (հմմտ. Մատթ. Թ 14, Մարկ. Բ 18, Ղուկ. Ե 33): Գործք Առաքելոց գրքում (ԺԸ 25, ԺԹ 1-7) դեռեւս խոսվում է Եփեսոսում Մկրտչի հետեւորդների գոյության մասին: Մինչեւ այսօր էլ Իրաքի եւ Իրանի որոշ շրջաններում գոյություն ունեն «մանդեներ» կոչվող աղանդավորական փոքրիկ համայնքներ, որ իրենց Հովհաննես Մկրտչի վարդապետության կրող են համարում: Սակայն ԺԷ դարում միսիոներների կողմից բացահայտված այս համայնքի կիրառած գրականությունը ստեղծվել է Ը դարում, ինչը քիչ հավանական է դարձնում մանդեների՝ Հովհաննես Մկրտչի վերաբերյալ ունեցած տեղեկությունների պատմական ճշմարտացիությունը[86]:

Մկրտչի մասին մյուս կարեւոր տեղեկությունը դարձյալ տալիս է Դ Ավետարանիչը՝ նշելով, որ քանի դեռ նա չէր բանտարկվել. «Մկրտէր եւ Յովհա՛ննէս ի յԱյենովն, մե՛րձ առ Սաղիմ, զի ջուրք բազումք էին անդ. եւ գային՝ եւ մկրտէի՛ն» (Յովհ. Գ 23-24): Պատճառ բերելով ջրերի առատությունը մկրտության համար՝ Հովհաննես Ավետարանիչը նշում է, որ այժմ Կարապետը մկրտում էր «յԱյենովն, մե՛րձ առ Սաղիմ»[87]: Թեեւ այսօր բավական բարդ է ճշգրտորեն գտնել այս վայրը, այնուամենայնիվ, ուսումնասիրողները որոշ կարծիքներ արտահայտում են: Ավետարանից կարելի է երկու բան հստակ իմանալ՝ Այենոնը գտնվում է Հրեաստանի տարածքում (հմմտ. Յովհ. Գ 22) եւ Հորդանանից արեւմուտք (հմմտ. Յովհ. Գ 26)[88]: Ըստ W. F. Albright-ի՝ Այենոնը գտնվում է այժմյան Նաբլուսից հյուսիս-արեւելք՝ Վադի Ֆարախ ակունքի մոտ (ըստ Բ. Եղիայեանի՝ «այենոն» թարգմանվում է «ակունք»[89], հանդիպել ենք նաեւ «ջրհորներ»[90] թարգմանությանը), այնտեղ որտեղ ժամանակին Սամարիան

84 Տե՛ս “Христианство”, էջ 271:

85 Տե՛ս Толковая Библия”, էջ 1003, **Barclay.** The Gospel of John 1, էջ 85-86, 88. “New Bible Com mentary”, էջ 1028, “Четвероевангелие”, էջ 77, «Մարդու Որդին», էջ 59:

86 Տե՛ս “Иисус и Евангелия”, էջ 267, հմմտ. **Թ.**, «Յովհաննէս Մկրտիչ» («Սիոն», 1934, Ա, էջ 9):

87 “Новый Завет на Греческом и Русском языках”, Москва, 2002 (այսուհետեւ՝ “Новый Завет на Греческом”) հունարեն տարբերակը տալիս է. “’εν Αι’νών ε’γγύς τοῦ Σαλείμ” (en Ainon engus tu Salim), սակայն “Библия, Книги священного писания Ветхого и Нового Завета”, 1992, (այսուհետեւ՝ “Библия”) ռուսերեն թարգմանության մեջ Այենոնը թարգմանված է Енон:

88 Տե՛ս “Толковая Библия”, էջ 1027-1028. Բառարան Սուրբ Գրոց, Տպագրութիւն Ա. Յակոբ Պօյաճեան, Կոստանդնուպոլիս, 1881, էջ 33 (այսուհետեւ՝ «Բառարան Սուրբ Գրոց»):

89 **Եղիայեան**, էջ 922:

90 “Жизнь Иисуса”, с. 802.

է եղել[91]: Բավական համընկնում են Մաղաքիա արք. Օրմանյանի, Բ. Եղիայեանի եւ Սուրբ Գրոց բառարանի կարծիքները: Ըստ դրանց՝ Այենոնը Բեթսան քաղաքից 8-10 մղոն հարավ ընկած Սկյութապոլիսն է, կամ դրանից 10-12 կմ հարավ ընկած մի քաղաք, որ հայտնի է Թել-էլ-Սարեմ կամ Թել-էլ-Համտան անուններով[92]:

Այնուհետեւ Հովհաննես Ավետարանիչը գրում է. «Եւ եղեւ խնդիր յաշակերտացն Յովհաննու ընդ Հրէի՝ վասն սրբութեան. եկին առ Յովհաննէս՝ եւ ասեն ցնա. Ռաբբի, որ էրն ընդ քեզ յայնկոյս Յորդանանու, որում դուն վկայեցեր, ահաւասիկ նա մկրտէ՝ եւ ամենեքին զան առ նա» (Յովհ. Գ 25-26): Այս վեճը սկսվել էր ինչ-որ առիթով. հրեայի[93] հանդիմանությունը՝ ուղղված Հովհաննեսի աշակերտներին՝ ի հակադրություն Հիսուսի[94] եւ Նրա աշակերտների մկրտության[95]: Վեճից վրդովված՝ աշակերտները մի տեսակ բողոքով են լցվում եւ դիմում Հովհաննեսին՝ ըստ երեւույթին հույս ունենալով, որ նա եւս պիտի վրդովվի եւ հարցը լուծի իրենց օգտին[96], սակայն Հովհաննեսի պատասխանը միանգամայն այլ է լինում. «Ոչ կարէ մարդ առնուլ յանձնէ՝ եւ ոչ ինչ, եթէ ոչ իցէ տուեալ նմա յերկնից ի վերուստ: Դուք ձեզէն վկայէք ինձ, զի ասացի ձեզ՝ թէ չեմ ես Քրիստոս, այլ թէ առաքեա՛լ եմ առաջի նորա: Որ ունի հարսն, նա՛ է փեսայ. իսկ բարեկամ փեսային՝ որ կայ եւ լսէ նմա, ուրախութեամբ ուրախ լինի վասն ձայնի փեսային. արդ՝ այս ուրախութիւն որ իմս է, լցեալ է: Նմա պարտ է աճել, եւ ինձ մեղմանա՛լ» (Յովհ. Գ 27-30): Այս հատվածը հայտնի է որպես Մկրտչի վերջին վկայություն Քրիստոսի մասին: Հրեաների մեջ օրենք էր, որ ուղարկվածը պիտի գործեր ուղարկողի իշխանությամբ՝ մնալով իրեն հանձնարարված առաքելության սահմաններում[97], ուստի Մկրտիչը, ընդունելով Հիսուսի առավելությունը, նշում է, որ ոչ ոք չի կարող ավելին հանձն առնել, քան դա տրված է Աստծուց՝ «յերկնից ի վերուստ»[98], ապա հիշեցնում է իր խոսքերը, որ ինքը լոկ Կարապետն է Քրիստոսի (Յովհ. Ա 15, 20, 27, 30), որից հետո ներկայացնում է հրեական զեղեցիկ հարսանեկան ավանդույթ, որը կոչվում էր שושבין (shoshben)[99]: Հրեական հարսանիքներում «փեսայի բարեկամը» հատուկ եւ պատվավոր պաշտոն էր. նա կապող օղակ էր հարսի եւ փեսայի միջեւ: Փեսայի բարեկամն էր կազմակերպում պսակը, հրավերքներ անում, ղեկավարում խնջույքի ընթացքը, սակայն ամենից կարեւորը նրա պաշտոնում հարսի սենյակի հսկումն էր, որպեսզի ոչ ոք, բացի փեսայից, ներս չմտնի: Նա բացում էր դուռը միայն այն ժամանակ, երբ խավարի մեջ լսում էր փեսայի ձայնը: Դրանից հետո

91 "Новый библейский словарь", Библейские персонажи, Санкт-Питербург, 1999, էջ 157 (այսուհետեւ՝ "Новый библейский словарь"), "Христианство",էջ 271. NIV Bible, էջ 1567-ի գողապակ:

92 Հմմտ. «Համապատում», էջ 89: «Բառարան Սուրբ Գրոց», էջ 33: **Եղիայեան**, էջ 922:

93 Սուրբ գրքի հունարեն, ռուսերեն եւ անգլերեն գարբերակներում հոգնակի թվով է՝ «հրեաների»:

94 Այն, որ Հիսուսը չէր մկրտում, այլ աշակերտները, ապացուցված է Ավետարանի հաջորդ գլխում (Յովհ. Դ 2): Չնայած սրան՝ կան կարծիքներ, որ Հիսուսը մկրտել է (այս հարցի վերաբերյալ տե՛ս **Данн**, էջ 193-194, "Толковая Библия", с. 1027): Հիսուսից մկրտվածների թվում պետք է լինեին իր աշակերտները, անգամ նրանք, ովքեր մկրտվել էին Հովհաննեսից («Համապատում», էջ 89, "Жизнь Иисуса", էջ 805):

95 Տե՛ս "Толковая Библия", с. 1028, "Четвероевангелие", էջ 87:

96 Տե՛ս «Համապատում», էջ 89-90, "Толковая Библия", էջ 1028, "Четвероевангелие", էջ 87:

97 Տե՛ս **Քիներ**, էջ 306:

98 "Толковая Библия", с. 1029, **Barclay.** The Gospel of John 1, p. 142.

99 Այս բառը «shoshvin» արտասանությամբ եբրայերենից թարգմանաբար նշանակում է «ընկեր, գործակից, լավագույն մարդ» (The complete Hebrew –English dictionary by Reuben Alcalay, Massada Publishing co. Ramat-gan-Jerusalem, 1970, էջ 2575, **Barclay.** The Gospel of John 1, էջ 143. **Քիներ**, էջ 306:

նա պետք է ուրախ հեռանար, քանի որ իր առջեւ դրված առաջադրանքը կատարված էր[100]: Այս օրինակի մեջ Մկրտիչը Հիսուսին է վերագրում փեսայի դերը, իսկ ինքն իրեն համարում է բարեկամ, որ օգնեց Հիսուսին հանդիպել ժողովրդի հետ: Եւ քանի որ այժմ ամեն ինչ կատարված է, Մկրտիչը, կատարյալ ուրախությամբ է լքում ասպարեզը՝ այն թողնելով իրենից Հզորին. «Նմա պարտ է աճել, եւ ինձ մեղմանալ» (Յովհ. Գ 30)[101]: Այնուհետեւ Հովհաննես Ավետարանիչը գրում է. «Որ ի վերուստն գայ, ի վերո՛յ է քան զամենայն. որ յերկրէ ասպի է, յերկրէ՛ է՝ եւ յերկրէ՛ խօսի: Որ յերկնից գայ, զոր ինչ եւրես եւ զոր լուաւ, վկայէ՛. եւ զվկայութիւն նորա ո՛չ ոք ընդունի: Որ ընդունի զվկայութիւն նորա՝ կնքեաց, թէ Աստուած ճշմարիտ է: Զի զոր Աստուածն առաքեաց՝ զբա՛նս Աստուծոյ խօսի. զի ո՛չ եթէ չափով տայ Աստուած զՀոգին: Հայր սիրէ՛ զՈրդի, եւ զամենայն ինչ՝ ե՛տ ի ձեռս նորա: Որ հաւատայ յՈրդի, ընդունի՛ զկեանսն յաւիտենականս. եւ որ ո՛չ հնազանդի Որդւոյ, ո՛չ տեսցէ զկեանս. այլ բարկութիւն Աստուծոյ մնայ ի վերայ նորա» (Յովհ. Գ 31-36): Սույն հատվածը բավական խնդրահարույց է. արդյոք խոսքերը Մկրտչինն են, թե՞ Ավետարանչինը[102]: Ամեն դեպքում հարկ ենք համարում համառոտ անդրադառնալ դրան: Ընդհանուր առմամբ հատվածում շեշտվում է Քրիստոս Աստվածորդու առավելությունը երկրային ծագման ցանկացած մեկի, այդ թվում նաեւ Հովհաննես Մկրտչի հանդեպ: Աստծո ճշմարիտ վկա է համարվում նա, ով տեսել ու լսել եւ վկայում է Աստծո խոսքը, այսինքն՝ Աստծո Որդին, եւ «որ հաւատայ յՈրդի, ընդունի՛ զկեանսն յաւիտենականս. եւ որ ո՛չ հնազանդի Որդւոյ, ո՛չ տեսցէ զկեանս. այլ բարկութիւն Աստուծոյ մնայ ի վերայ նորա» (Յովհ. Գ 36)[103]:

100 Տես "The Oxford Bible Commentary", էջ 967. **Barclay.** The Gospel of John 1, էջ 143 "Толковая Библия", էջ 1029. "Четвероевангелие", էջ 88:

101 Հմմտ. **Barclay,** The Gospel of John 1, էջ 144, "Толковая Библия", էջ 1029:

102 Տես **Barclay**. The Gospel of John 1, էջ 144:

103 Ավելի մանրամասն տես **Barclay**. "The Gospel of John 1", էջ 145, "Толковая Библия", էջ 1029-1031, "Жизнь Иисуса", էջ 484, "New Bible Commentary", էջ 1033:

ՏԻՐԱՆ ԱԲՂ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՏՈՆԱՑՈՒՅՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՒ ՍԻՄԵՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ

Հայ Առաքելական եկեղեցու ծիսական մատյանների շարքում իր ուրույն տեղն է գրավում Տոնացույցը: Դա ամենից առաջ պայմանավորված է եկեղեցական պրակտիկայով, քանի որ այն կենսական նշանակություն ունի ինչպես եկեղեցու պաշտամունքային կյանքը կարգավորելու, այնպես էլ՝ դրանից բխող լայն գործառնական իմաստով:

Հայոց եկեղեցական տոնացույցի ծագման եւ զարգացման գործում անուրանալի է հանկապես Գրիգոր Լուսավորչի պատմական դերը: Սկզբնաղբյուրների վկայությամբ, Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո Տրդատ Գ թագավորի հրահանգով հեթանոսական բազմաթիվ տաճարների տեղերում վեր խոյացան քրիստոնեական նոր եկեղեցիներ եւ տաճարներ: Ագաթանգեղոս պատմիչը ընթերցողներին է ավանդել այդ դարաշրջանում ծավալված իրադրությունների հանգամանալից բնութագրությունը: Թե վաղ միջնադարում հայկական հեթանոսական եւ մազդեզական աղոթատներն ինչպես են վերածվել քրիստոնեական ուիտրատեղիների, հավատի եւ շոշափելի հենակետ է Էջմիածնի Մայր տաճարը, որը եւս կառուցվել է կրակապաշտության հեթանոսական սրբարանի վրա:

Տրդատ Գ-ի շրջանում Հայաստանում տեղ գտած կրոնական վերափոխումների պատմությունը թույլ է տալիս անդրադառնալ նաեւ հոգեւոր-պրակտիկ կյանքում տեղ գտած հետաքրքրական անցումներին: Եկեղեցու պատմությունն ավանդում է. քրիստոնեության ծավալվող քարոզչական գործունեության շրջանակներում հեթանոսական որոշ տոներ եւ սովորություններ վերաիմաստավորվում եւ նոր՝ քրիստոնեական երանգ են ստանում: Գրիգոր Լուսավորչի՝ մինչքրիստոնեական սովորույթների ու ավանդույթների նկատմամբ դրսեւորած վերաբերմունքը չափազանց հետաքրքրական է ինչպես կրոնական, այնպես էլ ազգագրական եւ մշակութաբանական տեսանկյուններից: Պետք է ենթադրել, որ ընդծին երեւույթ լինելու եւ դարավոր տեղայնացման շնորհիվ հեթանոսական տոնածիսական արարողությունների մի մասը ազգահոգեբանական նշանակություն էր ստացել: Եւ Գրիգոր Լուսավորչի ձեռամբ այդ սովորույթների ու ավանդույթների քրիստոնեական տոների համակարգ ներառման[1] պատմական դերն ու նշանակությունն ամենեւին չի կարելի սահմանափակել միայն կրոնական հաջորդականության կամ ժառանգորդության արժեւորմամբ[2]:

1 Խոսքը վերաբերում է հայոց նախաքրիստոնեական շրջանի ազգահոգեբանական բազմաթիվ այն սովորույթներին, որոնք ցայսօր պահպանվել են Հայ եկեղեցում, հատկապես՝ ծիսական կյանքում: Դրա վառ օրինակներից է այն, որ Աստվածածնի վերափոխման տոնին կատարվում է խաղողօրհնեքի արարողություն, Տյառնընդառաջի տոնին հավատացյալները պտտվում են կրակի շուրջ, Քրիստոսի Պայծառակերպության տոնին միմյանց «ջուր են սրսկում» եւ այլն:

2 Այս հարցը դեռեւս կարոտ է կրոնագիտական, ազգահոգեբանական, ազգային ինքնության, ազգագրական եւ գիտատեսական ու գիտագործնական համալիր այլ ուսումնասիրությունների: Այդ իսկ պատճառով սահմանափակվում ենք միայն այդ իրադարձությունների ընդհանրացված գնահատականով:

Հայաստանում եկեղեցական տոնացույցի կազմավորումն ավանդաբար կապվում է մովսիսականության հետ: Մասնավորապես, Գրիգոր Տաթեւացին «Գիրք հարցմանց» հիմնարար աշխատության մեջ նշում է, որ հրեաները հնագույն ժամանակներից սկսած հինգ կարեւոր տոներ են ունեցել. դրանք են՝

1. շաբաթը
2. բաղարջակերաց տոնը/պասեքը
3. օրենքի փվչությունը
4. քավության տոնը
5. փաղավարահարաց տոները[3]:

Աստվածաբանը հիշատակում է եւ այն, որ հրեական վերոնշյալ տոներն իրենց գերակշռությունը պահպանում են նաեւ վաղ եկեղեցում, այսինքն՝ Քրիստոսի մահվանից եւ հարությունից հետո: Այն տարբերությամբ միայն, որ փոխադրվում են եկեղեցական հող եւ կապվում Քրիստոսի անձի հետ: Այսպես, հրեական շաբաթի ազդեցությամբ առաջանում է քրիստոնեական կիրակին՝ շաբաթվա առաջին օրը: Բաղարջակերաց տոնը կամ հրեական պասեքը եկեղեցում վերածվել է քրիստոնեական զատկի յուրահատուկ ներածության: Հինկտակարանյան Ելից գիրքը պատմում է Մովսեսի միջոցով Տասնաբանյայի՝ իբրեւ աստվածային շնորհի ստացման մասին: Եկեղեցին՝ նոր Իսրայելը, նույնպես աստվածային շնորհի (քրիստոնեության մեջ՝ Սուրբ Հոգու) ստացողն է, որի միջոցով նա զոյավորվում է, տաճարանում եւ դաստիարակվում (Հոգեգալուստ): Կենարար խաչի փրկագործական խորհրդով փոխարինվում է քավության տոնը, որն ուղեկցվում էր մոխրով եւ ապաշխարողաց հագուստով: Եւ վերջապես փաղավարահարաց հրեական տոնը հիմք է հանդիսանում Հայ Առաքելական եկեղեցու հինգ փաղավար տոների համար[4]:

Ամենայն հավանականությամբ հեթանոսական մեռելոց եւ հրեական սրբոց պաշտամունքի ազդեցությամբ, վաղ եկեղեցին եւս ի սկզբանե տոնում էր մարտիրոսների մահվան օրը եւ նրանց հիշատակությունները: Եւ հարության հավատքին համահունչ մահվան օրը միաժամանակ դիտում էր իբրեւ նոր ծննդյան օր: Եկեղեցում աստիճանաբար ձեւավորվում էր նաեւ սրբոց պաշտամունքը: Համայնքը պատարագ էր մատուցում, որից հետո համատեղ հավաքվում էին սիրո ճաշի՝ ագապեի շուրջ[5]: Եւ ինչպես փաստում են վավերագրերը՝ քրիստոնեական եկեղեցու համար ընդհանրական այդ երեւույթները դրսեւորվել են նաեւ Հայաստանում:

Տոնացույցը (համապատասխանում է բյուզանդական «տիպիկոն»-ին) Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պաշտամունքային այն ծիսամատյանն է, որը ծիսական տարվա

---

3 Տե՛ս **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք հարցմանց, Երուսաղէմ, 1993, էջ 372:

4 Տե՛ս անդ, էջ 372-374: Այստեղ հարկ ենք համարում ընդգծել, որ այդ ազդեցությունն ամենեին էլ չի խոսում մովսիսական կրոնի ուղղակի ազդեցության մասին: Խնդիրը միաստվածային դավանանքի եւ դրա հիման վրա ձեւավորված տոների մասին է: Առավել եւս, որ քրիստոնեական եկեղեցին ոչ թե ուղղակի ընդօրինակեց մովսիսականությանը, այլ՝ վերջինիս միաստվածային ըմբռնումներին միանգամայն նոր՝ քրիստոնեական տեսք հաղորդեց: Եւ երբ Գրիգոր Տաթեւացին հիշատակում է, որ հրեական տոները «գերակշռություն են պահպանել նաեւ վաղ եկեղեցում», ապա աստվածաբանն, անկասկած, նկատի ունի ոչ թե ուղղակի, այլ՝ միջնորդավորված ազդեցությունը:

5 Ագապեի մասին մանրամասները տե՛ս **Գ. Յովսէփեան**, Ագապի հաստատութիւնը Հայոց եկեղեցու մէջ. «Արարատ», 1912, էջ 997-1001:

կտրվածքով հրահանգներ եւ կարգադրություններ է պարունակում շարժական եւ անշարժ շրջափուլերի օրական արարողությունների մասին: Բուն իմաստով այն եկեղեցական տոների, օրացուցային կարգի եւ արարողությունների կատարման համար նախատեսված ուղեցույց է: Տոնացույցը տարեկան կտրվածքով եւ խիստ հերթականությամբ պարունակում է յուրաքանչյուր օրվա ծիսական բովանդակությունը՝ Աստվածաշնչի, աղոթքների, շարականների, քարոզների եւ սահմանված այլ ընթերցումներով:

Հայկական եկեղեցական ավանդությունը տոնացույցի ծագումն ու զարգացումը կապում է Գրիգոր Ա Լուսավորիչ (մահ. 325 թ.), Սահակ Ա Պարթեւ (387-439 թթ.), Գյուտ Ա Արահեզացի (461-478 թթ.), Հովհան Մանդակունի (478-490 թթ.), Հովհան Օձնեցի (717-728 թթ.), Ներսես Շնորհալի (1166-1173 թթ.) եւ Սիմեոն Ա Երեւանցի (1763-1780 թթ.) կաթողիկոսների անվան հետ:

Ընդունված ավանդույթի համաձայն, Հայ Առաքելական Եկեղեցու տոների սահմանումը եւ կարգավորվածության հաստատումը վերագրվում է Գրիգոր Լուսավորչին: Նա է համարվում նաեւ Տոնացույցի հիմնադիրը[6]: Իսկ հայկական Տոնացույցին բնորոշ «յոթնյակ ձեւի» (երբ հիմք ընդունելով Ս. Զատկի շարժականությունը, տոները նշվում են յոթնօրյա շարժական պարբերությամբ) հաստատման պրակտիկան կապված է Սահակ Պարթեւի անվան հետ: Այդ գործընթացում իրենց անուրանալի ներդրումն են ունեցել նաեւ Գյուտ Արահեզացի եւ Հովհան Մանդակունի Կաթողիկոսները[7]: Ցավոք, տոնացույցի զարգացման եւ կատարելագործման գործընթացում նրանց մասնակցության չափի եւ ուղղվածության հարցերը դեռեւս անհայտ են մնում: Ավանդականորեն Հովհան Օձնեցի Կաթողիկոսին է վերագրվում հայկական եկեղեցական տոնացույցում Ս. Ծննդյանը նախորդող ավագ չորս տոների կանոնակարգումը: Տոնացույցի տվյալների համաձայն, Ներսես Շնորհալի Հայրապետը սահմանել է Հոգեգալստյան յոթօրեքի եւ Աստվածածնի Վերափոխման ինոնօրեքի տոների արարողակարգերը[8]: Հայկական Տոնացույցի խմբագրման եւ վերասրբագրման գործում ներդրում է ունեցել ԺԳ դարի գործիչ Գեւորգ Լամբրոնացին, որը Կանոնագրքից քաղած վկայություններով հաստատագրել է Հայ եկեղեցու տոնական կարգավորությունը[9]:

Այդ նրբին բնագավառի կարգավորման գործընթացում հիշատակելի է հատկապես Կաթողիկոս Սիմեոն Երեւանցին, որի անվան եւ վիթխարի աշխատանքի հետ է կապված բազմադարյա հայոց Տոնացույցի մշակման գործընթացը: Տոնացույցի պատմության մեջ ամենանշանավոր խմբագրությունը պատկանում է նրան՝ քանզի նրա բազմաբեղուն գործունեության հետեւանքով ծիսամատյանը հաստատուն կերպարանք եւ ավարտուն տեսք ստացավ: Հայոց Եկեղեցու նվիրապետն իր խմբագրական աշխատանքների ընթացքում ուշադրություն է դարձրել հատկապես այն բանի վրա, որ ծիսական տարվա միավորներն առավել ամբողջական տեսքով արտահայտեն Հիսուս Քրիստոսի փրկագործական տնօրինությունը: Սրանից բացի, Սիմեոն Երեւանցին, հնարավորության սահմաններում, է՛լ ավելի

6 Տե՛ս **Ն.Պողարյան**, Ծիսագիտութիւն, Երուսաղէմ 1990, էջ 69:

7 Եկեղեցական ավանդությունը Հովհաննես Մանդակունի Կաթողիկոսին է վերագրում հունվարի 6-ին միասնական՝ Աստվածահայտնության եւ Քրիստոսի մկրտության տոների ներմուծումը:

8 Հմմտ. **H. Kyoseyan** Das armenische liturgische Schrifttum / **Armenische Liturgien** (HID. Ergaenzungsband 2). Graz-Salzburg, 2001, S. 87.

9 Տե՛ս **Ն. Անասյան**, Հայկական մատենագիտություն, հատ. Բ, Եր., 1976, էջ 959-962:

մեծ նշանակություն վերագրելով ազգային սրբերի հիշատակության օրերին, դրանք տեղափոխեց հաջորդող շաբաթ օրեր եւ ավելի հանդիսավոր ձեւ տվեց: Իրականացվող բարեփոխումների համատեքստում Հայոց Հայրապետը մեծ տեղ է հատկացրել նաեւ կիրակի օրվա սրբությունը պահպանելուն եւ, ինչպես վավերագրերն են վկայում, անդրադարձ է կատարել նաեւ շաբաթվա մյուս օրերին «հրամայեալ տօների» խնդրին: Այսպես, կիրակի օրվա սրբությունը պահելու դիտավորությամբ նա Տոնացույցի իր խմբագրության մեջ ներմուծում է տերունական եւ սրբոց հիշատակության 21 օրեր: Ընդ որում, Զատկին նախորդող կիրակիներից (Մեծի պահոց կիրակիներից) հանում է Հարության հիշատակությունը: Այս հսկայական եւ շնորհակալ աշխատանքի բարձրակետը Տոնացույցի ավելի գործնական եւ անփոփոխ մոդելի մշակումն է, որը ցույց է տալիս ծիսական 36 տարեգրերի ընթացքում տեղի ունեցող բոլոր փոփոխությունները, որոնք առաջանում են Զատկի օրվա փոփոխությունների արդյունքում, այսինքն՝ մարտի 22-ից ապրիլի 25-ի միջեւ ընկած ժամանակահատվածում[10]: Տոնացույցի այս մոդելը Հայաստանյայց եկեղեցում ցայսօր կիրառվող Տոնացույցն է:

Սկզբնաղբյուրները թույլ են տալիս անդրադառնալ նաեւ Սիմեոն Երեւանցի Հայրապետի իրականացրած տոնացուցային բարեփոխումների շարժառիթների ուսումնասիրությանը: Ինչպես արդեն նշվել է, Հայ Եկեղեցու տոնակարգը հիմնված է յոթնյակ ձեւի վրա, այնպես որ տոներն ամեն տարի միեւնույն անշարժ ամսաթվով չեն կատարվում (ինչպես դա ընդունված է շատ եկեղեցիների ծիսական համակարգերում), այլ՝ անշարժ են շաբաթվա օրերի կտրվածքով: Այլ կերպ ասած՝ ամեն տարի տոներն անցկացվում են նոր ամսաթվով: Սակայն այն հանգամանքը, որ Զատիկը եւ անմիջապես նրանից կախում ունեցող երկու շրջանները՝ քառասնորդացը եւ հիսնակացը, շարժական էին, Տերունական եւ Սրբոց տոների անցկացման կապակցությամբ որոշակի դժվարություններ էին առաջացնում: Մասնավորապես, նշված տոների շարժականությունն Եկեղեցուն ստիպում էր յուրաքանչյուր տարվա համար մշակել նոր տոնակարգ: Իսկ դա իրականացնելու համար, իր հերթին, անհրաժեշտություն էր դարձել արձանագրված եւ հաստատուն օրինակի ստեղծումը:

Հանգամանքների բերումով հայկական համայնքներն այդպես էլ ի վիճակի չեղան մշակել Տոնացույցի միասնական եւ ընդունելի օրինակ: Այդ գործում ազդեցիկ դերակատարություն է ունեցել եւ այն հանգամանքը, որ ոչ բոլոր հոգեւորականներն ունեին պահանջվող հաշվարկները կատարելու կարողություն: Դա է պատճառը նաեւ, որ Սիմեոն Երեւանցի Կաթողիկոսը Տոնացույցի իր առաջաբանում գանգատվում է. «զի մի տարակուսիցիք թէ՝ այս միջոցս քանի շաբաթ է. եւ կամ քանի օր. կամ զտօնսն որպէս. եւ երբ պարտիմք տօնել. կամ զհարցն զորն ասել. եւ կամ աւուր ձայնն՝ զինչ, այլ ըստ եղելոցն՝ զամենայն զտեալ պարագայիւք՝ համաձայն եւ անտարակոյս տօնիցէք: Որ եւ այս եղեւ մանաւանդապէս նախկին եւ հարկաւոր պատճառ յոգնաջան աշխատութեանս մերոյ»[11]: Իսկ դա, հիրավի, հսկայական խնդիր էր, որի լուծումը կարող էր միայն ջերմությամբ ընդունվել:

Այդ պնդումը կարելի է փաստել Վենետիկի մխիթարյան Միքայել Չամչյանի կողմից 1757-1758 թթ. ընթացքում հրատարակած «Լուսնացոյց» եւ «Օրացոյց» գրքույկների օրինակով, որոնք ազգային շրջանակներում ջերմ ընդունելության արժանացան: Դրանք անգամ

10 Տե՛ս **Ռ. Վարդանյան,** Հայոց Տոնացույցը (4-18-րդ դարեր), Եր., 1995, էջ 491-496:

11 «Տօնացոյց», Դ տպ., Վաղարշապատ, 1906, էջ Ջ:

ընդունվեցին որպես Հայաստանյայց Եկեղեցու տոնակարգի եւ ծիսական տարվա նմուշ-օրինակներ: Բայց քանի որ այս հրատարակությունը պատրաստված էր Հռոմի հետ հաղորդության մեջ գտնվող հայերի կողմից, ապա ինքնին հասկանալի պատճառներով դրանք պարունակում էին նաեւ այնպիսի տոներ եւ սրբոց հիշատակություններ, որոնք հատուկ էին բացառապես Արեւմտյան Եկեղեցուն, հետեւաբար՝ հակասում էին Հայ Եկեղեցու տոնակարգին: Մաղաքիա արք. Օրմանյանն իրավամբ նկատում է նաեւ, որ այդպիսի նորամուծությունները կարող էին մեծ անհամաձայնություն եւ երկպառակություն առաջացնել ազգային շրջանակներում[12]: Ահա թե ինչու Տոնացույցի խմբագրության մեջ անդրադառնալով այս հիմնախնդրին, Սիմեոն Երեւանցին, հավանաբար ոչ առանց հիմքի, մխիթարյանների «տօնացոյց» եւ «տօնարան» բառերի փոխարեն օգտագործում է «թունացոյց» եւ «թունարան» բառերը[13]:

Վավերագրերը վկայում են, որ Սիմեոն Երեւանցին դեպքերի նման զարգացումների մտրավախություն վաղուց է ունեցել նախքան Կաթողիկոս դառնալը: Դեռեւս Կ. Պոլսում եղած ժամանակ նա հրատարակում է տարեկան օրացույց, որտեղ մատնանշում է, որ իր ձեռքի տակ ունի նաեւ 36 տարիների պարբերաշրջանի վրա հենված, այսինքն՝ տարեգրերի սխեմա ունեցող Տոնացույցի մի մոդել: Սակայն փաստն այն է, որ ո՛չ տոնացույցը, եւ ո՛չ էլ հաջորդ տարիների օրացույցները փաստորեն նորերով չեն փոխարինվում: Եւ չնայած դրան, այդ հիմնախնդիրն իր հրատապությունն ամենեւին էլ չէր կորցրել: Եւ դա է պատճառը, որ 1763 թ., երբ Սիմեոն Երեւանցին կաթողիկոսական գահ բարձրացավ, որոշում ընդունեց մեկընդմիշտ լուծել հայոց Տոնացույցի կնճռոտ հարցը: Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ էր նաեւ տպարան, ինչը իրականություն դարձավ Հայոց Հայրապետի գահակալության տասներորդ տարում միայն:

Միանգամայն տրամաբանական է ենթադրել, որ Կաթողիկոսն այդ տասը տարիների ընթացքում հետեւողականորեն աշխատել է Տոնացույցի վրա, կատարելագործել՝ հասցնելով այն ձեւի, որը Մայր Աթոռի տպարանում հրատարակվեց 1774 թ.:

Հայոց Տոնացույցի սիմեոնյան այս հրատարակությունը բաղկացած է երկու հատորներից, որի մասին երախտավոր նվիրապետը գրում է. «Զտօնացոյցս մեր յերկուս հատորս բաժանեցաք. յառաջին հատորոջն եղաք զամենայն տօնսն, զտէրունականս, զսրբոցն, եւ զպահսն հաղերձ պատճէնիւք իւրեանց, որպէս յառաջն էր: Իսկ ի յերկրորդ հատորոջն՝ յօրինեցաք զերեսուն եւ վեց խորանս ի վերայ երեսուն եւ վեց գրոցն մերոց. որպէս զի՝ իւրաքանչիւր Տարեգրոյ խորան՝ զտօնսն, զմիջոցսն, զպահսն, եւ զայլս որպիսութիւնս իւրոյ տարւոյն, հանդերձ ամսական թուովք եւ օրական ձայնիւք անտարակոյս ցուցանիցէ տօնողացդ»[14]: Երկրորդ հատորը, որը Սիմեոն Երեւանցու կողմից անվանվում է առաջինի «քանոն եւ կառաւարիչ»[15], տարեկան կտրվածքով պարունակում է տոնակարգի բոլոր փոփոխությունները, այսինքն՝ 36 տարեգրերի հիման վրա նույնաքանակ տարբերությունները, որոնք կախված են Զատկի շարժական տոնից (մարտի 22-ից մինչեւ ապրիլի 25-ը):

12 Տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան,** Ազգապատում, հտ. Բ, Էջմիածին, 2001, էջ 3584:
13 «Տօնացոյց», էջ Ը-Թ:
14 Անդ, Ջ:
15 Անդ, էջ 212:

Ամբողջացված ծիսամատյանում նահանջ տարիների տոնակարգը նախատեսվում է նախորդ տարվա տարեգրին վերադառնալով: Այսպիսով, փետրվարի 29-ի տոնակարգը հենվում է փետրվարի 28-ի տոնակարգի կրկնության վրա: Նահանջ տարիների համար առաջադրված այս համակարգն իր հերթին հիմք է հանդիսանում ծիսական տարվա մնացյալ տասն ամիսների համար (մարտի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը): Սիմեոն Կաթողիկոսի ներդրած այս կարգավորվածությունը չափազանց արժեքավոր է, քանի որ յուրաքանչյուր տարվա տոնակարգը սահմանվում է նախապես: Իսկ դա, ինչ խոսք, մեծապես նպաստեց այն բանին, որ Հայ եկեղեցու աշխարհասփյուռ բոլոր համայնքները առաջնորդվեն միասնական տոնակարգով, այսինքն՝ եկեղեցական տոների անցկացման համապատասխանությամբ:

Սիմեոն Երեւանցու Տոնացույցի խմբագրության առաջին մասը՝ բուն Տոնացույցը, որոշակի հաջորդականությամբ սահմանում է եկեղեցական բոլոր տոներն իրենց համապատասխան ավետարաններով, սաղմոսներով, օրվա շարականներով: Ընդ որում, Սիմեոնը նպատակ է ունեցել իր խմբագրության մեջ տոնացուցային եւ ծիսական բնույթի որոշ փոփոխություններ ներմուծել: Այսպես, հայրապետական կոնդակով Հայոց հայրապետը ծանուցում է իր կողմից կատարված տոնացուցային փոփոխությունների մասին: Օրինակ, Բարդուղիմեոս եւ Հուդա առաքյալների նախկին հիշատակության օրը փոխարինվում է «սրբոց առաքելոց եւ առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի եւ Բարդուղիմէոսի» տոնով[16]: Առաքյալների այս տոնը նշվում է Ս. Ծննդյան տոնին նախորդող հիսնակաց շրջանի առաջին շաբաթ օրը:

Ծիսական տարվան եւ ձեւերին վերաբերող Սիմեոն Երեւանցու բարեփոխում-ներն այդքանով չեն սահմանափակվում: Տոգորված լինելով հայրենասիրությամբ եւ ազգային բարձր գիտակցությամբ՝ նա ցանկանում է մասնահատուկ վերաբերմունք ցուցաբերել նաեւ ազգային մեծագույն սրբերի տոների հանդեպ: Քանի որ նախկինում որոշ մեծ տոներ նախատեսված էին պահոց կամ շաբաթապահոց օրերի համար, գործնականում զրկվում էին հանդիսավորությունից: Այդ իսկ պատճառով խմբագրված տոնացույցում ազգային մեծագույն սրբերի տոները տեղափոխվում են առաջիկա շաբաթ օր:

Սրան համապատասխան, «սրբոյն Ներսիսի մեծի Հայրապետին մերոյ եւ Խաթայ եպիսկոպոսին» տոնը Հոգեգալստյան տոնին հաջորդող չորրորդ երկուշաբթի օրվանից տեղափոխվեց նույն տոնի երկրորդ շաբաթ օրը[17]: Նույնպիսի պատճառաբանությամբ Գրիգոր Լուսավորչի որդիների եւ թոռների՝ Արիստակեսի, Վրթանեսի, Հուսիկի, Գրիգորիսի եւ Դանիելի հիշատակության օրը Հոգեգալստյան հինգերորդ երեքշաբթիից փոխադրվեց Վարդավառին հաջորդող երկրորդ շաբաթ օր[18]:

Այդ ամենից զատ, Սիմեոն Կաթողիկոսի բարեփոխումներից հետո սուրբ թարգմանիչ-վարդապետների՝ Մեսրոպ Մաշտոցի, Եղիշեի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Նարեկացու եւ Ներսես Կլայեցու տոնը Վերափոխման տոնի չորրորդ երկուշաբթի

16 Տե՛ս անդ, էջ 191:
17 Տե՛ս անդ, էջ 115:
18 Տե՛ս անդ, էջ 133:

օրվանից փոխադրվեց Խաչվերացի չորրորդ շաբաթ օր[19]: Շտկվեց նաեւ Տոնացույցի «նախավկայ եւ անդրանիկ Թադաւորին մերոյ Արգարու» տոնը, որը նախկինում նշվում էր Աղդա եպիսկոպոսի անվան հետ: Այդ նպատակով սահմանվեց Արգար թագավորի առանձին տոն, որը նախատեսվեց անցկացնել հիսնակի շրջանի չորրորդ շաբաթ օրը[20]:

Տոնացուցային այս բարեփոխումները, բնականաբար, չէին կարող սահմանափակվել միայն նշված շրջանակներով: Վկայությունն այն է, որ սիմեոնյան փոփոխությունների արդյունքում ծիսական տարվա մեջ սրբերին նվիրված որոշ օրեր գրկվեցին հիշատակությունից: Իսկ մյուս կողմից, սրբոց հիշատակության նոր օրերն, իրենց հերթին, կարիք ունեին համապատասխան փոփոխությունների:

Հայոց տոնացույցի նոր խմբագրության մեջ առանձնահատուկ ուշադրության արժանացան Ասպվածածնի գույգ տոները: «Գիւտ գօտւոյ» եւ «Գիւտ տփոյ» տոները, որոնց տոնակատարումը թողնված էր առաջնորդների հայեցողությանը, եւ հավանաբար հենց այդ պատճառով երբեմն չէին տոնվում, հոչակվեցին պարտադիր, որոնց կատարման օրեր սահմանվեցին համապատասխանաբար Ասպվածածնի Վերափոխման տոնի երրորդ եւ Հոգեգալստյան հինգերորդ կիրակիները[21]:

Եւ վերջապես, Սիմեոն Երեւանցու տոնացուցային բարեկարգումով «Հովհան Երուսաղեմցու եւ երանելի Հայրապետ Հովհան Օձնեցու, ինչպես նաեւ Հովհան Որոտնեցու եւ Գրիգոր Տաթեւացու» հիշատակության օրը փոխադրվեց Մեծի պահոց երրորդ շաբաթ օր[22]: Դրա հետեւանքով հեռացվեց նաեւ այս օրվա համար նախատեսված Գրիգոր Ակռականդացու անունը: Օրմանյան պատրիարքը նկատում է, թե ոմանք այն կարծիքն են արտահայտում, իբր Հովհան Օձնեցու հիշատակության օրն արդեն գոյություն է ունեցել, իսկ Սիմեոն Երեւանցին տոնացույցի մեջ է ներառել Գրիգոր Տաթեւացու անունը: Սակայն նա համարում է, որ ասվածը ոչ բավարար փաստերի առկայության դեպքում մնում է չապացուցված[23]:

19 Տե՛ս անդ, էջ 170:
20 Տե՛ս անդ, էջ 199:
21 Տե՛ս անդ, էջ 146, 120:
22 Տե՛ս անդ, էջ 30:
23 Տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Բ, էջ 3587:

ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1915 թ. մայիս - հուլիս)

1915 թ. մայիսին ստեղծված Վանի նահանգապետության՝ Վանի առաջին կառավարության կարեւորագույն եւ առաջնահերթ խնդիրներից մեկը երկրագործական աշխատանքների վերսկսումն էր, որ նահանգի ազգաբնակչությանը եւ ռուսական զորքերին սննդամթերքով ապահովելու, պարենային դժվարությունները հաղթահարելու եւ ժողովրդին սովի ճիրաններից փրկելու հիմնական նախապայմանն էր:

Վանի ժողովրդին ուղղված 1915 թ. հունիսի 23-ի կոչում նահանգապետ Արամ Մանուկյանը նշում էր. «Հայրենակիցնե՛ր, թուրքական եաթաղանից ազատուեցինք թէեւ բաւական զոհերով, բայց այն ինչ չկրցաւ ընել մեզ նախկին ռեժիմի բռնութիւնը, կարծես պիտի ընեն սովն ու հիւանդութիւնը ... Մի՛ մոռնաք, որ փոխադարձ օգնութեամբ միայն կրնանք պահել մեր ազգային գոյութիւնը: Եթէ մէկը չօգնէ միւսին, մենք կորած ենք. մէկը ամենքին, ամենքը մէկին, հոս է մեր փրկութեան խարիսխը ... Հայրենակիցնե՛ր, հրահանգած եմ բոլոր շրջանների կառավարիչներին, որ լայն հանգանակութիւն սկսին կենդանիների եւ մանաւանդ հացի սովամահ եղող վայրերի համար»[1]: «Տեղական միջոցներով մինչեւ հիմա հայթհայթուած է մօտ 10000 փութ ցորեն, իսկ կարիք ունեցող գիւղերին բաշխուած է մօտ 8-10000 ոչխար եւ 2000 գլուխ խոշոր եղջերաւոր անասուն»[2]: «Մի՛ մոռնաք, որ փոխադարձ օգնությամբ միայն կրնանք պահել մեր ազգային գոյութիւնը: Եթէ մէկը չօգնէ միւսին մենք կորած ենք»[3]:

Պարենային դժվարությունների հաղթահարման ճանապարհին զգացվում էր բարեգործական հասպատությունների օժանդակության կարիքը:

Նահանգի պարենային քաղաքականությունը կազմակերպված հունի մեջ դնելու համար 1915 թ. մայիսի 18-ի հրամանով գեներալ Ա. Նիկոլաեւը սահմանում է իր իսկ կողմից հասպատված սննդամթերքի հետեւյալ գները. հացի փութը՝ 2 ռ., ալյուրի փութը՝ 2 ռ., գարու փութը՝ 1 ռ. 40 կոպ., խոտը՝ 60 կոպ., տավարի միսը՝ 40 կոպ. (3 ֆունտի համար), ոչխարի միսը՝ 45 կոպ. (3 ֆունտի համար), շաքարի փութը՝ 12 ռ., տեղական օճառը՝ ֆունտը 10 կոպ.,

1 ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 157, թ. 5, նաեւ «Մշակ», Թիֆլիս, 1915, յուլիսի 9, թ. 147:
2 «Արարատ», 1915, յունիս, էջ 458, նաեւ «Մշակ», թ. 147:
3 ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 10, թ. 46:

բրնձի փութը՝ 10 ռ., աղի փութը՝ 60 կոպ., կովի կարագի փութը՝ 25 ռ., ցորենի փութը՝ 1 ռ. 50 կոպ[4]:

Կաթողիկոս Գեւորգ Ե Սուրենյանցին ուղղված 1915 թ. մայիսի 26-ի թիվ 350 գրության մեջ Արամ Մանուկյանը, նկարագրելով Վան-Վասպուրականում ստեղծված ոչ բարվոք վիճակը, նշում էր. «Ամբողջ գիւղերը աւրուած ու հրկիզուած, ոչխար, եզ, տուն, երկրագործական գործիքներ թալանուած... Կը խնդրեմ «Եղբայրական Օգնութեան Կոմիտէէն», որ անմիջական դրամական օգնութիւն հասցնէ աւրուած գիւղերու, տուներու վերաշինութեան եւ գիւղատնտեսական գործիքներու եւ կենդանիներու հայթհայթման համար: Արդէն իմ նախագահութեամբ կազմակերպուած են գաղթականներ տեղաւորող եւ նպաստ-օգնութիւն հասցնող կոմիտէներ: Տեղական միջոցներով գործի ենք սկսած, որն արդէն սպառելու վրայ է: Լաւ կը լինէր, որ գումարներ տրուէր այդ կոմիտէներու տրամադրութեան տակ, որ պիտի մանրամասն հաշիւ տայ Ձեզ, անշուշտ իմ հսկողութեան տակ... Կը յուսամ, որ ի նկատի առնելով այս բացառիկ վիճակը, կոչ կընէք բոլոր բարեգործական եւ կուլտուրական ընկերութիւններուն, որ անմիջական օգնութեան հասնեն Վասպուրականին»[5]:

Վանի նահանգապետի կոչը շուտով լայն արձագանք գտավ: Նահանգի տնտեսական ճգնաժամը թեթեւացնելու համար Վան մեկնեցին Գյուղատնտեսական եւ Նպաստամատույց ընկերությունների, Եղբայրական օգնության, Հայաստանի վերաշինության եւ Միացյալ ընկերությունների Վանի հանձնաժողովների ներկայացուցիչները, որոնք օգնության պայմանագրեր կնքեցին հայ ազգաբնակչության հետ:[6]

Եղբայրական օգնության գլխավոր կարգադրիչ հանձնաժողովի 1915 թ. հունիսի 4-ին կայացրած որոշման տեղեկագրում նշվում էր, որ ի նկատի ունենալով հայ ժողովրդի՝ երկրում կրած նոր հալածանքները, որոնց շնորհիվ կարիքն անչափ ծավալվել էր. «Յանձնաժողովս որոշել է ըստ կարելւոյն մեղմացնել դժբախտացած հայ ժողովրդի սոսկալի վիճակը ՏաճկաՀայաստանում, յատկացնելով Վանի շրջանում պատսպարուածներին միանուագ 30000 ռուբլի ...» թողնելով հիմնավոր օգնությունը մոտ ապագային, երբ կարիքի չափը պարզված կլինի եւ կստացվեն պահանջված վիճակագրական տեղեկությունները: Բացի դրանից հանձնաժողովը Վան է ուղարկում նաեւ շորեր, շաքար եւ թեյ[7]:

Ավելի ուշ, Եղբայրական օգնության կոմիտեն իր տրամադրության տակ գոյացած գումարները օգտագործում է հետեւյալ կերպ. 15000 ռ.՝ հիվանդանոցների, 10000 ռ.՝ սննդատու կայանների (Ոստանում, Արճեշում եւ այլն), 10000 ռ.՝ լծկանների եւ երկրագործական գործիքների, 10000 ռ.՝ ցորեն ամբարելու, 10000 ռ.՝ պահեստավորման եւ 50000 ռ.՝ այլ նպատակների համար:[8]

ԿՀԲՀ խորհրդի եւ ՀԿԿ նախագահ Ս. Հարությունյանը Վանի նահանգապետին ուղղված նամակում նշում էր, որ հիշյալ ընկերությունները Վանի եւ Մանազկերտի շրջանի հա-

4 ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 157, թ. 10:

5 «Արարատ», Էջմիածին, 1915, յունիս, էջ 453-454, նաեւ **Եղ. Գեղամեան**, Հայերի ազատագրական շարժումները XX դարում (Հայկական հարցի եօթներորդ շրջանը), Բաքու, 1915-1917, էջ 638-640:

6 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 30, թ. 4-293:

7 Տե՛ս «Աշխատանք», Վան, 1915, թ. 26-225:

8 Տե՛ս «Աշխատանք», Վան, 1915, թ. 33-232:

յերի օգնության համար հատկացրել են 45000 ռ., որից 5000 ռ. դրվել է Ս. Տիգրանյանի տրամադրության տակ, իսկ 40000 ռ. ծախսվել է դեղորայքի, գործիքների, թեյի, շաքարի եւ այլ իրերի ձեռքբերման համար:[9] Միաժամանակ Վան է գործուղվում բժշկական երկու խումբ[10]:

Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Սարգիս Աբովյանին հանձնարարվեց կարգավորելու գաղթականներին սնունդ բաշխելու գործը[11]:

Հայ ժողովրդին ուղղված Վանի շրջանային վարչության 1915 թ. հունիսի 23-ի ուղերձում Արամ Մանուկյանը, դիմելով Էջմիածնում, Երեւանում, Թիֆլիսում, Բաքվում, Նախիջեւանում, Մոսկվայում, Պետրոգրադում, Ամերիկայում, Եգիպտոսում եւ Բալկանյան երկրներում ապրող հայությանը, խնդրում էր օգնության հասնել իրենց շրջանի ծով կարիքներին՝ ո՛վ ինչով կարող է՝ յուրաքանչյուր հայի բարոյական պարտականությունը համարելով «լիառատ օգնութիւնը»[12]: «Բժշկական գործի հետ,- շարունակում էր Արամ Մանուկյանը,- պետք է կազմակերպել եւ սնունդի ու նպաստի գործը: Փաստերը ցոյց են տուած, որ շատերը մահացած են սովի եւ շատերը հիւանդացած՝ սնունդ չրլլալուն պատճառով: Որոշած ենք մեր տրամադրութեան տակ եղած մօտ 50.000 ռուբլի գումարէն որոշ տոկոս մը յատկացնել հացահատիկներու գնման թէ՛ ներկայի եւ թէ՛ ձմրան համար... Հաւաքելու էք հին հագուստներ կամ կտորներ՝ հագուստի համար»[13]: «Պէտք են մեծ քանակութեամբ թէյ, շաքար եւ այլն, որովհետեւ տեղս ոչինչ չի գտնուիր... Փութամ աւելացնել եւ այն, որ նախ քան Կովկասի օգնութեան հասնելն, եւ գալէն ետքն ալ աշխատեցինք տեղական միջոցներով ալ կազմակերպել գաղթականներու օգնութեան գործը»:[14] «Կը խնդրեմ դիմել բոլոր միջոցներուն, կոչ ընել ամենքին, որ իրենց գոհողութիւնները, որքան կարելի է շուտ եւ առատ, ժամանակին տեղ հասցնեն, որպէսզի դեռ ձմեռը չեկած՝ կարող բլլանք գործերը հիմնականապէս կազմակերպել»[15]:

Արամ Մանուկյանի եւ Վանի շրջանային վարչության դիմումը լայն արձագանք գտավ հայ գաղթականության հոգսով ապրող ամենքի սրտերում:

Պարենային տարաբնույթ խնդիրը լուծելու համար նահանգապետ Արամ Մանուկյանը անհրաժեշտ էր համարում.

1) Մշակել ոչ միայն հայերին պատկանող, այլեւ թուրքերի եւ քուրդերի կողմից լքված ցանքատարածությունները: Բացի այդ, կարեւոր քայլ էր նահանգից հեռացած թուրքերի ու քուրդերի տների, հողամասերի ու այգիների աճուրդը: Այս հարցում, սակայն, նա սկզբնապես հանդիպեց Վանի պարետի դիմադրությանը: Գեներալ Ա. Նիկոլաեւը իր 1915 թ. հունիսի 15-ի գրության մեջ Արամ Մանուկյանի քաղաքականությունն այդ հարցում համարում էր սխալ, ավելացնելով, որ հայ բնակչությունը պետք է օգտագործի միայն սեփական հողատարածությունները, իսկ քրդական հողերը ինքնակամ գրավողներին՝ որպես կողոպ-

9 Տե՛ս անդ, 1915, թ. 27-226:

10 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 62ա, նաեւ «Հորիզոն», Թիֆլիս, 1915, թ. 128:

11 «Արարատ», 1915, յունիս, էջ 457:

12 «Արարատ», 1915, թ. 2, էջ 457, նաեւ **Եղ. Գեղամեան**, Հայերի ազատագրական շարժումները XX դարում, էջ 640-646:

13 «Արարատ», 1915, յունիս, էջ 458:

14 **Եղ. Գեղամյան**, Հայերի ազատագրական շարժումները XX դարում, էջ 642:

15 Անդ, էջ 646:

փիչների, սպառնում էր պատժել[16]: Հետագայում համանման ազդագրով հանդես է գալիս նաեւ Արամ Մանուկյանը, որը նշում էր, որ մասնավոր անձինք իրավունք չունեին այդպիսի յուրացումներ կատարելու[17]: Բանն այն է, որ զինվորական իշխանությունները լքյալ հողերը համարում էին ռուսական բանակի սեփականությունը եւ արգելում էին այդ տարածքների յուրացումը: Սակայն, գտնվելով անհարմար կացության մեջ, հետագայում ռուսական իշխանությունները գեներալ Ա. Նիկոլաեւի 1915 թ. հունիսի 27-ի հրամանի համաձայն, այդ հողերը վարձակալության իրավունքով, միայն բերքը հավաքելու պայմանով, ստիպված էին օգտագործման համար տալ հայերին, քանզի դրանց վաճառքից գոյացած գումարներն ուղղված էին տնտեսության վերականգնման գործին[18]:

2) Պարենային քաղաքականության կարեւորագույն խնդիրներից մեկը՝ անասնակերի հայթայթումն էր եւ բաշխումը:

Արամ Մանուկյանին ուղղված ռուսական բանակի Բայազետի ջոկատի շտաբի պետ գեներալ Ա.Նիկոլաեւի 1916թ. մայիսի 12-ի հեռագրում տեղեկացվում էր, որ Վանի շրջանի անասնակերը անհրաժեշտ էր բաշխել հետեւյալ շրջաններում՝ ա) Վանի, Բաշկալեի եւ Վանա լճի միջեւ ընկած տարածքներում, բ) Վանի եւ Բաշկալեի, Վանի եւ Սարայի միջեւ տեղաբաշխված շրջաններում եւ գ) Վանի, Սարայի եւ Վանա լճի միջեւ ընկած շրջաններում[19]:

Հատուկ ուշադրություն էր դարձվում ձմռան խոտհարքի նախապատրաստման ուղղությամբ: Գեներալ Ա. Նիկոլաեւը Վանի նահանգապետին ուղղված 1915 թ. հունիսի 20-ի թիվ 967 հեռագրում պահանջում էր նահանգի բնակչության միջոցով նախապատրաստվել ձմռան խոտհարքին եւ այդ մասին տեղեկացնել իրեն[20]: Սակայն կային դժվարություններ: Վանում եւ ամբողջ շրջանում զինվորները ոչ միայն օգտագործում, այլեւ փչացնում եւ թունավորում էին արտերը եւ խոտը, որի պատճառով էլ բնակիչները հրաժարվում էին խոտ վաճառելուց: Գրանցվել էր այդպիսի 117 դեպք:[21] Նման գործելակերպը սպառնում էր շրջանի խոտհարքի սակավությանը: Ելնելով դրանից, գեներալ Ա. Նիկոլաեւը 1915 թ. հունիսի 20-ին Արամից պահանջում էր, որ սկսած 1915 թ. հունիսի 22-ից անդրկասպյան կոզակների բրիգադին վճարքով օրական մատակարարվի 1000 փութ խոտ, միաժամանակ սպառնալով, որ պահանջը չկատարվելու դեպքում կկիրառվեր ռեկվիզիցիայի (բռնի գրավման գործողություն - Ավ. Հ.) սկզբունքը[22]:

Միաժամանակ նահանգային վարչությունը որոշում է, որ գյուղերի հանձնառուները՝ մյուլթեզիմները, խոտերից ստացած տասնորդը վերցնեին խոտով եւ այն ամբողջությամբ դնեին կառավարության իրավասության ներքո: Որոշվում է նաեւ լեռնային շրջաններից չգանձել խոտի եւ այգիների պտուղների տասնորդ[23]:

Իր հերթին նահանգապետը անհրաժեշտ էր համարում խոտհարքը փչացնելուց եւ թու-

16 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 45:
17 Տե՛ս անդ, գ. 43, թ. 12:
18 Տե՛ս անդ,, գ. 10, թ. 46:
19 Տե՛ս անդ, գ. 43, թ. 13, նաեւ գ. 68, թ. 1:
20 Տե՛ս անդ, գ. 10, թ. 56-57:
21 Տե՛ս անդ,, գ. 65, թ. 1-8:
22 Տե՛ս անդ, գ. 55, թ. 17, գ. 6, թ. 134, գ. 8, թ. 50:
23 Տե՛ս «Աշխատանք», Վան, 1915, յուլիսի 8, թ. 31-230:

նավորումից պաշտպանելն ու բնակչությանը վարձահատույց լինելը՝ իր կատարած աշխատանքի եւ սեփականության համար: Գեներալ Ա. Նիկոլաեւն խոստանում էր քնող հանձնախմբի միջոցով բացահայտել արտերի վնասները եւ պատժել բոլոր մեղավորներին[24]:

3) Դժվարություններից մեկն էլ այն էր, որ երկրագործական եւ գյուղատնտեսական ամբարից կողոպտվել էին գանագան գյուղատնտեսական գործիքներ: Դրանք հետ բերելու նպատակով նահանգապետը յուրաքանչյուր գործիքի արժեքին համապատասխան խոստանում էր դրամական պարգեւ, հակառակ դեպքում՝ հարցը լուծվելու էր դատական կարգով[25]:

Նահանգի գյուղատնտեսական գործիքները կենտրոնացնելուց հետո Վան բերվեցին 1000 գերանդի, հնձող, կալսող եւ քամող մեքենաներ[26]

Բացի դրանից, Վանի նահանգային վարչության տրամադրած 3000 ռ. եւ Դոնի Ռոստովի հայրենակիցներից իբրեւ նվեր ստացված 1500 ռ. Պ. Կրասիլնիկյանը «Աքսիր» ֆիրմայից գնում եւ իր միջոցներով մինչեւ Իգդիր է փոխադրում 22 հնձող եւ կալսող մեքենա[27]:

4) Պարենային ճգնաժամի հաղթահարման ուղիներից մեկը ջրաղացների եւ քաղաքի հացի փռերի բացումն էր: Այդ հարցում շահագրգռված էին ինչպես ռուսական գինվորական հրամանատարությունը, Նույնպես եւ Վանի նահանգապետությունը: Այդ էր պատճառը, որ գեներալ Ա. Նիկոլաեւը Վանի նահանգապետին ուղղված 1915 թ. հունիսի 2-ի թիվ 714 հեռագրում հրատապ էր համարում ոչ միայն ջրաղացների եւ քաղաքային հացի փռերի բացումը, այլեւ հաց թխելու գործընթացը:[28] Արամի 1915թ. հուլիսի 14-ի թիվ 1651 հրամանի համաձայն՝ քաղաքի հացի բոլոր փռերը ձեռնամուխ եղան մեծ չափով հաց թխելու գործին, ինչպես նաեւ միջոցներ ձեռք առնվեցին գյուղերից ցորեն եւ գարի բերելու գործում[29]:

5) Ռուսական գինվորական իշխանությունները միտումնավոր քաղաքականություն էին վարում խոշոր եւ մանր եղջերավոր անասունների պատկանելության խնդրում՝ շատ դեպքերում բռնագրավելով անգամ հայերին պատկանող անասունները եւ կայքը, որն էլ վաճառում էին Իգդիրի առեւտրականներին[30]:

Այսպես, Վանի նահանգապետին ուղղված 1915 թ. մայիսի 16-ի խնդրագրում մի խումբ ծվստանցիներ նշում էին. «...թուրքերից ու քրդերից ամբողջովին թալանուած ու կողոպտուած ենք: Եթէ որեւէ տեղ մեր տաւարները գտեր ու բերել կուգինք, մեր ձեռնէն կառնին, ոչ միայն ռուսական կոգակները, նոյնիսկ մեր տեղական գինուորներն ալ նոյն բանը կրնէն»[31]:

Գործոթ գյուղի մի խումբ գյուղացիների բողոք-նամակում նշվում էր. «Մեր շրջանի ամբողջ հայ գիւղերի արու բնակչության 90%-ը շրջակայ թուրք, քուրդ եւ եզդի բնակչութեան միջոցով եւ նախկին անիծեալ կառավարութեան ղեկավարների միջոցով ջարդուած եւ ամբողջ կայքը, գոյքը, ցորենն ու անասունները փոխադրուած է շրջակայ քուրդ եւ եզդի

24 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 90, 93:
25 Տե՛ս անդ, գ. 43, թ. 7:
26 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 45:
27 «Աշխատանք», Վան, 1915, յուլիսի 8, թ. 31-230:
28 Տե՛ս գ. 6, թ. 67:
29 Տե՛ս անդ,, գ. 55, թ. 35:
30 Տե՛ս անդ, գ. 12, թ. 6:
31 Տե՛ս անդ, գ. 8, թ. 10:

գիւղերը ... ռուս կոզակը հասնելուն պէս այդ բանը՝ վերադարձումը խստիւ արգելուած է եւ ապրկէ զապ ռուս կոզակը ... իրենց թոյլ են տուած քուրդ, եզդի գիւղերի մէջ ամրացած հայկական կայք, զոյք, զարիները գրաւել եւ փչացնել: Ասկէ զապ ... ռուս կոզակները ականատես լինելով հայ ազգաբնակչութեան քուրդ գիւղերից իրենց ապրանքների մասնակի վերադարձնելը սիրած են կարծել, թէ հայերը կթալանեն թշնամու լքուած գիւղերը ...»:[32]

Գեներալ Ա. Նիկոլաեւին ուղղված Վանի նահանգապետի տեղակալ Պ. Լեոնյանի 1915 թ. մայիսի 23-ի հեռագրում տեղեկացվում էր, որ հաշվի չառնելով գյուղատնտեսական աշխատանքներին սպառնացող վտանգը՝ կազակները Կզլդաշ եւ Կեմ գյուղերին պատկանող ողջ անասունները քշել են Վան[33]:

Հաճախ զավառների կառավարիչները ռուսական զինվորական պաշտոնյաներից ուժով էին բռնագրավում քշված անասունները,[34] իսկ հաճախ էլ տարբեր տեղերից քշված եւ բռնագրավված անասունները ռուսական զորքերն օգտագործում էին իրենց նպատակների համար[35]:

Անհարկի վեճերից խուսափելու համար գեներալ Ա. Նիկոլաեւի 1915 թ. հունիսի 22-ի թիվ 991 որոշմամբ անասունների գնումը Վանի նահանգում իրականացվում էր միայն իր կողմից տրված վկայագրերի միջոցով[36]:

6) Պարենային խնդրի բաղկացուցիչներից մեկը աղի նկատմամբ պետական մենաշնորհի հաստատումն էր: Վանի «Dette publice» վարչության աղի պահեստները կնքված էին Վանի պարետի կողմից եւ գտնվում էին զինվորական ղեկավարության հսկողության տակ: Դա խանգարում էր աղի առեւտրի արտադրությանը: Դիմելով գեներալ Ա. Նիկոլաեւին՝ Վանի նահանգապետը 1915 թ. հունիսի 2-ին իրավունք է ստանում իր անմիջական հսկողության տակ պահել աղի մենաշնորհը:[37] Աղի նկատմամբ զինվորական իշխանությունների արգելքների վերացումը պատճառ է դառնում աղի առեւտրի աշխուժացմանը: Այդ են վկայում Վանի նահանգապետության արխիվից հայտնաբերված որոշ տվյալներ. եթե 1915 թ. մայիսի 11-31-ը Վանում վաճառվել է 14016 կգ աղ, ապա միայն հունիսի 1-8-ը աղի վաճառքը կազմել է 14496 կգ[38]:

7) Միաժամանակ Արամի 1915 թ. մայիսի 16-ի հատուկ ազդարարությամբ արգելվում էր զինվորներից եւ հայ կամավորներից որեւէ ապրանք, կենդանի կամ այլ իրեղեն գնելը:[39]

Այսպիսով, Վանի նահանգապետության ձեռնարկած մի շարք միջոցառումների շնորհիվ 1915 թ. մայիս-հուլիս ամիսներին ստեղծվեց բարվոք եւ կառավարելի իրավիճակ Վանի նահանգի տնտեսության բնագավառում:

32 Տե՛ս անդ, գ. 12, թ. 3:
33 Տե՛ս անդ, գ. 6, թ. 26:
34 Տե՛ս անդ, գ. 49, թ. 1:
35 Տե՛ս անդ, գ. 6, թ. 27:
36 Տե՛ս անդ, գ. 1, թ. 49-50:
37 Տե՛ս անդ, գ. 6, թ. 134:
38 Տե՛ս անդ, գ. 6, թ. 122:
39 Տե՛ս անդ, գ. 43, թ. 3:

ՅԱԿՈԲ ՊԵՏՐՈՍԵԱՆ
Բանասիրական գիտութիւնների թեկնածու

ԴԱՒԱՆԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՍԷՅԼԱՆԻ «ՀԱՅԹԱ-ՖԻՐԱՏ» ՎԻՊԱԿՈՒՄ

Երեւելի մտաւորական, գրող, բանագէտ, կրթամշակութային գործիչ Սէյլանը ապրել է ԺԹ. դարի 60-ական թուականներից մինչեւ Ի. դարի երեսնականները: Առաջին գործերը գրել է ԺԹ. դարի ութսունականներին, երբ Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանի աւարտական վկայականը ստանալով՝ Մկրտիչ Խրիմեանի բարեմաղթանքով գործուղուել է Սասուն (Գելիէզուզան, Տալորիկ, Սեմալ)՝ ուսուցչութեան: Մանկավարժական գործունէութեանը զուգընթաց՝ Սէյլանը հետեւողականօրէն տրւում է սասունցիների պատմութեան դրուագները, նրանց կեանքն ու կենցաղը ուսումնասիրելու գործին: Այդ նպատակով շատ կարճ միջոցում տիրապետում է Սասնոյ ինքնատիպ բարբառին եւ սասունական աւանդական բարքերին: Երկու տարի (1886-1888 թթ.) մնալով Սասունում՝ նա հասցնում է նիւթեր հաւաքել «Սասուն» արժեքաւոր աշխատութեան համար եւ գրել «Ֆերիդէ» վեպի մի մասը եւ այլ երկեր՝ բոլորն էլ կապուած արեւմտահայութեան, մասնաւորապէս սասունցիների ազատագրական ընդվզումների հետ՝ ընդդէմ սուլթանական եւ քրդական բռնութիւնների: Յատկանշական է, որ Սէյլանի գրական մկրտութիւնը սկսուել է սասունականով: Երիտասարդ Սէյլանին առաջին հերթին զբաղեցրել է իր ազգի, իր ժողովրդի ճակատագիրը: Նա փորձել է իր երկերով ու գործունէութեամբ նպաստել ազատագրման գաղափարի իրականացմանը, ստեղծագործութեան մէջ արտացոլել է իր ապրած ժամանակը, որ ամենառողբերգականն էր ու արիւնամածը:

Իբրեւ խկատիպ հայ մտաւորական ու հայ քրիստոնեայ՝ նա երեւացող ու աներեւոյթ թելերով կապուած էր դարաւոր իր հաւատքի հետ: Սէյլանի հոգում ժառանգաբար նստած էր հայը, քրիստոնեան, հաւատացեալ անհատը, եւ բնական է, որ այդ պարագան կարեւոր, վճռական դեր ունէր նրա գործելակերպի ու աշխարհայեացքի ձեւաւորման գործում: «Մէկ ազգի պահողն էլ՝ լեզուն ա ու հաւատը, թէ սրանց էլ կորցնենք, վա՛յն եկել ա մեր օրին». Խ. Աբովյանի այս բանաձեւը հոգու չափ հարազատ էր Սէյլանին: Եւ իր ստեղծագործութիւններում նա անդրադարձել է կրօնի ու հաւատքի խնդիրներին: Նրա խոհերն ու եզրահանգումները կրում են քրիստոնէական հաւատքի դրոշմը՝ որպէս անհրաժեշտ ու անառարկելի գործօն ու զօրութիւն հայ մնալու եւ հայ գոյատեւելու, իբրեւ ժողովրդի հոգեւոր կերպուածքի անտրոհելի յատկանիշ:

Արդէն «Սասուն» աշխատութեան մէջ Սէյլանը անդրադառնալով ԺԵ-ԺԶ. դարերում հայ նախարարական տների անհետացման, փոշիացման խնդրին՝ հաւատուրացութիւնը համարում է ազգային գոյութիւնը խաթարող նախապայման, ուրացութիւն, որ օսմանցի թուրքերի տիրապետութեան շրջանում դարձաւ պետական քաղաքականութեան՝ այլազգի հպատակների նկատմամբ կիրառուող կարեւոր սկզբունք: Դրա հետեւանքով «Բագրատունեաց անկումից յետոյ շատեր օտարացան, երկիր անտէր, արեան եւ հարստահարութեան

բեմ, ազատում էր ուրացողը»[1],- գրում է Սէյլանը, ու,- «Հոլովուեցան դարեր, փոխուեցան սերունդներ, մարեցան զգացմունքներ, աճեցին ու զարգացան ցածր սկզբունքներ, քայքայեցաւ **հայ քաղաքակրթութեան բարձրագոյն շէնքը** (ընդգծ. Ց Պ), խորտակեցաւ հպարտ փառքը հայութիւնից օտարացած, հարստահարիչ, դահիճ եղան հոգեհաւասար հարազատներին»[2]: Ինչպէս նշում է Սէյլանը, հաւատի կորուստը ուղեկցւում է բարոյական կորստով, քաղաքակրթութեան ու սեփական դիմագծի կորստով:

Ամենապարբեր առիթներով Սէյլանը անդրադարձել է կրօնի ու հաւատքի հարցերին, բայց դաւանափոխութեան հիմնախնդիրը նա խորապէս ու հանգամանօրէն արծարծել է «Հայթա-Ֆիրատ» գեղարուեստական երկում:

Վիպակի նիւթը Սէյլանը քաղել է ԺԸ. դարի պատմական անցքերից՝ ենիչերիների կեանքից: Առաջին անգամ տպագրուել է 1897 թ. «Տարազում», ապա առանձին գրքով 1904-ին՝ Թիֆլիսում: Այստեղ հեղինակը արծարծել է հայ իրականութեան մէջ յաճախ հանդիպող դաւանափոխութեան հիմնախնդիրը՝ գրականութիւն բերելով մեր ազգի համար շատ ցաւոտ մի իրողութիւն, որը համարեա չի լուսաբանուել, գրական ամբողջական մարմնաւորում չի ստացել:

ԺԴ-ԺԸ. դարերում՝ օսմանցի թուրքերի տիրապետութեան շրջանում, տարածուած էր քրիստոնեայ երեխաների (հայ, յոյն, բուլղարացի, հունգարացի) մանկոռսութիւնը, որի նպատակն էր առեւանգուած երեխաներին թլպատելը, գիտուորական երկաթեայ կարգապահութեամբ մարգելը եւ նրանցից ռազմական յատուկ գնդեր ստեղծելը, որպէսզի հաւատարմօրէն ծառայէին սուլթանին, դառնային նրա հենարանը: Յայտնի է, թէ իրենց ընտանիքներից, աշխարհիկ միջավայրից կտրուած, ազգութիւն ու կրօն չճանաչող այդ գիտուորները, որ կոչւում էին ենիչերի՝ հայթա, որքան դաժան ու անգութ էին լինում նաեւ իրայիների հանդէպ:

Ոչ մի հայ գրող չի փորձել մօտիկից քննել հաւատափոխ եւ ազգուրաց անհատի բարքն ու վարքը, չի մխրճուել նրա հոգու գաղտնարանները. «Սառ մոխակոյտե՞ր են այնտեղ,- գրում է հեղինակը,- թէ՞ բռնկուած հրդեհ, անհագ, քստմնելի դաժանութի՞ւն, թէ՞ հոգեկան տուայտանք ու անչափելի տառապանք, կորստեան անդարձ գահավիժո՞ւմ, թէ՞ վերադարձի տառապալից փնտրտուք»: Ահա Սէյլանը Հայթա-Ֆիրատի կերպարով փորձում է անդրադառնալ այս ոչ դիւրին հարցերին՝ ընթերցողի առաջ բացայայտելով հերոսի սայթաքուն-դժնդակ կեանքի ուղին: Իհարկէ, հեղինակի մօտեցումը դաւանափոխութեան երեւոյթին միանշանակ բացասական է, բայց տուեալ պարագային նրան շահագրգռել են կերպարի անհատականութիւնը եւ ողբերգական վախճանի հանգամանքները, որ հասարակայնօրէն նոյնպէս հետաքրքիր են:

Ֆիրատը ենիչերական հեծելազօրի հրամանատար է՝ իր քաջութեամբ ու խստութեամբ յայտնի եւ շրջապատի ակնածանք վայելող փաշա (ի դէպ, Ֆիրատ անունը ինքն է ընտրել՝ նկատի ունենալով հայրենի Եփրատը եւ չմոռանալով նրա ափերին հարստահարուող ու լացող եղբայրներին): Սէյլանը վիպակը սկսում է ահարկու Հայթա-Ֆիրատի եւ հայ սեղանաւոր-դրամափոխ Յակոբ աղայի երկխօսութեամբ, ուր բացայայտւում են հերոսի բարդ յուզաշխարհի որոշ կողմերը, կեանքի ու շրջապատի նկատմամբ դիրքորոշումը, որ ապրած

1 **Սէյլան**, Սասուն, Եր., 1990, էջ 41:
2 Անդ:

օրերի, խոր դիտողականութեան եւ դաժան փորձութեան արգասիք էր: Նրա հարցադրումները դրական կողմով են բնութագրում իրեն:

Առաջին իսկ հանդիպումը լումայափոխ Յակոբի հետ է, ուրեմն, եւ այստեղ Սէյլանը փոքր-ինչ բացում է իր հերոսի իրական դեմքը: Վերջինս վստահելով խոսակցին՝ համարձակ, մերկացնող, լումայափոխի համար անսպասելի, դատողութիւններ է անում, բաց է անում սիրտը. «Էհ, Յակոբ, իրա՛ւ, ես մահմեդական եմ...մեծ վեզիր եմ, տերութեան խոշոր հենակէտերից մինն եմ, սակայն չգիտեմ ծածկել իմ զայրոյթը մեր իսլամների մի շարք ժառանգական տգեղութիւնների դէմ... Օսմանեան կայսրութիւնը ազգերի վիժուկներով առոգացած քաֆթառների (բորենի) մի մարդախանձ ռհմակ է... Սուլթանը պաշտօն է ծախում մեծ քաֆթառների, նրանք էլ առանց խղճահարութեան յօշոտում են կենդանի մարդկանց, կողոպտում, սպանում, կինն ու որդին խլում են անզօրից այն պատճառով միայն, որ դայիր-միսլիմ (ոչ մահմեդական) են թշուառները»: Շիտակ ու ազնիւ խոստովանութիւն մի մարդու, որ ներսից է ուսումնասիրել Օսմանեան կայսրութեան դրուածքը, գիտէ, թէ ինչով է շնչում ու ապրում պաշտօնէութիւնը, ինչն է շարժում այդ հսկայ պետական մեքենան: Նա յանգում է այն եզրակացութեան, որ Թուրքիան ժանտախտն է Ասիայի, եւ եթէ մի հզօր ձեռք չուղղէ այդ անել ուղին, պիտի ոչնչանայ՝ իր հետ ոչնչացնելով ենթակայ ազգերին: Նա ոտքից գլուխ ընկղմուած է տիղմի մէջ, զբաղուած է ուրիշ ազգերի արիւն-քրտինքը լափելով, նոյն կերպ են նաեւ մեծացնում իրենց որդիներին. «Երբէք բարեփոխութիւն, արդարութիւն, անհատական իրաւունք մուտք չպիտի գործեն մեր ապերջանիկ երկրում, ուր օրը նոր, տարիքը նոր է՝ բայց ոչ նորութիւն, ուր արշալոյսից առաջ զարթնում են բռնակալների կրքերը»[3]:

Լումայափոխ Յակոբին Ֆիրատը ներկայանում է մինչ այդ անյայտ կողմերով: Նա կասկածում է. մի՞թէ այս ահարկու փաշան հայ է: Կարո՞ղ է դուրանի որդին այդքան պարզ ու մեկին զգալ, հասկանալ ճշմարտութիւն, [կարո՞ղ է] յանդուգն ռազմիկը ունենալ մարդասէր սիրտ, ազնիւ զգացումներ. չլինի՞ թէ սրա երակներում քրիստոնէական արեան կաթիլներ կան: Եւ այս կասկածը փարատելու համար նա կռուաններ է փնտրում. որ փաշան չքեր կին ունենալով է բաւականանում, որ տասը տարի Կարինում բնակուելով՝ ոչ ոքի չի վնասել, վայրագ եղեռնի հեղինակ չի դարձել, հայերի նկատմամբ հեզաբարոյ է, քրիստոնեայի հետ սեղան է նստում, որ երբ մարդ առաջին անգամ տեսնում է նրա գեղեցիկ ու մելամաղձոտ դէմքը, ուզում է հետը հայերէն խօսել, որ նա դրամ է տալիս չունեւոր հայերին բաշխելու համար, հիմա էլ իր ներկայութեամբ վատաբանում, նշավակում է թուրքական պետական մեքենան, դաժան անբարոյական գործերն ու կրքերը: Լումայափոխի կասկածները Ֆիրատի վերաբերեալ ճիշտ էին: Նա հայի զաւակ էր, եւ պատահական չէ, որ Սէյլանը նրա կերպարում խտացրել է այն լաւը, ինչ բնորոշ էր հայ աւանդական ընտանիքին, ուր իր մանկութիւնն էր անցկացրել Զօհրա-Ֆիրատը մինչեւ առեւանգուելը եւ ստացել քրիստոնէական դաստիարակութեան առաջին պտուղները: Առեւանգուելուց յետոյ քսան տարի շարունակ հարկադրաբար ապրել ու գործել է հոգուն խորթ միջավայրում: Այդ տարիներին նրան այնքան են հղկել ու տաշտշել, որ դարձել է Օսմանեան Կայսրութեան հլու գինուոր ու հաւատարիմ զօրապետ: Կայսրութեան համար մղուող բազում ճակատամարտերում աչքի է ընկել որպէս քաջ զօրավար, ահարկու ռազմիկ եւ այդպէս վաստակել փառք ու հեղինակութիւն, նաեւ նիւթական

3 **Սէյլան**, Հայթա-Ֆիրատ, Թիֆլիս, 1904, էջ 7:

բարեկեցութիւն: Տեւական շփումը թուրքական իրականութեան եւ վերնախաւի հետ նրան ոչ թէ ձգել է, այլ վանել, եւ նա գնալով աւելի խորն է ճանաչել այդ ապականուած միջավայրը: Այդ ճանաչումը նրան մղել է դէպի մանկութեան յուշերը, դէպի ընտանիք ու եկեղեցի, դէպի ազգութիւն:

Այս ասպիճանական դարձը, փնտրտուքը աւելի զօրաւոր է դառնում իր կողակից Էլիֆի հայկական ծագման գիտակցութեամբ, որը, սակայն, դաստիարակուած լինելով մահմեդական հոգեւորականի բարեկեցիկ ընտանիքում եւ մանկուց դաւանափոխ լինելով՝ հաւատարիմ է մնում իր նոր դաւանանքին: Նա ոչ մի կերպ չի պատկերացնում, որ կարող է հրաժարուել դրանից, նոյնիսկ այն պարագային, երբ նրան յայտնի է դառնում ամուսնու հայ լինելը: Նա խորապէս սիրում է ամուսնուն, բայց հրաժարուել նոր կրօնից ի վիճակի չէ: Սա դաւանափոխութեամբ անդարձ կորստեան հարիւրաւոր օրինակներից է:

Սէյլանը երկուսին էլ միանգամայն դրական կողմերով է ներկայացրել՝ հոգեկան ու ֆիզիկական բարեմասնութիւններով, բայց եթէ Ֆիրատի հոգում բոցկլտում է նախնիների արեան կանթեղը, ապա Էլիֆի մէջ այն իսպառ մարել է: Սա եզակի դեպք չէ. հարիւրաւոր դարերի ընթացքում հաւատուրացութեան պատճառով նման որքան ճրագներ են մարել անհետք, ու այսօր շարունակւում է այդ դժնի ընթացքը հայրենիքից հեռացող հազարաւոր ընտանիքներում: Հաւատափոխութիւնը ոչ միայն բռնի է լինում, այլեւ ակամայ, կամաւոր:

Ֆիրատի ճակատագիրը եզակի չէ. քրիստոնեայ երեխաների առեւանգումն ու դաւանափոխութիւնը Թուրքիայում համընդհանուր երեւոյթ է եղել, բազում կեանքեր են խեղուել ու կործանուել դրա հետեւանքով: Էլիֆն էլ այդ զոհերից է: Նրա կենսագրութիւնը փոքր-ինչ այլ կերպ է դասաւորուել, նրա մէջ իսպառ մեռել են ազգային պատկանելութեան զգացումն ու գաղափարը, թէեւ գիտակցում է՝ հայի զաւակ է ինքը. «Ո՞հ. ճակատագիր, երկուսս էլ հայորդի ենք, երկուսս էլ քրիստոնէի զաւակներ, ինչո՞ւ եւ ես քեզի չափ չյարգէի այդ կրօնը, դաստիարակուած չլինէի նրանով» (էջ 167-168): Շէրիաթի օրէնքները ջնջել են նրա հոգուց եւ մտապատկերներից այն ամենը, ինչ կապուած էր հարազատ ընտանիքի հետ: Դրան նպաստել են նաեւ թուրքական ընտանիքի միջավայրը, բարեացակամ վերաբերմունքը, նաեւ հարստութեան ժառանգական գործօնը. այստեղ բռնութիւն եւ դաժանութիւն չկայ: Սա եւս իւրատեսակ հաշիշ է, միջոց՝ ուծացման ճանապարհին: Սէյլանի ասելիքը դա է: Այդուհանդերձ Էլիֆի կերպարում Սէյլանը ցանկացել է գտնել տոհմական արմատներից եկող յատկանիշներ եւ ճակատագրով այլափոխուած, բայց հարազատօրէն ու սիրով իրար փարուած երկու հոգիների մէջ տեսնել հայ մարդուն իւրահատուկ նուիրուածութեան խորհուրդը:

Հոգեւոր տուայտանքների մէջ մի օր Ֆիրատը հայտնւում է Հայոց առաջնորդարանում: Այստեղ ընթերցողը հասու է լինում նրա անցեալի դրուագներին՝ պատանեկութեան օրերից մինչեւ փաշա դառնալը: Պարզւում է, որ հիւրընկալ առաջնորդ Սիմէոն արքեպիսկոպոսը նրա սիրելի վարժապետն է եղել: Ֆիրատը հոգեւոր առաջնորդի առաջ լրիւ բացւում է ու խոստովանում իրեն տանջող ցաւերը, բացայայտում իր հետագայ քայլերը: Նա ակնածանքով համբուրում է ծերունի արքեպիսկոպոսի ոսկրոտ ու նիհար ձեռքը եւ խնդրում, որ իրեն ընդունի ոչ թէ որպէս ենիչերի փաշայի, այլ իբրեւ գայլի ճանկն ընկած մի զառան, որ չի մոռացել իր հոգեւոր հօրը եւ Տեր Աստծուն, որ ինքը Աւետարան երկրպագող հայ է եւ ուզում է խօսել հայոց լեզուով: Սրբազանը անակնկալի է գալիս եւ հրաշք է համարում, որ թուրք

հզօր ենիչերին հայերէն է խօսում: Սիմէոն սրբազանը նրան ընդունում է աւելի քան ջերմութեամբ, որպէս մոլորեալ զառ, որ վերադարձել է հարազատ փարախը: Ֆիրատը ճանաչում է նրան եւ արտասուելով ընկնում է նրա գիրկը. «Դու չես զտնում քո սիրասուն, մաքուր, ազնիւ աշակերտին, այլ տղմերով, յոռի կրքերով վատթարացած նրա ուրուականը... Զօրայի մէջ չեն մնացած քո ցանած բարի սերմերը, փչացած, քայքայուած է արդէն քո կառուցած շէնքը, նրա բարոյական աւերակն ես տեսնում փաշայական ոսկեվառ զարդերով ծածկուած... նա անարժան է, սրբազան, մինչեւ անգամ քո աջն համբուրելու, քեզ իր վարժապետը կոչելու» (էջ 116-117):

Ֆիրատ-Զօրայի հոգում բախումը իր անաղարտ անցեալի ու տղմոտ ներկայի միջեւ արտայայտւում է հայոց հոգեւոր առաջնորդի հետ հանդիպման ժամանակ, երբ նա խստովանանքի ձեւով ներակայացնում է իրեն առեւանգելու պատմութիւնը: Ֆիրատը եւդարձի մասին խորհում է, բայց հաւատացած է, որ դա հնարաւոր չէ, որովհետեւ չկայ նախկին Զօրան, այլասերուած, այլակերպուած, քայքայուած են նրա մէջ քրիստոնէական բարոյականութեան ընձիւղները, եւ երբ նա խօսում, զրուցում է սրբազանի հետ, իրեն մաքուր է զգում, մաքուր օդ է շնչում: Ճիշտ է՝ ակամայ թալատուել է, բայց հոգու խորքում չի հետեւել նոր վարդապետութեանը, շատացել է ամուլ կին առնելով, որ հայի աղջիկ է եւ դժգոհ չէ զաւակ չունենալու համար, որովհետեւ եթէ ունենար, նրան եւս նոյն ճակատագիրն էր բաժին ընկնելու: Սա նշանակում է, որ նրա հոգում տեւականօրէն չի լռել ազգային պատկանելութեան եւ քրիստոնեայ հաւատքի գաղափարը, եւ նա բնաւ չի հաշտուել ուրացութեան հետ: Այս դժխեմ ճակատագիրը ուզում է փակել իրենով: Այս առումով Ֆիրատը իրաւացի է համարում սրբազանի այն դիտողութիւնը, թէ ինքը պիտի նախընտրէր մահը եւ դասուէր «անյայտ» վկաների շարքը: Նա գիտակցում է իր ճակատագրի սխալը. «Յիրաւի... ես անձնասէր եղայ, ես կեանքն ընդունեցի արիական մահուան տեղ, որի քաղցրութիւնը միայն մեռնողն է զգում» (էջ 122): Ֆիրատի այս խոհուն մտահանգումը կարծես վերջը լինի իր տառապանքների ու տարակուսանքների: Հոգեպէս նա պատրաստ է ընդունելու իր մոլոր ճամփի բոլոր շեղումները, մեղքերը, որ անխուսափելի ուղեկիցներն են եղել իր վարած կեանքի: Իրականում դժուար էր յաղթահարել սովորական դարձած օրինազանց նիստուկացի խոչտիտութերը, օտար ծիսակարգի պարտադրանքները, փաշայական ապրելակերպի սրուերները:

Չկարողանալով յաղթահարել իր ներքին խռովք-հակասութիւնները եւ Էլիֆի կրօնական մոլեռանդութիւնը՝ նա որոշում է տիկնոջ հետ նահատակուել: Նա յոյս չունի, որ իրեն կարժանացնեն սուրբ հաղորդութեան՝ իբրեւ օրինաւոր աւանդապահ նահատակ Հայ Եկեղեցու, քանի որ ինքը դաւանափոխուելով՝ դաւաճանել է իր կրօնը. «Դատած եմ գլուխս իսլամական ապարօշով, երկչոտութեամբ ծածկած եմ իսկութիւնս» (էջ 153):

Նա գիտակցում է, որ այլընտրանք չկայ. «Ամեն բան վերջացած է, Հայր իմ, ես մեռնում եմ լկտի օրէնքի, մահմեդական դուրանի սրով»: Լինելով շնորհաշատ անձնաւորութիւն, տիրական եւ ուժեղ անհատ՝ նա չի կարողանում մեկտեղել երկու իրար հակադիր սկզբունք՝ ազգայինը եւ օտարամուտը, որոնք հանդէս են գալիս կրօնական դրսեւորմամբ: Այս երկուսն էլ նրա մէջ արմատներ են գցել, բայց առաջինը բնական, աւանդական ճանապարհով, երկրորդը՝ արհեստականօրէն, բռնութեամբ, եւ ներքին պայքարը աւարտւում է յօգուտ առաջինի: Սէյլանը հետեւողականօրէն այն միտքն է զարգացնում, որ այլասերուածութիւնը, դաւա-

նափոխութիւնը, ուրացումը հաւասար են ազգային դաւաճանութեան, անկախ նրանից՝ գիտակցաբար է դա տեղի ունեցել, թէ անգիտակցաբար, ակամայ: Նոյնիսկ Ֆիրատի նման անհատը, որի հոգում մշտապէս առկայծել է ազգային պատկանելութեան կրակը, որը ուշքի գալով փորձում է օգտակար լինել ազգի թշուառ զաւակներին, նաեւ վճռական քայլ անում մերձենալու եկեղեցուն եւ մահից յետոյ իր բարերարութեան արգասիքներով թեթեւացնելու հօր եւ միւսների հոգսերը, նա, ըստ հեղինակի, այլեւս կորած է ազգի համար: Դաւանափոխութիւնը նոյնքան կործանարար է ազգի համար, որքան պարբերական կոտորածները, պանդխտութիւնը, գաղթը: Որքան սերունդեր են դաւանափոխուել, որոնց եւդարձի ուղին անորոշ կամ տարասկոտ է եղել կամ չի եղել ընդհանրապէս: Հաւատուրացութիւնը մերժելով՝ միւս կողմից Սէյլանը դատապարտում է դարերով հայի գլխին կախուած եւ նրան քայքայող թուրքական չարիքը, որ նախճիրներ է գործում՝ ոչնչացնելով մարդկանց ոչ միայն ֆիզիկապէս, այլեւ սպանելով նրանց հոգին, խաթարելով բարոյական հիմքերը, այն կռուանները, որ պատմականօրէն ի վերուստ տրուած են իբրեւ ազգային հաւաքականութեան հիմքեր: Վիպակը գրելիս այդ իրողութիւնն է Սէյլանին մտահոգել:

Դրամատիկ լարուած պատկերներով են ուղեկցւում Ֆիրատ-Զօրայի եւ աշուղ դարձած հօր հանդիպումը: Թւում է, թէ քսան տարուայ բաժանումից յետոյ որդին պիտի ջերմօրէն փարուի կուրացած հօրը, պատմի իր կեանքի ոդիսականը եւ խոստովանի ակամայ գործած մեղքերը՝ բացայայտելով իր ինքնութիւնը, բայց Սէյլանը հոգեբանական այլ ընթացք է տալիս դէպքերին: Ֆիրատի մէջ կար նման անհագ բաղձանք, բայց քանի որ ինքը մի անկայուն ջախջախուած նաւակ էր՝ զարնուած մահմեդական դաւանութեան պղնձակուռ պարիսպներին, ինքը չկար արդէն որդեսէր ծնողի համար, էլ ինչո՞ւ նորից վշտացնել թշուառ հօրը. չկար եւ թող այլեւս չլինէր:

Իր ինքնութիւնը հօրից թաքցնելով՝ հեծեծագին տառապանքով Ֆիրատը նամակ-կտակ է գրում Սիմէոն սրբազանին, ուր բացայայտւում են նրա ամբողջ էութիւնը, նրա բարոյական վսեմ յատկանիշները իբրեւ հայի զաւակ ու քրիստոնեայ: Այստեղ նկատառման է արժանի այն, որ Ֆիրատը, այնուամենայնիւ, իբրեւ սփոփանք ակնկալում է աղօթքներում պատարագի ժամանակ իր անուան յիշատակումը՝ իբրեւ քրիստոնեայ է համարում եւ չի ուզում, որ իմամների աղօթքները պղծեն իր ազնիւ հոգին:

Այն, ինչ ցուցադրում եւ ասում է գրողը, համակողմանի պատկերացում է տալիս հայութեան իրական կացութեան մասին, ընթերցողի առաջ բացւում են պատմական իրողութեան այդ քիչ արծարծուած էջերը: Ներկայացուած կերպարները դառնում են սրտամօտ, եւ նրանց ճակատագրի նկատմամբ անտարբեր չէ ընթերցողը:

Սէյլանը, որպէս ժամանակի բազմակողմանի զարգացած մտաւորական եւ իր ժողովրդի պատմութեանը ձեռնհաս ստեղծագործող, թափանցել է պատմութեան գաղտնարանները եւ ասպարէզ հանել Գորպէի, սասունցի իշխանների, Լեօն կայսրի, Խան-Միրանի, Զօրա-Ֆիրատի նման ինքնատիպ կերպարներ, որոնք ապահովաբար թարմութիւն են բերել մեր գրականութեան պատմութեան հարուստ պատկերասրահը: Յատկապէս Զօրա-Ֆիրատի ողբերգական-դրամատիկական կերպարը, որ կարող է յաջողութեամբ հանդէս գալ թատերական ողբերգութեան մէջ: Ուժեղ, խելացի եւ գօրաւոր անհատի կործանումը՝ ներքին եւ արտաքին գործօնների հետեւանքով, այդ կերպարը դարձնում են յիշեալ առումով հետաքր-

քիր ու գրաւիչ: Ուղղակի զարմանալ կարելի է, թէ ինչու մինչեւ հիմա այս ստեղծագործութիւնը գրականութեան պատմութեան մասնագէտների ուշադրութիւնից դուրս է մնացել:

Դառնանք, սակայն, մեր խօսքին: Սէյլանը հանգամանօրէն պատկերում է ամուսինների ողբերգական վախճանը: Ֆիրատը համբուրում է արդէն հանգած սիրելի կնոջ շրթունքները. «Երկու կաթիլ արտասուք սահեցան աչքերից, թեւերին մէջ առաւ չքնաղ հուրիի գլուխը, մտովի ասաց. «ընկալ քաղցրութեամբ» իր սիրած Նարեկացու հատուածը» (էջ 171):

Այս դրամատիկ պահին Նարեկացու յիշատակումը պատահական չէ. Սէյլանը դրանով մէկ անգամ եւս ակնարկում է իր հերոսի անաղարտ մանկութիւնը, անապակ հոգին, որ սնուել են նարեկեան բարոյականութեան ջինջ ակունքներից, ու չնայեած շրջապատի ճահճին, փտած բարքերին՝ այնուամենայնիւ հոգու խորքում բոցկլտում էր քրիստոնեայ հայ լինելու եւ հայ մեռնելու մաքուր լոյսը: Ու վիպակի այլաբանական, դիպուկ ու բազմանշանակ եզրափակումը. «Միայն մոմերը փայլում էին վագրի աչքերի պէս դուրանի զոհերին վերեւ», որ փաստօրէն ամփոփում է ամբողջ երկի բովանդակութիւնը:

Վիպակում առանձնանում է նաեւ հայոց առաջնորդ Սիմէոն սրբազանը, որին Սէյլանը ներկայացնում է որպէս հայ հոգեւորականի իդեալական, ռոմանտիկ կերպար: Նա ոչ միայն բարձրակարգ դաստիարակ է եւ հայոց կրօնի ու պատմութեան հմուտ գիտակ, որը իր շնորհաշատ սանի (Զօրայի) մէջ տեսնելով բնական հակում գիտելիքների հանդէպ՝ նրան պատրաստում է հոգեւոր բարձր կոչումների: Սրբազանը նաեւ հոգեւորականութեան իսկատիպ ներկայացուցիչ է՝ իր հօտի եւ ազգի պահպանման նախանձախնդիր: Նա է տնօրինում Ֆիրատ փաշայի գաղտնի տուած գումարները յօգուտ իր հօտի, գիտէ տիրողների հետ վարուելու կերպը. դիւանագիտական խաղերը՝ կանխելու համար իր ազգի գլխին եկող չարիքները. «Ես պէտք է գիտենամ եւ անգէտ ձեւանամ. արժանի հոգեւականն եգիպտական լաբիրինթոս է, նրա մէջ կորչում են հազարաւոր գաղտնիքներ» (էջ 119): Նա նշանակալի դեր ունի Ֆիրատի հոգեւոր աշխարհը վերջնականապէս յեղաշրջելու, դարձի առողջ ընձիւղներ նրա մէջ սերմանելու գործում՝ ապահովելով ու ամրապնդելով կապը հարազատ ժողովրդի հետ, որը, աւաղ, բաւարար չէր Ֆիրատի խաթարուած հոգին փրկելու, մաքրելու ապականուած կեղտաջրից: Եւ իր եկեղեցուն ու ժողովրդին մերձենալու այս գործընթացը փոխանակ դրական հետեւանք ունենալու, աւելի է հեռացնում Ֆիրատին բաղձանքից, աւելի է սրում նրա մէջ մեղաւորութեան, թողութեան արժանի չլինելու զգացումը: Ողբերգական վճիռ կայացնելու գործօններից մէկն էլ թերեւս դա է:

Սիմէոն սրբազանի կերպարի նկատմամբ գրողի համակրանքը անվերապահ է: Այլ կերպ չէր կարող լինել, քանի որ Սէյլանը խորին ակնածանքով էր համակուած բոլոր այն գործիչների հանդէպ, այդ թւում եւ եկեղեցական հայրերի (Ներսէս Աշտարակեցի, Մկրտիչ Խրիմեան, Գր. Ալէաթճեան, Յ. Մուրադեան), որոնք հաւատարիմ էին հարազատ ժողովրդին: Իսկ Սիմէոն սրբազանը հէնց այդպիսին էր՝ շիտակ, հոգատար ու խանդակաթ հոգեւոր անձ: Նա, իբրեւ Զօրայի երբեմնի վարժապետ, բաւական է համարում ապաշխարանքը՝ ներելու իր սանին, փրկելու մոլորութիւնից. խորհուրդ է տալիս գնալ օտար երկիր եւ ապրել իբրեւ հայ քրիստոնեայ, կամ գնալ Էջմիածին, հրապարակաւ խոստովանել իր դարձը եւ «Եկեղեցու օրինաց հիման վրայ թողութիւն ստանալ, որովհետեւ իբրեւ հոգեւորական-եպիսկոպոս՝ ինքը անողոք է. «որ ուրացցի զիս առաջի մարդկան, ուրացայց եւ ես զնմանէ առաջի Հօրն իմոյ, որ յերկինս է» (ՀՖ 153, հմմտ. Մատթ. Ժ 33, Ղուկ. ԺԲ 9):

Սէյլանը վիպակում առանձնայատուկ տեղ է յատկացրել Ֆիրատի ընկերական շրջապատին: Ենիչերի ընկերները՝ Ապտուլա, Մուստաֆա եւ Ալի-Զէքի փաշաները, նոյն ճակատագրով էին կապուած իրար. ծնունդով քրիստոնեայ էին՝ յոյն, հունգար եւ բուլղարացի, բայց՝ Ֆիրատի նման մանկուց դաւանափոխուած: Հասու էին իրենց անցեալին, սակայն ի տարբերութիւն Ֆիրատի, հաշտ էին իրենց նոր վիճակին. վարում էին աշխարհիկ կեանք, օգտւում իրենց տրուած արտօնութիւններից, մտերիմների շրջապատում ծաղրում էին ջենէթի «առաւելութիւնները»՝ գերադասելով իրական վայելքները, չնայեած արտաքնապէս բարեպաշտ մահմեդական էին: Որքան էլ դաժան ու արիւնարբու՝ միմեանց նկատմամբ հաւասարիմ էին, արժանապատիւ, եւ այդ հաւատարմութեան հիմքում Սէյլանը դրել է տոհմիկ արեան կանչը, որ ինչքան էլ աղաւաղուել ու փչացել է, այնուամենայնիւ հարկ եղած դէպքում զգացնել է տալիս: Եւ դա է, որ նրանց դրդում է ընկերոջ՝ Ֆիրատի ամենածանր պահերին թիկունք կանգնել, պատժել՝ կախաղան բարձրացնելով նրա արժանապատուութեանը կպչող դաւադիր պաշտօնեաներին, յուսահատութեան ճիրաններից փորձել կորզել նրան, որ չի հաջողւում: Նրանք չունեն, սակայն, Ֆիրատի շրջահայեցութիւնը եւ հոգու խորութիւնը, որը լինելով նոյնչափ նուիրուած ու հարազատ ընկեր՝ աւելի բարձր չափանիշներով է նայում կեանքի, իր ժողովրդի համար ստեղծուած դաժան իրավիճակի վրայ. այստեղ նրանց ճանապարհները կտրուկ բաժանւում են. մեկը գալիս է ինքնագիտակցութեան եւ մնում է անհաշտ ստեղծուած իրականութեան հանդէպ, կործանւում է, միւսները համակերպուելով՝ շարունակում են իրենց խաթարուած, ճղճիմ գոյութիւնը՝ չունենալով դրանից հրաժարուելու գիտակցութիւն անգամ: Թւում է, թէ գրողը չի հակադրել նրանց, չի ընդգծել արմատական տարբերութիւնը, բայց ներկայացուած պատկերները հանգեցնում են այն մտքին, որ երկու դէպքում էլ արդիւնքը բացասական է: Եւ դա է գրողի եզրակացութիւնը: Խաթարուած, գետնամած, անարխիկ, ամենակուլ հասարակական-քաղաքական բարքերը, որ բնորոշ էին սուլթանական տիրապետութեանը, չէին կարող մարդկային կանոնաւոր կեցութեան երաշխիք լինել եւ ապահովել բնական, ներդաշնակ զարգացում: Այդպէս էր նաեւ Սէյլանի ապրած շրջանում: Ակնյայտ է նրա դժգոհութիւնն ու բողոքը այդ կարգերից, հանրային դրուածքներից, որ տրոր-ում էին մարդկային, ազգային եւ բարոյական ամեն սկզբունք ու սրբութիւն: Գրողը, իբրեւ լուսաւոր մտաւորական, չէր կարող հաշտուել նման հակաբնական եւ հակաբանական, հակամարդկային դրուածքի հետ: Սէյլանի բոլոր գործերում իշխում է այս սեւեռուած մտահոգութիւնը, որ նրա աշխարհընկալման մեխն է:

Դաւանափոխութեան հիմնախնդիրը, որ խորութեամբ արծարծուել է այս վիպակում, կազմում է Սէյլանի աշխարհայեացքի կարեւոր բաղադրիչը: Նրա ըմբռնմամբ հայութիւնը, որ չորրորդ դարից քրիստոնէութիւնը ընդունել է որպէս պետական կրօն, պէտք է շարունակի հաւատարիմ մնալ նրան, քանի որ ձիգ դարերի ընթացքում նա պաշտպանել է ժողովրդի լայն խաւերի կողմից եւ ձեռք է բերել ազգային ուրոյն յատկանիշներ: Այս իմաստով նա ունի նաեւ աշխարհայեացքային նշանակութիւն: Կրօնափոխութիւնը ոչ միայն բարոյապէս ընդունելի չէ, այլեւ հաւասար է ազգուրացութեան, որոշ առումով նաեւ դաւաճանութեան, քանի որ քայքայում, քանդում է ազգային հանրութեան կառոյցը: Սա է եզրակացութիւնը:

ԼԻԼԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ «ՑԵՂԻՆ ՍԻՐՏԸ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԼԵՋՎԱՈՃԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԸ

Դանիել Վարուժանը ստեղծագործեց պատմական բարդ ու ծանր ժամանակաշրջանում: Իր կարճատև կյանքի ընթացքում նա տեսավ հայության ճաշակած դառնությունները՝ սով, գրկանք, գառապանք, արյուն ու պանդխտություն: Այդ ամենը նա խտացրեց իր բանաստեղծություններում, որոնք լույս տեսան 1909 թ. «Ցեղին սիրտը» խորագրով:

1914 թ. Վարդգես Աիարոնյանին հղած նամակում Վարուժանն ասում է. «1904-1907 թ. շրջանն էր, երբ հայությունը կը խեղդվեր սուրի եւ սովի մղձավանջին մեջ, ու ես չուզեցի տեղ տալ իմ անհատական ցավերուս, գրեթե բռնի լռեցուցի իմ սիրտս ու նախընտրեցի երգել Ցեղին սիրտը, որուն բախյուններն կզգայի իմ մեջս, իմ սեփական արյունիս խորը: Հայությունը կուլար եւ կը մռնչեր իմ մեջս, եւ երգերս դուրս կուգային օտար երկնքի տակ՝ կարոտի լարովը միայն կապված մեր երկրի հողին եւ մարդուն հետ»[1]: Ժողովածուն բաղկացած է երեք բաժնից՝ «Բազինին վրա», «Կրկեսին մեջ» եւ դյուցազնավեպեր: Այդ բանաստեղծությունների նախնական եւ վերջնական տարբերակների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ կատարված փոփոխություններն ունեն ինչպես ընդհանրական, նույնպես եւ մասնակի բնույթ՝ կապված այս կամ այն բառի, կապակցության կամ նախադասության փոփոխության հետ եւ պայմանավորված են տարբեր հանգամանքներով:

Ժողովածուն սկսվում է «Զոն»[2] բանաստեղծությամբ, որն ունի մեկ ինքնագիր, որի համեմատությամբ վերջնական տարբերակն ունի որոշակի տարբերություններ: Ամենաակնհայտ փոփոխությունը «շամբեղեն գրիչ» արտահայտությունը «եղեգնյա գրչով» փոխարինելն է: Այս փոփոխությունն ինքնանպատակ չէ. հեղինակը պատահական չի ընտրել «եղեգնյա գրիչը». «Վահագնի ծնունդը» առասպելից հայտնի է, որ Վահագնը ծնվեց եղեգան փողից, իսկ նա հայ ժողովրդի քաջության, հերոսության ու հաղթանակի խորհրդանիշն էր, եւ եթե եղեգան փողից դուրս է գալիս լույս, ծուխ, ողբ, ուրեմն «եղեգան գրչով» պետք է պատմվի այդ հայկական պատմությունը: Այս պատճառով Վարուժանը «եղեգնյա գրչով» է երգում իր Զոնն առ հայրենիք:

Երկրորդ կարեւոր փոփոխությունը ավելի շատ քերականական բնույթ ունի: Նախնական տարբերակում անընդհատ գործածված էր. «Ի նվեր քեզ, իմ հայրենիք», «Ի նվեր քեզ, հին հայրենիք», «Ի նվեր ձեզ կրակի գոհեր», «Ի նվեր քեզ հայր կարեվեր» (365): Մշակված՝ վերջնական տարբերակում «Ի նվեր ձեզ» կամ «Ի նվեր քեզ» կառույցները փոխվել

1 **Դանիել Վարուժան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Եր., 1987, էջ 463:

2 **Դանիել Վարուժան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Եր., 1987, էջ 366: Այսուհետ հատորն ու էջը կնշվի տեղում:

են «Քեզի ընծա», «Զեզի ընծա» (71) ձեւերով, այսինքն գրաբարյան կառույցը փոխարինվել է աշխարհաբարյան ձեւով, ինչպես նաեւ **նվեր** բառը փոխարինվել է **ընծա**յով: Այս երկու բառերը թեեւ հոմանիշներ են, սակայն ակնհայտ է սրանց ոճական տարբերությունը. նվեր կարելի է տալ ամենքին եւ ամեն բան, ընծա՝ միայն ամենասիրելիին եւ այն էլ ամենաթանկը: Իսկ Վարուժանի ամենասիրելին իր հայրենիքն էր, այդ հայրենիքի թշվառ զավակներն էին, կրակի ու սուրի զոհերն ու իր հայրն ու մայրն էին: Հետեւաբար ընծա բառի ընտրությունը ինքնանպատակ չէ, այն ավելի դիպուկ է արտահայտում հեղինակի նպատակը:

Այս երկու փոփոխությունները ընդհանուր էին ողջ բանաստեղծության համար, մնացած փոփոխություններն ավելի մասնակի են եւ վերաբերում են այս կամ այն տողին կամ բառին: Այսպես, օրինակ նախապես գրվել է. «Եղեգնյա գրչով **փլած** տունս երգեցի», ապա՝ «Եղեգնյա գրչով տունս երգեցի **լալով**»(365): Վերջնական տարբերակում պարզապես գրում է. «Եղեգնյա գրչով **որբ** տունս երգեցի» /69/: Ընդամենը մեկ բառ է փոխում՝ «որբը», բայց այդ բառն արդեն ընդհանրացումն է նախորդների. «որբ» տունը փլած, ավերված տունն է, իսկ ավերակ տունը չի կարելի պատկերել առանց լացի: Ահա թե ինչու հեղինակն ընտրում է **որբ** բառը, որն արտահայտում է այդ ամենը միաժամանակ:

Հաջորդ տողում կարդում ենք. «Իմ գրչով **կրոիվ, կրոիվ** երգեցի» (366): Վերջնական տարբերակում **կռիվ** բառը փոխարինվել է **պայքար**-ով, եւ դա ավելի տեղին է արտահայտում նրա կոչն ու ձգտումը, քանզի Վարուժանի նպատակը ոչ թե պարզ կռիվն էր, այլ պայքարը, պայքարն՝ ընդդեմ չարի բռնապետության, պայքարն՝ ապրելու եւ հայ նահապետների վրեժը լուծելու համար:

Այս բոլոր փոփոխությունները վկայում են, որ Վարուժանն անընդհատ փնտրտուքի մեջ է եղել՝ գտնելու այն ամենատեղինն ու հարմարը, որը կհամապատասխանի տվյալ բանաստեղծության ոճին, թեմային ու կառուցվածքին:

Չնայած իր այս մշակումներին՝ «Զոն»-ի առաջին տարբերակը չի գիջում երկրորդին իր պատկերավորությամբ ու հայրենասիրությամբ: Բանաստեղծությունը երկու տարբերակում ես ստեղծված է կրկնվող բառերի հիման վրա, բայց ամեն մի կրկնություն մի նոր մակդիրի տարբերությամբ կամ ընդգրկումով բացում է հայրենի կյանքի մի նոր կողմ եւ բանաստեղծ որդու հոգեկան ապրումները կապված այդ ամենի հետ:

«Զոնը» այս շարքի համար նախամուտքի դեր է կատարում, իսկ մուտքը կատարվում է նախերգանքով՝ «Նեմեսիս» բանաստեղծությամբ: Սովորաբար Վարուժանի բանաստեղծությունների մեծ մասն ունի մեկ կամ երկու տարբերակ, իսկ ահա «Նեմեսիսն» ունի հինգ վերամշակում: Ուշագրավ է, որ այս բանաստեղծությունում փոփոխությունները կատարվել են սկսած վերնագրից: Տարբերակներից մեկում այն անվանել է «Ապրվածուհին», սակայն այս խորագիրը չէր արտահայտում բուն նպատակը եւ չէր համապատասխանում բնագրին: Դա էր պատճառը, որ նա վերանվանեց «Նեմեսիս», որը հունական դիցաբանության մեջ վրեժխնդրության ապրվածուհին է: Եւ քանի որ վրեժի գաղափարն էլ ընկած է այս երկի հիմքում, ապա վերջին տարբերակը ավելի դիպուկ է արտահայտում ողջ երկի նպատակն ու ուղղվածությունը:

«Նեմեսիսում» լեզվառճական մշակումների զգալի մասը բառընտրությանն է վերաբերում: Բանաստեղծն իր երկի պատկերավորության համար նորանոր մակդիրներ է ավելաց-

բել, եւ այդ մակդիրների ներմուծումով փոխվել է տողերի բառերի դասավորությունն ու վանկերի քանակը, բայց դրանով բանաստեղծությունն ավելի պատկերավոր է: Ահա հատված առաջին տարբերակից.

Քերթողն հրսկա, խոժոռադեմ, մրտավ լուռ
Արվեստանոցն ու փակեց
Պրղնձակերտ լայն-լայն դրռներն հապշտապ: (1, 366)

Վերջնական տարբերակում արդեն գրված է.

Քերթողն հրսկա, մրրրրկավարս, հրրաչվի,
Նվիրական արվեստանոցն իր մտրավ
Եւ փակեց լայն պողպատ դռներն հապշտապ: (1, 71)

Ժողովածուի բանաստեղծություններում կատարված բառային փոփոխությունները տարբեր բնույթի են: Երբեմն նախընտրությունը տրվել է հատկապես խոսակցական լեզվի բառերին: Օրինակ հետեւյալ բառերը վերջնական տարբերակում փոխարինվել են ժողովրդախոսակցական համարժեքներով.

առաջին տարբերակ	վերջնական տարբերակ
թավուր	դատարկ
ջլերաց	բոպիկ
ցասկոտ	քինոտ

Երբեմն էլ համարժեքների ընտրության հարցում նախապատվությունը տրվել է արեւմտահայ գրական լեզվին առավել բնորոշ բառերին, օրինակ՝ առաջին տարբերակում գրվել է «**Գործարանեն**, թիարանեն, բանտերեն/Գրռի կու տան» (373): Վերջնական տարբերակում գործարան բառը փոխարինվել է գործատուն-ով՝ «**Գործատունեն**, թիարանեն, բանտերեն/ Գրռի կու տան» (77):

Դանիել Վարուժանի բանաստեղծություններին բնորոշ են գեղարվեստական ընդհանրացումները, ինչն էլ ապահովել է բանաստեղծական խոսքի ուժգնությունը՝ ծավալուն միտքն արտահայտել հակիրճ: Սա է պատճառը, որ նախնական տարբերակների ահագին հատվածներին վերջնական տարբերակում փոխարինել է մի քանի տող: Օրինակ՝ «Ծեր կռունկը» բանաստեղծության առաջին տարբերակում գրված 36 տողին վերջնական տարբերակում փոխարինել է ընդամենը 12 տող (տե՛ս էջ 410, 120):

Իր լեզվառճական մշակումներում Վարուժանը հաճախ փոփոխությունների է ենթարկել տողի մեջ բառերի շարադասությունը: Երբեմն այդ փոփոխությունից առաջացել է նաեւ քերականական փոփոխություն, օրինակ՝

առաջին տարբերակ	վերջնական տարբերակ
Ինչպես ծառ մը ձիթենի ...	(366) Ծառի մը պես ձիթենի... (71)

Շատ հաճախ, սակայն, շարադասության փոփոխությունը ոճական նպատակ ունի, քանի որ այդ փոփոխությունից քերականական եւ իմաստային փոփոխություններ չեն առաջացել, չի աղավաղվել նախադասության իմաստը, այլ ոճական երանգավորումն է փոխվել միայն, օրինակ՝

առաջին տարբերակ՝
Պատվանդանին դրրավ աջ թեւը սոթտրված...(373)

վերջնական տարբերակ՝
Թեւը սոթտրված պատվանդանին դրրավ... (77):

Կամ մեկ այլ տեղ առաջին տարբերակում հանդիպում ենք՝
Շրռինդ, շրռինդ սալահատակին կը հնչեն...(373)

վերջնական տարբերակում ունենք՝
Սալահատակին շրռինդ, շրռինդ կը հնչեն... (77):

Վերջնական մշակումներն աչքի են ընկանում նաեւ տողերի մեջ վանկերի հավասար քանակով: Սա խոսում է այն մասին, որ Վարուժանն իր մշակումներով լուծել է նաեւ տաղաչափական խնդիրներ:

Իր բանաստեղծությունների վերջնական տարբերակներում Վարուժանը որպես կանոն նախապատվությունը տալիս է **որեն** ածանցով կազմված մակբայներին, օրինակ՝«Նեմեսիսի» առաջին տարբերակում գրված «Մարմարին մեջ պաղպաջուն/ Ծաղկեցավ բարձր» տողերի փոխարեն վերջնական տարբերակում ունենք «Մարմարին մեջ **թարմորեն**/ Ծաղկեցավ բարձր շուշանի մ"հանգունակ»(1, 73):

Որեն ածանցով կազմված մակբայների կիրառությունը հատուկ է Վարուժանին, թեեւ քիչ գործուն է արեւմտահայերենում:«Ցեղին սիրտը» ժողովածուում կարելի է հանդիպել բազմաթիվ նմանատիպ բառերի կիրառության, որոնցից շատերը պատկանում են միայն Վարուժանի գրչին՝ հեղեղորեն, քրմորեն, թավշորեն եւ այլն: Ահա նմանատիպ բառերի ներմուծման այլ օրինակներ.

Առաջին տարբերակ.
Եւ փաթթելով գինք նորակերտ այդ գենքին... (1, 367)

Վերջնական տարբերակ.
Եւ փաթթելով գինք **մեղմորեն** այդ գենքին... (1, 73)

Մեկ այլ տեղ առաջին տարբերակում գրված է՝
Կողերն ահա կենդանի... (1, 371)

Վերջնական տարբերակում հանդիպում ենք
Կողերն ահա **ահեղորեն** շնչավոր... (1, 74)

Ժողովածուին բնորոշ՝ ընդհանրական փոփոխություններից է նաեւ **սեմ** բառի փոխարինումը **շեմ**-ով: Այսպես, օրինակ՝ առաջին տարբերակում հանդիպում ենք «Այս տունին մեջ, որուն **սեմին** վայրահակ»(391), իսկ վերջնական տարբերակում՝ «Այս տունին մեջ, որուն **շեմին** վայրահակ»(94), նույն ձեւով «Այդ **սեմեն** ներս մըտնելու» (393)՝ «Այդ **շեմեն** ներս մըտնելու»(95), «Կելլե կամ ոտքն անոր **սեմին** կը դնե»(391)՝ «Կելլե կամ ոտքն անոր **շեմին** կը դնե»(94):

Նմանատիպ փոխություններից է նաեւ **որքան** բառի փոխարինումը **որչափ**-ով, օրինակ՝ «**Որքան** հարսեր իրենց սըրտերն հրատապ»(409)՝ «**Որչափ** հարսեր իրենց սըրտերն հրատապ» (120), «**Որքան** մայրեր եւ որդիներ բաժնըված» (409)՝ «**Որչափ** մայրեր եւ որդիներ բաժնըված»(120):

Այս ամենով հանդերձ ժողովածուի բանաստեղծություններին բնորոշ առանձին բառերի փոփոխությունը զուտ ոճական արժեք ունի եւ պայմանավորված է ստեղծագործության բովանդակությամբ, կառուցվածքով, տողում վանկերի քանակով, ինչպես նաեւ հեղինակի վերաբերմունքով այս կամ այն հերոսի հանդեպ: Օրինակ «Նեմեսիսի» առաջին տարբերակում գրվել է «Կը սպասեր՝ ձեւն հագնելու հին հերոսի» (369): Վերջնական տարբերակում հերոս բառը փոխարինվել է դյուցազունով՝ «Կը սպասեր՝ ձեւն հագնելու հին **դյուցազնի**»(71): Դարզ է, որ հնի, անցյալի մասին խոսելիս պետք է ընտրվեին հին ժամանակներին բնորոշ բառեր՝ անցյալի մասին տպավորությունն ավելի ցայտուն արտահայտելու համար:

Մի այլ տեղում **ահեղ** բառը փոխարինվել է **վեհ** ածականով՝ ահեղ դիցուհի- վեհ դիցուհի: Միմյանց հետ արտաքինից իմաստային ոչ մի կապ չունեցող այս բառերի փոփոխությունից պատկերն ավելի գեղեցիկ ու դիպուկ է դարձել. չէ՞ որ ահեղ դիցուհի կապակցության մեջ բարության ոչ մի երանգ չի պարունակվում, իսկ վեհ ածականն ունի բարի հպարտության երանգ:

Քանի որ «Նեմեսիս» բանաստեղծության հիմնական նյութը անցյալի հեթանոսական հիշողությունների արթնացումն է, դրանով է պայմանավորված այս ստեղծագործության վերջնական տարբերակում գրաբարյան բառերի առատությունը՝ բամբիշ, դշիտ, քարափերթ, գերդ, ահավասիկ, դյուցազուն, դիցուհի, աստվածուհի եւ այլն:

Որքան էլ բառընտրությունն ընդհանուր լինի ժողովածուի բոլոր բանաստեղծությունների համար՝ կապված Վարուժան բանաստեղծի լեզվամտածողության հետ, այնուամենայնիվ շատ դեպքերում այդ փոփոխությունները պայմանավորված են միայն տվյալ բանաստեղծությամբ:

«Անիի ավերակներուն մեջ» բանաստեղծության բովանդակությամբ է պայմանավորված **ծիրանի-ի** փոխարինումը **խլայ**-ով: Ծիրանին արքայական հանդերձանք է, բայց

Վեսպ Սարգսը չի կարող ծիրանի կրել, այդ պատճառով գործածվել է խլան, որն ունի նաեւ բարակ լաթ իմաստը[3]՝ «Վեսպ Սարգըսյան կ՚լլար խըլան խոստացված» (87):

Ճիշտ նույն մտածողությամբ **կարմիր** բառը փոխարինվել է **տրտում**-ով: Մեր հայրենիքին բնորոշ է կարմիր հողը. այն հաճախ է կարմրել՝ իր հետ միախառնելով նահատակների արյունը, բայց տրտում բառը տվյալ դեպքում ավելի ընդգրկուն է, այն կարող է լինել եւ՛ արյունոտ, եւ՛ տանջված ու տրոորված, մանավանդ երբ խոսքը գնում է «Անիի ավերակներուն մեջ» Ալփասլանի, Պերոզի, Մոնոմախոսի ու Տուղրիլի ասպատակությունների մասին է՝ «Կը գրկե հողըդ տրըտում» (88):

Ընդհանրացման այս սկզբունքով առաջնորդվելով՝ **երգ** բառի փոխարեն գործածվել է **ողբ:** Առաջին հայացքից իմաստային ոչ մի առնչություն չունեն այս երկու բառերը (երգ-ողբ), բայց ողբ բառի ընտրությունը պայմանավորված է բանաստեղծության բովանդակությամբ. եթե հեղինակը գրում է քաղաքամայր Անիի մասին իբրեւ «հայության շիրիմի», «գերեզմանոց, Ուր կը փտին ոսկորներն հաղթ անցյալին» (89), ապա Ախուրյան գետը չէր կարող երգել, նրա արձակած ձայնը ողբ է, որի մեջ ուզում է խեղդվել հեղինակը՝«Գլորիմ վար, Ախուրյանի ողբին մեջ» (92):

Ընդհանուր առմամբ «Ցեղին սիրտը» ժողովածուի վերջնական մշակումներն ավելի պատկերավոր են, հղկված, եւ, որ ավելի կարեւոր է, ավելի ճիշտ են արտացոլում հեղինակի նպատակն ու լեզվական ըմբռնումները:

Ժողովածուի ամեն մի բանաստեղծության լեզվամշակում ընդհանուր առմամբ համապատասխանում է բոլոր օրինաչափություններին, եւ բոլոր մշակումները ապացուցում են Վարուժան բանաստեղծի ողջ տաղանդն ու ստեղծագործական երեւակայությունը: Չնայած սրան՝ չի կարելի ասել, թե նախնական տարբերակները թույլ են, կամ թերի ու անմշակ, պարզապես վերջնական տարբերակներն այնքան գեղեցիկ ու պատկերավորությամբ հարուստ են, որ դրանց կողքին նախնական ձեւերը մի տեսակ աչքի չեն զարնում:

Ժողովածուն պատկերն է հայ կյանքի, որը հուզել է բանաստեղծին: Փաստը, որ բանաստեղծություններին վերջնական տեսք տալու համար Վարուժանը շատ է ճգնել, հաստատում է հենց ինքը՝ 1907 թ. Արշակ Չոպանյանին ուղղված նամակում՝ գրելով. «Արցունքիս, ցասումիս եւ հեգնությանս խմորումն է, զոր ձեզի կ՚ուղարկեմ: Ամեն շեշտ սրտիս բաբախման հետ չափած եմ: Ջղայնությունս եւ կիրքը, զոր քերթվածներուս առաջին օրենքը կը նկատիմ, ինձ շատ դյուրին ներշնչած են, բայց անոր ամբողջական եւ ներդաշնակ կազմություն մը տալու բավական աշխատած եմ»[4]:

3 Տե՛ս «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», Վենետիկ, 1865, էջ 579:

4 **Դանիել Վարուժան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 339:

ԽԱՉԻԿ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ
Բանասիրական գիտութիւնների թեկնածու

ԿՈՄԻՏԱՍԻ ԿԵԱՆՔԻ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆԻՑ

«Ոչ է պատմութիւն ճշմարիտ
առանց ժամանակագրութեան»:
Մովսէս Խորենացի
1899

Յունուար 10, Բեռլին - Դուրիսկա Լուդովիկան իր լուսանկարը «Բարեկամական յիշատակ բեռլինեան օրերի» գերմաներէն գրութեամբ նուիրում է Կոմիտասին:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., 225:

Յունուար 12/1, Բեռլին – Կոմիտասը մշակում է «Ամ, մարալ ջան» մեներգը:

Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 1, Եր., 1969, էջ 136-138, 187:

Յունուար, Բեռլին - Կոմիտասը Լերմոնտովի թարգմանութեան հիման վրայ գրում է Գեոթէի «Լեռնային գագաթներ» խորագրով ռոմանսը:

Ի. Լ. Եղեան, Կոմիտաս, Եր., 1969, էջ 121:

Յունուար - փետրուարի սկիզբ, Բեռլին – Օսկար Ֆլայշէրի նախաձեռնութեամբ հիմնադրում է «Միջազգային երաժշտական ընկերութեան» Բեռլինի մասնաճիւղը, որին անդամակցելու հրաւէր է ստանում նաեւ Կոմիտաս վարդապետը:

Կոմիտասը պարտաւորութիւն է ստանձնում «...Շարունակ թղթակցելու եւ առհասարակ արեւելեան երաժշտութեան մասին ուսումնասիրութիւններ տալու»:

Կոմիտաս, Նամակներ, Եր., 2000, էջ 94:

Փետրուար 8, Էջմիածին – Կաթողիկոս Մկրտիչ Խրիմեանը կոնդակով Սինոդին թոյլատրում է «Մակար Եկմալեանի քառաձայն Պատարագի արարողութիւնը տարածել եւ գործադրել մեր եկեղեցիների մէջ». այս առիթով թեմական առաջնորդներին հրաման է տրուում «ուղարկել իրենց խմբապետներին եւ կարող անձանց պ. Եկմալեանցի մօտ ուսանելու»:

«Արարատ», Է, 1899, թ. 3-4, էջ 99:

Փետրուար 18, Բեռլին – Օսկար Ֆլայշէրի նախաձեռնութեամբ տեղի է ունենում «Միջազգային ընկերութեան» Բեռլինի մասնաճիւղի հիմնադրման կազմակերպչական աշխատանքների նախապատրաստմանը նուիրուած առաջին նիստը, որին մասնակցում է նաեւ ընկերութեան անդամ Կոմիտաս վարդապետը:

Ընդունում է ՄԵԸ մասնաճիւղի նախնական կանոնագրքի նախագիծը:

Zeifchzift der Internationalen musikqechaft...Լայպցիգ, 1899, 1-ին տեսր, էջ 46

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 1100:

Մարտ 4, Բեռլին – Կոմիտասը գնում է Հ. Կյոխսի «Երաժշտական լեքսիկոն», Էկարիուս-Զիբերի «Լսողական կրթութիւն», Բեթհովենի «Երգերի ժողովածու» եւ Ռոսսինիի «Վիլհելմ Տելլ» (օպերայի կլավիրը) գերմաներէն գրքերը:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 953, 1005, 1258, 1304:

Յունուար – Մարտ, Բեռլին – Կոմիտասը Ֆրեդերիկ Վիլհելմ համալսարանում լսում է հետեւեալ դասախօսութիւնները.

1. Միջնադարեան երաժշտութեան պատմութիւն. պրոֆ. Օ. Ֆլայշէր,
2. Մոցարտի կեանքը եւ ստեղծագործութիւնը. դոկ. Ֆրիդլանդէր,
3. ԺԹ. դարի երաժշտութեան պատմութիւն. պրոֆ. Օ. Ֆլայշէր,
4. Գերմանական երգը. դոկ. Ֆրիդլանդէր,
5. Երաժշտական-տեսական վարժութիւններ. դոկ. Ֆրիդլանդէր,
6. Վարժութիւններ կոնտրպունկտով. դոկ. Ֆրիդլանդէր,
7. Հին Յունասպանի երաժշտութեան մասին. պրոֆ. Բելերման:

Կոմիտաս, Նամակներ, էջ 91:

Նոյն շրջանում, Բեռլին – Կոմիտասը Ռիխարդ Շմիդտի մասնաւոր երաժշտանոցում շաբաթական մէկ ժամ լսում է դասախօսութիւն «գործիքագիտութիւն. գործիքաւորման ուսուցում» թեմայով:

Նոյն տեղում:

Մարտ, Բեռլին – Կոմիտասը Ռիխարդ Շմիդտի երաժշտանոցում լրացնում է թերի թողած առարկաներից մէկը՝ սկսում է «երգեցողութեան եւ ձայնամարզութեան դասեր առնել», որն ըստ նրա, «անպայման անհրաժեշտ է խմբական երգեցողութեան եւ առհասարակ ճեմարանական խմբի ձայները կրթելու եւ կոկելու համար»:

Նոյն տեղում, էջ 94:

Մարտ, Բեռլին –Ռիխարդ Շմիդտը փորձում է Կոմիտասի ձայնը եւ յայտնում, որ նա «բարիտոն է» ու «լիովին ամփոփում է բարձր տենորի եւ ստորին բարիտոնի ամբողջ տարա-

ծութիւնը 2 3/4 ութնեակ 20 ասպիճան»: Ռ. Շմիդտը նաեւ յայտնում է, որ Կոմիտասի «ձայնի մէջ ձուլուած է համագումարը թէ՛ տենորի ճկունութեան եւ թէ՛ բարիտոնի փափկութեան»:

Նոյն տեղում:

Մարտ 19, Բեռլին – Կոմիտասը նամակ է գրում Կարապետ Կոստանեանին եւ յայտնում է նրան, որ «Compositione Lehren»-ը կաւարտի եկող ամսին: Նամակում ասում է այն մասին, որ առաջին վեցամսեակում մնում է երկու առարկայ լսելու համալսարանում եւ՝ ֆիլհարմոնիա նուագելը գրեթէ «աւարտելու վրայ եմ»:

Նամակում Կոմիտասը անդրադառնում է նաեւ միջազգային երաժշտական ընկերութեան Բեռլինի ճիւղի գործունէութեանը, այնտեղ իր ուսուցչապէտ Օսկար Ֆլայշէրի ունեցած դերին եւ իր անդամակցութեանը:

Վերջում կրկին խնդրում է. «եթէ հնարաւոր է, իմ թոշակներս միշտ ամսագլխին ուղարկել-կարգադրել. սաստիկ նեղւում եմ, խոշոր ծախքեր ունեմ այժմ»:

Նոյն տեղում, էջ 93-94:

Ապրիլի սկիզբ, Վիեննա - Մխիթարեան Միաբանութեան անդամ հ. Գաբրիէլ Մենեւիշեանը իր թարգմանած եւ Կոմիտասի խմբագրած Լեւոն Մսերեանցի «Հայերէն բարբառախօսութիւն» գրքոյկը ջերմ ու յարգալից մակագրութեամբ նուիրաբերում է Կոմիտաս վարդապետին եւ յանձնարարում է հ. Վարդան Միքայէլեանին այդ գիրքն ուղարկել Բեռլին՝ Կոմիտաս վարդապետին:

«Գրական թերթ», Եր., 1991, թ. 18, տես թ. 10 նամակը:

Ապրիլի սկիզբ, Վիեննա - Մխիթարեան միաբանութեան անդամ հայր Վարդան Միքայէլեանը նամակ է գրում Բեռլին՝ Կոմիտաս վարդապետին: Նա առընթեր նամակին Կոմիտասին է ուղարկում Գաբրիէլ Մենեւիշեանի յանձնարարած Լեւոն Մսերեանցի «Հայերէն բարբառախօսութիւն» գրքոյկը:

Նոյն տեղում:

Ապրիլ 24, Բեռլին – Կոմիտասը պատասխան նամակ է գրում Վիեննա՝ Մխիթարեան միաբանութեան անդամ հ. Վարդան Միքայլէանին:

Տեղեակ պահելով նրա ուղարկած նամակը ստանալու մասին, յայտնում է նաեւ իր շնորհակալութիւնը Գ. Մենեւիշեանի նուիրաբերած Լեւոն Մսերլեանցի «Հայերէն բարբառախօսութիւն» գրքոյկն իրեն ուղարկելու համար:

«Խնդրեմ,- գրում է Կոմիտասը նամակի շարունակութեան մէջ,- յայտնեցէք իմ սիրելի բարեկամին՝ հայր Գ. Մենեւիշեանին իմ խորին շնորհակալութիւնը եւ յարգանօք ողջունեցէք նրան»:

Նամակի վերջում Կոմիտասը խնդրում է յայտնել, թէ «շարական բառը ինչպէս է սրուգաբանած Հայկազեան բառարանը»:

Նոյն տեղում:

Մայիս 10, երեկոյեան ժամը 8, Բեռլին – Պրոֆեսոր Օսկար Ֆլայշէրի նախաձեռնութեամբ տեղի է ունենում «Երաժշտական միջազգային ընկերութեան» երկրորդ նիստը: Նախագահող Օ. Ֆլայշէրի բացման խօսքից յետոյ Կոմիտասը գերմաներէն լեզուով կարդում է «Հայոց եկեղեցական եւ աշխարհիկ երաժշտութիւնը» խորագրով զեկուցումը: Զեկուցման մէջ Կոմիտասը նախ անդրադառնում է Հայոց եկեղեցական եւ ժողովրդական երաժշտութեան պատմական ծագումնաբանութեանը, եւ ապա «Հայոց երաժշտութեանը՝ իբրեւ անկախ եւ ինքնուրոյն արուեստ» թեմային: Շարունակելով իր խօսքը՝ նա հայկական երաժշտութիւնը համադրում է միւս արեւելեան ազգերի եղանակների հետ: Այնուհետեւ անդրադառնում է հայոց երաժշտութեան արդիականութեան խնդրին եւ պարզաբանում է եկեղեցական եղանակների կազմութիւնը՝ բոլոր մանրամասնութիւններով: Յոյց է տալիս ժողովրդական եղանակների կազմութիւնը եւ եկեղեցական եղանակների հետ դրանց ունեցած առնչութիւնները: Մի քանի խօսք նուիրում է հայոց հին երաժշտական խազերին եւ այժմեան ձայնանիշների դրութեանը:

Զեկուցումն ունենում է բացառիկ մեծ յաջողութիւն, նախագահողը՝ ունկնդիրների կողմից շնորհակալութիւն է յայտնում Կոմիտասին: Այնուհետեւ ներկաները սեղմում են նրա ձեռքը եւ թարմ ծաղիկներ մատուցում: Օ. Ֆլայշէրը Կոմիտասի ձեռքից վերցնում է զեկուցման տեքստը երաժշտական ընկերութեան հրատարակելիք «Եռամսեայ հաւաքածուի» մէջ զետեղելու համար:

«Մշակ», 1899, թ. 92, էջ 2-3:

Մայիսի 22, Թիֆլիս - «Մշակ» լրագրի 92-րդ համարում «Նամակ Գերմանիայից» խորագրի տակ տպագրւում է Խ. Խոսրովեանի նամակը՝ նուիրուած Բեռլինում Օսկար Ֆլայշէրի նախաձեռնութեամբ կազմակերպուած «Երաժշական միջազգային ընկերութեան» Բեռլինի մասնաճիւղի հիմնադրման հերթական նիստին: «Երաժշական միջազգային ընկերութեան նպատակն է,- ասուած է «Մշակում»,- ծառայել երաժշտագիտական ուսումնասիրութեանը»: «Բեռլինի մասնաճիւղն ունի արդէն 40 անդամ, որոնց թւում է իբրեւ հայկական երաժշտութեան ներկայացուցիչ՝ Կոմիտաս վարդապետը (սովորում է ի հաշիւ պ. Մանթաշեանի, երաժշտութիւն եւ այս տարի աւարտելով իր ուսումը՝ սեպտեմբերին վերադառնալու է Էջմիածին)»:

«Մշակ», 1899, թ. 92, մայիս 22, էջ 2-3:

Մայիսի 27, Էջմիածին – Մայր Աթոռում եպիսկոպոսական ձեռնադրութիւն է ընդունում Կեսարիայի հոգեւոր առաջնորդ Տրդատ վարդապետ Պալեանը: Խոստման համաձայն, այս առիթով նա պէտք է Էջմիածնում հանդիպէր Կոմիտաս վարդապետին եւ նրան

ցոյց տար իր յայտնաբերած «Հայոց հին երաժշտութեան դասագիրք» վերնագրով աշխատութեան (երգարանի) ձեռագիրը: Քանի որ Կոմիտասը տակաւին չէր վերադարձել Բեռլինից, ուստի նրանց հանդիպումը տեղի չի ունենում:

«Արարատ», 1899, թ. 6, էջ 228-229:

Մայիսի 31/19, Բեռլին – Կոմիտասը նամակ է գրում Էջմիածին՝ հայր Կորիւնին՝ «Արդէն մօտենում է վերադարձիս ժամանակը»,- գրում է նա եւ խնդրում դիմել Կաթողիկոսին, որպէսզի յանձնարարի, իբրեւ պարտք, իրեն ուղարկել 200 ռուբլի՝ վերադարձը իրականացնելու համար, ռոճիկից կամաց-կամաց մարելու պայմանով:

Կոմիտաս, Նամակներ, էջ 97-98:

Յունիսի 14, երեկոյեան ժ. 8, Բեռլին – Միջազգային երաժշտական ընկերութեան նախագահ եւ Բեռլինի համալսարանի երաժշտութեան պրոֆեսոր Օ. Ֆլայշէրի նախաձեռնութեամբ եւ ջանքերով Բեռլինի Շարլենկայի երաժշտանոցի դահլիճում տեղի է ունենում Կոմիտասի երկրորդ դասախօսութիւնն ու համերգը՝ նուիրուած հայկական ժողովրդական եւ եկեղեցական երաժշտութեանը:

«...Այս առաջին անգամն է,- ասում է Օ. Ֆլայշէրը իր բացման խոսքում,- որ Բեռլինում այդպիսի մի դասախօսութիւն է կարդացւում...»:

Անհրաժեշտ բացատրութիւնից յետոյ Կոմիտասը ցոյց է տալիս հայկական ժողովրդական ու եկեղեցական եղանակների կազմութեան տարբերութիւնները: Այնուհետեւ նա տեղական (գերմանական) երգիչ-երգչուհիների միջոցով տալիս է քառաձայն համերգ: Եկեղեցական երգերից կատարում են «Փառք քեզ», «Օրհնեցէք, գովեցէք», «Այս խորհուրդը լցաւ», «Ո՞վ, զարմանալի», «Սուրբ ես, Տէր», «Տէր, ողորմեա»: Ժողովրդական երգերից խումբը կատարում է «Սոնա եար», «Անձրեւն եկաւ», «Այ գղա, հերովն արի», «Հով արէք, սարեր», «Հայրիկ, Հայրիկ»: Ապա Կոմիտասը կատարում է քրդերէն՝ «Լելէ գավրէ, մրեսգօ», հովուի՝ ոչխարներին ջուր տանելու եւ բերելու եղանակը, «Ազ կոլնգեմ»: Մէկ հատ քրդական պարի եղանակ, արաբերէն՝ «Արա էյ թագրովնի», «Ջեմիլքամիլ», «Եալէյլի», «Արաբի հիջազ», տաճկերէն՝ «Ռուզի շեր», «Քիմ դեմիշտիր», «Բահար օլդու», պարսկերէն՝ «Բայեաթի շահնազ», «Բայեաթի քուրտի», հայերէն՝ հայոց պարերից «Հոդելլօ ջան», «Հաւար Զուլօ», «Էլա երթիս դվի», «Վարդ կոշիկս», «Տուն արի»:

Քրդական, պարսկական եւ տաճկական երգերը կատարելով՝ Կոմիտասը ցոյց է տալիս դրանց եւ հայկական եղանակների միջեւ եղած տարբերութիւնները: Վերջում Կոմիտասը մատնանշում է ժողովրդական ու հոգեւոր երգերի ընդհանրութիւններն ու տարբերութիւնները:

«Այդ ելոյթը,- ասուած է յօդուածի վերջում,- որ դասախօսութեանց հետ միասին տեւեց երկու ժամ, գեղեցիկ տպաւորութիւն թողեց բոլոր ներկայ եղող հանդիսականների վրայ»:

«Նոր-Դար», 1899, թ. 115, էջ 2:

Յունիս 15-16, Բեռլին – «Շարլենկա դահլիճում յունիսի կարդացած դասախօսութիւնից ու տրուած համերգից յետոյ «Բեռլինի օպերայի տնօրէնը,- գրում է Հ. Աճառեանը,- անձամբ կիրաւիրէ զինքը իբրեւ օպերայի գլխաւոր երգիչ եւ կիսօպանայ բացառիկ վճարում»: Կոմիտասը մերժում է այդ առաջարկը. «Իմ երգչի կարողութիւնները,- ասում է նա,- մէկ նպատակի միայն կծառայեն, մեծ ժողովուրդիս երգն ու երաժշտութիւնը ծանօթացնել երաժշտական աշխարհին եւ ապացուցել, որ հայ ստեղծագործ ժողովուրդը սկզբնական դարերէն ունեցեր է ինքնուրոյն երգ ու երաժշտութիւն»:

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», Եր., 1960, էջ 80:

Յունիսի 16, Բեռլին - «Berliner Morgenpost» թերթի հերթական համարում հրապարակում է գերմանացի թղթակցի դրուատական յօդուածը յունիսի 14-ին Շարլենկայի երաժշտանոցի դահլիճում հայկական ժողովրդական եւ եկեղեցական երաժշտութեան մասին Կոմիտասի կարդացած դասախօսութեան եւ տրուած համերգի վերաբերեալ: «...Մենք,- գրում է յօդուածի հեղինակը,- միայն մեր խորին շնորհակալութիւնը կարող ենք յայտնել հայր Կոմիտասին, որ յանձն էր առել այդպիսի մի դժուար գործ՝ ծանօթացնել գերմանացի երաժշտագէտներին հայոց եկեղեցական եւ ժողովրդական երաժշտութեան հետ»:

«Նոր-Դար», 1899, թ. 115, էջ 2:

Յունիս 26 /հտ/, Թիֆլիս - «Նոր-Դար» լրագրի հերթական համարում «Հայկական երաժշտութիւնը Բեռլինում» (նամակ Գերմանիայից) խորագրով հրապարակում է Ա. Էդիգարի յօդուածը նուիրուած յունիս 14-ին Շարլենկայի երաժշտանոցի դահլիճում Կոմիտասի երկրորդ անգամ կարդացած «Հայկական ժողովրդական եւ եկեղեցական երաժշտութեան մասին» բանախօսութեանն ու համերգի մասին ծաւալուն նկարագրութեանը /տե՛ս նաեւ յունիսի 14-ի գրառումը/:

Կոմիտասը ցոյց է տալիս, թէ հայկական եկեղեցում ինչպէս է կարդացւում «Աւետարանը» եւ խմբին երգեցնում է զանազան շարականներ եւ հայ ժողովրդական երգեր:

«Նոր-Դար», 1899, թ. 115, էջ 2:

Յունիսի երկրորդ կէս, Բեռլին – Միջազգային երաժշտական ընկերութեան գիտաժողովում «Հայ ժողովրդական ու հոգեւոր երաժշտութիւնը» թեմայով զեկուցում կարդալուց յետոյ երաժշտական ընկերութեան նախագահ եւ Բեռլինի արքունի համալսարանի երաժշտութեան պատմութեան ուսուցչապետ Օսկար Ֆլայշերը եւ նոյն ընկերութեան քարտուղար ու համալսարանի երաժշտութեան դասախօս դոկտոր Մաքս Զայֆերդը Կոմիտասին շնորհում են Ehzendoktor –ի (պատուավոր դոկտորի) կոչում:

«Խորհրդային արուեստ», Եր., 1933, թ. 8-9, էջ 25:

Յունիս 27, Էջմիածին – Ի պատասխան Կոմիտասի՝ Կաթողիկոս Խրիմեանին ներ-

կայացրած խնդրանքի, Գորիւն վարդապետը նամակով Կոմիտասին տեղեակ է պահում, որ Մայր Աթոռի դիւանապետը Սինոդի յանձնարարութեամբ նրան է ուղարկում երկու հարիւր ռուբլի դրամ, վերադարձի ճանապարհածախսը հոգալու համար:

ՀԱԱ ֆոնդ թ. 56, կուսակցաղային բաժին, գ. թ. 378, թ. 20:

Յունիսի 29/17, Բեռլին – Կոմիտասը նամակ է գրում Գ. Կոստանեանին եւ յայտնում, որ օգոստոսին գալ չի կարող, կվերադառնայ սեպտեմբերին: Նամակից իմացւում է, որ նրա կարդացած զեկուցումը իր ուսուցչապետները ցանկանում են հրապարակել Երաժշտական ընկերութեան գիտական ժողովածուում: Ուշանալու պատճառներից մէկը Կոմիտասը համարում է այն, որ պէտք է յօդուածը խմբագրի ու նախապատրաստի տպագրութեան: Միւս կողմից նա տեղեակ է պահում Կոստանեանին, որ «ուսման մէջ սահմանեալ ծրագիրը վերջացնել կարող» է «մօտաւորապէս օգոստոսի 20-ին, որովհետեւ դեռ անհրաժեշտ անելիքներ ունեմ»: Նամակի վերջում Կոմիտասը խնդրում է սեպտեմբերից առաջ իրեն չսպասել ճեմարանում:

Կոմիտաս, Նամակներ, էջ 95:

Յունիս 30, Էջմիածին - Գէորգեան ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանեանի հրաժարականից յետոյ Կաթողիկոս Մկրտիչ Խրիմեանի թ. 298 կոնդակով ճեմարանի տեսուչ է կարգւում Կարապետ վարդապետ Տէր-Մկրտչեանը:

«Արարատ», 1899, թ. 7, էջ 191:

Յուլիս 16, Բեռլին – Միջազգային երաժշտական ընկերութեան նախագահ եւ Բեռլինի Արքունի համալսարանի երաժշտութեան պատ. պրոֆ. Օսկար Ֆլայշէրը անդրադառնում է Կոմիտասի կարդացած զեկուցմանը. «Ձեր հմտալից եւ խորիմաստ դասախօսութեան միջոցով խորունկ մի հայեացք ձգել տուիք դէպի այն երաժշտութիւնը, որը մեզ համար ցարդ փակ էր եւ որ մեզ՝ արեւմտականներին շատ բան ուսուցանել կարող է»:

ՉԱԳԱԹ, Կոմիտաս ֆ. 57, Ռ. Ազատեան, էջ 28:

Յուլիս 16, Բեռլին – Միջազգային երաժշտական ընկերութեան Բեռլինի մասնաճիւղի քարտուղար դոկտոր Մաքս Զայֆերդը գրում է նամակ Կոմիտասին եւ շնորհակալութիւն է յայտնում նրան զեկուցման առիթով ցուցաբերած սիրայօժարութեան համար: «Դրանով Դուք վաստակեցիք ոչ միայն մեր մասնաճիւղի հիացմունքը, այլեւ Ձեր հայրենիքի քաղաքակրթութեան արժանի գնահատականը»:

Նոյն տեղում:

Օգոստոս մինչեւ 20, Բեռլին – Կոմիտասը վերջացնում է Ֆրեդերիկ Վիլհելմ արքայական համալսարանում ուսման համար սահմանուած ծրագիրը եւ աւարտում է այդ համալսարանի երաժշտա-փիլիսոփայութեան պատմութեան բաժինը:

ՉԱԳԱԹ, Կոմիտաս ֆ. 1098:

Սեպտեմբեր 2, Բեռլին – Կոմիտասի անունով լրացում է Ֆրեդերիկ Վիլհելմ արքունի համալսարանի փիլիսոփայութեան բաժինը աւարտած լինելու վերաբերեալ վկայական:

ՉԱԳԱԹ, Կոմիտաս ֆ.:

Նոյն օրը, Բեռլին – Կոմիտասի անունով Ռիխարդ Շմիդտը լրացնում է մասնաւոր կոնսերւատորիան աւարտած լինելու վերաբերեալ համալսարանական վկայական:

Նոյն տեղում, ֆ. 65:

Յունիս-սեպտեմբեր, Բեռլին – Կոմիտասին առաջարկում են համալսարանն աւարտելուց յետոյ մնալ Բեռլինում եւ դասախօսութիւններ կարդալ ուսանողութեան համար: Կոմիտասը մերժում է այդ առաջարկը «իր երկիրը վերադառնալու, ինքզինքը իր տոհմային արուեստի վերանորոգմանը նուիրելու համար»:

«Անահիտ», 1901, թ. 6-7, էջ 143:

Սեպտեմբեր 1-12 (հին տոմարով), Վաղարշապատ - Բեռլինից Էջմիածին է վերադառնում Կոմիտաս վարդապետը:

ՀԱԱ, ֆ. 312, թղթ. 26:

Սեպտեմբեր 1-14 /հին տոմարով/, Էջմիածին - Բեռլինում երաժշտական բարձրագոյն կրթութիւն ստացած Կոմիտասը Գէորգեան ճեմարանում նշանակում է եկեղեցական երաժշտութեան ուսուցիչ եւ վարում է Մայր տաճարի բազմաձայն երգչախմբի ղեկավարի պաշտօնը: Երկու շաբաթայ ընթացքում նա ճեմարանի աշակերտներից կազմում է մի քառաձայն երգչախումբ, սովորեցնում է Բեռլինում իր դաշնակած երգերը եւ եռանդուն կերպով նախապատրաստում է ճեմարանի 20-ամեակին նուիրուած տօնակատարութեանը: Կոմիտասի առաջին գործերից մէկն է լինում ճեմարանում նոր, բարձր հիմքի վրայ դնել եւրոպական նոտագրութեան ուսուցումը:

«Արարատ», 1901, թ. 4, էջ 215:
«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», 1960, էջ 65:

Սեպտեմբեր 26, երեկոյեան ժամը 6, Էջմիածին – Ժամերգութիւնից յետոյ ճեմարանի հանդիսասրահում տեղի է ունենում գրական-գեղարուեստական երեկոյ: «Խանգարմունք հայոց եկեղեցական երգեցողութեան» թեմայով բանախօսում է Կոմիտաս վարդապետը: «Այդ լուրջ ուսումնասիրութիւնը,- ասուած է «Արարատ» ամսագրում,- գեղեցիկ օրինակով պարզաբանուած լինելով մանաւանդ իւր տեսակի մէջ բոլորովին նոր բան, շատ հետաքրքրական էր ներկայ բանիմաց հասարակութեան համար: Կոմիտասը միաժամանակ կատարում է հայոց եւ ասորաց երգերի եւ ձայների համեմատութիւն՝ ցոյց տալով դրանց նմանութիւնն ու տարբերութիւնը:

«Արարատ», 1899, թ. 10-11, էջ 441:
«Մշակ», 1899, թ. 186, էջ 2:

Դեկտեմբեր 9, Էջմիածին – Կոմիտասը մասնակցում է Գէորգեան ճեմարանի ուսումնական խորհրդի Զ. նիստին: Այլեւայլ հարցերի հետ ժողովում քննարկում է Հր. Աճառեանի «Արմատական բառարանի» ձեռագիրը մրցանակի ներկայացնելու հարցը:

ՀԱԱ, ֆ. 312, թղթ. 27, վավ. 21, թ. 36:

Դեկտեմբեր 28, Վաղարշապատ - «Արարատ» ասագրում քաղուածաբար հրապարակում է Մկրտիչ Ա Կաթողիկոսի 1311-րդ կոնդակը, որով սինոդին յանձնարարում է «տալ քառամսեայ ռոճիկ տ. Կոմիտաս վարդապետին եւ շնորհել նմա գրնկալեալն փոխանակութեամբ 200 ռ.»:

«Արարատ», 1899, թ. 12, էջ 484:

Հոկտեմբեր-դեկտեմբեր, Լայպցիգ - Միջազգային երաժշտական ընկերութեան «Zeitschrift dez internationalen...» պարբերականում հրապարակում է Բեռլինում 1899 թ. մայիսի 10-ին եւ յունիսի 14-ին Կոմիտասի կարդացած բանախօսութեան ու տուած համերգի վերաբերեալ ծաւալուն հաղորդագրութիւն:

Լայպցիգ, 1899, I տարի,I տետր:

Հոկտեմբեր-դեկտեմբեր, Լայպցիգ - Միջազգային երաժշտական եռամսեայ հանդէսի առաջին համարում գերմաներէն լեզուով հրապարակվում է Կոմիտասի «Հայ եկեղեցական երաժշտութիւն» խորագրով յօդուածը (էջ 54-64):

Կոմիտաս, Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Եր., 1941, էջ 153:

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՋՈԿԱՏԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԹԸ

Առաջին համաշխարհային պատերազմի ռազմաճակատներում, բացի պարտադիր զինուորական ծառայութեան մէջ գտնուող հայ զինուորներից (շուրջ 250 000 մարդ) Կովկասեան ռազմաճակատի մարտական գործողութիւններին ռուսաստանեան զօրամասերի կազմում մասնակցում էին հայ կամաւորական խմբերը, որոնց թիւը 1915 թ. հասաւ եօթի (շուրջ 10 000 մարդ):

Կամաւորական խմբերը ստեղծուեցին 1914 թ. երկրորդ կէսին: Նրանք իրենց մասնակցութեամբ ցանկանում էին օգնել ռուսական բանակին ազատագրելու Արեւմտեան Հայաստանը: Խմբերը տեղանքի, լեզուի, միջաւայրի իրենց ծանօթութեամբ, անձնական խիզախութեամբ զգալի դեր խաղացին ռազմական գործողութիւնների ժամանակ: Ռուսական հրամանատարութեան կարգադրութեամբ խմբերը 1915 թ. վերջին ցրուեցին, միաձուլուեցին կանոնաւոր բանակի կազմում:

Արարատեան ջոկատը կազմաւորուել է 1915 թ. սկզբներին, II, III, IV կամաւորական խմբերի միաւորումից, հրամանատար է նշանակուել խմբապետ Վարդանը՝ Խանասորի Վարդանը[1]: 1915 թ. ապրիլի 15-ին Արարատեան ջոկատը մեկնել է ռազմաճակատ եւ որոշիչ մասնակցութիւն է ունեցել 1915 թ. մայիսի 6-ի Վանի դրաւման համար մղուող մարտերին:

Ս. Վրացեանը[2] իբրեւ Կարգադրիչ մարմնի ներկայացուցիչ ուղեկցում էր ջոկատի երթին մինչեւ ռուս-թուրքական սահմանը: Ստորեւ՝ նրա նոթերը այդ մասին (ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 53, թթ. 1-11):

ԱՐՇԱԿ ԲԱԼԵԱՆ

---

1 Վարդան Մեհրաբեան Վարդան, Խանասորի Վարդան (մահ.՝ 1942 թ., Երեւան), 1897 թ. Խանասորի արշաւանքի ընդհանուր հրամանատար, 1905 թ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ՝ Արցախի ինքնապաշտպանութեան ղեկավար: 1915 թ. Արարատեան ջոկատի հրամանատար:

2 Վրացեան Սիմոն Ղազարոսի (1882 - 1969 թթ.) - Նշանաւոր քաղաքական-պետական գործիչ, Հայաստանի Առաջին Հանրապետութեան հիմնադիրներից: Ծնուել է Դոնի Ռոստովի Մեծ Սալա հայկական գիւղում: Նախնական կրթութիւնն ստացել է տեղում: 1900 - 1906 թթ. սովորել ու աւարտել է Գէորգեան ճեմարանը: 1908 - 1910 թթ. ուսանել է Ս.Պետերբուրգի բարձրագոյն մանկավարժական դասընթացներում: Խուսափելով ցարական իշխանութիւնների հետապնդումներից՝ մի կարճ ժամանակով հաստատուել է Կարինում, 1911-ին ԱՄՆ-ում: Անդրկովկաս է վերադարձել 1914 թ. աշնանը: Նշանակուել է Թիֆլիսի Ազգային բիւրոյին կից կամաւորական շարժման գործերով ստեղծուած Կարգադրիչ մարմնի ընդհանուր գործավար-քարտուղար: Գործուն մասնակցութիւն է ունեցել Անդրկովկասի ազգային-հասարակական կեանքում կատարուող իրադարձութիւններին, խմբագրել է «Հորիզոն» թերթը: 1918 թ. մայիսի 28-ին Առաջին Հանրապետութեան հռչակումից յետոյ նուիրումով ծառայել է պետականութեան ամրապնդմանը: Եղել է Խորհրդարանի անդամ, «Զանգի», «Յառաջի» խմբագիր, Պետական գոյքերի, գիւղատնտեսութեան ու աշխատանքի նախարար (1920 թ. ապրիլ - 1920 թ. նոյեմբեր), Հանրապետութեան վերջին վարչապետ (1920 թ. նոյեմբեր - 1920 թ. դեկտեմբեր), Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի նախագահ (1921 թ. փետրուար - 1921 թ. ապրիլ): 1921 թ. յունիսին հեռացել է Հայաստանից: 1933 - 1938 թթ. Փարիզում հիմնադրել եւ հրատարակել է «Վէմ» հասարակական-քաղաքական գիտական հանդէսը: Մինչեւ 1951 թ. ապրել է ԱՄՆ-ում: 1951 թ. տեղափոխուել է Բէյրութ, ստանձնել է Նշան Փալանճեան վարժարանի տեսչի պաշտօնը, որը վարել է մինչեւ կեանքի վերջը: Վախճանուել է Բէյրութում:

Որքան գրում են պատմաբանները, ես կաշխատեմ ներկայացնել Արարատեան գնդի Երեւանից մեկնելը եւ այն հանդէսներն ու ժողովրդական ցնծութիւնը, որ առաջ եկաւ այդ առթիւ: Ապրիլի կէսերը անմոռանալի պիտի մնան բոլոր նրանց համար, որոնք ականատես եղան հայ կամաւորների շարժելուն: Դրանք այսուհետեւ պատմական օրեր են՝ խորհրդանշանը մեր պատմութեան մի նոր շրջանի: Արարատեան դաշտի հայ ժողովուրդը՝ արտասուքը աչքին, աննկարագրելի մի յուզումով տեսաւ ու ապրեց մի վայրկեան, որի մասին միայն երազում էր: Երազն ու իրականութիւնը մի պահ իրար խառնուեցին:

...Ապրիլ 12 ին Երեւանը մի անսովոր եռուզեռի մէջ էր: Ասպաֆեան փողոցը մի ծայրից մինչեւ միւսը լեցուած էր բազմութեամբ, որ դիմում էր դէպի Քանաքեռի բարձունքները: Այդ օրը Երեւանի կանանց կոմիտէն դրօշակ էր յանձնելու Դրօի[1] գումարտակին, եւ այդ առթիւ հանդէսներ էին տեղի ունենալու:

Տաք եւ արեւոտ օր էր: Արարատեան դաշտի արեւը իր ճոխ ճառագայթներով ապրում էր բոլորի աչքերում, խաղում ծառերի ու ժայռերի վրա: Միայն Մասիսն ու Արագածը պարուրուած էին թանձր ամպերով: Բնութիւնը լիաթոք շնչում էր: Եւ համատարած կենսունակութեան կեանք ու ոգեւորութիւն էին ներշնչում կամաւորների կանոնաւոր շարքերն ու դաշն քայլերը: Ահա նրանք անցնում են կարգ կարգ սինածայր հրացանները ուսերին, կոկիկ հագնուած, ժպտերես ու խրոխտ: Սիները զարդարուած են եղրեւանիների ոստերով: Առջեւից ծածանւում է դրօշակը, եւ թմբկահարը հատ-հատ հաշւում է քայլերը: Անցնում են անվերջ շարքերով՝ ոտաւոր ու ձիաւոր: Գիւղերից ու քաղաքից թափուած ժողովուրդը խռնուած է ամեն կողմ եւ որոտագին կեցցէներով ողջունում է հրամանատարներին: Մի ժամից աւելի է տեւում կամաւորների գնացքը:

Երեւանի գլխին, Քանաքեռի դաշտում տեղի է ունենում հանդէսը: Ընդհանուր հրամանատար Վարդանը՝ շրջապատուած բատալիոնների հրամանատարներով ու խորհրդականներով անցնում կամաւորների շարքերի առջեւով եւ բարեւում նրանց: «Ուռա » որոտում է մի ծայրից միւսը: Ժողովուրդը միանում է կամաւորների գոչին, նրանց հետ խանդավառօրէն դիմաւորում Վարդանին իր շքախմբով: Գունդը իր կանոնաւոր ու վարժ շարժումներով, իր փայլուն արտաքինով հիացում է առաջ բերում հանդիսականների մէջ: Հազարաւոր բազմութիւնը էլէկտրանացած*[3] նայում է կամաւորներին: Գեղջուկ կանայք զոգնոցներով սրբում են աչքերի արցունքները եւ օրհնում կամաւորներին: Բոլորի աչքերին ցոլում են երջանկութեան արցունքներ:

Բոլոր շարքերի առջեւից անցնելուց յետոյ Վարդանը իր շքախմբով կանգնում է կենտրոնում: Բազմութիւնը խռնուած է շուրջը: Կանայք ծաղիկներ են նետում Վարդանի եւ ընկերների ձիերի ոտքերի տակ, վարդեր են նուիրում նրանց: Առաջ են անցնում կանանց կոմիտէի ներկայացուցիչները, որոնք յանձնում են Դրօին մետաքսագործ մի դրօշ: Նրանցից երկու հոգի զգացած ճառեր են խօսում: Յիշեցին «հայոց աշխարհի փափկասուն կանանց» եւ բոլոր այն հերոսներին, որոնք գնացին մեռնելու գաղափարի համար, իրենց հիացումն ու բարեմաղթութիւնները յայտնեցին անձնազոհ մարտիկներին - «Բարի երթ եւ յաղթական վերադարձ»:

Նրանց ամբողջ գնդի կողմից պատասխանեց Վարդանը: Նա իր հակիրճ խօսքերը

* Այսպես՝ բնագրում (Ա.Բ.)

ուղղեց կամաւորներին: «Հայերի դարաւոր ձգտումն է եղել, ասաց նա, ունենալ այնպիսի մի ոյժ, որով կարողանայ կռուել իրեն կեղեքողների դէմ. այդ ձգտումը ահա իրականանում է. կազմակերպւում է ահա հայ բանակը, որը գնում է կռուելու ազատութեան համար: Մենք կմեռնենք, բայց կիրագործենք մեր վրա դրուած պարտականութիւնը. թո՛ղ հայ ժողովուրդը վստահ լինի այդ բանում»: Խօսեց եւ Դրօն, որ շնորհակալութիւն յայտնեց Երեւանի կանանց իր խմբին ցոյց տուած ուշադրութեան համար եւ իր յորդորն ուղղելով մարտիկներին յարեց. «Մենք կռիւը կռի համար սիրողներից չենք, մենք չենք գնում մեռնելու, այլ յաղթելու: Մենք մահ չենք ուզում, բայց եթէ պէտք լինի, մահից վախեցող չենք»: Խօսեցին եւ ուրիշները, որոնց մէջ առանձնապէս ուշագրաւ դարալագեազցի Տէր-Գրիգորի[2] խօսելը: Ալեհեր մօրուքը հովին տուած, արծաթէ խաչը բարձր բռնած նա յիշեց, որ ինքը տարիներ առաջ օրհնեց Վարդանի խումբը, որ գնում էր Խանասորի կռիւն: Այն ժամանակ խումբը փայլուն կերպով կատարեց իր գործը: Այսօր էլ իր տկար լեզուով՝ օրհնում է նոյն Վարդանին եւ ուղղում միեւնոյն բարձր նպատակին: «Այս լեռներում ազատասէր Աղասին է կռուել*, հիմա նրա յաջորդներն են կռիւ գնում. օրհնեալ լինի այն ճանապարհը, որով նրանք պիտի ընթանան»: Տէր հօր անպաճոյճ ու զգացուած խօսքերը աւելի եւս յուզեցին բազմութեան: Շատերը լաց էին լինում ուրախութիւնից, միմեանց աւետիս էին տալիս, օրհնում իրենց բաղդը, որ արժանացել են այսպիսի մի հազուագիւտ տեսարանի ներկայ գտնուել:

Այնուհետեւ տեղի ունեցան ձիաւորների մարգանքներ ու արշաւներ՝ ընդարձակ դաշտի վրա՝ ձիաւորները խմբերի բաժանուած՝ ճարպիկութեամբ կատարեցին մի շարք շարժումներ, որոնք ոգեւորութեամբ ու ծափերով ընդունեցին ժողովրդի կողմից:

Հանդէսից յետոյ Երեւանի հասարակութիւնը ճաշ տուեց կամաւորներին: Նոյն դաշտում քառանկիւնի ձեւով փռուած էին գետնի վրա շարք շարք սպիտակ սփռոցներ: Կամաւորները շարք շարք եկան բռնեցին այդ ընդարձակ տարածութիւնը՝ հրացանները եռոտանիներով շարելով իրենց կողքին: Այդ գարմանալի սեղանի գլխին պատրաստուած էր մի տեղ հրամանատարների, առաջնորդի եւ քաղաքի ներկայացուցիչների համար: Սեղանի չորս կողմը հաւաքուած էր անօրինակ մի բազմութիւն, իսկ չորս ծայրերում նստում էին տեղական նստակամբեր՝ սազանդարներ, զուռնաչիներ եւ այլն: Երգը, նուագը եւ մի քանի հազար կամաւորների ու խռնուած ժողովրդի ժխորը ինքնատիպ մի տեսարան էին ստեղծում: Հազիւ թէ երբ եւ իցէ Քանաքեռի դաշտը տեսած լինէր այդպիսի մի ոգեւորութիւն: Մի բոպէ Մասիսն էլ իր սպիտակափառ կատարը հանեց ամպերից, որ մասնակցի ընդհանրական ուրախութեան:

Ճաշի ընթացքում զգացուած ճառեր խօսեցին առաջնորդ Խորեն եպիսկոպոսը[3], քաղաքագլուխ Ս. Խաչատրեանը, հրամանատարները եւ ներկաներից շատերը: Դեռ ուտելը չվերջացրած՝ սեղանի զանազան կողմերում սկսեցին պարեր կամաւորների կողմից, շուտով խառնուեց եւ ժողովուրդը, եւ այս անխառն ուրախութիւնները տեւեցին երկար: Թւում էր, թէ հազարաւոր մարդիկ հարսանիք են անում եւ ոչ թէ պատրաստում կռիւ դաշտ երթալու...

Երեկոյեան քաղաքի հայ հասարակութիւնը հացկերոյթ կազմակերպեց առաջնորդարանում կամաւորների հրամանատար մասի եւ հիւրերի համար: Ներկայ էին հարիւր հոգուց աւելի, ի թիւս որոնց եւ նահանգապետը իր օգնականով, Երեւանի բերդապահը, Էջմիածնի սինոդի պրոկուրորը, պրոֆ. Պլէտնէօվ, Ազգային Բիւրօի եւ կարգադրիչ մարմնի մի քանի

* Նկատի ունի Խ. Աբովեանի «Վէրք Հայաստանի» վէպի հերոս Աղասուն (ԱԲ):

անդամներ եւ Երեւանի հասարակութեան ներկայացուցիչները: Այստեղ էլ անվերջ ճառեր, կենացներ, ոգեւորութիւն: Բոլորին համակել էր մի զգացում: Բոլոր խօսքերն ու իղձերը մի խնդրի - հայ կամաւորների յաջողութեան եւ հայ ժողովրդի բաղձանքների իրագործման շուրջն էին դառնում: Առանձնապէս ուժգին խանդավառութեամբ ընդունեցին պրոֆ. Պլէխանէօվի գեղեցիկ սպիչները* «ռուս-հայկական համերաշխութեան մասին»: Նա շեշտեց, որ ներկայ պատերազմը չարիք լինելով հանդերձ ունեցաւ եւ մի լաւ կողմ, որ խորտակեց այն պատնէշը, որ բաժանում էր հայ եւ ռուս ազգերը: Նրանք այժմ հաւատում են իրար եւ անկեղծութեամբ ձեռք մեկնում միմեանց: Ռուս եւ հայ զինուորը կռւում են կողք կողքի ընդհանուր նպատակի՝ ազատութեան եւ լաւագոյն իդէալների համար: Այս համերաշխութիւնը բերում է ապահովումը ռուսական շահերի եւ արշալոյսն է փաճկահայոց ազատութեան: Կեցցէ՛ այս համերաշխութիւնը:

Հացկերոյթը տեւեց մինչեւ ուշ գիշեր: Ներկաների կողմից հեռագիրներ ուղարկուեցին փոխարքային, կաթողիկոսին, գէներալ Օգանովսկուն[4]: Տիւրերի երգերն ու ոգեւորուած կեցցէները զրկախառնում էին պատշգամբի տակ վշշացող Զանգուի աղմուկին: Հազւագիւտ մի ոյժ բերել էր այստեղ եւ՛ մարտիկին ու պաշտօնեային, եւ՛ պրոֆեսորին ու առեւտրականին, եւ՛ հային ու ռուսին ... մի մեծ ...** շուրջ: Միայն թէ տեւական լինէր այդ միութիւնը:

Կամաւորների մօտ
II
Էջմիածնում

Հրաման էր եկել ապր. 15 ին անպայման մեկնելու: Հազար ու մի պակասութիւններ կային, որոնք պէտք էր երկու օրւայ մէջ լրացնել: Այդ երկու օրը տենդագին աշխատանքի եւ անվերջ վազքի օրեր էին: Վաղ առաւօտից մինչեւ երեկոյ եւ երեկոյեանից մինչեւ լոյս աշխատում էին թէ կամաւորները եւ թէ հրամանատարները: Գնումներ էին անում, հագուստ ու սնունդ էին պատրաստում, խորհրդակցութիւններ էին տեղի ունենում հրամանատարների եւ կարգադրիչ մարմնի անդամների միջեւ: Բազմաթիւ, ծանր հարցեր կային, որոնք պէտք էր լուծել շարժելուց առաջ: Դրութիւնը չափազանց փափուկ էր մանաւանդ երկրից հասնող մտրահոգիչ լուրերի պատճառով: Վանում ապստամբութիւն էր սկսւել, Արճէշից ու Աբաղայից ջարդերի ձայներ էին հասնում: Պէտք էր շտապել. ամեն վայրկեան մեծ նշանակութիւն ունէր...

Վերջապէս ամեն բան պատրաստ է: Նախընթաց օր որոշուեց՝ շարժելուց առաջ հանդիսաւոր մաղթանք ունենալ եւ զօրահանդէս կատարել: Ապրիլ 15 ին կանուխ առաւօտից մի չտեսնուած յուզում է նկատւում քաղաքում: Ժամը 9 ին արդէն քաղաքի գարնիզօնը կազմ ու պատրաստ սպասում է նշանակած հրապարակում: Ներկայ է նահանգապետը, բերդապետը, ռուս եւ հայ հոգեւորականութիւնը, զինուորական ու քաղաքացիական պաշտօնեաներ եւ անհամար ժողովուրդ: Կամաւորները, քիչ ուշ, կանոնաւոր շարքերով սկսում են հաւաքուել եւ գրաւել իրենց նշանակած տեղերը: Ահա գալիս է Քեռու գունդը[5], որի առջեւից գնում

* Սպիչ (անգլ. speech) - հակիրճ ողջոյնի խօսք (ԱԲ):
** Անընթեռնելի (ԱԲ):

է դրօշակիր երիտասարդ քահանան՝ կուրծքը զարդարուած շքանշաններով, որ ստացել է ճապօնական պատերազմում: Դրօի բատալիօնի առջեւից գնում է անյոգնում Տէր-Գրիգորը: Հրապարակի վրա կազմում է մի քառանկիւնի, որ երկու կողմերը ռուս զօրքն է բռնում, իսկ մնացեալ երկուսը՝ կամաւորները: Մէջտեղն են երկու ազգի հոգեւորականները եւ պատուաւոր հիւրերը: Դարձեալ արեւտր ու գեղեցիկ եղանակ է: Եւ դարձեալ Մասիսը թաղել է իր դէմքը ամպերի մէջ: Հրապարակից քիչ հեռու երեւում են հին բերդի բեկորները եւ Երեւանի խաների պալատի մնացորդները, իսկ սրանց կողքին կօնեակի գործարանի շէնքերը, որոնք, կարծես, խորհրդանշում են հինն ու նորը:

Սկսում է հանդէսը: Մաղթանքից առաջ ռուս քահանան մի քանի խրախուսական խօսքեր է ուղղում կամաւորներին, եւ ապա կատարում է ռուս հոգեւորականութեան ծիսակատարութիւնը: Ռուսներից յետոյ հայ հոգեւորականութիւնը Խորէն եպիսկոպոսի գլխաւորութեամբ՝ մաղթանք է կատարում, որից յետոյ ռուս ու հայ հոգեւորականութիւնը թափոր է կազմում եւ օրհնուած ջրով սրսկում կամաւորներին: Մաղթանքից յետոյ խօսում է Խորէն եպ., որ ջերմ մաղթանքներ է ուղղում մարտիկներին, որոնք հայ ազատասիրութեան խորհրդանիշն են. «Գնացէ՛ք, ձեր ճանապարհը թո՛ղ յաղթութեան ճանապարհ լինի»:

Այս բոլորից [յետոյ] բերդապետ գէներալ Գրիժեւիչը մի շատ գեղեցիկ պրիկազ է կարդում՝ ուղղած կամաւորներին, որով վեր է հանում վերջիններիս լաւ յատկութիւնները: Ահա այդ «պրիկազը» ամբողջութեամբ.

«Հրաժեշտի ողջոյն տալով հայկական գնդին, որ բաւական երկար ժամանակ ապրեց Երեւանում, Քանաքեռում եւ Զալմախչի գիւղում, ես հաճոյքով պէտք է վկայեմ, որ ինձ յանձնուած շրջանում ապրած ժամանակամիջոցում բոլոր խմբերը ջանասիրութեամբ պարապում էին զինուորական նախապատրաստութեամբ եւ իրենց հիանալի էին պահում՝ առանց որեւէ դժգոհութեան առիթ տալու:

Գնդի հրամանատար պ. Վարդանի եւ բատալիօնների հրամանատարներ պ.պ. Դրօի, Համազասպի[6], Խէչօի[7] եւ Խէչօի վարպետ ու ամուր ղեկավարութիւնը այն արդիւնքը ունեցաւ, որ շատ լաւ հետեւանքներ ստացուեցին: Այս ամենը դրդում է ինձ անկեղծ շնորհակալութիւն յայտնել կրթութեան եւ դաստիարակութեան գործի բոլոր ղեկավարներին եւ ցանկալ նրանց մարտական յաջողութիւններ ու բարեկեցութիւն: Բոլոր քաջարի կամաւորներին շնորհակալութիւն եւ բարի ճանապարհ Աստծու հետ»:

Պրիկազը ընդունուեց որոտագին «կեցցէ»-ներով, որից յետոյ տեղի ունեցաւ շքերթը՝ պարադը: Կամաւորները՝ հետեւակ ու ձիաւոր՝ անցնում էին հրացանները բարձր բռնած բերդապահ զօրքի եւ բերդապետի առջեւով: Զօրքն ու բազմութիւնը անվերջ «ուռաներով» էր ընդունում կամաւորներին: Ժամը 11 ից անց էր, որ կամաւորական շարքերը ճանապարհ ընկան: Հանդէսի վայրից մինչեւ Զանգուի կամուրջը եւ կամրջից մինչեւ այգիների ծայրը մի քանի վերստ տարածութեան վրա կտուրների, պարիսպների ու ծառերի վրա, ճանապարհի երկու կողմը խռնուած էր բազմութիւնը, որ «Մեր հայրենիք» երգելով ու կամաւորների վրա ծաղիկներ ցանելով ճանապարհ էր դնում: Ամբողջ ճանապարհը ծածկուած էր ծաղիկներով: Ամեն կողմից թնդում էր «Մեր հայրենիքը»: Ծանօթ անծանօթ համբուրում էին: Կամաւորներից ոմանք համբուրում էին իրենց հրացանը: Անպատմելի, անմոռանալի մի ոգեւորութեամբ հայ կամաւորները դուրս եկան Երեւանից՝ թողնելով իրենց յետեւը արցունքոտ աչքեր՝ եւ դիմեցին դէպի Էջմիածին...

Ամբողջ ճանապարհին կամաւորները գնում էին զինուորական կարգով՝ առաջապահներ, հսկիչ խումբ, պահակներ, գլխաւոր զունդ եւ այլն: Ամեն զումարտակի հետ գնում էին ձիաւոր ու պարէնակիր խմբերը, շրջուն խոհանոցները եւ այլն: Փարաքարում ընդառաջ եկաւ գիւղի ամբողջ ազգաբնակութիւնը աղ ու հացով: Էջմիածնից դուրս՝ Զւարթնոց եկեղեցու մօտ դիմաւորեցին կաթողիկոսի կողմից Աշոտ եպ. եւ Բարգէն վարդ.[8] եւ Վաղարշապատի հասարակութեան ներկայացուցիչները: Աշոտ եպ. եւ Բարգէն վարդ. ողջոյնի ճառեր խօսեցին՝ բարի գալուստ մաղթելով կամաւորներին: Նրանց պատասխանեց Վարդանը՝ շնորհակալութիւն յայտնելով իր բոլոր ընկերների կողմից:

Ապա զունդը մտաւ Էջմիածին: Վաղարշապատի հասարակութիւնը ցանկութիւն էր յայտնել նախօրօք զարդարել տները ծաղիկներով ու գորգերով, բայց գաւառապետ Լէմէրմանը արգելել էր: Հակառակ դրան տանիք ու պատշգամբ լիքն էր երկսեռ բազմութեամբ, որ բուռն ոգեւորութեամբ, ծափերով ու «կեցցէ»-ներով ընդունում էր կամաւորներին, որոնց երթը տեւեց աւելի քան մի ժամ: Ծանօթ խմբապետները արժանանում էին օվացիաների: Ամեն պատշգամբից ու պատուհանից հնչում էր «Վարդան», «Քեռի» եւ միւս սիրելի անունները: Այստեղ էլ կրկնուեցին միեւնոյն սրտաշարժ տեսարանները, ինչ որ եւ Երեւանում: Լացն ու ծիծաղը իրար էր խառնում: Վանքի ու ճեմարանի բակերը դարձել էին բանակատեղի եւ ուխտավայր ժողովրդի համար: Ոգեւորութիւնն այնքան մեծ էր, որ նոյն երեկոյ հարիւրից աւելի երիտասարդներ կամաւոր արձանագրուեցին...

Կամաւորները տեղաւորուեցին ճեմարանի եւ յարակից բնակարաններում: Հրամանատար մասը եւ եկած հիւրերը կաթողիկոսին ներկայանալուց յետոյ ընթրիքով հիւրասիրուեցան ճեմարանի սեղանատանը՝ միաբաններից շատերի ներկայութեամբ: Ինչ խօսք, որ այստեղ խօսուեցին աւուր պատշաճի ճառեր եւ ոգեւորութիւնը չափ ու սահման չունէր: Կէս գիշերին բոլորը գնացին հանգստանալու: Վաղուց էր էջմիածինը չէր ունեցել իր մէջ այդպիսի թանգագին հիւրեր: Վանքի հնադարեան պարիսպները վաղուց է արձագանք չէին տուել այդպիսի ռազմական գոչերի: Այդ գիշեր մի խորհրդաւոր ոգի իջաւ հին մենաստանի եւ խօսում էր ուրիշ լեզուով, քան խօսուել էր մինչ այդ:

Միւս օր վաղ առաւօտեան արդէն ճեմարանը, վանքը եւ ամբողջ Վաղարշապատը ոտի վրա էր: Ժողովուրդ էր գալիս եւ շրջակայ գիւղերից: Էջմիածինն ու ճեմարանը լեցուել էր մարդկային ծովով:

Զարմանալի կերպով գեղեցիկ առաւօտ էր: Արեւի ճառագայթի խուրձերը թափում էին ամեն կողմ: Մասիսն էր միայն, որ յամառօրէն ծածկում էր: Ճեմարանի ընդարձակ բակը բերնէ բերան լեցուած էր կազմ ու պատրաստ կամաւորներով: Շուրջը՝ անհաշիւ ժողովուրդ: Բակի կենտրոնում՝ ճեմարանի եւ հարաւային պարտէզի մէջտեղ պատրաստուած էր մաղթանքի յարմար տեղ, ուր եկաւ կանգնեց կաթողիկոսը*՝ շրջապատուած երկկարգ վեղարաւորներով: Հանդիսաւոր մաղթանքից յետոյ կաթողիկոսը կամաւորներին դիմեց քաջալերական խօսքերով: Ցիշեց երբեմնի հայկական բանակները, Վարդանին իր ընկերներով եւ յարեց, որ Վարդանանց գործը այժմ կամաւորներն են շարունակում**: «Որպէս Լէօնիդասը

* Խօսքը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե Սուրէնեանցի (1873-1938 թթ.) մասին է (ԱԲ):

** Նկատի ունի Աւարայրի Ճակատամարտը (451 թ.) եւ հայկական ուժերի հրամանատար Վարդան Մամիկոնեանին (ԱԲ):

իր 300 ընկերներով* ընկաւ իր հայրենիքի համար եւ արժանացաւ յաջորդների յիշատակութեան, այնպէս եւ ձեր յիշատակը օրհնեալ կլինի եւ հայ սերունդները ձեր անունները պարծանքով կյիշեն: Գնացէ՛ք, մեր սիրտը ձեզ հետ է, գնացէ՛ք լուծելու մեր դարաւոր վրէժը եւ ազատելու բազմաչարչար տաճկահայ ժողովրդին»:

Կաթողիկոսից յետոյ խօսեց ճեմարանի տեսուչ Ս. Մալխասեանը[9], որ շեշտեց գիտութեան եւ զէնքի համագործակցութիւնը: Ճեմարանը զարգացած սերունդ է պատրաստում, իսկ կամաւորները գործադրում են կեանքի մէջ նրա իդէալները: Հէնց նոր ճեմարանի աշակերտներից մի խումբ մտաւ կամաւորների շարքերը՝ աւելի եւս շեշտելով այն միտքը, որ ճեմարանն ու կամաւոր խմբերը միեւնոյն նպատակի համար են աշխատում: Ապա պ. Մալխասեանը ճեմարանի կողմից յաջողութիւն մաղթեց կամաւորներին:

Գնդի կողմից շնորհակալութիւն յայտնեց Վարդանը: Կաթողիկոսը օրհնեց բոլորին, եւ կամաւորները ճանապարհ ընկան դէպի Իգդիր: Տեսարանը անհունօրէն յուզիչ էր եւ խորհրդաւոր: Էջմիածինը, որ դարեր շարունակ խաչով ու աղօթքով հայ ազգի պահպանման խորհրդանիշն էր համարւել, այսօր գալիս էր ճանաչելու եւ սրբագործելու մի ոյժ, որից ինքը միշտ խորշել էր: Դա հայ մարտական ոյժն էր, որ ազգային ապահովութեան նոր ժամանակի խորհրդանշանն է կազմում: Դա այն զօրութիւնն է, այն ոգին, որ ստեղծագործել ու կռփել է հայ նոր սերնդի հաւատամքն ու իդէալները: Խաչը գալիս էր իր իրաւունքը տալու սրին եւ ճանապարհ էր դնում սրին, որ գնաց նուաճելու այն արդարութիւնը, որին չկարողացաւ տիրանալ խաչը...

Այս համեմատութիւնը շատերի մտքովն անցաւ այն պատմական վայրկեանին:

Կամաւորների մօտ
III
Իգդիրում

Էջմիածնեցիներն էլ շուքով ու հանդիսաւորութեամբ ճանապարհ դրին կամաւորներին: Բազմութիւնը ուղեկցեց մինչեւ անտառի ծայրը, իսկ ոմանք՝ մինչեւ Մարգարա: Փոքրիկ տղաներ ու աղջիկներ մասնակցելու համար ընդհանուր գործին՝ կամաւորների վերարկուներն էին տանում: Մի քանի պատանիներ՝ ծնողներից գաղտնի՝ փախան կամաւորների հետ, որպէսզի երթան «թուրքի դէմ կռուելու»: Շատերը լալով աղաչում էին, որ իրենց էլ առնեն:

Գունդը մի գիշեր անցկացրեց Մարգարայի մօտ, Արաքսից ոչ հեռու, առաջին անգամ վրաններում: Այս եւ յաջորդ օրը մինչեւ տեղ հասնելը, հայ գիւղերից ժողովուրդը ընդառաջ էր գալիս հոգեւորականութեամբ, խաչ ու խաչվառով, աղ ու հացով, շարականներով ու «Մեր հայրենիք»-ով: Քահանան օրհնում էր կամաւորներին եւ բարի գալուստ ու ողջերթ մաղթում, գյուղի ներկայացուցիչը աղ ու հաց մատուցանում, իսկ դպրոցական խմբերը ազգային երգերով ու «կեցցէ»-ներով դիմաւորում: Հայ գիւղացիութիւնը մի աննման խանդավառութեամբ ճանապարհ էր դնում կամաւորներին, որոնք գնում էին իրենց տաճկահայ եղբայրներին ազատելու համար:

* Լէօնիդաս – Սպարտայի թագաւոր (Ք. ա. Զ-Ե դդ.), հայրենասիրութեան աւանդական կերպար(ԱԲ):

Աւելի մեծ ոգեւորութիւն էր սպասում գնդին Իգդիրում, ուր գունդը հասաւ ապր. 17 ին: Գիւղի ծայրում դիմաւորեց զինւորական նւագախումբը, եւ կամաւորները անցան մարշի հնչիւններով: Շրջանի ամբողջ ժողովուրդն ու տեղի զինւորականները ներկայ էին եւ հիանում էին խմբերի կանոնաւոր անցքով: Այդքան մեծ բազմութիւն անկարելի էր տեղաւորել բնակարաններում, ուստի բանակ դրեց Հախվէրիս գիւղի մօտի դաշտում, ուր տղաները 2 3 օրի չափ հանգստացան եւ պատրաստութիւն տեսան աւելի ծանր ճանապարհորդութիւն կատարելու:

Իգդիրի հասարակութիւնը չբաւականացաւ միայն համակրանքի արտաքին արտայայտութիւններով եւ չնայած որ մի անգամ արդէն հանգանակութիւն արել էր կամաւորների օգտին՝ որոշեց մի անգամ եւս տալ իր նիւթական աջակցութիւնը: Այդ նպատակով գումարուեց յատուկ մի ժողով, ուր իգդիրցիները մի քանի ժամւայ մէջ հաւաքեցին 3231 ռուբլի: Այդ գումարը յատուկ մի պատգամաւորութեան ձեռքով յանձնուեց Վարդանին՝ խնդրելով ծախսել իր յարմար տեսած ձեւով:

Սակայն բանը դրանով էլ չսահմանափակուեց, մի երկու օր շարունակ Իգդիրը յուզած վիճակի մէջ էր. շատ տներ հաց էին թխում կամաւորների համար, շատերը նւէրներ էին պատրաստում, կամաւորներին ու հրամանատարներին ճաշի կանչում, ամեն կերպ աշխատում էին իրենք էլ մասնակցած լինել այս պատմական շարժումին: Եւ պէտք է ասել, որ աչքաց ու իր գործը գիտցող իգդիրցին այս անգամ էլ իր զոհողութեամբ ամօթով թողեց շատ շատերին:

Ոգեւորութիւնը մեծ էր, մանաւանդ, երիտասարդութեան մէջ: Գնդի պակասը լրացնելու համար յայտարարուեց կամաւորների ընդունելութիւն. մի քանի ժամւայ մէջ երեք հարիւրի չափ կամաւորներ արձանագրուեցին Իգդիրից եւ շրջակայ գիւղերից: Գնդի մէջ մտան նաեւ 150 ի չափ արճէշցի փախստականներ, որոնք նոր էին հասել Իգդիր՝ մի հրաշքով ազատուելով թրքական կոտորածներից: Երկրից եկած ջարդերի եւ սարսափների լուրերը աւելի եւս տաքացնում էին տղաներին, որոնք անհամբերութեամբ սպասում էին կռի օրերին:

Ապրիլ 19 ին տեղի ունեցաւ զօրահանդէս կօրպուսի հրամանատարի ներկայութեամբ: Ամբողջ գունդը երկար գծով շարուեց Հախվէրիսի դաշտում բանակատեղիի մօտ: Կօրպուսի հրամանատարը իր շքախմբով անցաւ շարքերի առջեւով՝ բարեւելով բոլորին: «Բարեւ, հազար բարի», թնդում էր հազար կամաւորների բերանից: Ապա կօրպուսի հրամանատարը մի զգացած ճառ խօսեց կամաւորներին, իր գոհունակութիւնը յայտնեց նրանց յառաջադիմութեան համար եւ յորդորեց քաջութեամբ գործել սուրբ նպատակի իրագործման համար: Ճառը ընդունուեց որոտընդոստ «ուռայով»: Ապա խմբերը կանոնաւոր շարքերով անցան կօրպուսի հրամանատարի առջեւով: Առաջ գնում էին ամեն մի գնդի հետեւակները խումբ խումբ իրենց խմբապետի առաջնորդութեամբ: Սրանց հետեւում էին ձիաւորները: Գունդը հիանալի տպաւորութիւն էր թողնում, կարծես երկար ժամանակ մարզած մի բանակ լինէր: Խմբերի անցքին ոգի ու եռանդ էր տալիս նւագախումբը, որի երաժշտութեամբ պար էին գալիս ձիաները:

Հանդէսից յետոյ կօրպուսի կոմանդիրը շնորհակալութիւն յայտնեց գնդի հրամանատարներին եւ նրանց յանձնեց ուսադիրներ: Ուսադիրները պատրաստուած էին գորշ կանաչ մահուդից՝ բաց կանաչ կիսաշերտերով: Կանաչ գոյնը առնուած էր իբրեւ յոյսի խորհրդանշան: Կանաչ շերտերը եւ սպիտակ ասղերը ցոյց էին տալիս խմբապետների ասպիճանը:

Հանդէսը անցաւ շատ յաջող, կօրպուսի հրամանատարը գոհ սրտով եւ բուռն ցոյցերով ու օվացիաներով հեռացաւ բանակատեղից: Գոհ էին եւ կամաւորները, որոնք պարզերես դուրս եկան առաջին քննութիւնից:

Երեկոյեան գնդի հրամանատարներին հացկերոյթով պատուեց Դրօի հայրը:

Միւս օր, ապրիլ 20 ին վաղ առաւօտեան գունդը դուրս եկաւ Իգդիրից եւ շարժուեց դէպի սահման: Իգդիրցիք վերջին մնաս բարովն ասացին՝ խռնուելով փողոցներում ու պանիքներում: Գաղթական կանայք արտասուքով ու աղօթքի մրմունջներով ճանապարհ դրին կամաւորներին, որոնք ուրախ ու համարձակ առաջ էին քայլում՝ պսպղացնելով իրենց սուինն ու կրծքին պինդ սեղմելով հրացանը:

Կէսօրին գունդը հասաւ Օրգով քրդական գիւղը, որի բնակիչները հեռացել էին: Այստեղ կամաւորները հանգստացան: Կերակուրը արդէն եփուել էր շրջուն խոհանոցում, եւ տղաները լաւ կշտացան: Հրամանատարների համար համեղ նախաճաշիկ էր պատրաստել Զեմստվային Միութեան սննդատու կէտի կառավարչուհի տիկին Տէր-Գրիգորեանը: Այդ էլ հայ կնոջ համակրանքի մի գեղեցիկ արտայայտութիւնն էր: Վերջին անգամ խմբապետներն ու իրենց գործակիցները ճաշակեցին քաղաքակիրթ երկրի բարիքներից, որպէսզի մի սիրուն յիշողութիւն տանեն իրենց հետ Ալաշկերտի ու Աբաղայի աւերածութեան վայրերը:

Կէսօրից յետոյ, յանկարծ, գեղեցիկ եղանակը պղտորուեց: Սկսուեց սաստիկ մի անձրեւ: Եւ այդ տեղատարափ անձրեւի տակ տեղի ունեցաւ մեր անջատումը կամաւորներից: Մի վերջին համբոյր, մի ժպիտ, ձեռքի մի սեղմում ու մի թռուցիկ խօսք, եւ շարքերը անցան յորդ անձրեւի տակ, խառնելով առատ ցեխը: Մի սուր զգացում ճմլում է սիրտս. ո՞վ գիտէ՝ ով պիտի մնար, ով պիտի գար: Ի՞նչ էր սպասում այս ջահել-ջիւան կեանքերին, որոնց ամեն մէկի կրծքի տակ հարուստ սիրտ է բաբախում եւ որոնց գանգերի ներքեւ մի-մի անսահման աշխարհ է ապրում:

Երկար ու լուռ կանգնած նայում ենք անցնող շարքերին եւ սիրտ չենք անում հեռանալու: Հեռում ձիւնոտ Չինկիլն է սպասում կամաւորներին, որոնց վերջին շարքերն ահա անցնում են մեր առջեւով: Վարը՝ Արարատեան դաշտն է տարածած իր կանաչապատ գիւղերով ու բարեբեր հողերով: Արաքսն է գալարւում օձի պէս եւ արծաթէ փայլով պսպղում: Իսկ մեզ ծեծում է գորշ ու պաղ անձրեւը եւ մի պաղ անձրեւ էլ մաշում է մեր սիրտը: Ծո՞ւտ պիտի բացուի արդեօք սպասւած կենսաբաշխ արեւը, որ ցրէ բոլոր անձրեւները մեր սրտերից... հայի սրտերից:

Ս. Վրացեան

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 *Դրօ, Դրաստամատ Կանայեան (1884 - 1956 թթ.) - Ծնուել է Իգդիրում: Հայաստանի Առաջին Հանրապետութեան հիմնադիրներից մէկը, հայոց ազատագրական շարժման նշանաւոր ռազմական գործիչ: Առաջին համաշխարհային պատերազմի օրերին կազմակերպուած Կամաւորական II խմբի հրամանատար, որը Արարատեան ջոկատի կազմում առաջիններից մէկը մասնակցեց Վանի առմանն ու 1915 թ. մայիսի 2-ին մտաւ Վան: 1918 թ. 23-28-ին ղեկավարել է Բաշ-Ապարանի հերոսամարտը եւ ոչ միայն կասեցրել է թշնամու առաջխաղացումը, այլեւ փախուստի մատնել նրան: 1921 թ. խորհրդային իշխանութեան պահանջով թողել է Հայաստանը, անցել Մոսկուա, այնուհետեւ 1923 թ.՝ արտասահման: Վախճանուել է Բոստոնում (ԱՄՆ):*

2 *Դարալագեազցի Տէր-Գրիգոր քահանայ - կամաւորական շարժման գործիչ ու մասնակից Կովկասեան ռազմաճակատի մարտական գործողութիւնների:*

3 *Խորէն Մուրադբէկեան - ապագայ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Խորէն Ա (1873 - 1938 թթ.): Այն օրերին Էջմիածնի միաբանութեան անդամ, Եղբայրական օգնութեան կոմիտէի անդամ:*

4 *Օգանովսկի Պեսոր - ռուսական բանակի գեներալ, 1915 թ. յունուար-դեկտեմբեր ամիսներին՝ IV Կովկասեան բանակային կորպուսի հրամանատար:*

5 *Քեռի, Գալֆայեան Արշակ (1858 - 1916 թթ.) - Կամաւորական IV գնդի հրամանատար: 1890 թ. մասնակցել է Կուկունեանի խմբի արշաւանքին, 1904 թ. Սասնոյ ապաստամբութեանը: Զոհուել է 1916 թ.:*

6 *Համազասպ - Սրուանձտեան Համազասպ (1873 - 1921 թթ.), ազգային-ազատագրական շարժման գործիչ, Կամաւորական III խմբի հրամանատար: Հայ-թաթարական զինուած ընդհարումների ժամանակ (1905 - 1906 թթ.) ղեկավարել է հայերի ինքնապաշտպանութիւնը: Կացնահարուել է բոլշեւիկեան բանտում:*

7 *Խեչո, Դաշնակցական Խեչո (մահ.՝ 1915 թ.) - Կամաւորական II խմբի հրամանատար, Դրոյի օգնական: 1915 թ. մայիսի 2 -ին իր հեծեալ ջոկատով առաջինը մտաւ ազատագրուած Վան: Այդ օրերին էլ հերոսաբար զոհուեց:*

8 *Աշոտ եպիսկոպոս, Բաբկէն վարդապետ - Էջմիածնի միաբանութեան անդամներ:*

9 *Մալխասեան Ստեփան (1857 - 1947 թթ.) - նշանաւոր հայագէտ-գիտնական, ակադեմիկոս, մանկավարժ-ուսուցիչ: Ծնուել է Ախալցխայում, 1915 - 1917 թթ. եղել է Գէորգեան հոգեւոր ճեմարանի տեսուչ: Վախճանուել է Երեւանում:*

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՒՐՈՊԱՅԻ ՆՎԻՐՅԱԼՆԵՐԸ՝ ԳԵՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Հայոց Եկեղեցու ղեկավարները տարբեր առիթներով երախտիքի խոսք են ուղղել այլազգի գործիչներից ոմանց՝ Հայոց ցեղասպանության ընթացքում հայ ժողովրդին սարարելու, վերջնական բնաջնջումից նրան փրկելու համար գործադրած անշահախնդիր ջանադրության համար: Այս առնչությամբ վերջերս լուսաբանեցինք Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք Մատթեոս Իզմիրլյանի (1845-1910) գործունեությանը վերաբերող երկու դրվագ: Դեռևս 1896 թ. պատրիարքը արևմտահայության բոցաշունչ պաշտպաններ ֆրանսիացի հայտնի հոգևոր գործիչ հայր Շարմետանին (1844-1921) եւ Դիարբեքիրում Ֆրանսիայի փոխհյուպատոս Գուստավ Մեյրիեին (1852-1930) հայտնել էր երախտագիտության իր խորին զգացումը[1]:

Հայաստանի Ազգային արխիվում մեր հայտնաբերած երկու անտիպ վավերագրեր համալրում են մեր տեղեկություններն այդ նույն ասպարեզում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե Սուրենյանցի (1847-1930) դիրքորոշման վերաբերյալ՝ Մեծ եղեռնին հաջորդած ժամանակաշրջանում:

Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան (1851-1930), տեղեկանալով Գեւորգ Ե-ի՝ անգլիացի պետական գործիչ լորդ Ջորջ Բրայսին (1838-1922) հղած շնորհակալական կոնդակի մասին, ի նշան երախտագիտության նրա հայանպաստ գործունեության, 1916 թ. դեկտեմբերի 15 թվակիր նամակում Կաթողիկոսի ուշադրությունը հրավիրել է «ուրիշ երեք մեծանձն հայասէրներու վրայ», ինչպիսիք էին շվեյցարացի հասարակական գործիչ Լեոպոլդ Ֆավրը (1846-1922), Ֆրանսիայում հայանպաստ շարժման ակնավոր ներկայացուցիչներ՝ աշխարհահռչակ գրող Անատոլ Ֆրանսը (1844-1924) եւ հայտնի հասարակական գործիչ Վիկտոր Բերարը (1864-1931), որոնց իրավամբ դասել է «Հայկական դատին ջատագովներուն առաջին կարգին մէջ»[2]: «Եթէ Ձեր Վեհափառութիւնը,– գրում է նա,– այս երեք մեծանձն անձնաւորութեանց մէկյմէկ օրհնաձիր կոնդակ ղրկել բարեհաճի, լրացուցած պիտի ըլլայ այն բարձր գնահատման գործը, որ սկսած է Լորտ Դրայսով, եւ իբր Ծայրագոյն Պատրիարք Ամենայն Հայոց, յայտնած պիտի ըլլայ, յանուն Ազգին, մեր խորին երախտագիտութիւնը ամէն անոնց որ վեհանձնօրէն ստանձնած են մեր բոլոր դժբախտութեանց արդար հատուցումը պահանջելու գործը»[3]:

1 Տես **Վ. Պողոսեան**, Ֆրանսիացի հայասէր գործիչները՝ Մատթէոս Իզմիրլեանի գնահատմամբ. «Հանդէս ամսօրեայ», 2010, թ. 1-12, էջ 495-504:

2 «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գիրք ԺԳ, Գէորգ Ե Վշտալի Սուրէնեանց Կաթողիկոս Ամենայն Հայոց (1847-1930): Կազմող՝ Սանդրօ Բէհբուդեան, Եր., 2005, էջ 422: Ա. Ֆրանսի եւ Վ. Բերարի հայանպաստ գործունեության մասին տես **Վ. Պողոսյան**, Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության եւ հասարակական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ), Եր., 2005, էջ 49-56, 98-100:

3 «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», էջ 423:

Գեւորգ Ե-ն անմիջապես արձագանքել է Պողոս Նուբարի առաջարկությանը: Արդեն 1917 թ. հունվարի 12-ին Հայրապետական դիվանը նրան հղած նամակով տեղեկացրել է նշված գործիչներին կոնդակներ շնորհելու՝ Կաթողիկոսի ցանկության մասին. «Ն. Սրբութիւնը հաճութեամբ ստացաւ Վսեմափայլութեանդ անցեալ 1916 թ. դեկտեմբեր 15-ի գրութիւնը, որով խնդրում էիք հաճել օրհնութեան կոնդակներ ուղարկել հայութեան բարեկամներից պ. Լէոպոլտ Ֆաւրին, Անատոլ Ֆրանսին եւ Վիկտոր Բերարին, ինչպիսի գնահատութեան արժանացած է Վսեմ. Լորդ Ջ. Բրայս:

Ն. Ս. Օծութիւնը սիրով լսելով Ձեր ցանկութիւնը, պատուիրեց դիւանս պատրաստել տալ այդ ծաղկանկար կոնդակները, յատուկ խնամքով եւ ուղարկել յանուն Ձեր, ըստ պատկանելեաց հասցնելու Ձեր միջոցով»[4]: Այս առիթով մանրամասնենք, որ Գեւորգ Ե Հայրապետը նման քայլի դիմել է՝ ընդառաջելով Պողոս Նուբարի ցանկությանը, որը հիշյալ նամակում գրել է. «Եթէ Ձերդ Վեհափառութիւնը բարեհաճի ընդունիլ առաջարկս, կը խնդրեմ որ կոնդակները իմ հասցէիս ուղղուին, որպէս զի ես անձամբ պաշտօնապէս յանձնեմ»[5]:

Ստորեւ հրապարակում ենք Հայաստանի Ազգային արխիվի «Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիվան» ֆոնդում (57) պահվող Գեւորգ Ե կաթողիկոսի երեք կոնդակները, որոնք չեն հրապարակվել նրա գրագրություններն ամփոփող՝ վերը հղված փաստաթղթերի ժողովածուում: Արխիվում պահպանվել են վավերագրերի՝ Էջմիածնի Հայրապետական դիվանում պատրաստված հայերեն ձեռագիր պատճենները: Դրանց հետ մեկտեղ հրապարակում ենք նաեւ Անատոլ Ֆրանսի պատասխան նամակները Վեհափառին եւ Պողոս Նուբար փաշային: Թեպետ արխիվում պահպանվել են նաեւ մեծ գրողի առաջին նամակի ինքնագիրը եւ երկրորդ նամակի մեքենագիր պատճենը[6], այդուհանդերձ, նպատակահարմար ենք գտնում տպագրել նրա նամակների՝ Հայրապետական դիվանում կատարված հայերեն թարգմանությունները: Ցավոք, մեզ չհաջողվեց հայտնաբերել Գեւորդ Ե-ի՝ լորդ Բրայսին հղած կոնդակը:

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

4 Անդ, էջ 432:
5 Տես անդ, էջ 423:
6 ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 57 (Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիվան), ց. 5, գ. 170, թթ. 5-6, 9:

1
ԼԷՈՊՈԼՏ ՖԱՒՐԻՆ
Գէորգ ծառայ Յիսուսի Քրիստոսի...

Մեծարեալ առն բարեսիրի, պ. Լէոպոլտի Ֆաւրի. նախագահի Հայանպաստ Յանձնաժողովոյ, որ ի Ժընեւ, խնդալ ի Տէր ըստ հանապազօրեայ աղօթից Մերոց, ողջունիւ տեառնաւանդ ի Հայրապետական Աթոռոյս Հայաստանեայց, ի Ս. Էջմիածնէ:

«Երանի Ողորմածաց, զի նոքայ զողորմութիւն գտցեն»:

Մին յայդպեսեաց զՁեզ գիտեմք, ով պատուական քաղաքագէտ ազատն Հելուետիոյ, զի ըստ օրինակի ողորմած Սամարացւոյն սիրով առ սրտիս Մեր առլցեալ, անկեալս ի հարուածոց անօրինին, ամ ըստ ամէ ոչինչ ամենեին անխայեցեք ջանս եւ խնամս, դնել սպեղանիս ի վերայ վիրաց՝ յամոքումն ցաւոց, որք եկին հասին վերայ աշխարհիս Հայոց բազում ամօք յառաջ քան զայս եւ եւս առաւել ի մեծի աշխարհասասան պատերազմիս, որ իբրեւ յորձանս ի լերանց բարձանց զահավիժեալ, կործանեաց զժողովուրդ իմ եւ զարդիւնս հոգեւոր կենաց նոցա:

Գոհանամք զՁէնջ, զի ի փառապանս հօտին մերոյ ոչ յամեցաք տարածանել զբազուկ մարդասիրականիդ եւ հայրենակցացդ ի բարձուստ, ի լերանց Ալպեայց, իբրեւ յերկնուստ ի խոնար ի վերայ խոշտանգեալ որդւոցս, առ ի սնուցանել զորբս նոցա հոգեւոր սննդեամբ յՈրբանոցս եւ յԱպաստարանս, հաստատեալս նպաստիւք, զանձելով ի ձեռն Յանձնաժողովոյդ, ընդ նախագահութեամբ Ձերով, յառատաբուղխ տրոց բնակչաց ազատն Հելուետիոյ: Մանկունք Մեր, որդիք հարազատք Ս. Էջմիածնի, ապրեալք ի ձեռաց անողորմ գերչաց հանապազ օրհնութիւնս վերառաքեացեն առ Տուիչն ամենայն բարեաց ի վերայ Ձեր եւ ի վերայ ամենայն բարերարագործեաց:

Շնորհս ունիմք առ Ձեզ վասն գործոց առաքինութեան Ձերոյ, զի բանիւ բերանոյ եւ գրոյ ոչ դադարեցաք քարոզել յունկն հայրենակցացդ եւ ամենայն ազգաց իրաւանց եւ արդարութեան Հայոց, կացելոց ընդ լծով ծառայութեան տաճկաց, զարկածից ազինս եւ զանօրէն արարից թշնամեաց մերոց եւ զկարծիս հասարակաց պատրաստ արարէք Հայրենեաց Ձերոց յօգտակար լուծումն խնդրոյ Հայոց:

Արդ ունել ունիմք պարտիս՝ խնդութեամբ շատ առնել Ձեզ, որպէս եւ Յանձնաժողովոյդ եւ համայն ժողովրդեանն Հելուետիոյ զգոհութիւնս Մեր եւ հոգեւոր որդւոցս վասն անբաւ երախտեաց, իբրեւ տրիտուր դուզնաքեայ ընդ մեծի վաստակոցդ եւ ջանից, զորս ցուցէք առ որդիս Մեր յաւուրս աղէտից նոցա:

Եւ Մեք աղաչեմք զԱստուած, զի եւ առ յապայն զօրացուսցէ զՁեզ եւ զգործակիցսդ, լինել Ձեզ անօթ ընտրութեան, գործի գթառատ մարդասիրութեանց եւ հանգուցիչ որբոց եւ այրեաց:

Եւ եղիցի Ձեզ օրհնութիւն ի Տեառնէ եւ խաղաղութիւն ի Փրկչէն՝ ըստ հաւատոց Ձերոց:

Ո՛ղջ լերուք ի Տէր, զօրացեալ ի շնորհս եւ յօգնականութիւն Հոգւոյն եւ օրհնեալք ի Մէնջ. Ամէն*:

ՀՀ ԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 5, գործ 170, թթ. 1-1 շրջ.:

---

* Լուսանցքում նշված է ամսաթիվը եւ կոնդակի համարը՝ 1917 [թ., V/ 23, N 915]:

2
ԱՆԱՏՈԼ ՖՐԱՆՍԻՆ
Գէորգ ծառայ Յիսուսի Քրիստոսի...

Պատուական Կաճառորդի ճեմարանին Գաղղիական, որ ի Փարէզ, մեծարոյ Անապօլայ Ֆրանս, ողջոյն ի Հայրապետական Աթոռոյս Ս. Էջմիածնի եւ ի մէնջ առատացեալ՝ խնդալ ի Տէր.

Ծանեաք զՁեզ, Սրտիդ Մուզայից եւ Քերթողդ մեծի ազինն Գաղղիական, զի զանսկզբնական զԲանն ի Ձեզ մարմնաւորեալ, հնչմամբ քնարին ձօնելոյ յերկնուստ՝ հուր ի սիրտս մարդկան արկիք մաքուր, առ ի լինել նոցա սրտիւ տուչեան, երազաթռիչս մտօք, իբրեւ զարծուիս ճեմել ազատս ի վերայ երկրի, վայելեալ զբարիս Ամենակալին:

Զյարազուարճ Սէր ազատութեան ոգւոյ Ձերոյ ի գիրս երկանց Ձերոց եւ յարդիւնս վաստակոց Ձերոց ի հրապարակի մրցութեան ազանց համայնից, իբրեւ զբոյր անուշահոտ ծաղկանց հոտոտեցաք եւ քմացս եւ մտացս ճաշակաց զտրեալ ախորժ, ըղձիք լցաք խոստովանիլ զմեծութիւնն ոգւոյ եւ հանճարոյ Ձերոյ, ոգւոյ գիտութեան, իմաստութեան եւ արուեստի, առաջի ամենեցունց, որոց արկէք ի սպաս որդւոց մարդկան, որ ի սփիւռս աշխարհի, ի գեղեցկէն յաշխարհաց ի Գաղղիոյ գեհեռաւոր ծագս երկրի, յօդեալ զամենեսեան զօդիւք ազատութեան, եղբայրութեան, սիրոյ եւ հաւասարութեան ազգաց ի հանրական կեանս իւրեանց, զոր եւ ուսաք Մեք ամենեքեան ընդ Ձեզ եւ ընկալաք իբրեւ զաւանդ աներկբայ ի Տեառնէ Քրիստոսէ:

Ծանեաք զՁեզ, յաջորդ եւ պահապանդ արթուն՝ մաքուր աւանդից եւ խոհից Պրեսանսեայ եւ այլոց մեծաց որդւոց մեծի Հայրենեացդ, զոգի որոց եւ Ձեր իբրեւ զփայլակն ծագեալ յերկնի եւ տարածեալ զլոյս զտիչ ճառագայթից իւրեանց ցերիանս Այրարատայ, ոչ անխայեցեք ջանս առ ի դնել սպեղանիս ի վերայ վիրաց՝ յաւուրս տառապանաց մերոց, զրով եւ բանիւ յարդուդեցեք զճանապարհս արդար հատուցմանց Հայոցս զկնի աշխարհասասան պատերազմիս այսորիկ, զի եղիցի Մեզ եւ համայն որդւոց Մերոց Հայկազնեայց ի սահմանս Հայրենեաց մերոց փրկութիւն ի տառապանաց, անդորրութիւն ի հալածանաց եւ ազատութիւն ի լծոյ ծառայութեանց, զի եւ Մեք եւ համայն սրտիւ Մեր զձեռս ի գործ արկցուք, առ ի շենել զաշխարհս մեր աւերակ եւ կեցցուք ի նմին խաղաղութեամբ ընդ ամենայն ազինս՝ յազատութիւն, յեղբայրութիւն եւ ի հաւասարութիւն, յորմէ հեռէ Մեք եւ գերեալք մեր առ գետս Բաբելացւոց առցուք զսաղմոսս հեծութեանց մերոց, եւ երգեսցուք ընդ Ձեզ եւ ընդ բարեկամս ազգին իմոյ զօրհնութիւն Տեառն:

Առ այս ամենայն ըղձիս եւ բաղձանօք առաքեմք առ Ձեզ զգոհութիւնս բազումս ի տրիտուր առատաշնորհ երախտեաց Ձերոց եւ մեծի ազինն Ֆրանսիոյ առ ամենայն ազգս Հայոց եւ մաղթեմք առ Ամենակալն Աստուած, զի կեցջիք եւ աչօք իսկ ձերովք տեսջիք զփրկութիւն Հայրենեաց Ձերոյ պատուելուոյ եւ ամենայն ազգաց, առ ընդ Ձեզ, սասանելոց ի բռնութենէ թշնամեաց:

Եղիցի ձեռն Ամենակալին յօգնականութիւն Դաշնակեց Պետրութեանց Գաղղիոյ եւ զօրավիգն զիւռ զօրութեան նոցա:

Օրհնեալք ի Տեառնէ եւ եղիցի խաղաղութիւն ընդ Ձեզ, Ողջոյն Յիսուսաւանդ եւ օրհնութիւն Մեր ի գլուխ Ձեր. Ամէն*:

[Սպորագրութիւն]
ՀՀ ԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 170, թթ. 2-2 շրջ.:

3
ՎԻԿՏՈՐ ԲԵՐԱՐԻՆ
Գէորգ ծառայ Յիսուսի Քրիստոսի...

Մեծարոյ Տիար Վիկտորայ Բերար, հարազատի ի հոգի առ սրտիս Մեր հոգեւորս, առատասցի օրհնութիւն յԱռաքելական Մ. Աթոռոյս Ս. Էջմիածնի, յԱջոյն Հօրն Մերոյ լուսոյ Ս. Գրիգորի Մեծի եւ ի Մէնջ, խնդալ ի Տէր.

«Պարտ է կարողացն զտկարութիւն տկարացն բառնալ վասն շինութեան եւ զքարինս ճանապարհի ի բաց ընկենուլ, զի մի օր կաղն իցէ գլորեցի»:

Հեստեւող կտակի սիրոյ ծանեաք զՁեզ, զի բազում ժամանակօք յառաջ քան զայս յօժարութեամբ կալեալ Ձեր զշաւիղս ընթացեց Պրեսանսեայ եւ այլոց պատուական որդուոցդ Մեծի Հայրենեացդ, փոյթ յանձին կալայք կենագործել զքարոզեալն ի նոցունց զաւանդս, զխնդրոյ ասեմք զՀայոց, անկելոց ընդ լծով ծառայութեան տաճկաց: Ի ժամանակի Մեծի Պատերազմիս այսորիկ եւ ի յաւելուլ աղէտից հասելոց ի վերայ աշխարհին Հայոց յերեսաց ամբարշտութեան տաճկաց, եւս քան զեւս առաւելան շնորհք գթութեան եւ ողորմութեան Ձերոյ առ այնոսիկ, որոց երկիր յոտից հալածչաց եղեւ կախան եւ որդիք նոցա իբրեւ զոչխարս իսպանդ վարեցան: Քանզի չորացան ոսկերք նոցա ի ծերպս վիմաց, հատաւ յոյս նոցա եւ նոքա ամենեւքեան մեռան ի յորձանս գետոց եւ յանջրդիս անապատին հարաւոյ: Բարձաւ ի կուսանաց նոցա ամենայն վայելչութիւն յերեսաց թշնամեաց ամբարշտաց: Հաշեցան քահանայք ի խոշտանգանս եւ սուգ առին ճանապարհք եկեղեցեաց նոցա եւ դրունք նոցա եղեն յապականութիւն:

Եւ Տէր Սաբաովթ, յաւուրս տառապանաց այսոցիկ յարոյց Մեզ խորհրդական զՁեզ եւ յուսուցող ի տանէ արդոյն Գաղղիական, զի ոչինչ ամենեին անխայեցիք հզօր բանիւ բերանոյ Ձերոյ լինել ապաւէն հօտին Մերում եւ ի հանդէս արարէք առաջի իրաւախոհ ատենի հանրական կարծեաց մեծի ազգին Գաղղիական եւ Դաշնակցաց սորա զհարազատ զրկանս, որք եկին ի վերայ աշխարհին Հայոց, դատ առնել ընդ մեզ եւ ընդ ոսոխի մերում: Եւ արդ յամենայն կողմանց Հայաստանի աւերելոյ աչք ամենեցուն ի Ձեզ հային, զի օգնականութեամբ Ձերով եւ արանց երեւելեաց, որք զՁեօք, զօրավիգն՝ մակաղել մարթասցուք զմնացորդս խաշանց հօտին մերոյ յերկրէն իւրեանց:

* Լուսանցքում՝ ամսաթիվը եւ կոնդակի համարը՝ 1917 [թ.], յունիս 7, N 1018:

Գոհանամք զՁէնջ վասն անբաւ երախտեաց Ձերոց առ ազգն Հայոց եւ ամենայն վաստակոցդ ի վերայ շինութեան աւերակաց աշխարհին մերոյ: Ընկալարուք զայս, մեծարեալ Տէր, իբրեւ զդուզնաքեայ երաշխիս երախտագիտութեան Մերոյ եւ զոհացողական զգացմանց ամենայն Հայոց առ Ձեզ եւ առ ազգն Գաղղիական: Եւ Մեք յամենայն ժամ յաղօթս Մեր աղաչեսցուք զԱմենակարողն Աստուած վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ յաջողութեան զինու զօրութեան Մեծի Հայրենեացդ եւ Դաշնակցաց մեծաց ազանց ի վերայ թշնամեաց եւ վասն կենաց Ձերոց, զի տեսջիք զփրկութիւն ամենեցուն ազգաց կորացելոց ընդ լծով՝ յառնել եւ կեալ յանդորրութեան եւ ի շինութեան:

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր, եւ եղիցի խաղաղութիւն Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ յաւիտեանս. Ամէն*:

[Սպորագրութիւն]

ՀՀ ԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 170, թթ. 3-3 շրջ.:

4
ԱՆԱՏՕԼ ՖՐԱՆՍԻ ՆԱՄԱԿԸ ԳԷՈՐԳ Ե ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Նորին Սրբութեան Գէորգ Մեծ Քահանայապետի եւ
Կաթողիկոսի ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարգի
Արարատեան Ազգային Աթոռից՝
Հայ Առաքելական եկեղեցւոյ

Մեծ Քահանայապետ եւ Ծայրագոյն Պատրիարգ,

Այն Կոնդակը, որ Ձերդ Սրբութիւնը պատիւ էր արել ուղղելու ինձ՝ լցրեց իմ սիրտն ուրախութեամբ եւ հրճուանօք: Նա՝ այդ Կոնդակը, իմ սրտիցս էր խօսում: Նա զգում էր, որ մի մեծ նախաձեռնութիւն էր ոգեւորում ինձ մարտիրոսացած Հայաստանի սրբազան խնդրի պատճառով եւ Նա հաճել էր տալ ինձ ի տրիտուր իւր բարձր հաւանութիւնը, այն կոչին, որ բարձրացրեց Ֆրանսիայում շատ-շատերի մէջ եւ մի թոյլ ձայն, այն ահռելի ոճրագործութեան դէմ, որ կրկնուել էր բազմիցս եւ որ աւելի քան մի միլիոն ժողովրդի կորստեան պատճառ դարձաւ:

Վերջապէս, այսքան տարիների վիշտ ու արցունքներից յետոյ, որ ահա ծագում է փրկութեան օրը, ահա իրականանում են ազատագրութեան եւ անկախութեան այն ըղձերը, որ պահպանեցին, մեծ փորձութեան շրջանում, այն մեծ ազգը, որի հոգեւոր Հայրն էք Դուք. ահա Հայ ժողովուրդը վերջապէս պէտք է հաստատուի ինքնիշխանաբար այն

* Լուսանցքում՝ ամսաթիվը եւ կոնդակի համարը՝ 1917 [թ.], VI/07, թ. 1082:

հողի վերայ, որը փառաւորեցին իրենց հանճարով եւ որ ոռոգեց իւր հերոսական արիւնով:

Թոյլ տուէք ինձ, Մեծ Քահանայապետ, հոգով հրճուել այդ առթիւ Ձերդ Սրբութեան հետ եւ մինչեւ իւր Գահոյքն հասցնել իմ երախտագիտութիւնս, մեծարանացս եւ ազատ Հայաստանի նկատմամբ ունեցած ղոնձերիս հետ:

Անատոլ Ֆրանս
Սէն-Սիր
Լուարի վերայ
29 մարտ 1919:

ՀՀ ԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 170, թ. 7-7 շրջ.:

5
ԱՆԱՏՕԼ ՖՐԱՆՍԻ ՆԱՄԱԿԸ ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱՅԻՆ

Պատճէն:

Հայոց Ազգային Պատվիրակութեան նախագահ
Պօղոս Նուբար փաշային

Ականաւոր եւ սիրելի բարեկամ,

Կատարելապէս շնորհապարտ եմ Ձեզ՝ Ն. Սրբութեան, Գէորգ Ե-ի կոնդակը ինձ հասցնելու համար, որ մեծագոյն պատիւն է ինձ համար: Խնդրում եմ հասցնել Նորին Սրբութեան իմ յարգալից պատասխանը, որ լաւագոյն ընդունելութիւն կը գտնէ, հաւատի եմ, եթէ Ձեր կողմից ներկայացնուի:

Ձեզ հետ միասին ես եւս հաւատի եմ ջերմապէս, որ Խաղաղութեան Կամաւոր կեանք պիտի շնորհէ վերածելով նորան ազատ եւ անկախ պետութեան:

Հաւատացէք, թանկագին եւ ականաւոր բարեկամ, իմ ամենաանկեղծ զգացմանցս, որ ունիմ դէպի ձեր դատը եւ ամենաջերմ յարգանացս, որ ունիմ անձնապէս առ Ձեզ:

Ստորագրած՝ Անատոլ Ֆրանս

Սէն-Սիր
Լուարի վերայ
մարտ 29, 1919:

ՀՀ ԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 170, թ. 7 շրջ.:

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տ. ՄՄԲԱՏ ԱԲԵՂԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ՋԱՂԱ

Սառնաղբյուրի Ջաղան Շիրակում պահպանված ուխտատեղիներից է, որը կապվում է մեր հավատի հայր Ս. Գրիգոր Լուսավորչի անվան հետ:

Հատուկ հատուկ համոզված լինելով այդ ուխտատեղիների մասին պատմական վկայությունների հավաստիությանն ու ճշմարտացիությանը՝ ցանկանում ենք անդրադառնալ ժողովրդական ավանդություններին: Մեր հավաքած եւ գրառած, ինչպես նաեւ գրականության մեջ գոյություն ունեցող տվյալներում բազմաթիվ ժողովրդական պատումներ կան՝ Լուսավորչի կյանքի վերջին տարիները Շիրակում անցկացնելու եւ հատկապես Սառնաղբյուրի քարանձավային սրբավայրում ճգնելու մասին: Սառնաղբյուրը ավերվել եւ ամայացել էր ԺԷ դ. սկզբին, սակայն Հոգեվանքի համալիրը (Կարմիր վանք) եւ Ս. Հակոբ եկեղեցին դեռեւս գործել են ինչ-որ ժամանակ: ԺԹ դ. 30-ականներին այստեղ վերաբնակվեցին Մուշից գաղթածները, որոնք, հարկավ, ծանոթ չէին տեղի սրբարաններին եւ չգիտեին դրանց նախնական ձոնանունը: Նորաբնակներին ծանոթ էր միայն ժողովրդական բանավոր պատումը՝ «Ջաղա» կոչվող քարանձավում Ս. Գրիգոր Լուսավորչի ճգնելու մասին:

Է. Աղայանի բացատրական բառարանում զաղա /զվռ./- բառը բացատրվում է, որպես քարայր, քարանձավ[1]:

Պատմությունը վկայում է, որ Գրիգոր Լուսավորիչը, կյանքի վերջին տարիներին առանձնանալով, հեռացել է կաթողիկոսական գահից ու բարձրացել լեռները՝ աշխարհիկ անցուդարձից հեռու՝ աղոթական վիճակ ունենալու. «...որպեսզի հանդարտ մտքով ինքն իր մեջ ամփոփվի եւ Աստծու հետ խոսի՝ (ուրիշ) զբաղմունքներից ազատ..[2]»:

Տեղացիների ավանդազրույցը պատմում է, որ երանելի սուրբը կյանքի վերջում հեռանալով մայրաքաղաք Վաղարշապատից՝ այս վայրերն է եկել, գտել մի հարմար այր, որտեղ անմահական եւ բուժիչ սառնորակ ջուր է բխում, ճգնել այնտեղ: Դեպի Արագած լեռը, որտեղ սրբի կանթեղն է,[3] գեղեցիկ տեսարան է բացվել:

Արագածի փեշերին Լուսավորչի ճգնելու մասին ավանդապատումը կարող ենք լիարժեք փաստ համարել: Դրա օգտին է խոսում նաեւ հետեւյալ վկայությունը. «Ինքն ընդ ժամանակս ժամանակս յանապատ լերինս ելանէր» /Ազթ./ «հոգեկան հանդարտութիւն մը վայելելու համար, գրում է Օրմանյանը,- «...երբեք երբեք իջանել լիներ՝ շրջել

1 **Է. Աղայան**, Բացատրական բառարան, հ. 1, Եր., 1976, էջ 243:
2 **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Եր., 1981, էջ 238:
3 Սառնաղբյուրում մեր հավաքած բանավոր զրույցներից:

զօրացուցանել զաշակերտեալսն»/ Ագթ./, սակայն այս չէր բաւեր նորահաւատ ժողովրդին համար, որ իր հովուապետին անմիջական ներկայութեան կը կարօտէր... եւ Տրդատ ինքն ալ «շատ աղաչեաց զԳրիգոր վասն հանապազորդ առ նմա կալոյ» (Ագթ.), սակայն Գրիգոր կը դժուարէր թագաւորին առաջարկը կատարել, քանի որ հանդարտ եւ խաղաղ կեանքի պէտքը կը զգար»[4]:

Այստեղից ենթադրում ենք, որ Սեպուհ լեռից (Դարանաղեաց գաւառ, Մանեայ Այրք)[5], որտեղ Լուսաւորիչը ճգնել է կյանքի վերջին տարիներին, չէր կարող հաճախակի իջնել: Ուստի հնարաւոր ենք համարում Արագած լեռան անձաւներից մեկում նրա առանձնանալը:

Քրիստոնեության հանդեպ մինչեւ հայոց Մեծ Դարձը եղած հալածանքները փաստված են մեր մատենագրության մեջ եւ հայտնի իրողություն է, որ վաղ քրիստոնյաներն ստիպված էին իշխանությունների աչքից հեռու, թաքուն կամ ծպտված կատարել սրբազան արարողությունները: Իսկ ամենահարմար վայրերը քարայրներն էին, որոնցից մեկն էլ Սառնաղբյուրի հիշյալ «Զաղան» էր: Եթե Սառնաղբյուրի քարայրը, իսկապես Հայաստանում քրիստոնեության տարածման արշալույսին եղել է մեր Տիրոջ հավատի քարոզչության վայր, ապա պարզ է, որ ժողովրդական հիշողության մեջ այն պետք է կապվեր Հայոց Մեծ Դարձի հեղինակի՝ Ս. Գրիգոր Լուսավորչի անվան եւ կյանքի հետ:

Մեկ փաստ եւս անուղղակիորեն խոսում է այս մասին. «Զաղայից» ոչ հեռու, Ե դ. կառուցվել է Ս. Հակոբ բագիլիկ եկեղեցին: Մծբնա Սուրբ Հայրապետի անվամբ եկեղեցու գոյությունն այստեղ պատահական չէր, քանզի լինելով վաղքրիստոնեական շրջանի ամենահարգի եւ պաշտելի սրբերից մեկը՝ նրա անունը կապվում է Տիրոջ հավատի քարոզչության եւ ժողովրդի մեջ ամրագրման հետ: Տիրոջ լույսն ավետող այս սրբերի անունն ու գործը անպայման պետք է կապվեին նաեւ վաղքրիստոնեական այն համայնքների գործունեության վայրերի հետ, որոնք իրենց ժամանակին, անշուշտ, մեծ համբավ են ունեցել: Այդ մասին բանավոր պատումները ձեւավորվել են դեռեւս վաղ միջնադարում, եւ Շիրակի տեր Կամսարականները հավերժացրել են սրբոց հիշատակը՝ կառուցելով նրանց անվամբ եկեղեցիներ:

«...Դարեր շարունակ Արագածի կրծքից բխելով հոսում է Լուսավորչի ականակիտ աղբյուրը, նրա ակունքի մոտ խոյ ու աղավնի էին մատաղ անում, ծնրադիր աղոթում էին բարեպաշտ մարդիկ, գիշեր-ցերեկ ղողանջում էին Հոգեվանքի զանգերը՝ աշխարհային բազում վշտեր առաքելով երկինք»[6]:

Սառնաղբյուրի Հոգեվանքի համալիրը դարեր ի վեր Լուսավորչի անվան հետ կապված տոների ժամանակ զանգվածային ուխտագնացության կենտրոն էր: Դրանց արմատները վաղ միջնադարյան ծագում ունեն, եւ այս ավանդույթը շարունակվում է մինչեւ մեր օրերը:

---

4 **Մաղաքիա. արքեպս. Օրմանյան,** Ազգապատում, Ա հ., Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 109:

5 Տե՛ս **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն:

6 **Զ. Դարյան,** Երկեր, հ. 1-ին, Եր., 1976, էջ 465:

Տարբեր տեղերից էին գալիս ուխտավորները՝ ոմանք երազի հետքով, ոմանք՝ ընկերոջ, հարեւանի տեղեկությամբ, մի մասն էլ՝ իրենց գեղագիտական հաճույքի համար եւ այսպես՝ անընդհատ ու միշտ: Այո՛, անքննելի է հավատի ուժը: Այդ հավատի ու երկյուղածության արդյունքում Զաղան պահում ու պահպանում է ԺԹ- դարի կեսերին Արեւմտյան Հայաստանի Մշո գավառից գաղթած Անտոնյանների գերդաստանը: Նրանք քարանձավի դեմ դիմաց կառուցել են իրենց տունը՝ կամոքն Աստծո: Ընտանիքի անդամները մեծից փոքր՝ տանտեր, տանտիրուհի, երեխաներ, հետո՝ հարսներ, թոռներ, ծոռներ... ուխտավորներին սիրով ուղեկցում են Զաղա՝ նախ եւ առաջ ներկայացնելով Զաղայի մասին ժողովրդի հիշողության մեջ պահպանված նշխար-պատմությունները: Սրբավայրի տարածքը եւ քարանձավի ներսը մշտապես մաքրվում է, կարգի բերվում. մոմակալների ավազն են թարմացնում, լվանում են շուշփաները՝ վերաբերվելով այս ամենին սրտդողությամբ եւ ամենայն պատվախնդրությամբ: Հիշում են նաեւ, որ կարսեցի Երանակ տատը՝ մամին (1905-1986 թթ.), նույնիսկ մոմ էր պատրաստում՝ «թափում», որ ուխտավորները աղոթք ասելիս նաեւ կարողանան մոմ վառել: «Մամին ասում էր, որ ինչ ինքը հարս է եկել եւ դրանից առաջ էլ, Զաղին իրենք են նայել, ուխտավորների համար դուռը բացել»:

Հետայսու վկայելով նրանց կամ նրանց անունից, կօգտագործենք «Սրբի տուն» բառակապակցությունը: «Զաղի մահլա», «վերեւ»՝ նաեւ այդպես են կոչում գյուղացիները սրբավայրի տարածքը:

Ժողովուրդն այսօր Սառնաղբյուր ուխտի գնալիս կամ մատաղ անելիս ասում է. «Էրթանք Գրիգոր Լուսավորիչ, ուխտ եմ էրել» կամ «Տղիս համար Գրիգոր Լուսավորչին մատաղ եմ խոստացել» եւ այլն: Այս ուխտատեղի այցելում էին նաեւ անվանակոչությունների առիթով, երբ երեխայի անունը Գրիգոր էր, եւ նա ծնվել էր Լուսավորչի անվան հետ կապված տոներից մեկի օրը: «Էրեխիս մինչեւ ծնվելն եմ երազով տեսել. սպիտակ շորերով, սպիտակ մազերով, բոյով... ավազանի մոտ կանգնած՝ Լուսավորիչը գլխիս ջուր կլցներ. տղա կծնվի ասեց,- անունը Գրիգոր կդնես: Երկու օր հետո ծնվեց երկրորդ որդիս՝ Գրիգորը, իսկ առաջնեկին՝ Անդրանիկ անունն էինք տվել»: Գրառվել է՝ ըստ 34-ամյա Ա. Տիգրանի վկայության (սրբի տան թոռ):

Գրիգոր անունով որդի ունեցող հավատացյալներից շատերը յոթ տարի անընդմեջ մատաղ էին խոստանում Սառնաղբյուրի Ս. Գրիգոր Լուսավորչին, եւ հետաքրքիրն այն է, որ ուխտագնացների մեջ կային ոչ միայն շիրակցիներ, այլեւ հարեւան պատմագավառների ներկայացուցիչներ: Գյումրեցի հայտնի մտավորական Ալ. Մխիթարյանի հուշերում բազմաթիվ վկայություններ կան քաղաքի եւ հարեւան գյուղերի բնակչության զանգվածային ուխտագնացությունների վայրերի մասին, որոնցից առավել ժողովրդականություն էին վայելում Մեծ Պարնիի մոտ գտնվող Ս. Հովհաննեսը (Ղալթախչվա սուրբը՝ այժմ՝ Հարթաշեն) եւ Սառնաղբյուրի «Զաղան»: Հեղինակը նշում է, որ «Զաղան» ժողովուրդն այցելում էր մեծ ակնածանքով եւ հավատում էր, որ Գրիգոր Լուսավորչի քարանձավում բխող ջուրը հրաշագործ եւ բուժիչ նշանակություն ունի: Այստեղ բուժելու էին բերում տարբեր հիվանդություններով տառապող մարդկանց, իսկ այս

ուխտատեղին գյումրեցիների համար առավել հայտնի էր որպես մուրազով տրված մատաղ անելու տեղ»[7]:Շիրակի ժողովրդական պատկերացումների մեջ Գրիգոր Լուսավորիչն աներկբա նույնացվում է հենց Սառնաղբյուրի Հոգեվանքի համալիրի եւ «Զաղայի» հետ. այլ ուխտատեղի Շիրակի բնակչության համար, որը կապված է Լուսավորչի անվան հետ, չի հիշատակվում:

Մեր ծառայության ընթացքում գրառումներ ենք արել նաեւ որդեծնությանն առնչվող թեմաներով: Այդ մասին վկայությունները լսել ենք հենց այն անձանցից, ովքեր ունեցել են նմանատիպ խնդիրներ: Բազմաթիվ են օրինակները. երկար տարիներ երեխա չեն ունենում, բայց երազով տեսնում են սուրբը, ուխտի են գնում եւ Ասպծո կամոք, նրանց տրվում է ծնող դառնալու բերկրանքը:

«Առաջնեկս տղա էր, առողջ, կենսախինդ երեխա. անսպասելի ծանր հիվանդությունը տարավ նրան: Վշտից հուսալքվել էի: Ինձ կարող էր օգնել միայն նորից մայրանալը: Սակայն չէի հղիանում, տարիքս էլ՝ կնոջ համար վտանգավոր այն շրջանն էր, որ այլեւս՝ վերջ... Այդ մտքից ինձ ավելի էի կորցնում...»: Մի պահ ընդհատենք Ա. Մ. –ի պատմությունը եւ մտովի տեղափոխվենք Սառնաղբյուր, Զաղա:

Պատմում է Աննա անունով մանկամարդ կինը (սրբի տան հարս).

«1996 թիվն է. Էդ օրը Զաղի բալնիքը ես տարա. ամուսիններ էին ՝ ամուսինը կնոջից տարիքով: Դուռը բացի, հենց ներս մտան, կինը խառնվեց իրար՝ վայ, մենք ըսպես տեղ ման գուքայինք, վայ, ես էս տեղն եմ տեսել, կընայեր նկարներին, աստիճաններին, հետո ասաց,- երազիս մեջ էլ՝ աստիճաններով կիջնեի ջրի մոտ: Այդ պահին ամուսինը դիմեց ինձ՝ կնոջս ջուր կտա՞ս: Ջուրը տվեցի՝ խմեց, վերջում նորից ամուսինը թե՝ մե հատ էլ եթե խնդրեմ ձեռքդ գլխին կդնե՞ս: Ձեռքս գլխին դրեցի, շփոթված էի, խնդալով վազեցի տուն: Դուռն իրենք էին փակել, բանալին լուսամուտի գոգին էին թողել... Առաջնեկովս էի հղի, օրերը մոտ էին...»:

Այսպիսով, միահյուսելով երկու առկախ պատմության թելերը, արդյունքում պարզեցինք, որ երկու բանասացներն էլ, իրենց կամքից անկախ, նույնանուն պատմության կերպարներն են:

Ընդհատված տեղից շարունակելով Ա. Մ.–ի խոսքը՝ հավելենք, որ տագնապը սրտում, որ Է՛լ երեխա չի ունենա, բայց եւ հույսը Բարձրյալին՝ երազին Զաղան է տեսնում, այնպես, ինչպես նկարագրել ենք վերեւում: Սպիտակ զգեստով մարդն ասում է (շատ բարձր էր, դեմքը չտեսա- ըստ պատմողի),- դու ինձ մոտ արի՛, ամեն ինչ լավ կլինի: Հայաստանում էլ եկեղեցի ու սրբավայր չմնաց... Խոր վիրապում էլ էդանք... բայց երազիս տեսածը հենց էս սուրբն էր»:

Երկու կին, երկու պատմություն՝ մեկը նոր էր ճաշակելու մայրության հրճվանքը, մյուսը՝ երեխայի ծնունդով ամոքելու էր կորցրածի ցավը: Եւ երկուսի զորավիգն էլ Գ. Լուսավորիչն է:

Մի քանի օրից ծնվում է Հարությունի եւ Աննայի առաջնեկը. աղջկան անվանում են Երանուհի:

7 Ալ. Մխիթարյանի հուշերը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, գ. 62, թղթ.35:

Ուխտն անելուց հետո որոշ ժամանակ անց, Ա. Մ.-ն հղիանում է: Դարձյալ աղջիկ է ծնվում: Ամուսիններն իրենց դստերը կնքում են Տիրամոր անունով (Լուսավորչի տվածն է): Եւ ինչպես խոստացել էին, ուխտի են գնում, մատաղ են անում:

Շիրակցի տատիկներից մեկը պատմում է, որ երազում տեսել է Սառնաղբյուրի Զաղան, որտեղ ինքը մոմ էր վառում, եւ Լուսավորիչը հայտնվելով իրեն՝ ասել է. «Դուրս արի ու նայիր Արագածին, իմ լույսն այնտեղ է, դու ամեն բարի լույսին պետք է աղոթք անես երեսդ դեպի իմ լույսը»[8]:

«Այս գյուղի մեջ նշանավոր է ջուր բխող մեծ քարայրը, որ խիստ առատ ջուր է տալիս եւ ի հնումն եւս իբրեւ ուխտատեղի է ծառայել: Քարայրի ներքին պատերու վրա կան հատ ու կտոր արձանագրություններ»[9]: Այս հակիրճ անդրադարձը Թորոս Թորամանյանինն է:

«...Հետաքրքրական է նաեւ Գրիգոր Լուսավորչի ուխտատեղին,- գրում է Հ. Եղիազարյանը,- Դա բնական մի մեծ քարայր է, որի միջից բխում է հորդառատ, սառնորակ աղբյուր, հետագայում ջրի հոսքը արագացնելու նպատակով, այն փորել- ընդարձակել են, իսկ ժայռերի վրա քանդակել են խաչքանդակներ եւ դարձրել ուխտատեղի: Հավանական է, որ հեթանոսական շրջանում այն եղել է ջրի պաշտամունքի վայր, ապա որպես սրբատեղի իր գոյությունը շարունակել նաեւ քրիստոնեական շրջանում»[10]:

Նշված հիշատակությունների առավել ամփոփ անդրադարձը Ղեւոնդ Ալիշանինն է. «...ի վերոյ գեղջն ի լեռնաբլրի կայ քարայր մեծ կարմիր վիմօք, յորոց խոխոջանօք իջանէ աղբիւր ականակիտ ի գիւղն եւ ի ձորակն, զոր հանդերձ այրիւն անուանեն Ս. Լուսաւորիչ, իբրու թէ նշմարին ի քարինսն անձեռագործ ձեւք խաչից, եւ ի մէջ այրին կանգնեալ է վէմ սիւնաձեւ բոլորշի վեց թզաչափ, յորոյ վերայ վառեն մոմեղէնս եւ խունկ ածեն, համարելով անդ ճգնեալ զԼուսաւորիչն, եւ խաչ կանգնեալ է ի գլուխ սիւնակին եւ ի ներքոյ գրեալ՝ Սուրբ Գրիգոր»[11]:

Որքան ժլատ է պատմագրությունը Սառնաղբյուրի Զաղայի մասին, նույնքան շռայլ են այս սուրբ վայրը գովերգող ժողովրդական բանավոր պատումները:

ԻԱ դարի սկզբին եւս հայոց լեռնոտ աշխարհի այս կուսական վայրը չի կորցրել իր նախնականությունը. զուլալ ու անառիկ, ինչպես մեր հավատը եւ ի սկզբանե ու շարունակությամբ՝ Զաղան՝ Զաղեն, այդպես է ժողովուրդն ասում, Գրիգոր Լուսավորիչ ուխտատեղին, որ գոյություն է ունեցել անհիշելի ժամանակներից՝ խորհրդանշելով ժայռերի կրծքից բխող ջուրը՝ ամենազոր, բժշկող:

Հատկապես Քրիստոսի Այլակերպության տոնին (Վարդավառին) առավել շատանում են ուխտագնացների խմբերը Հայաստանի տարբեր վայրերից: Այդ օրը Սառնաղբյուրն ազատվում է մարդկային բազմությունից: Հայրենական պատերազմում զոհված անհայտ գինվորի հուշարձանի մոտից (այստեղ են գյուղի առաջին բնակելի տները) սկսվում է վերելքը: Մանուկ, ծեր ու պարմանի բարձրանում են Զաղա:

8 . Մեր գրանցած նյութերը:

9 **Թ. Թորամանյան**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2-րդ, Եր.,1948, էջ 140,:

10 **Հ. Եղիազարյան**, Շիրակի լեռնահովտի պատմական հուշարձանները, Եր., 1975, էջ 64-65:

11 **Ղ. Ալիշան**, Շիրակ, Տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ-Ս. Ղազար, ՌՅԼ-1881, էջ 166:

«Էն թվերին (անցյալ դարի կեսերին), Վարդեռրին էշերով ծիրան, չախալա կբերեին, բանկեքով կծախեին: Ուխտավոր շատ կար, լիքը ջահելություն, դհոլ զուռնով կուրխընային, բայց անպայման կռիվ էլ պըտի էղներ...»:

Խոսքը վերաբերում է այն տաքարյուն երիտասարդներին, ովքեր վեճի են բռնվում ջրելու պատճառով: Բայց քանի որ տոնական տրամադրությունը վարակիչ էր, առավել ևս անօգուտ էր կանխել «ջրողների» հրճվանքն ու «սփոփել ջրվողների» դժգոհությունը: Հնում հավատում էին, որ Վարդավառին ջրվես՝ տարին լի ու բախտաբեր կլինի: Ժողովրդական հավատալիքներն այսօր էլ կան:

Վերեից՝ Զաղի գլխից՝ ակնահաճո տեսարան է. մարդկային, ծիածանագույն բազմությունն ալեկոծվում է անընդմեջ դեպի վեր՝ Գրիգոր Լուսավորչի ուխտատեղի՝ զորանալու նրանով եւ զորացնելու, որպեսզի մշտամնա լինի հավատն առ Սուրբը եւ հավատն առ Աստված: Սովորույթը պահպանվել է. զանգվածային ուխտագնացությունն ուղեկցվում է միմյանց վրա ջուր լցնելով, երգ ու պարով, երբ վերջապես ուխտավորները Զաղա են հասնում, անպայման սպասում են իրենց հերթին, որ մոմ վառեն, աղոթեն, բարեհաճություն հայցեն: Քարանձավի ներսում հավատավորներն են, եւ՛ օդն է հագեցած խունկ ու մոմով: Ոչ մեկն իր ուխտը կատարյալ չի համարում, մինչեւ չի խմում աղբյուրի ջրից ու չի լվացվում: Երբ լվացվում կամ լողանում են Զաղի ջրով, ապա ձեռքի ափերից, մարմնից՝ փրփուր-սպիտակ գոլորշի է բարձրանում: «Մամին կըսեր, էդ բուղը, գոլորշին օր գէլնի՝ համ Լուսավորչի զորությունն է մեջը, համ էլ՝ դեղ ու դարման է...»,- հիշում են Սրբի տան թոռները:

Բոլորի համար՝ թե՛ տեղացիների, թե՛ հյուրերի, օրվա խորհուրդն ու նպատակը մեկն է՝ Զաղան: Հետո, սովորաբար, հարցնում են միմյանց՝ Զաղա գնացի՞ք, Զաղեն էղա՞ր, մատաղ էրի՞ք. շա՞տ էին մատաղ անողները:

«Սեւահող հարթությունը ազատ թողնելու համար, Սառնաղբյուր գյուղը բարձրացել է Արագածի փեշնիվեր: Բարձունքից կառչած թեւով վերջանում է գյուղը, եւ քիչ վերեւ տարածված հարթության վրա խումբ-խումբ հավաքված մարդիկ, գառներ, ոչխարներ են զարկում գետնին ու նրանց մայունները խառնում զուռնաների ծղրտոցներին, դհոլների դմդմբոցներին: Եւ այդ հուժկու աղմուկը բարձրանալով դաշտավայրերից, թեւածում է բլուրն ի վեր եւ գնում հասնում մինչեւ Մանթաշի ձորը, երեւի մինչեւ Արագածի սպիտակ գագաթները...»[12]:

Սառնաղբյուրի ուխտատեղին այնքան ամուր է հաստատված Շիրակի հավատացյալ ժողովրդի կյանքում, որ նույնիսկ խորհրդային անաստված տարիներին համայնավար իշխանությունները չկարողացան փակել քարանձավի մուտքը եւ արգելել ուխտագնացությունը դեպի այս սրբատեղին: Տեղի հնաբնակները պատմում են, որ Լուսավորչի տոներից առաջ, ՆԳՎԴ-ն (ներքին գործոց գերատեսչություն) նույնիսկ հատուկ վերակարգեր էր ուղարկում Սառնաղբյուր՝ ուխտագնացներին ճանապարհին կանգնեցնելու եւ հետ դարձնելու համար, սակայն ժողովուրդը լեռնային արահետներով եւ շրջանցիկ ճանապարհներով, միեւնույն է, հասնում էր այնտեղ: Անցյալ դարի 80-90

12 **Պ. Ղուկասյան,** Բարով ես եկել, վիպակ, Եր., 1975, էջ 110:

ական թթ. դրությունը քիչ մեղմվեց, եւ այլեւս տեղական իշխանությունները խոչընդոտ չէին հարուցում ուխտավորների առջեւ: Հետաքրքիր է, որ տեղական համայնավար ղեկավարներից շատերը եւս մասնակցում էին մատաղի արարողությանը, որը քողարկվում էր կերուխումի կամ պարզապես խնջույքի անվան տակ:

«Ես Զաղեն հիշում եմ 1945-46 թվականներից: Քարայրից ջուրը առվով էր հոսում էնքան ժամանակ, մինչեւ աղբյուր կառուցեցին՝ բբեր ենք ասում: 10 տարեկան էլ չկայի,- պատմում է Վիլհելմ Սերոբյանը: Զաղի դեմը դեռ բաց էր: Վերեւից՝ ժայռից մի հատ մեծ քար կար կախված: 5-6 հոգի տղամարդ եկան. ուխտավոր էին, ուզում էին քարը գցել (պետք է կռանալով անցնեիր, որ հասնեիր դեպի ջուրը): Տղամարդկանցից մեկը՝ Բազոն (Բազրատ էր անունը), ասաց՝ ես էդ քարը պըտի քցեմ: Ընկերներն էլ թե՝ Բազո՛, գործ չունիս, Բազո՛, գործ չունիս: Ինքը վրա բերեց՝ Ի՞նչ պըտի էղնի, օր...

Նա չի լսում, գցում է. քարն ընկնում է ոտքերին ու ճխլում: Ֆուրգոնով տանում են, որ հասցնեն հիվանդանոց... Կարմիր վանք (Հոգեվանք) չհասած՝ Բազոն մահանում է: Մինչեւ հըմի ձենը ականջներիս մեջ է. Գրիգոր Լուսավորիչ ջան, էս ի՞նչ փորձանք էկավ, ես էս ի՞նչ էրի... մեղավոր եմ, ընչի՞ քու քարիդ ձեռ տվի...»,- պատմում են ականատեսները:

Երկու հետաքրքիր դեպքի եւս կանդրադառնանք, որ պատմեցին մեզ Գրիգոր Լուսավորիչը պահպանող ընտանիքի անդամները, ովքեր մեր ամենատեղեկացված բանասացները եղան:

«Միջին տարիքի մի կին եկավ, դուռը բացել տվեց. անհանգիստ էր, ձեռքին փոքրիկ սրբապատկեր էր՝ ճանաչեցի՝ Զաղինն էր: Էս կինը լացակումած պատմեց, որ մոտ երկու շաբաթ առաջ Գրիգոր Լուսավորիչ էր եկել: Ուզեցի մի հիշատակ տանել. թաքուն փոքրիկ սրբապատկերը վերցրի: Տանը շատ վատացա, չգիտեի ի՞նչ է կատարվում: Հետո կինը երազ է տեսնում՝ երազին ճերմակզգեստ, ճերմակմորուք այրը նրան ասում է,- նկարը հե՛ր տար, տե՛ղը դիր: Կինը մեղայականով բերել էր նկարը. տեղը դրեց, խաչ հանելով, ներողություն խնդրելով՝ գնաց»:

«Երեք օր առաջ էինք սուրբ եկել. դուրս գալուց, հետս սրբի նկար տարա: Էդ օրը մեր տունը հրդեհ ընկավ: Վախեցա, ենթադրեցի՝ երեւի սրբի նկարն առանց հարցնելու որ վերցրել եմ՝ էդ պատճառով է: Սուրբը ինձ զգուշացրեց: Սխալվել էի»: Հենց ինքը՝ նկարը տանող տղան էլ պատմեց այդ մասին:

«Հիշում եմ, էդ թվերին (հետպատերազմյան տարիներ) լու, ոջիլ, քոս էր տարածված,- պատմում է 75-ամյա Գրետա Խեբոյանը: Հարեւան գյուղերից, Թալինի շրջանից գալիս, լողանում էին, որպիսի էդ հիվանդությունները վերանան. ամառ լիներ, թե ձմեռ...

Զաղի գլխից մարդ էլ է ընկել ու բան չի էղել. հորքուրս ապրում էր Զաղի վերեւի խարաբեքի մոտ, տուն գնալուց է տեսել,- գյուղացիներից մեկը մթնով, զաղի գլխով տուն գուքա, ճամփեն կըշփոթե ու կընկնի: Հորքուրս կհասնի բարդու ծառին, ձեռը կգցե ճյուղին՝ տերեւ պոկելու ... պոկելն ու էդ մարդու ընկնելը մեկ էղավ,- պատմում էր նա:- Բան չեղավ, բալա ջան, Գրիգոր Լուսավորիչը պահեց»:

Զաղայի առեղծվա՞ծն էր, սեփական աչքերով տեսնելու ցանկությո՞ւնը, օգնություն սպասելու հո՞ւյսը, հավա՞տը, թե՞ անիմանալի մի այլ բան. բազում- բազում են այնտեղ

ուխտի եկողները: Քարայրի բնական գեղեցկությունն առինքնում էր ուխտավորներին, նրանք բուռ-բուռ խմում էին ջուրը, լվացվում, լողանում: Եւ ինչպես պատմում են Սրբի հարեւանությամբ ապրող մարդիկ, բազմաթիվ զգուշացումները, որ ավազանի մեջ չլվացվեն, անօգուտ էին (այդտեղից խմելու ջուր է բաշխվում գյուղացիներին):

Անշուշտ, հարցի լուծումը գտնվում է: 1953-54 թթ. քարանձավի մուտքը փակվում է. շարվում է Սառնաղբյուրի քարհանքի վարդագույն տուֆով: Որոշ ժամանակ անց քարանձավը միջնապատով բաժանվում է երկու խորշերի: Ձախ խորշում ժայռի կրծքից ջուր է հոսում. ըստ ավանդազրույցի այստեղ է գտնվում նաեւ Գրիգոր Լուսավորչի մասունքապահ գերեզմանը: Աջ կողմում մոմակալներ են, սրբապատկերներ՝ կախված պատերին, դրված քարերով պատրաստված մեծ պատվանդանին, որը ծածկված է շուշփաներով: Եկողները նվերներ շատ են բերում. սրբապատկերներ, շուշփաներ, որոնց վրա ասեղնագործում են իրենց մաղթանքները, եկեղեցու մանրակերտեր, մոմակալներ: Ներսի քարայրից ուխտավորների համար խողովակով ջուր է բերվել: Ծորակը ավազանի մեջ է. ներքեւ իջնելու համար քարե ատիճաններ են շարել: Ցավ ի սիրտ ժողովրդի, այլեւս մոտ ու շոշափելի չէ գերեզմանը, այդ պատճառով նրանք քարայրի ներսը դիտում են ճաղաշար պատուհանից: Հավատում են, որ Լուսավորչի օգնությունն ու զորությունը տարածության վրա էլ կհասնի իրենց:

68-ամյա Լիդա Ամիրյանը Գյումրիից է, նախնիները գաղթել են Մշո գավառի Տապավան գյուղից, հայրը՝ Սուրեն Գրիգորյանը, ծնվել է Ի դարի սկզբին Սառնաղբյուրում: Պատմում է հետեւյալը. «Աշոտովս հղի էի: Երազիս մեջ գնացել էի սուրբ. մոմ վառեցի, նկարները համբուրեցի: Պատի երկարությամբ շուշփեք են կախած՝ մեկի վրա հլուն կար. ըսի, վա՛յ, էս ինչ սիրուն է, վերցնեմ ընձի: Վերցրի, զարկեցի դոշիս: Մեկ էլ անձավի խորքից սպիտակ մորուքով, սպիտակ շապիկով սուրբը դուրս էկավ, ըսավ՝ էդ հլունը քեզի չի պատկանում, դի՛ր տեղը... ուզեցի հետ դնեմ՝ ընկավ գետին, վերցրի, համբուրեցի, դրեցի տեղը: Ուխտս էրի, դուրս էկա, շեմի վրա վայր ընկա՝ մեջքս ցավաց: Էդ պահին Լուսավորիչը ձեն տվեց՝ գնա՛, մուրազդ առար, բայց էլի զուքաս դուռս:

Հունվարի 31–ն էր: Մյուս օրը ծննդաբերեցի, Աշոտիս ունեցա...

Պատմությունը չի ավարտվում. ամռանը երեխաների հետ գյուղ, բարեկամի տուն էինք գնացել, Աշոտս կորավ, խառնվեցինք իրար, սկսեցինք ման գալ ամեն տեղ, լճի մոտերը: Գժվածի պես էինք: Անցավ 2 ժամ, էս էրեխեն էկավ՝ թե մամա՛, ես գնացել էի Ասրված պապի տունը: Արի էրթանք, մոմ վառենք: Ըսի՝ ես էդ տեղը չգիտեմ,- ինքը՝ ես կտանիմ, մամա՛, ես տեղը գիտեմ: Միասին գնացինք, տարավ, հասցրեց Սրբի դուռը. Գրիգոր Լուսավորիչն էր: Էդ 3,5 տարեկան էրեխեն ընչի՞ գնաց դեպի սուրբը եւ ոչ դեպի լիճը: Լուսավորիչն էր իր մոտ տարել, պահպանել էր վերահաս վտանգից: Հանկարծ հիշեցի երազս, ինձ պատգամված խոսքերը, որ կրկին նրա դուռն եմ գալու»:

Մարդիկ դեռ շատ կպատմեն Գրիգոր Լուսավորչի զորության մասին: Ըստ ժողովրդական հավատալիքների, ջուրը խմելով եւ ցողելով բժշկում է, ամոքում է մաշկային հիվանդությունները. քոսը, քորը: Մեր գրառած նյութերում բազմաթիվ վկայություններ կան այդ մասին:

Այս դեպքի մասին պատմում է 45-ամյա Նվարդը. «70-ականների վերջն էր. Ամբողջ

մարմինս լաքա- լաքա էր, գլուխս վերք էր էղել, քորում էի ու լաց լինում: Անպատմելի տառապանք էր: Ուր ասես գնացինք, բայց՝ անօգուտ: Երբ բժիշկներն էլ չօգնեցին, իմացա Զաղի մասին: Մեր բարեկամներից էր՝ ասաց, էքսան ժամանակ տառապում ես, բա Զաղի մասին չե՞ս լսել. էնտեղի ջուրը բուժիչ է, անպայման գնա՛: Հույս չէի կորցրել՝ ընտանիքով ուխտի գնացինք: Դուռը բացող կինը խորհուրդ տվեց լողանալ, հետո հող ու մամուռ քսել ... եւ այսպես՝ երեք անգամ: Ամեն անգամ հավատքով էի գալիս. նաեւ «օգնություն» էի տանում: Չորրորդ անգամ, արդեն Լուսավորչին խոստացածս մատաղն անելու եկանք: Մաշկս լավացավ, վերացավ ոչ միայն քորը, այլեւ անհանգստությունը: Լուսավորչի զորությունն օգնեց ու Զաղի ջուրը »[13]:

«40 օրական էրեխա էին բերել,- պատմում է տանտիրուհին՝ Ֆենյան,- մաշկը այտուցված էր, շատ տեղերում՝ կարմրած: Մեծ կին էր՝ տատն էր, բարուրը քանդում էր, որ լողացնի: Ասինք՝ մեղք է, փոքր՝ չմրսի՞, հիվանդանա... Աղջիկ ջան, էս ջուրը բուժիչ է, բան չի էղնի: Փոքրիկին մերկացրեց ու պահեց հոսող ջրի տակ: Հետո բարուրեց ու գնացին: Հաջորդ անգամ, երբ եկել էր՝ հարցրինք երեխայի մասին: Մարմնի դուրս տված անցել էր, չէր հիվանդացել: Փառքդ շատ, Գրիգոր Լուսավորիչ ջան, էլի դու հասար, նվիրումով ու երկյուղածությամբ լի ձայնով, բարձրաձայն ասաց այս խոսքերը»[14]:

Յուրահատուկ է նաեւ այն հանգամանքը, որ Զաղա ուխտի եկողների մեջ կային ռուսներ, մոլդովացիներ, եգդիներ:

«Երկրաշարժից հետո որոշ ժամանակով ապրում էինք հորեղբորս տանը՝ Զաղի դիմաց,- վերհիշում է Ա. Արարատը: 1989 թվականի գարնանը եգդիների ընտանիք եկավ Զաղեն: 7 տարեկան տղայի մարմինը պատած էր քոս հիվանդության վերքերով: Շատ տեղեր էին տարել, բայց չէր օգնել: Իմացել էին Զաղայի մասին. եկել էին: Երեք անգամ լողանալուց հետո, տղան լրիվ ապաքինվեց: Մեծ հավատով ու շուքով նրանք, Գրիգոր Լուսավորչին խոստացած գառը մատղեցին: Հարազատներս հավատացին, որ եգդու ընտանիքը 7 տարի անընդմեջ գարնանը ուխտի է եկել ու մատաղ արել»:

Ասում են, նույնիսկ բժիշկն իր հիվանդի դեղատոմսում, ավելացրել է նաեւ «Սառնաղբյուր, Զաղա» բառերը՝ նկատի ունենալով նրա բուժիչ ջուրը: Այս առնչությամբ անդրադառնանք հետեւյալ իրողությանը: Ինչպես վկայում են Զաղայի պահպանության հոգացողները, մաշկային հիվանդություններով (քոս, քոր) ավելի հաճախ գալիս էին Հոկտեմբերյանից (այժմ՝ Արմավիր) եւ նրա մերձակա գյուղերից: Այստեղ հիմնականում զբաղվում էին այգեգործությամբ, կարծում ենք հողի հետ շփումը, միջատները: թունաքիմիկատների օգտագործումը ավելի էին նպաստում այդ տեսակի հիվանդությունների առաջացմանը: Լսելով Զաղայի անմահական ջրի եւ նրա բալասան հատկության մասին, նրանք գալիս էին, լողանում էին ու մաքրվում: Պատմությունը բերեբերան անցնելով՝ փոխանցվում էր շատերին: Երկու հոգի էլ գալիս են տեղի բժիշկ-մաշկաբանի ցուցումով: 38-ամյա Վանատուրը, ում չէին օգնել դեղերը, վկայում է. «Բժիշկն ասաց՝ քեզ կարող է օգնել միայն Անիի շրջան, գյուղ Սառնաղբյուր՝ Զաղի ջուրը: Հավա՞տքս

13 Մեր գրանցած նյութերը:
14 Մեր գրանցած նյութերը:

էր ուժեղ, թե՞ ներշնչանքը՝ չգիտեմ, Սրբի ջրով լողանալուց հետո, մոռացա ինձ տանջող ցավի մասին»:

Անշուշտ, այս ամենը կարող ենք բնութագրել մեկ բառով ՝ հավատ...

Հավատ ամենասրեղծ Արարչի նկատմամբ, այս պարագային, հավատ Քրիստոնեության լույսը տարածողի՝ Գրիգոր Լուսավորչի՝ զորավոր սրբի հանդեպ:

Եկեղեցու սրբերն Աստծո կենդանի վկաներն են. հրաշագործությունները, որ եղել են ու կատարվում են նրանց միջոցով՝ երկնքի արտացոլումն են երկրի վրա: Այն, ինչ պահպանվել էր ժողովրդի հիշողության մեջ Սառնաղբյուրի Ջաղայի մասին՝ հավելելով եւ մեր բազմաթիվ նոր գրառումները, կրկին անգամ հաստատում ենք, որ Տիրոջ սրբերի բարեխոսություններով եւ նրանց անունով սրբավայրերում, շատերն են փրկություն գտել՝ թե՛ հիվանդություններից, թե՛ փորձություններից: Վերը նշված պատմությունները եւս զորավոր ազդակներ կլինեն, որ մարդիկ դարձյալ այցելեն Ջաղա եւ իրենց հավատով ստանան Ս. Գիգոր. Լուսավորչի բարեխոսական օգնությունը:

Հուսանք, որ մեր քրիստոնյա ժողովուրդը մշտապես պահպանելու է այս ավանդույթը, եւ Սառնաղբյուրի Ջաղան հարատեւ ուխտատեղի է լինելու:

ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմն էր, ապա՝ 1915 թվականը, եւ Վանի գաղթի ժամանակ իր բոլոր հարազատներին կորցրեց պատանի Սարգիսը: Նահր–Օմարի (Իրաք) որբանոցն էր եւ ապագա սրբազանն իր բախտակից եղբայրների՝ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի, Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանի, Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանի, Տ. Հայրիկ եպիսկոպոս Ասլանյանի եւ ուրիշների հետ:

Վասպուրական աշխարհի հայտնի Թիմար գավառում էր գտնվում Բրուտների գյուղը, որ կոչվում էր նաեւ Կիրաշեն: Այս գողտրիկ գյուղում 1906 թ. հունվար 15-ին ծնվել է Սիոն Սրբազանը (ավազանի անունով Սարգիս): Առաջին համաշխարհային պատերազմը չարաբաստիկ պատճառ դարձավ, որ թուրք իշխանությունները ծրագրեն հազարամյակների պատմություն ունեցող անմեղ հայ ժողովրդի բնաջնջումը: Դժոխային ցեղասպանությունը տակնուվրա է անում նաեւ Վասպուրական աշխարհը, իսկ Կիրաշենի բնակչությունն ապահովության համար գաղթում է Վան: Դպրանի Սարգիսը գաղթի ճանապարհին կորցնում է հորը: Իր հուշերում Սրբազանն ահով է նկարագրում այդ օրերը. «Գիւղին խաղաղ կեանքը խանգարուեցաւ: Տասը տարեկանէն վեր բոլոր տղաքը կը բռնէին ու կը տանէին: Շատ մանչեր ստիպուած էին կանացի հագուստ հագնել՝ ազատուելու համար: Թիմար գաւառի եօթը գիւղերուն անտէր ու անօգնական ժողովուրդը քաշուեցաւ դէպի Վան քաղաքը, որ ինքնապաշտպանութեան հերոսական կռիւ կը մղէր...»[1]: 1917 թ., երբ արդեն հետեւում էին գաղթի օրերը, շուրջ 850 ծնողազուրկ որբեր ՀԲԸՄ-ի եւ Նիր-Իսթ Ռելիթի կողմից պատսպարվում են որբանոցներում, իսկ հետո տեղափոխվում Երուսաղեմ եւ բնակություն հաստատում Հայոց վանքի շենքերում: 1923 թ. նրանցից տասը որպես առաջադեմ աշակերտներ որբանոցից տեղափոխվում են Ժառանգավորաց վարժարան՝ հոգեւոր կրթություն ստանալու համար: Այնտեղ նրանց դասավանդում են ժամանակի ականավոր հոգեւորականներ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանը, Տ. Բարգեն արքեպիսկոպոս Կյուլեսերյանը (հետագայում՝ Բարգեն Ա Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո): 17-ամյա Սարգիս Մանուկյանին կոչում են սարկավագության՝ 1926 թ. Տ. Եղիշե Պատրիարքի ձեռամբ, եւ ապա կուսակրոն քահանայության՝ 1930 թ. հունիս 22-ին՝ Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնին, Սրբոց Հակոբյանց Մայր Տաճարում, պատրիարքական տեղապահ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանյանի ձեռամբ: Այդ նույն թվականի օգոստոսին, Սիոն անվանակոչյալ Հայր Սուրբին շնորհվում են վարդապետական չորս աստիճաններ եւ գավազան կրելու իրավունք:

Գիտելիքների մեծ պաշարով՝ նա ծառայության է անցնում Ժառանգավորաց վարժարանում՝ դասավանդելով գրաբար, Հայ Եկեղեցու եւ հայ ժողովրդի պատմություն եւ միաժամանակ վարելով Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի կալվածոց տեսչությունը: Իր ուսուցչական գործունեության մասին հետագայում այսպես է գրել Սրբազանը. «Ուսուցչա-

1 **Սիոն արքեպիսկոպոս Մանուկեան**, Եկեղեցականի մը կեանքի հանգրուանները, Բէյրութ, 1968, էջ 12-13:

կան պաշտօնը առիթ տուաւ լաւ սերտելու մեր դասական լեզուն, որ արմատն է հայերէնին, ու եկեղեցական եւ ազգային պատմութիւնը»[2]:

1933 թ. երիտասարդ Սիոն վարդապետին վստահվեց նաեւ Երուսաղեմի միաբանական ընդհանուր ժողովի ատենապետությունը, իսկ 1936-38 թթ. նա եղավ Սուրբ Աթոռի տնօրեն ժողովի անդամ: Արդյունաշատ գործունեության համար Տ. Թորգոմ պատրիարք Գուշակյանը նրան շնորհեց ծաղկյա փիլոն եւ վարդապետական լանջախաչ կրելու իրավունք:

Բազմաբովանդակ են եղել Սիոն Սրբազանի զբաղեցրած հոգեւոր ու վարչական պաշտոնները: Նյու-Յորքի առաջնորդարանը մի վարդապետ էր խնդրել Երուսաղեմից, եւ Տ. Թորգոմ պատրիարքը հարմար է դատում ԱՄՆ գործուղել Սիոն վարդապետին: Ժառանգավորաց վարժարանի ուսումնական տարին ավարտելուց հետո վարդապետը մեկնում է պաշտոնավարելու Նյու-Յորքում: Ու թեեւ սա հոգեւոր հովվության իր կյանքի առաջին փորձառությունն էր, նա կարողացավ առաջին բոպեից գրավել համայնքի ուշադրությունը: Ժողովուրդն սկսեց խուռներամ եկեղեցի գալ՝ տեսնելու եւ լսելու Երուսաղեմից ժամանած երիտասարդ վարդապետին:

1944 թ. ձեռամբ ԱՄՆ հայոց առաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Հովսեփյանի Սիոն Հայր Սուրբը ստանում է ծայրագունության աստիճան:

1945 թ. Սիոն ծ. վարդապետը Մայր Աթոռում մասնակցում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությանն ու օծմանը: Այդ նույն ժամանակ նորընտիր Գեւորգ Զ Հայրապետի ձեռամբ իր տասը վարդապետ եղբայրների հետ նա ձեռնադրվում է եպիսկոպոս: Ժողովի մասնակիցները հետո լինում են Մաշտոցյան Մատենադարանում: Սիոն Սրբազանը եւս եղել է այցելուների թվում եւ իր տպավորություններն է թողել այցելուների մատյանում 13 հուլիսի 1945 թ. ամսաթվի ներքո. «Տեսանք հայ ձեռագրաց անգին գանձը եւ հիացմունքով դիտեցինք մեր արվեստագետ նախնյաց հանճարի գործերը: Մանաւանդ հիացանք այն մեթոդիկ ու կանոնաւոր աշխատանքին վրայ, զոր կատարած է Մատենադարանի վարչութիւնը՝ խնամքով ցուցակագրելով ու դասաւորելով ձեռագրերը: Մեր ազգային մեծագոյն հաստատութիւնն է այս ձեռագիրներու հաւաքածուն»[3]:

1946 թ. հունիսին Սիոն Սրբազանը Դետրոյտում էր՝ որպես ԱՄՆ հայոց միջին արեւմտյան շրջանի առաջնորդական փոխանորդ: Նա մեծ ջանքեր գործադրեց կիրակնօրյա վարժարաններ ու երիտասարդական կազմակերպություններ ստեղծելու համար: 1949 թ. սկսեց հրատարակել «Ջահակիր» (Torch Bearer) ամսաթերթը, որ լույս էր տեսնում հայերեն եւ անգլերեն լեզուներով: 1952 թ. Սիոն Սրբազանը Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակն էր (1952-1959 թթ.):

1954 թ. մայիսյան օրերը սգի եւ տրտմության օրեր էին Մայր Հայրենիքի եւ Սփյուռքի հավատացյալ հայ ժողովրդի համար: Մայիսի 9-ին վախճանվում է Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետ Գեւորգ Զ Չորեքչյանը: Գալիս էին հայ ուխտավորները՝ համբուրելու սիրելի Հոր եւ Հովվապետի Սուրբ Աջը եւ հրաժեշտ տալու նրան: Այդ օրերին որբացած էին հատկապես Հայ Եկեղեցու միաբանները: Սիոն Սրբազանն այդ ժամանակ Հարավային Ամերիկայի հայոց կաթողիկոսական պատվիրակն էր եւ վշտի մեջ էր եղբայր միաբանների

2 **Սիոն արքեպիսկոպոս Մանուկեան**, Եկեղեցականի մը կեանքի հանգրուանները, էջ 47-48:
3 «Էջմիածին», 1946, Դ-Ե, էջ 36:

հեպ: Հուզիչ էր հատկապես նրա դամբանական խոսքը. «...Կուգամ սգակիր սիրտով խոնարհելու մեր ժամանակի մեծազոյն հայ եկեղեցականի խնկելի հոգւոյն առջեւ, եւ յանուն մեր վիճակի բարեպաշտ ժողովրդեան ծաղկեպսակ մը դնելու հայ ժողովրդի մեծագործ Հայրապետի դագաղին վրայ: Սուգ է պատեր հայ ժողովրդի սիրտը, սեւ է զգեցեր Հայոց Եկեղեցին...»[4]:

1955 թ. Սիոն Սրբազանը կրկին Մայր Աթոռում էր. այս անգամ Վազգեն Ա Հայրապետի ընտրության եւ օծման կապակցությամբ: Այս առիթով էլ ընտրվում է Գերա1956 թ. Հայրապետական կոնդակով Սիոն եպիսկոպոս Մանուկյանին շնորհվում է արքության պատիվ. «Ի վարձատրություն Ձեր ապտվածահաճո գործունեության եւ ի քաջալերություն Ձեզ Հայրապետական Մեր այս կոնդակով կշնորհենք Ձեզ արքության պատիվ եւ կմաղթենք, որ այս բարձր կոչումն ավելացնե նոր փայլ ու հեղինակություն Ձեր անբասիր անվան վրա՝ տալով Ձերդ Գերաշնորհության գործունեության նոր մղում ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո եւ ի մխիթարություն մեր հավատացյալ ժողովրդյան»[5]:

1959 թ. Սիոն Սրբազանն ընտրվում է Հյուսիսային Ամերիկայի Հայոց արեւելյան թեմի առաջնորդ եւ մինչեւ 1966 թ. ջանասիրությամբ եւ նվիրումով վարում այդ պաշտոնը Նյու-Յորքում: Այս առիթով գեղեցիկ եւ պարտավորեցնող էր Վեհափառ Հայրապետի պատգամը Սրբազանին. «Մասնավոր ուշադրությամբ եւ հայրական գուրգուրանքով մոտեցեք նոր սերունդին՝ ամերիկահայ երիտասարդներուն եւ պատանիներուն՝ դաստիարակելու համար զանոնք Ավետարանի լույսով եւ հայկական շունչով...»[6]:

Սրբազանը կազմեց նոր կանոնադրություն Եկեղեցասեր տիկնանց միությունների եւ առաջնորդարանի «Կոմիտաս» երգչախմբի համար՝ նրանց գործունեությունն ավելի ամուր հիմքերի վրա դնելու նպատակով: Թեմում կառուցվեց տասներեք նոր եկեղեցի, որոնց հիմնարկեքն ու օծումը կատարվում էր առաջնորդ Սրբազանի ձեռամբ: Սկսեցին տպագրվել առաջնորդարանի պաշտոնաթերթերը՝ «Հայաստանյայց Եկեղեցի» եւ «Արմենիան Զըրջ»:

Դեռեւս 1955 թ. կաթողիկոսական ընտրությունների ժամանակ Մայր Աթոռում եղած օրերին Սիոն Սրբազանը խոստանում է Մայր Աթոռի տպարանի համար հանգանակություն կազմակերպել ԱՄՆ-ում ու Գերմանիայում եւ շուտով 200.000 դոլլար է ուղարկվում Մայր Աթոռի տպարանի համար: Տպարանի բացումը տեղի է ունենում 1961 թ. աշնանը:

1969 թ. հունվարի 14-ի թիվ 653 կոնդակով Գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը նշանակվում է Եգիպտոսի, Սուդանի եւ Եթովպիայի հայոց հայրապետական պատվիրակ:

Տարիներ անց՝ 1978 թ., Վազգեն Ա Հայրապետի հատուկ հրավերով Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանն ընդմիշտ վերադառնում է Մայր Աթոռ՝ ծառայելու որպես Գերազույն հոգեւոր խորհրդի ատենապետ: 1979 թ. աշնանը Սրբազանը մասնավոր առաքելությամբ մեկնում է Հնդկաստան՝ Մասեհ Բաբաջանի՝ Սուրբ Էջմիածնին կտրված ժառանգության հարցով:

Սրբազանը 16 անուն գրքերի հեղինակ է, որոնք վերաբերում են Հայ Եկեղեցու պատ-

4 «Էջմիածին», 1954, Զ, էջ 46:
5 «Էջմիածին», 1956, Է, էջ 3:
6 «Էջմիածին», 1959, Ա, էջ 3:

մությանը, դավանանքին, հայ մշակույթի զարգացմանը եւ քրիստոնեական ու բարոյախոսական նյութերին. «Ամիս մի Հայաստան» (1946), «Խորհուրդ Վարդանանց» (1946), «Հայ Երուսաղէմ» (1948), «Լուսաշող դէմքեր եւ կեանք ու խորհուրդ» (1949), «Հայ Եկեղեցին եւ անոր ուսմունքը» (1951), «Աւետարանի պատգամներ» (1953), «Քրիստոնէական վարդապետութիւն Հայ Եկեղեցւոյ» (1954), «Աղօթքի կենսագործող զօրութիւնը» (1954), «Հայրենի երկրին մէջ» (1954), «Աշխարհի մեծագոյն բանը» (1956), «Հայոց Հայրիկ» (1957), «Քրիստոնէութիւնը եւ աշխարհի կրօնքները» (1961):

Սրբազանի կյանքի մանրամասները նկարագրված են իր գրչին պատկանող «Եկեղեցականի մը կեանքի հանգրուանները» գրքում: Այս գիրքը ներկայացնում է Սրբազանի հոգեւոր կոչում ստանալուց հետո շուրջ 40 տարվա բեղուն գործունեության զանազան փուլերը: Կան նաեւ մանրամասներ Ժառանգավորաց վարժարանում եւ ընծայարանում սովորելու տարիներից, նրա ուսումնական եւ վարչական պարտականությունների, զանազան երկրներ կատարած իր այցելությունների մասին: Գրքում խոսվում է նաեւ Արբազանին տրված կոնդակների մասին Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպիսկոպոսից, Ամենայն Հայոց Գեւորգ Զ եւ Վազգեն Ա Հայրապետերից առաջնորդական պաշտոնների ընտրության, եպիսկոպոսական օծման, արքության պատվի տվչության եւ այլ առիթներով:

1979-1981 թթ. նա «Աստվածաբանություն» եւ «Սուրբ Գրոց մեկնություն» առարկաներն էր դասավանդում Գեւորգյան հոգեւոր ճեմարանում: Նա շուրջ 55 տարի քարոզել է Հայ Եկեղեցու Սուրբ Սեղանից, դասախոսել բեմերից, խմբագրականներ ու հոդվածներ գրել թերթերում:

Սրբազանն իր մահկանացուն կնքեց 1991 թ. հուլիս 16-ին 85 տարեկան հասակում Սուրբ Էջմիածնում: Նա հոգեւոր ու բարոյական առաքինություններով օժտված, բարի եւ ազնիվ հոգու տեր հոգեւորական էր, որ իր ամբողջ կյանքն առանց մնացորդի նվիրաբերեց Հայաստանյայց Եկեղեցու հոգեւոր սպասավորության նվիրական գործին: Հանգուցյալ Սրբազանի մարմինը եկեղեցական թափորով տեղափոխվում է Սուրբ Գայանե վանք, ուր հոգեհանգստյան հանդիսավոր Սուրբ Պատարագ է մատուցել Սուրբ Հռիփսիմե վանքի վանահայր Գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արարաջյանը, իսկ վերջին օծման կարգը կատարել է Մայր Տաճարի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանը:

Լուսահոգի Սիոն սրբազանի արխիվը՝ նամականին, գրագրությունը Վեհափառ Հայրապետի, Հայ Եկեղեցու միաբանների եւ հայ հավատացյալների հետ, ինչպես նաեւ նրա անձնական լուսանկարները պահվում են Մայր Աթոռի Արխիվում:

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ԱՌՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՓՐՈՖ. ԴՈԿՏ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ, ՅԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ, Պէյրութ, 2006, 405 էջ. մեկենասութեամբ Միմի եւ Արմէն Յարութիւնեանների

Հայոց ցեղասպանութիւնը միջազգային քաղաքական կեանքի, ուստիեւ լրատուական միջոցների ամենօրեայ հետաքրքրութեան առարկայ է դարձել: Օրէցօր աւելանում են այն ճանաչող եւ դատապարտող քաղաքական ուժերը, պետութիւնները: Արդէն անշջելի թափ առած յարընթացը կանգնեցնելու յուսահատ ճիգեր է գործադրում ցեղասպանի իրաւայաջորդ կառավարութիւնը, դիմելով զանազան մանր խորամանկութիւնների: Պատմական ճշմարտութիւնը նենգափոխելու այդ աւանդոյթը դարաւոր ճանապարհ է անցել եւ՝ ապարդիւն: «Օսմանեան կառավարութեան բարի սովորութիւնն է՝ խեղաթիւրելով եղծել ճշմարտութիւնը, եղծել ջանալ մինչեւ անգամ ապացուցուած իրողութիւնները»,- գրել է ժամանակին «Մուրճ» ամսագիրը[1]: Այժմ եւս «յայտնագործուել է» խնդիրը շրջանցելու մի «հնար». առաջարկում են «Եղե՞լ է ցեղասպանութիւն» որոշ իմաստով հռետորական հարցին պատասխան տալու համար ստեղծել պատմաբաններից կազմուած հայ-թրքական յանձնաժողով, որ, իբր, վաւերագրերն ուսումնասիրի եւ պարզի իրողութիւնը, անգիտելով, որ անցած 90 տարիներն իզուր չեն անցել, հրապարակուել են ԱՄՆ, անգլիական, ֆրանսական, ռուսական, գերմանական պաշտօնական դիւանատների հազարաւոր վաւերագրեր, որոնք աւելի քան բաւարար պատասխան են տալիս այդ ուշացած հարցին: «Ես գտնում եմ,- գրում է բազմավաստակ Գ. Խրլոպեանը,- որ համաշխարհային ցեղասպանագիտութիւնը վաղուց ապացուցել է թուրքերի կողմից գործադրուած Հայերի Ցեղասպանութեան փաստը: Մինչեւ օրս կուտակուած փաստական նիւթն այնքան հարուստ է եւ այնքան բազմազանութեամբ է լուսաբանում երեւոյթը, որ նոր արխիւային փաստերը շատ բան պիտի չկարողանան աւելացնել» (էջ 11-12):

Փաստահաւաքման գործը, նկարագրական շրջանը իրաւամբ աւարտուած է համարում գիտնականը եւ արձանագրում է՝ եկել է իրողութիւնները ճանաչելու, գնահատելու եւ տեսական ընդհանրացումներ կատարելու ժամանակը: Այս նոր մեկնակէտից անդրադառնալով յոյժ արդիական խնդրին՝ Գ. Խրլոպեանը ուշադրութիւն սեւեռել է, իր խօսքով, «Ցեղասպանութիւն հասկացութեան տարբեր երեսների, առումների» վերլուծութեանը, դիտարկելով այն ատրուածաբանական, պատմական, իրաւական, քաղա-

1 «Մուրճ», 1895, թ. 7, էջ 948. տե՛ս նաեւ **Մէյլան**, Նշմարներ, Եր., 1999, էջ 65:

քական, դիւանագիտական, ընկերային-հոգեբանական, գաղափարական առումներով: Այսպիսով ուսումնասիրուող նիւթը ենթարկում է համակողմանի քննութեան, բացայայտում է դրա հակամարդկային էութիւնը յիշեալ բոլոր տեսանկիւններից, եւ դրանով առաւել որոշակի է դառնում դատապարտման անհրաժեշտութիւնը, որ միակ ճանապարհն է կանխելու ապագայ նորանոր ոճրագործութիւնները: Այդ է վկայում Հիթլերի շնական յայտարարութիւնը հայոց ցեղասպանութեան մասին, երբ որոշում էր օգտուել թրքական փորձից:

Հասկանալի է, այսպիսի բազմակողմանի մօտեցմամբ շարակարգուած համապարփակ աշխատութեան մասին քիչ թէ շատ աւարտուն պատկերացում տալու համար անհրաժեշտ կլինէին մի քանի տասնեակ էջեր: Մենք առելի սահմանափակ հնարաւորութեամբ կանդրադառնանք մէկ-երկու հանգամանքի միայն:

Հենուելով նախորդ ուսումնասիրութիւնների եւ հրապարակումների վրայ, ներառելով նորանոր փաստեր, Գ. Խրլոպեանը շեշտում է, որ երկիրը հայաթափելու նպատակով երիտթուրքական կառավարութիւնը դիմել է հնարաւոր ամեն կարգի օրինազանցութիւնների, «կոպտօրէն խախտել է Օսմանեան սահմանադրութիւնը, միջազգային օրէնքները, երկրի քրէական ու քաղաքացիական օրէնքները եւ որոշումների ընդունման գործընթացային կանոնները: Այսինքն դեռ այդ օրերին պարզ էր, որ կառավարութիւնը իր ողջ կազմով, Օսմանեան իսկ օրէնքներով, յանցագործ է» (16):

Ընդհանուր առմամբ ի՞նչպէս է *հնարաւոր դառնում* մարդկայնութեան դէմ ուղղուած մեծագոյն յանցագործութիւնը. առաջադրելով հարցը՝ հեղինակն ընդգծում է՝

երբ խմբակցական, կառավարական ու ազգային շահերը պաշտպանելու համար ղեկավարութիւնը անկարող է առաջնորդուել ընկերային կեանքին բնորոշ օրէնքներով ու սկզբունքներով՝ դիմում է ընկերութեան մարդկանց վրայ ներգործելու արտաընկերային եղանակների ու միջոցների.

երբ որոշ ազգեր, հաւաքականութիւններ ցանկանում են ուրիշներին զրկել տարրական մարդկային իրաւունքներից.

երբ պատերազմը համարում են նպատակին հասնելու նպաստաւոր միջոց, եւ ազգայնամոլութեամբ ներծծուած միլիթարիզմը հռչակում են հիմնական գաղափարախօսութիւն (24-25):

Ոճիրը այն գործող հաւաքականութեան պատմութեան ու կեանքի ընդհանրացումն է, նրա արժէքային կողմնորոշումը, նրա ապագայի ծրագիրը, նրա ազգային էութիւնը, փիլիսոփայութիւնը, որ հանդէս չի գալիս միանգամից, այլ «մշակում է տուեալ ազգի պատմութեան բովում» (129): Եւ նկատի ունենալով, որ ցեղասպանութեան «հիմքերը թաղուած են թրքական պատմութեան ծալքերում», հեղինակը հարեւանցի անդրադարձ է կատարում անցեալին եւ պարզում, որ բացի յիշեալ ընդհանրական պարագաներից հայոց ցեղասպանութիւնը խթանել է նաեւ տիրող ազգի *անլիարժէքութեան բարդոյթը*: Կոտորածների պատճառներից մէկն էր հայերի գերակշիռ դիրքը: 1915 թ. փետրուարին, օրինակ, Թալեաթը Մորգենթաուին յայտնում է թուրք ազգի ոչ այնքան բարձր գաղափարական մակարդակի մասին», դժգոհում նրա թուլութիւնից ու տգիտութիւնից

(322)։ Նոյն թուականի մարտի 16-ին Խարբերդի նահանգապետը Գերմանիայի փոխհիւպատոսին ասել է, որ Թուրքիայի հայերը պէտք է ոչնչացուեն, «քանի որ աճել են հարստութեամբ ու թուով, եւ այդպիսով սպառնալիք են դարձել իշխող թուրք ազգին» (76)։ Ընդ որում այդպէս են դատել թէ՛ երիտթուրքերը, թէ՛ նրանց նախորդ իշխանութիւնները։ Երիտթուրքերը պետական շինարարութեան գործում նախորդների սխալները «սրբագրում են» իւրովի՝ աւելի սխալ, «աւելի անմարդկային ու դաժան եղանակով՝ ցեղասպանութեամբ» (113)։

Նոյն այդ բարդոյթն այսօրուայ թրքական իշխանութիւններին թոյլ չի տալիս բաց աչքերով նայելու ճշմարտութեան երեսին։ Նրանց ոգեւորում է որոշ տէրութիւնների լուռ աջակցութիւնը, հանգամանք, որի դրդապատճառը շահն է եւ պայմանաւորուած է «ոչ թէ թուրքերի արդարացիութեան, թուրքական փաստարկների գիտական հիմնաւորուածութեան ու ճշդութեան վրայ, այլ թուրքերի մատուցած զանազան ծառայութիւնների վրայ»։ Եւ, օրինակ, ԱՄՆ քաղաքական գործիչները երբեմն խոստովանում են այդ։ Բարդոյթի հետ է կապուած «դուք անպատուել էք թուրք ազգին» (91) մեղադրանքը, որ աւելի ուշ առանձին յօդուած է դարձել Թուրքիայի սահմանադրութեան մէջ։

Բարդոյթի հետ սերտօրէն կապուած է եւ ցեղասպանութեան ուրացումը, որ սկսուել է տակաւին առաջին աշխարհամարտի ժամանակ։ Այդ երեւոյթը Թուրքիայում պաշտօնավարող գերմանական դիւանագէտները որակել են «դժոխային սրախօսութիւն» (Վալտեր Ռոգլեր), «աղաղակող սուտ» (Հոլշտէյն), «անամօթ խաբէութիւն» (Բիւզ), իսկ դեսպան Հանս Վոն Վանգենհայմի համոզմամբ ուրացումը կարելի է համարել իրողութիւնը հաստատող լրացուցիչ փաստ (113)։ Գ. Խրլոպեանի դիտողութեամբ՝ այսօրուայ ուրացողները «իրենց վրայ են վերցնում անցեալի բացասական արարքները՝ առանց դրանց կատարողները լինելու։ Արդի ուրացողը դառնում է ցեղասպան, ոճրագործ եւ այդպիսով հնարաւոր դարձնում ոճրագործութեան շարունակականութիւնը»։ Վկայ՝ ազգայնականների գործունէութիւնը, ազգային փոքրամասնութիւնների, քրդերի հալածանքը։ Բայց ուրացութեան բնութագիրը կարծես միշտ մնում է թերի՝ թուրքի ազգային նկարագրի երկդիմութեան բերումով։ Եւ իրաւացի է թում Ճ. Հեպուլրթը, գրելով, թէ թուրքը «իմանում է, որ դրանք (ջարդերը) նշանակում են ազգային անպատուութիւն, որ քաղաքակիրթ աշխարհը նրան նայում է արհամարհանքով, որ ինք մեղաւոր է այնպիսի արարքների, որոնք հաւասարապէս անպատիւ են ու ստոր» (140)։ Բայց սա եւս տարակուսանք է յարուցում. դա ճիշտ կլինէր, եթէ այսօրուայ Թուրքիայում դոյգն-ինչ փոխուած լինէր մտայնությունը, եթէ ադրբէջանցիները սիրով չաշակերտէին .աւագ եղբօրը, չաշխատէին շարունակել նրանց մերժելի աւանդները։

1924 թ. Իլիոտ Գրիններ Միրզը «Արդի Թուրքիան» գրքում նկատել է. «Սովորաբար թուրքերը եղել են ընդօրինակողներ։ Նրանց լեզուն, գրականութիւնը, արուեստը եւ զգեստաւորումը փոխառնուած են մեծ մասամբ Արեւելքից, իսկ այժմ՝ Արեւմուտքից» (79)։ Նրանք ընդօրինակող են եւ քաղաքականութեան ասպարէզում. «Միութիւն եւ առաջադիմութիւնը» սովորել է Համիդից, կուսակցութիւնները կապկել են իրար՝ չնայեած հակամարտութեանը (72)։ Նոյնիսկ թրքական ազգայնականութիւնը հիմնակա-

նում խարսխուած է օտար ազդեցութեան վրայ»: Թուրք ազգայնականութեան գաղափարախօսութիւնը եւս չունի ազգային ծագում, ընդօրինակուած է գերմանական, ֆրանսական, նաեւ օսմանեան լծի դէմ պայքարող ժողովուրդների ազատագրական պայքարի փորձից (151): Այդպիսի օրինակ է յիշեցնում եւ «Ազրպէյճանի նախագահի դեկրէտը Հայերի կողմից ազրպէյճանցիների ցեղասպանութեան մասին» յօդուածը, ուր ասուած է՝ «Հայաստանը կեղծ երկիր է՝ ստեղծուած ազրպէյճանական հողի վրայ». կարելի է կարծել, որ Ստրաբոնի նման հեղինակութիւնները հիմք են տուել այսպիսի խելահեղ գաղափարի: Գրկնում են այն, ինչ յայտնի կերպով իրենց պետութեանն է վերաբերում:

Իրաւամբ Գ. Խրլոպեանը նկատում է, թէ Պոլսի զինուորական ատեանը 1919-21 թթ. դատապարտելով յանցագործներին՝ առաջինն է ընդունել ցեղասպանութիւնը (288): Ճիշտ է, դա արւում էր ո՛չ յանուն արդարութեան, այլ համաշխարհային հանրութեանը ներշնչելու, թէ թուրք ազգն իր մէջ բարոյական ոյժ ունի ինքն իրեն մաքրելու, բայց այն մեղադրանքները, որ դատարանում առաջադրում էին ոճրագործներին՝ լիովին համապատասխան են *ցեղասպանութիւն* եզրոյթի բովանդակութեանը: Աւելին, արձագանքելով Թալեաթի սպանութեանը (որին թրքական դատարանը մահապատիժ էր սահմանել), կառավարական «Ենի գիւն» թերթը գրել է. «Թալեաթը քաղաքական տիպան էր, Թալեաթը հանճար էր...Թալեաթը մնալու է այն մեծագոյն մարդը, որ Թուրքիան երբեւէ ծնել է»[2]: Տասնամեակներ անց «ոճրագործները Թուրքիայում հռչակուեցին ազգային հերոսներ, ու նրանց աճիւնները տեղափոխուեցին ազգային դամբարաններ» (267):

Այժմ ցեղասպանագիտութեան խնդիրներից է դարձել Մեծ եղռնի եւ հրէական Ողջակիզման համեմատութիւնը: Բնականաբար Գ. Խրլոպեանը պիտի անդրադառնար եւ այդ հարցին: Նա պարզում է, որ Ողջակիզում (հոլոքոստ) եզրոյթը առաջին անգամ 1929 թ. կիրառել է Ու. Չերչիլը Հայոց ցեղասպանութեան առնչութեամբ: Հրեաները, ելնելով ո՛չ գիտական նկատառումներից մերժում են Ի. դարի երկու մեծագոյն ոճիրների նոյնականութիւնը: Հրէական Ողջակիզումի դէպքում արդարանում է ժողովրդական ասացուածքը՝ «Չկայ չարիք՝ առանց բարիք»: Հրեաները օտար երկրում ենթարկուեցին կոտորածի, եւ դա խթան եղաւ վերադառնալու Աւետեաց երկիր. Մնացորդացը վերադարձաւ հայրենիք: Հակառակ սրան, Հայոց Ցեղասպանութիւնը կազմակերպուեց երկիրը բնիկներից խլելու նպատակով, եւ Մնացորդացը ցրուեց աշխարհով մէկ: Լեհ իրաւագէտ ու մշակութաբան Ռ. Գեմբարսկու բնորոշմամբ՝ ոճրագործը իբրեւ պարգեւ ստանձնեց զոհի հայրենիքը[3]: Այս եւ մի քանի այլ հանգամանքներ հաւաստում են, որ իրաւացի է Խրլոպեանը, Հայոց պահանջատիրութիւնը «աւելի բարդ է, քան՝ ցեղասպանութեան ենթարկուած միւս ժողովուրդներինը: Հայն ունի արեան, նիւթական, մշակութային ու հողային պահանջատիրութիւն» (276):

Վերջապէս, յոյժ կաեւոր է այն, որ հրեաների կոտորածի համար տասնամեակներ

2 Տե՛ս **Դորա Սաթայեան**, Զմիւռնիա 1912, Բժիշկ Կարապետ Խաչերեանի Օրագիրը, Նախաբան՝ Թէսսա Հոֆմանի, Եր., 2005, էջ 20:

3 Տե՛ս **Ռ. Գեմբարսկի**, Նամակներ աշխարհին, Եր., 1990, էջ 16:

անց գերմանական իշխանութիւնները ներողամտութիւն հայցեցին՝ դրանից բխող հետեւանքներով: Մինչդեռ թրքական իշխանութիւնները անզիջում կերպով փարել են ուրացումին:

Անցած տասնամեակներին բացի պատմաբանների արդիւնաւէտ աշխատանքից մեծ գործ են կատարել գրականութեան ու արուեստի հայ եւ մանաւանդ օտար գործիչները: Առաջատար մտաւորականները՝ գրողներ, արուեստագէտներ, գիտնականներ, ինչո՞ւ չէ, նաեւ դիւանագէտներ, դատապարտել են մարդկայնութեան դէմ գործուող մեծագոյն ոճիրը, որ Գ. Խրլոպեանը բնութագրում է որպէս «հակաբնական վարք», «հակամշակոյթ», «հակաքաղաքակրթութիւն», «վտրթարագոյն ընկերային չարիք», որ ոչնչացնում է ոչ միայն արժէքներ ստեղծողին, այլեւ ստեղծուած արժէքները (28): Նրանք պատկերել են ինչպէս ցաւն ու լացը, կարօտն ու ողբը, ջարդից ու գաղթից վերապրածի փոթորկալից հոգին, նոյնպէսեւ հայ մարդու հերոսական կամքը, լաւատեսութիւնը, յոյսը եւ մահին յաղթած լինելու հպարտութիւնը,- ասում է մեր հեղինակը: Եւ այժմ իրենց արմատներին են վերադառնում ուծացած շատ հայեր: Ըստ Խրլոպեանի՝ արդի հայի հոգեբանութեան մէջ բնութագրական է այն իրողութիւնը, որ ինքը Եղեռն յաղթահարած ազգ է, կիսամեռ վիճակից հրաշափառ յառնած ու էապէս այլափոխուած, հերոսաբար բարեփոխուած ազգ է: Այդ ոգին իր դրսեւորումն է գտել 1988 թ. ժողովրդական յեղափոխութեան մէջ (341):

Հայ արուեստագէտների կողքին, երբեմն նրանցից առաջ, տարբեր ազգերի արուեստագէտներ անդրադառնալով Մեծ եղեռնին՝ ստեղծել են իսկական գլուխ-գործոցներ՝ Ֆրանց Վերֆելից սկսած, աւարտած Պաօլո եւ Վիտտորիո Տաւիանի եղբայրներով: Խօսքը մասնաւորելով սփիւռքահայ գեղանկարիչներին՝ Գ. Խրլոպեանը նկատում է, որ նրանք տարբեր տեսանկիւնից եւ տարբեր ոճով մեկնաբանել են Ցեղասպանութիւնը, տարփողել մարդկային վեհ զաղափարներ: Նրանց բոլորին բնորոշ է երեւոյթը անմարդկային նշանակութեամբ դիտելու միտումը, չարի դէմ մարդու յաղթանակը ապահովելու ձգտումը: Նրանք... ընդգծել են հայի լաւատեսական կեցուածքը, ապրելու եւ ստեղծագործելու վճռականութիւնը եւ նոր անկախ ու ազատ Հայաստանը կերտելու համար պայքարելու պատրաստակամութիւնը: Լաւատեսութեամբ, մարդասիրութեամբ, ստեղծագործական նուիրումով կրնանք յաղթահարել եւ՛ Ցեղասպանութեան հոգեխոցութիւնը ու ցեղասպանին» (363):

Իր բազմաբովանդակ գրքում Գ. Խրլոպեանը լայնութեամբ ու խորութեամբ քննարկում է եղեռնին վերաբերող թերեւս բոլոր նշանակալից խնդիրները, տալիս պատասխաններ, դուռ բանալով նոր խորհրդածութիւնների: Նա դիտում է, որ վերջին յոթ տասնամեակում արձանագրուած ցեղասպանութիւններն ու ազգային մաքրագործումները ուսումնասիրելիս գիտնականները եզրակացրել են՝ եթէ Հայոց ցեղասպանութիւնը ժամանակին համարժէք գնահատական ստանար, իսկապէս խստագոյնս պատժուէին բոլոր յանցագործները, եթէ համակողմանիօրէն ուսումնասիրուէր ոճիրը եւ այդ հիման վրայ ձեռնարկուէին խիստ միջոցներ հետագայ ցեղասպանութիւնները կանխելու ուղղութեամբ, ապա Եւրոպան ազատ կլինէր այդ ոճիրից: Մինչդեռ ճիշտ հակառակը կա-

տարուեց, նկատում է Խրլոպեանը, նախ Առանցքի երկրները, այնուհետեւ միւսները, որ հակառակ բանակն էին, ցեղասպանի «թիկունքին կանգնեցին» եւ, ո՛վ արդարութիւն, «Միջազգային յարաբերութիւնները բնորոշող երկու բեւեռները հերթափոխում են ցեղասպանին պաշտպանելու համար» (304): Ուսքի երեւոյթի շարունակականութեան մէջ այդ բոլոր երկրներն ունեն մեղքի իրենց բաժինը: Հայոց հարցի եւ ցեղասպանութեան պատմագիտական քննութիւնը անհնարին էր շատ երկրներում: Այսօր, ինչպէս արձանագրում է «Ցեղասպանագիտութիւն» մեծարժէք գիրքը, այդ «իրողութեան պատմագիտական, իրաւագիտական, դիւանագիտական եւ քաղաքական երեսների քննարկումը ու լուսաբանութիւնը արգելակող ու այդ ճանապարհով Հայկական Հարցի լուծումը բացառող բերդը, Մեծ տէրութիւնների հզօրութեամբ կանգնած ու պահուող այդ բերդը ապրիճանաբար սկսեց քանդուել վերջին տասնամեակների ընթացքում» (372-373): Դատմագիտութեան զարգացման ու ճշմարտութեան բացայայտման ճանապարհը հարթողների շարքում, ասում է Գ. Խրլոպեանը, պատուաւոր տեղ ունեն ազնիւ թուրք մտաւորականները, որ հիացնում են «աշխարհի գիտական խորաթափանցութեամբ, լուսամտութեամբ, քաջութեամբ ու մարդասիրութեամբ: Նրանք այն ռահվիրաներն ու հերոսներն են, որոնք թուրք ժողովրդի պատիւը պիտի փրկեն» (375):

«Ցեղասպանագիտութիւն» աշխատութիւնը որոշ իմաստով հանրագիտարանային է եւ կարեւոր ներդրում է այս բնագաւառում: Գէորգ Խրլոպեանն իրաւացի է, երբ յուշում է, թէ պէտք է տարբեր լեզուներով թարգմանել Ա. Փափազեանի «Հայերի ցեղասպանութիւնը ըստ երիտթուրքերի դատավարութեան փաստաթղթերի» մեծարժէք գիրքը: Նոյնը կարող ենք ասել եւ գրախօսուող ուսումնասիրութեան համար, որ այլ տեսանկիւնից եւ նորովի բացայայտում է Ի. դարի առաջին մեծագոյն եղեռնագործութեան էութիւնը, տալիս նրա ճշմարտացի գնահատականը, որ միտուած է մարդկայնութեան դեմ գործուելիք յանցագործութիւնների կանխարգելմանը:

ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԵԱՆ

ՏԱԹԵՒԻԿ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՎԱՐԴԵՆԻԿԻ ՇԷԿ ԱՒԵՏԱՐԱՆԸ

Ինչպէս գիտենք, քսաներորդ դարի սկզբից ի վեր հայերէն ձեռագիր գիրքը մեզանում դարձել է թանգարանային արժէք, ուստի եւ Հայաստանի տարածքում եղած մատեանների զգալի մասը ժողովուել ու պահպանւում է մեր սրբութիւն սրբոց Մաշտոցեան Մատենադարանում: Բայց Հայաստանի տարբեր գիւղերում այժմ եւս շատ դերդաստաններ եւ անհատ մարդիկ ունեն սեփական Աւետարաններ, որոնք նրանք ժառանգել են իրենց նախնիներից եւ սերնդէսերունդ պահպանում են իրենց իսկ կառուցած փոքրիկ սրբավայր-մատուռներում: Այսպիսի Աւետարանները մեր գիւղերում պաշտամունքի առարկայ են եւ, ի տարբերութիւն անհատական հաւաքածուների միաւորների, որոնք մատչելի են միայն իրենց տէրերին, այս ձեռագրերը լիովին մատչելի են ժողովրդին, իսկ ժողովուրդն անվերապահօրէն հաւատում է նրանց զօրութեանը:

Նման ձեռագրերից է «Շէկ» անունով Աւետարանը, որ գտնւում է Գեղարքունիքի մարզի Վարդենիկ[1] գիւղում՝ Տէր Մովսէսի գերդաստանում: Տոհմի նախնի Տէր Մովսէսը 1828 թ. Աւետարանն իր հետ այստեղ բերել է Արեւմտեան Հայաստանի Լաթար[2] գիւղից: Սկզբից իսկ նկատենք, որ այս Աւետարանում մէջ առկայ են տարբեր երկու ձեռագրեր. սրա հետեւանքով նոյն կազմի վրայ կան իրենց մայր ձեռագրերից եկած երկու տարբեր խաչեր: Առաջին ձեռագիրը 1504 թ. է, երկրորդը՝ 1507 թ.: Ի դէպ, առաջինից պահպանուել են միայն տէրունական մանրանկարները, գրչութեան եւ հետագայի յիշատակարանները, Եւսեբիոսի թղթի մի մասը եւ Յովհաննու Աւետարանի վերջին հատուածը (Իրք կնոջն շնացելոյ): Վարդենիկում հանդրուանելուց առաջ Աւետարանի անցած ուղին պարզում են հետագայ յիշատակարանները (տե՛ս ստորեւ՝ նկարագրութիւնը):

Ըստ գրչութեան հիշատակարանների՝ առաջին ձեռագիրը 1504 թ. Յովհաննէս գրչի ձեռքով գրուել է Հիզան քաղաքում. յայտնի են նաեւ ստացողների անունները՝ Թադէոս կրօնաւոր եւ Ղարիպշահ: Զնայած ծաղկողի անունը նրա միակ յիշատակարանում (13ա) եղծուած է, բայց երկու ձեռագրերի մանրանկարների համեմատութեան հիման վրայ համոզուեցինք, որ առաջինը եւս նկարուած է երկրորդի ծաղկող Մկրտչի ձեռքով (մանրան-

1 Տե՛ս **Թ. Յակոբեան, Սպ. Մելիք-Բախշեան, Յ. Բարսեղեան**, Հայապրանի եւ յարակից շրջանների գեղանունների բառարան, հտ. 4, Եր., 1998, էջ 781 (հտ. 2, 1988, հտ. 3, 1991, հտ. 4, 1998, այսուհետեւ՝ ՏԲ):

2 Տե՛ս ՏԲ, հտ. 2, էջ 555:

կարների մասին՝ ստորեւ): 13ա էջի յիշատակարանում եղծուած է ոչ միայն ծաղկողի անունը, այլեւ՝ ամբողջ յիշատակարանը, մաս առ մաս, սակայն կան յստակ ընթեռնելի մի քանի բառեր, որոնց հիման վրայ փորձեցինք վերականգնել այն. անեղծ մնացած հատուածներից է՝ «բերդոյ վանք կոչիք Յովհաննէս»: Սրանից ելնելով՝ նախ Հ. Յ. Ոսկեանի «Վասպուրական-Վանի վանքերը» դրքում փնտրեցինք «բերդ» աւարտով տեղանուններ՝ ի մտի ունենալով նաեւ վանքի Ս. Յովհաննէս անունը. եւ դտանք Առբերդ[3] եւ Մոխրաբերդ[4]: Վերջինիս վերաբերող տեղեկութիւնները մեր խնդրին չաղերսուեցին, այդ իսկ պատճառով կենտրոնացանք յատկապէս Առբերդ անուան վրայ: Ոսկեանը համարում է, որ նոյն վանքի տարբեր անուններ են՝ Առբերդի Ս. Աստուածածին եւ Պաղվանից Ս. Յովհաննէս. «Եկեղեցին թէպէտ փոքր է, բայց կոկիկ շէնք մրն է եւ նուիրուած է Ս. Աստուածածնի եւ Ս. Յովհաննէսի»[5], իսկ խնդրոյ առարկայ յիշատակարանում նշուած Ս. Յովհաննէս վանքը թոյլ է տալիս ենթադրելու, որ խօսքը Առբերդի Ս. Յովհաննէս վանքի մասին է: Առբերդի վանքի մասին տեղեկացանք նաեւ վանեցի հնախոյզ Խաչիկ Լեւոնեանի մի յօդուածից, ուր ասւում է, որ այնտեղ եղել է մի Ճաշոց, մի Մաշտոց, այլեւ՝ «Հոս կար նաեւ «Հրաշալի» Աւետարան մը (դրչագիր), զոր տեսնելու բախտ չունեցանք տեղւոյն քահանային բացակայութեան համար, որովհետեւ մենք աշխարհականներս անարժան էինք անոր դպչելու»[6]: Վստահ ենք, որ Լեւոնեանի չտեսածը մեր Շէկ Աւետարանը չէր, որովհետեւ նրա ուխտադնացութիւնը 1900-ական թթ. էր, իսկ այդ ժամանակ, ըստ հետագայ յիշատակարանների, Շէկ Աւետարանը վաղուց Գեղարքունիքում էր: Եւ միայն շատ հաւանական ենթադրութեամբ կարող ենք ասել, որ մեր յիշատակարանում եւս խօսքն այս նոյն Առբերդի Ս. Յովհաննէս վանքի մասին է: Այդուհետեւ հայերէն ձեռագրերի հիմնական հաւաքածուների ցուցակներում փնտրեցինք Առբերդում դրուած ձեռագրեր, սակայն դտանք միայն Մաշտոցեան Մատենադարանի մի ձեռագիր՝ թ. 9682. Աւետարան, ՌԺԵ. (1566) թ., Արբերդի ուխտ, դրիչ, ծաղկող եւ կազմող՝ Կարապետ աբեղայ (308 թերթ, 27x18. յիշ.՝ 299բ): Ձեռագիրն արժէքաւոր է նաեւ մանրանկարչական արուեստի տեսանկիւնից. թէեւ տէրունական շարք չունի, սակայն չորս աւետարանիչները, խորանները, կիսախորան-անուանաթերթերը, լուսանցազարդերը եւ զարդագրերն աչքի են ընկնում Վասպուրականի մանրանկարչութեանը բնորոշ տարրերով եւ դունապնակի հարուստ ու նրբաճաշակ համադրմամբ:

Մեր Շէկ Ավետարանի Ա. ձեռագրում կայ երկու յիշատակարան, որոնցից մէկը (12բ-3ա) եւս մեծ մասամբ վնասուած է, իսկ միւսը հետագայ ստա-

3 Տե՛ս **Հ. Յ. Ոսկեան**, Վասպուրական-Վանի վանքերը, մաս Ա., Վիեննա, 1940, էջ 144:

4 Տե՛ս անդ, էջ 188, հմմտ. ՏԲ, հտ. 3, էջ 859:

5 **Հ. Յ. Ոսկեան**, նշ. աշխ., էջ 144:

6 **Խ. Լեւոնեան**, Նարեկայ վանքէն դէպ Առբերդոյ Ս. Աստուածածնի վանք եւ Եղերով լեռ. «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1903, թիւ 2148 (հոկտեմբեր 8-21), էջ 1:

ցող Տէր Թումայինն է: Այս ձեռագրում յիշատակարանները շատ չեն, այդ իսկ պատճառով Ա. ձեռագրի մասին մեր տեղեկութիւնները սուղ են:

Երկրորդ ձեռագիրն ամբողջական է. այն եւս Հիզան քաղաքում գրուել է Յովհաննէսի ձեռքով, ստացողը նոյն Յովհաննէսը եւ իր հօրեղբօրորդի Մարտիրոսն են, իսկ ծաղկողը՝ մեզ արդէն յայտնի Մկրտիչը:

Մի քանի խօսք գրչութեան մասին. յիշատակարանում (յատկապէս 334բ) նշւում է, որ բուն գրչի՝ Յովհաննէսի մահից յետոյ նրա հօրեղբօրորդի Մարտիրոսի հրամանով ձեռագիրը շարունակել եւ աւարտել է մէկ ուրիշը, որի անունը չի յիշատակել. սրանից ելնելով՝ արձանագրում ենք ձեռագրի երկրորդ՝ Անանուն գրիչ: Այս ամէնի մասին տեղեկանում ենք գրչութեան յիշատակարաններից, իսկ հետագայի յիշատակարաններում հիմնականում Տէր Մովսէսի գերդաստանի ընտանեկան-տարեգրական գրառումներն են, որոնք գերդաստանի անդամներն արել են տարբեր ժամանակներում. սրանց հիման վրայ պատկերացում ենք կազմում նաեւ տոհմի ժամանակագրական պատմութեան վերաբերեալ:

Այժմ առաւել մանրամասն ծաղկողի մասին. Շէկ Աւետարանի Ա. եւ Բ. ձեռագրերի մանրանկարների նոյն ձեռքի գործ լինելու մասին վկայում են թէ՛ պատկերագրական առանձնայատկութիւնները եւ թէ՛, յատկապէս, առանձին տարրերի կատարման ձեւերը: Կասկած չկայ, որ այս ձեռագրերի ծաղկողը նոյն Մկրտիչ Հիզանցին է, որի նկարածն է նաեւ Մատենադարանի թ. 5396 ձեռագիրը[7], որը եւս գրուել է Հիզանու, Ով գիւղում[8], 1499 թ., եւ Մկրտիչ Հիզանցու առաւել վաղ ստեղծագործութիւններից մէկն է: Մօտ մի տասնամեակի՝ 1499, 1504 եւ 1507 թթ., ընթացքում ստեղծուած այս «երեք» ձեռագրերը հնարաւորութիւն են տալիս տեսնելու նաեւ նրանց ինքնատիպ մանրանկարչի ստեղծագործական ուղին կամ աճը: Թէեւ ոճական առումով այս «երեք»ը շատ միօրինակ չեն, սակայն նոյն ձեռքն են փաստում ինչպէս նոյն տեսարաններում միեւնոյն պատկերագրութեան կիրառումը (օրինակ՝ «Իսահակի զոհաբերութիւնը». նկ. 1, 2, 3), նոյնպէս եւ տարատեսակ նոյնական տարրերի կիրառումը թէ՛ նոյն, թէ՛ տարբեր նպատակներով: Կարելի է նշել տասնեակ նման տարրեր, սակայն բերենք առաւել ցայտուն մի քանիսը[9].

1. զինուորների մի մասի դէմքերը, գլխանոցները եւ ջահերը. ձեռ. 5396, 5բ, Շէկ Աւետարան, ձեռ. Ա., 10ա, 10բ եւ ձեռ. Բ., 19ա.

2. իւրօրինակ ծաղկաշղթաները. ձեռ. 5396, 2ա, 11ա, 13բ. Շէկ Աւետարանի ձեռ. Բ., 17ա, 18բ.

---

7 Ձեռագրի մանրանկարչական մանրամասների համար տե՛ս **Աստղիկ Գէորգեան**, Հայ մանրանկարիչներ. Մատենագիտութիւն Թ-ԹԺ դդ., Գահիրէ, 1998, էջ 435 (թ. 245):

8 Տե՛ս ՏԲ, հտ. 4, էջ 179:

9 Մանրանկարչական արուեստի գնահատման ընթացքում շնորհակալութեամբ ստացել ենք Մատենադարանի մեր աշխատակից Դաւիթ Ղազարեանի շատ օգտակար խորհրդատուութիւնը:

3. իւրատիպ աստղազարդ-ցանցկէնր. ձեռ. 5396, 1բ, 2ա, 3բ. Շէկ Աւետարանի ձեռ. Բ., 15բ.

4. հաւասաը քառաթեւ, ուղղագիծ զարգանախշը. ձեռ. 5396, 2ա, 2բ, 7ա, 149բ. Շէկ Աւետարանի ձեռ. Ա., 9բ, 11բ եւ ձեռ. Բ., 170ա.

5. խոյի եղջիւրները. ձեռ. 5396, 1ա. Շէկ Աւետարանի ձեռ. Ա., 4բ եւ ձեռ. Բ., 14բ.

6. հրեշտակների թեւերը. ձեռ. 5396, 1բ, 2ա, 3ա. Շէկ Աւետարանի ձեռ. Բ. 15ա, 15բ, 16բ:

Վերջին գործօնն աւելի է ամրապնդում մեր տեսակէտն առ այն, որ Շէկ Աւետարանը Մկրտիչ Հիզանցու արուեստի գոհարների երկակի համագրութիւնն է:

Յիշատակուածներից բացի, կցանկանայինք խօսել նաեւ երկու այլ առանձնայատուկ մանրանկարների մասին:

Ա. ձեռագրի մանրանկարներին ընորոշ պարզութեամբ է նկարուած նաեւ 5ա (նկ. 4) էջի Աւետման տեսարանը: Այստեղ եւս չկայ հեռանկար, ինչի շնորհիւ աւելի են շեշտւում Գաբրիէլի եւ Աստուածամօր կերպարները: Աստուածամօր պատկերն ընդգծուած է նաեւ նրա ոտքերի տակ գտնուող գունազարդ գորգով: Գորգի ուղղանկիւն ձեւը իւրայատուկ կշռոյթի մէջ է մտնում նկարի շրջանակի եւ ձեռագրի էջի հետ: Իւրատիպ լուծում ունի նաեւ Սուրբ Հոգու պատկերումը, որը արուած է սպիտակով՝ կապոյտ ժապաւէնի վրայ, որի մէջ սպիտակով գրուած է «Հոգին Սուրբ իջեալ առ Մարիամ»:

Յօրինուածքային առումով առաւել ուշագրաւ են 22բ (նկ. 5) էջի «Յարուցեալ Յիսուսի յայտնութիւնը աշակերտներին» եւ «Երեք մանուկ հնոցում» մանրանկարները, որոնք ունեն անկիւնագծային լուծում: Տեսարանը բաժանուած է մի քանի եռանկիւնների եւ ուղղանկիւնների, որով որոշակի կշռոյթ է ստեղծւում, իսկ գունաբաժանման շնորհիւ գիտողին առաջին հայեացքից գրաւած Գաբրիէլ հրեշտակապետից ասես սկսւում է իւրահատուկ շարժ, որը անցնելով «երեք մանկանց» վրայով՝ շարունակւում է աշակերտներից կազմուած իւրահատուկ շղթայով՝ գիտողի հայեացքը բեւեռելով Յիսուսի վրայ. Քրիստոսի գլխով ասես եզրափակւում է նրա աշակերտներից կազմուած անկիւնագիծը:

Շէկ Աւետարանից զատ, Յովհաննէս գրչից մեզ են հասել նաեւ 1496-1507 թթ. թղթէ 5 ձեռագիր՝ 3 Աւետարան, 1 Գանձարան եւ 1 Յայսմաւուրք. բոլոր ձեռագրերում ասում է. «գրեցի անարժան ձեռօք իմովք յրնտիր եւ ի ստոյգ օրինակէ»: Նոյն գրչի ձեռքին պատկանելու եզրայանգման հիմք է տալիս գրչի յիշատակարանների յատկապէս հետեւեալ միանման հատուածը. «զանարժան եւ զմեղօք մեռեալ հոգիս զՅովանէս, *զծնօղքն իմ՝* զՄկրտիչ քահանայն *եւ* զՇամամն *եւ զեղբայրն իմ՝* զԵզեկիէլն *եւ զհաւրեղբայրն իմ՝* զՍտեփանոս դարբին *եւ զուսուցիչն իմ՝* զՅովանէս քահանայն *եւ* զՓի-

լիպպոս քահանայն *եւ զամենայն արեան մերձաւորքն մեր»: Ստորեւ թուարկում ենք այդ ձեռագրերը.*

1. Մշոյ Առաքելոց վանքի թ. 45. Աւետարան, 1496 թ. - «զմեղօք մեռեալ ***զՅովհաննէս*** *եւ զծնօղս իմ՝* ***զՄկրտիչ քահանայն*** *եւ* ***զՇամամ*** *եւ զամենայն մերձաւորսն իմ»*[10].

2. Վիեննայի Մխիթ. թ. 62. Աւետարան, 1497 թ. - «զփծուն գրիչս ***զՅովաննէս քահանայ*** *եւ զծնաւղքն՝* ***զՄկրտիչ քահանայն*** *եւ* ***զՇամամն*** *եւ զեղբայրն՝* ***զԵզեկիէլ****, որ մականուն Քաւթաթ կոչի եւ զամենայն արեան մերձաւորս մեր»*[11].

3. Վենետիկի Մխիթ. թ. 130. Աւետարան, 1499 թ. - «զփծուն գրիչս ***զՅովանէս քահանայն*** *եւ զծնօղքն իմ՝* ***զՄկրտիչ քահանայն*** *եւ* ***զՇամամն*** *եւ զեղբայրն իմ՝* ***զԵզեկիէլ*** *եւ զհօրեղբայրն իմ՝* ***զՍտեփանոսն*** *եւ զամենայն արեան մերձաւորսն»*[12].

4. Երեւանի Մատենադարանի թ. 5399. Գանձարան, 1499 թ. - «զսուտանուն գրիչս ***Յովանէս*** *եւ զծնօղքն իմ՝* ***զՄկրտիչ քահանայն*** *եւ* ***զՇամամ*** *եւ զեղբարն իմ՝* ***զԵզեկիէլն*** *եւ զհօրեղբայրն՝* ***զՍտեփ[աննոս]»***[13].

5. Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թ. 233. Յայսմաւուրք, 1507 թ. - «զանարժան գրիչս ***զՅովհանէս*** *եւ ծնողսն իմ՝* ***զՏէր Մկրտիչն*** *եւ* ***զՇամամն*** *եւ զհօրեղբայրն իմ՝* ***զՍտեփաննոս եւ զվարպետն իմ՝ զՓիլիպպոս քահանայն*** *եւ* ***զՅովհաննէս քահանայն»***[14]:

Արդէն ասել ենք, որ 1828 թուականից ի վեր Աւետարանը հանգրուանել է Վարդենիկի քահանայ ու տանուտէր Տէր Մովսէսի գերդաստանում. տարօրինակ է, որ Մեսրոպ արքեպս. Սմբատեանցի տեղագրութեան[15] *մէջ Շէկ Աւետարանի գոյութեան մասին խօսք չկայ: Տէր Մովսէսը եղել է գերդաստանի վերջին քահանան, նրանից յետոյ այդ տոհմում ծնուել է վեց սերունդ, եւ ոչ ոք այլեւս չի քահանայացել, սակայն դա չի խանգարել, որ գերդաստանի բոլոր անդամները, եւ ընդհանրապէս բոլոր գիւղացիները, խորին ակնածանքով եւ պաշտամունքով վերաբերեն Աւետարանին, որին ականատես եղանք ձեռագիրը նկարագրելու ամբողջ ընթացքում*[16]՝ *առնչուելով նրանց հետ: Ի պահպանութիւն Շէկ Աւետարանի՝ գերդաստանի անդամներն ունէին մեծ եւ նուիրական երազանք. կառուցել մի մատուռ, ուր իր հանգրուանը կգտնէր*

---

10 «Ցուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-թարգմանչաց վանքի եւ շրջակայից», Երուսաղէմ, 1967, թիւ 45, էջ 132:

11 «Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», Վիեննա, 1895, թիւ 62, էջ 284:

12 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հտ. Ա, Վենետիկ – Ս. Ղազար, 1914, էջ 573:

13 ՄՄ, ձեռ. 5399, 401ա:

14 «Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի», հտ. Ա, Վիեննա, 1970, թիւ 233, էջ 344:

15 Տես **Մեսրոպ արքեպ. Սմբատեանց**, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 547-51:

16 Շնորհակալութեամբ արձանագրում ենք, որ ձեռագրի նկարագրութիւնն արել ենք Տէր Մովսէսի գերդաստանի անդամների սիրայօժար աջակցութեան շնորհիւ:

բաւականին մեծ ուղի անցած եւ բազմաթիւ փորձութիւններ յաղթահարած Աւետարանը: Մինչ մատուռի բացումը Աւետարանը գտնուում էր 1861 թ. դերդաստանի նախնիի կառուցած դետնափոր շինութեան մէջ, որ այժմեան մատուռի մօտ է:

2007 թ. լրանում էր Աւետարանի 500 ամեակը. եւ նոյն տարուայ օգոստոսի 27-ին, ի պահպանութիւն Շէկ Աւետարանի, Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գիւղում կատարուեց Յովհաննու Մկրտչի մատուռի բացման եւ օծման արարողութիւնը, ձեռամբ Տէր Մարկոս եպիսկոպոս Յովհաննիսեանի: Մատուռն ամբողջովին քանդակազարդ է, բոլոր զարդատարրերն առնուած են միմիայն Աւետարանից: Խորհրդանշական է յատկապէս Աւետարանի Բ. ձեռագրի Մկրտութեան մանրանկարի (16բ. նկ. 6) քարէ քանդակազարդումը մատուռի հարաւային պատին: Իսկ մատուռի դուռը Աւետարանի կազմի կրկնօրինակն է՝ երկու խաչով հանդերձ, այսինքն՝ մատուռի դուռը բանալով՝ կարծես բացում ես հէնց Աւետարանը: Եւ ինչպէս դերդաստանի անդամներն են նշում, Աւետարանն ստեղծուել է իրենց սուրբ նախնիների ձեռքով ու լուսաւոր հաւատով եւ իրենց փոխանցուել նրանց անմնացորդ նուիրումի շնորհիւ եւ Տիրոջ ողորմածութեամբ հանգրուանել է իր նոր սրբավայրում:

Յոյս ունենք ներկայ նկարագրութեամբ եւ մանրանկարների վերատպութիւններով ապահովել այս ձեռագրերի գիտական արժէք ունեցող նիւթի գործածականութիւնը:

ՇԷԿ ԱՒԵՏԱՐԱՆ

(Բաղկացած է 2 տարբեր ձեռագրերից)

ԹԵՐԹ՝ 13+322+2=337: ԿԱԶՄ՝ մուգ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դռնակով, երեք կապիչներով եւ դամերով, Ա. փեղկին՝ 2 խաչ, առաջինն ունի 3 նարնջի, 1 կարմիր եւ 1 կանաչ ակ, երկրորդը՝ 3 կոստղ եւ կենտրոնում 1 սպիտակ ակ. միջուկը՝ տախտակ, աստառը՝ դրոշմազարդ կտաւ, դռնակի աստառը՝ սպիտակ գործուածք:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – Տարբեր՝ երկու ձեռագրից եւ մի տպագրից: Ժ-ԺԱ. դդ.: 3 (Ա-Գ) +1 (Դ)՝ ստացուած առանձին թերթերի եզրահատումով (Բ-Դ), բնագիրը կտրուած արտաքին եւ ստորին հատուածներից (Գ) եւ հիմքից (Բ): Տպագիր թուղթ՝ Ա (22,5x15,5), մագաղաթ՝ Բ (26x17), Գ (25x16,5), Դ (25,5x16,5): Միասիւն՝ Աա եւ երկսիւն՝ Աբ (18,5x13,5), երկսիւն՝ Բ (19x11,5), միասիւն՝ (21x11,5՝ Գ, 23x10,5՝ Դ), բոլորգիծ երկաթագիր՝ Բ (նմուշ՝ Բա), ուղղագիծ երկաթագիր՝ Գ, Դ (նմուշ՝ Դա), տող՝ 7 (Աա), 28 (Աբ), 8 (Բ), 21 (Գ), 23 (Դ): Բա՝ ունի լուսանցային համաբարբառ: 1. Շարակնոց: Կարդալ՝

Աա, Աբ՝ «Առեալ Յովսեփու զկոյսրն տիրածինէ... Զքեզ կատարու»: 2. Աւետարան Ղուկասու: Կարգալ՝ Բա[1] «Զխաչ իւր հանապազ եւ եկեսցէ զկնի իմ, զի որ կամեսցի զանձն իւր կեցուցանել, կորուսցէ զնա եւ որ կորուսցէ զանձն իւր, վասն ///» (Ղուկ. Թ. 23-4), Բա[2] «/// [յ]ամաւթ արասցէ, յորժամ գայցէ փառաւք իւրովք եւ հաւր եւ հրեշտակաց սրբոց, բայց արդարեւ ասեմ ձեզ, եթէ են ոմանք ի սոցանէ» (Ղուկ. Թ. 26-7): Բբ[1] «/// [եկ ի լեառն կալ յաղաւ]թս եւ ի կալն նմա [յաղ]աւթս եղեւ տեսիլ երեսաց նորա այլակերպ եւ փոխեցաւ հանդերձ նորա եւ [եղեւ] սպիտակ փայլուն» (Ղուկ. Թ. 28-9): Բբ[2] «/// [ի քնոյ զարթեան] տեսին զփառսն նորա եւ զերկ[ուս արսն, որ կային առ նմա]: Եւ եղեւ ի մեկնելն նոցա [ի նմանէ, ասէ Պետրոս ցՅիսուս Վարդապետ՝ բ]արւոք է մեզ [աստ լինել] ///» (Ղուկ. Թ. 32-3):

Գա՝ «///եան թագաւորին Հա/// զկեանս ոչ թողումք ի բազումք զչարագործ /// մահ յանձինս, որ /// գրեալ /// նեալք վասն անիրաւ /// են, իսկ մեք վասն /// եան մահու ոչ համբեր /// մի խոտորեսցուք, ով նուիրակիցք (կամ աջին ու որակիյք) մի տացուք ///ունս մեր մատնչին նմա// են մի խնայեսցուք ///, զի պարտէ ամենայնի ը/// մեռանել մեռցուք, զի /// ցուք եղիցի պատարագս /// հաճոյս աջի քո Տէր եղ ի /// մեքրն նելո (կամ նելու) որպէս զ/// ողջակէզս հրով այդ պա/// եւ սառ///ք ողջակիզել /// ականս իմ ե/// (1 տող անընթեռնելի)»:

Գբ՝ «պիսի ///եիս/// հանբեր եղեալ /// տումս եւ գոր ///, այլ ոչ եթէ զնոցա /// ղ/// անել /// պր զպահպանութիւնս վկա /// հաւատացան եւ ի կրթու/// իմ եմնալ սթոփանաւք /// նէրապաս///երոյ կա առ ի ձե/// մեզի ցն փախուցեալ զպ (կամ զտ) ///, քանզի մերձ գորալ /// իմացեալ եղեն /// աւգնութիւնն յեղաշրջել /// խոստացեալ ///պիսի /// թեանցն գտան իեղի /// յ/// պատրաստութիւն /// են զլուծումն ///գնա/// (3- 4 բառ անընթեռնելի) ///փ (կամ ք)»:

Դա՝ «/// (1 տող չգրուած) ///ստ հրով /// պատրաստ /// եմ /// կանութին քրիստովնեից /// յից անակիզք /// եւ /// կոչափ/// ք գրցես (3 տող անընթեռնելի) զաւրհնութիւն, զի ուրեր կամեր եք ժողովեալ են /// անդ է ի մէջ նոցա Տեառն /// ուրքա/// ասունք են, ով յերկ ասց/// ի գալստենէն Աստուծոյ: Օրնեալ /// ի քա (կամ փա) (1,5 տող անընթեռնելի)»:

Դբ՝ «եւմ //// բութենէ յն /// իբր թե այլ ինչ իմ եմ իոք /// զորդի /// զի ոչ /// եւ ոչ (մնացեալն անընթեռնելի)»[17]:

ՎԻՃԱԿ՝ բաւարար: Նորոգուած ԻԱ. դ. սկ.: Պատառիկ-պահպանակը ցեցակեր, խոնաւութեան հետեւանքով պհպ. Բբ, Գաբ, Դաբ-ի գրագաշտերը գժուարընթեռնելի կամ անընթեռնելի, նաեւ գամերի հետեւանքով առաջացած անցքեր: Նորոգման ժամանակ թ. 336-7 փակցուած սխալ, պէտք է կարդալ՝ 337ա, 336բ, 336ա:

---

17 Պահպանակի այս երկու թերթի բովանդակութիւնը չկարողացանք պարզել, ուստի նրա հերթագայ ճանաչումն ապահովելու նպատակով բերեցինք այն ամէնը, ինչ հնարաւոր եղաւ ընթերցել:

ՁԵՌԱԳԻՐ Ա.

ՀԻՁԱՆ ՁԾԳ. - 1504

ԳՐԻՉ՝ Յովաննէս: ԾԱՂԿՈՂ՝ [Մկրտիչ]: ՍՏԱՑՈՂ՝ Թադէոս կր., Ղարիպշահ:

ԹԵՐԹ՝ 13+2 (336, 337 վերջում) = 15. չգրուած՝ 1աբ, 2աբ: ՊՐԱԿ՝ 11+2+2: ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 26x17: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (19x13), երկսիւն (20x15): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 337բ): ՏՈՂ՝ 20-2:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ - Զոհաբերումն Իսահակայ՝ 4բ, Աւետումն՝ 5ա, Ծնունդ, Մոգերի երկրպագութիւն՝ 5բ, Պայծառակերպութիւն՝ 6ա, Հարսանիք ի Կանայ, Փրկումն Պետրոսի՝ 6բ, Ընծայումն տաճարի՝ 7ա, Մկրտութիւն՝ 7բ, Մուտք Երուսաղէմ, Բժշկումն Զաքէոսի՝ 8ա, Ոտնլուայ, «Յուդա առնու զպատառն»՝ 8բ, Բժշկումն անդամալուծին, Բժշկումն կոյրի՝ 9ա, Բժշկումն դիւահարի, Յարութիւն Ղազարու՝ 9բ, Մատնութիւն, «Պետրոս սրովն հատանէ զականջն Մաղքոսի» եւ «Պետրոս ուրանայ»՝ 10ա, «Քրիստոս Պիղատոսի առջեւ», «Յուդա ընկենու զարծաթն»՝ 10բ, Համբարձումն՝ 11ա, Հոգեգալուստ 11բ, Զորեքկերպեան աթոռ, Ծնրադիր Թադէոս կրօնաւոր (ստացող)՝ 12ա: Եւսեբիոս՝ 13բ (խորանի վերնազարդի վրայ՝ շրջանակի մէջ): Խորան՝ 13բ: Լուսանցազարդ՝ բուսական: Գոյներ՝ դեղին, կարմիր, կապոյտի, կանաչի բոլոր երանգները, նարնջի, մանուշակագոյն, վարդագոյն, շագանակագոյն, օխրա, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թ. 1-13-ի ստորին եւ վերին եզրերը նորոգուած ԺԹ. դարի թղթով, մանրանկարները որոշակիօրէն խունացած, 12բ-3ա գրադաշտը կպումների հետեւանքով դժուարընթեռնելի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. 13բ Թուղթ Եւսեբեայ («Եւսեբի Կարպիանոսի սիրելի եղբաւր ի Տէր ողջոյն... վասն իրիք իրիք ինչ առանձինն գրեաց»/// (չիք, թերթ ընկած):

2. 337բ Աւետարան Յովհաննու (337բ Իրք կնոջն շնացելոյ՝ սկիզբը թափուած՝ «պատուիրեաց զայսպիսիս քարկոծել արդ դու զինչ ասես վասն դորայ...»): 337բ Թելադրութիւն. «Յովհաննէս աւետարանիչն, որ եւ որդի Որոտման...»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 337ա Փա՛ռք անսկզբան եւ սկրզբանն ամենայնի, անեղ էին եւ գոյացուցչին բնաւից, անվախճան եւ անսահման էացուցչին եւ սահմանիչ եւ կատարումն բոլոր էիցս, երիցս միակին, եզակի եւ միում աստուածութեանն, որ անշարժ գոլով շարժէ զարարածս ի կեանս եւ ի փրկութիւն, էիցս էակն եւ կենդանեաց կեանքն, որ անփոփոխ գոլով միշտ յէութեան, անեզրն եւ անվայրափակն, լրումն եւ բովանդակիչ ամենայնի եւ յամենայնս է եւ յամենայնէ անհաս է, որպէս ի մասունս եւ ի բոլորս, եւ ինքն ո՛չ մասն եւ ո՛չ բոլոր, որպէս թէ զմասն եւ զբոլոր զամենայն ինքն ունելով եւ կրէ զամենայն բանիւ զաւրութեան իւրոյ, գերալիր գոլով՝ լնու զամենայն, եւ անհաս է յամենայնէ, որում բան եւ իմաստութիւն եւ լեզու տուեալ բոլոր էիցս, ի բոլոր էիցս հանցուք աւրհնութիւն եւ փառս Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ յաւիտեանս յաւիտենից. ամէն: /336բ/ Եւ ետ գրել զսա յիշատակ Հոգոյ իւրոյ եւ ծնօղացն՝ հօրն՝ Թումին եւ մաւրն՝ Ռեհանին եւ կողակցին՝ Սօլթանին եւ դեռաբոյս զաւակին՝ Թումին եւ մեծ պապուն՝ Առեւծին եւ կողակցին՝ Շամին, Մուքայէլին եւ կողակցին՝ Մարթին, զոր Տէր Աստուած բարով վայելել տացէ զսա մանկանց Սիոնի, կենդանեացն առողջութիւն տացէ Տէր Աստուած եւ հանգուցելոյն զերկնից արքայութիւնն պարգեւեսցէ. ամէն: Արդ, աւարտեցաւ սուրբ Աւետարանս ի մեծ թվ. ՉԾԳ. (1504), ի կաթուղիկոսութեան Աղթամարայ տեառն Ատոմի եւ ի թագաւորութեան այլասեռից շահ Սմաելին, որ Կարմիր գդակ կոչի, զոր Տէր Աստուած անդրնդասոյզ արասցէ՝ որպէս զփարաւոն ի խորս Կարմիր ծովուն. ամէն, եւ ի մերոյ թագաւորութեան ամիր Դայուդին: Յիշեցէ՛ք ի Քրիստոս զստացող սուրբ Աւետարանիս զքրիստոսասէր եւ հաւատարիմ ծառայն Աստուծոյ Ղարիպշէն, որ մականուն Ջրի հաւ կոչի, ի հալալ վաստակոց իւրոց, յիշատակ Հոգոյ իւրոյ եւ ծնաւղացն՝ Թումին եւ ըՌեհանին եւ մեծ /336ա/ պապուն՝ Մուքայէլին եւ կողակցին՝ Մարթին, Առեւծին եւ կողակցին՝ Շամին, յիշեցէ՛ք ի Քրիստոս եւ լի բերանով եւ ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէք նոցա, եւ որ զԱստուած ողորմին ասէ, Աստուած նմա ողորմեսցի յահեղ աւուրն դատաստանին. ամէն: Այլեւ գրեցաւ սուրբ Աւետարանս ի քաղաքիս, որ կոչի Հիզան, ձեռամբ Յովանիսի սուտանուն եւ ախմար գրչի եւ անարժանի. եւ իմ անընդունակ գոլով յարուեստ գրչութեան: Եւ բազում մեղաց ցնորիւք պաշարեալ, այլ ըստ կարի մերում, զոր պարգեւեաց մեզ մարդասէր Հոգին Սուրբ, գրեցի անարժան ձեռօք իմովք յրնտիր եւ ի ստոյգ օրինակէ, յիշեցէ՛ք ի սուրբ յաղաւթս ձեր զիս՝ զանարժան եւ զմեղօք մեռեալ հոգիս զՅովանէս, զծնօղքն իմ՝ զՄկրտիչ քահանայն եւ զՇամամն եւ զեղբայրն իմ՝ զԵզեկիէլն եւ զհաւրեղբայրն իմ՝ զՍտեփանոս դարբին եւ զուսուցիչն իմ՝ զՅովաննէս

քահանայն եւ զՓիլիպպոս քահանայն եւ զամենայն արեան մերձաւորքն մեր, եւ այնոցիկ, որ ի վերայ մեր երախտիք ունին, յիշեցէ՛ք եւ լի բերանով եւ բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք ամենեցուն. ամէն:

2. 12ա (ստացողի) Թադէոս կրաւնաւորն է ստացաւղ սուրբ Աւետարանիս:

3. 13ա (ծաղկողի, ստ. լս.) Եւ արդ, ծաղկեցի զԱւետարանս ի ///բերդոյ վանք կոչիք [Յովհ]անէս սուրբ ///ին եւ թէ /// սարա///ին (3 տող եղծուած) Աստուած, որ է /// առաւել զ/// աց շնորհաց նմա Տէր /// արքա. ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 3ա (ԺԶ. դ., բոլորգիր, ստացողի) Զվերջին ստացող սուրբ Աւետարանիս յիշեցէ՛ք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէ՛ք Տէր Թումին, Արթուխշին եւ Ինախշին, եւ Արայիշին եւ Տէր Մարտիրոսին եւ մօր՝ Փարիխանին եւ դստերն՝ խաթուն Փաշին, Յախիջանին, Միրանշին, Փանոսին, Արամիշին, Տէր Մաթէոսին եւ մաւրն նորա՝ Հիլալին եւ դստեր նորա՝ Կահարին եւ Լատիւին եւ կողակցին իւրոյ՝ Սոլթանին եւ որդոցն՝ Յակոբին եւ Տէր [Սահակին, Տէր Յովա]նիսին եւ Փոքր Տէր Թումին, Եղիշին, Միրբապին եւ Ամիրխանին, Փոքր Արթուխշին եւ Պաղէկին, Ասլեկին եւ Թորամիշին եւ որդոյն՝ Այլատին եւ ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեաց եւ հանգուցելոցն ամենայն Աստուած ողորմի ասացէք. ամէն: Դարձեալ Աստուած ողորմի ասացէ՛ք Տէր Թումին, որ գնեց զսուրբ Աւետարանս ի հալ<ալ> վաստակոց իւրոց՝ բարի յիշատակ հոգ<ոյ> իւրոյ եւ ծնաւղաց իւրոց. ամէն: /3բ/ Դարձեալ յիշեցէ՛ք ի մաքրայփայլ յաղօթս զձեր Տէր Թումայ եպիսկոպոսն եւ իւր եղբարձն՝ զՏէր Մարտիրոսն եւ իւր կողակցին՝ Հիլալին, որդոյն՝ Տէր Մաթէոսին, Արայմիշին, դստերն՝ Լատիւֆին, Գաւարին, դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՏէր Մաթէոսին եւ իւր կողակցին՝ Սաւլթանին եւ իւրեանց որդոցն՝ Տէր Մարտիրոսին եւ իւր կողակցին՝ Եղիսին (3 տողի վրայ կարկատան, վրան գրուած)՝ որդոյն՝ Գալուստին, եղբարցն՝ Յակոբին, Փանոսին, Շխիջանին եւ քեւերցն՝ Շուշանին, Գաւարին, Փարիխանին, Էթարին, Գրիգորին. ամէն: Դարձեալ յիշեցէ՛ք ի Քրիստոս զՏէր Մարտիրոսն եւ իւր ծնօղքն՝ Ինախշին, կողակցին՝ Փարիխանին, կրկին յիշեց[է՛ք] ի Քրիստոս զՏէր Մարտիրոս եւ զիւր որդիքն եւ զիւր եղբարքն, զամենեսին եւ որք գրեցաք եւ որք մնացին, / թէ կենդանին ի մարմին / եւ թէ մեռեալք ի տապանին / Տէր համօրէն ողորմեսցի / եւ ջնջեսցի մեղս նոցին. ամէն: Զի ամենայն ոք որ հանդիպի սմայ, ընթերցցի եւ ուսանի /4ա/ (այլ ձեռքով)[18] զճշմարիտ արարողութիւնս

18 4ա-ից ի վեր այլ ձեռքով գրուած լինելը ենթադրել է տալիս, որ մինչ այս էջը գրել է Տէր Թուման, իսկ այնուհետեւ շարունակել Պօղոս Կտրուցեցին:

խորհրդաւոր, որ է աստուածայդործութիւն մեծ, եւ մի՛ ախմար մտօք իբր ի մարմնաւոր եւ թեթեւ հպիլն ի հոդեւոր դործառութիւնս սուրբ Աւետարանս եւ մեծ պատուհաս եւ պատիժ կրիլ յԱստուծոյ, այլ երկիւղիւ եւ հաւատով: Արդ, աղաչեմք զամենեսեանդ, ով քահանա՛յք, յորժամ հանդիպիք այս սուրբ Աւետարանիս, լի բերանով, ուղիղ սրտիւ եւ հաւատով Աստուած ողորմի ասացէ՛ք աստուածայսէր եւ հեզայհոդի քահանային՝ Տէր Մարտիրոսին եւ Տէր Մաթէոսին եւ իւրեանց ծնօղացն եւ ամենայն արեան մերձաւորաց՝ կենդանացն եւ հանդուցելոց, Քրիստոս Աստուած ողորմի ասացէք, եւ Աստուած զձեր մէղքն թողնու յիւր միւս անդամ դալրստեան. ամէն: Ով յիշիսէ յիշատակարանս կարէ, նա զմասն Յուդայի առցէ եւ զանէցքն Կայենի առցէ, եւ լաւ պահօղս սուրբ Աւետար[ան]իս աւրհնի յԱստուծոյ եւ ամենայն սրբոց նոցին. ամէն: Հայր մեր, որ յերկ:

Ես Պաւղոս Կոուցեցի, որ զյիշատակս դրեցի, անմեղայդի՛ր լերուք խոշորութեամբ դրչինս, ով եղբարք, Աստուած ողորմի ասացէ՛ք, եւ Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն:

2. 12բ (ԺԶ. դ., բոլորդիր, երկսիւն) /// եւ որդոյ եւ սուրբ Հ///դոյն այժմ եւ ան///աւ ամէն ///: Ես՝ Ներսէս էր ///եցս դնեցի եւ զսուրբ Աւետարանս եւ հալալ ոնչ ///մ, յիշատակ ինձ եւ ծնաւղաց իմոց՝ հաւրն իմոյ՝ Ստեփանոս քահանային եւ մաւրն իմ՝ Խոնդք[արին եւ] մեծ պապոյն՝ զԱյնորշային եւ որդոյ նորին՝ Թուրանշին եւ ամենայն արեան մերձաւորացն. ամէն. եւ դստերացն՝ Անայխաթունին եւ հանդուցեալն ի Քրիստոս եւ զորդիքն իւր. ամէն: Զորդիքն իմ՝ զՄիքայիլն եւ զՄիրիջան, զ///ան եւ զհարսն [իւ]ր՝ զՓաշախաթուն եւ զորդին իւր զ///ան, աշխարհս եւ զդուստրն իւր՝ [Ս]ալթան մէլիքն եւ զքվերքն իւր. ամէն: Եւ զքոյրն իմ՝ զԹաճխաթունն եւ զորդիքն իւր՝ զՔրման սարկաւադն եւ զՄսրն եւ զմիւսն քոյրն իմ՝ Խոնդխաթումենն, եւ զորդին իւր՝ զՏէր Վարդանն եւ Ցառուխն, եւ քուր սոցա՝ Խոնդբէկին եւ զմիւս դուստրն իմ՝ զՇահմէլիքն եւ զորդիքն իւր՝ /13ա/ զԱլահդատ եւ Մտուրադատն, զքոյր սոցա՝ Շահբէկի եւ զԻոնբէկին. ամէն: Այլեւ կրկին յիշեսջի՛ք ի սուրբ յա[ղօթս] ձեր զստացող սուրբ [Աւե]տարանիս զՆեր[սէս] քահանայն եւ հանդուցեա[լ կող]ակիցն իւր՝ զՆար/// խաթունն եւ զամենայն [արեան] մերձաւորսն իւր. ամէն: Եւ զանէրն իմ՝ զՅ[ովանն]էսն եւ զԳուրջին եւ զՀազարբ[էկ]ն եւ զեղբայրորդիքն իւր՝ զԽալիֆէն եւ զէվատ /// եւ զեղբարքն իւր. ամէն: Եւ զքոյր սոցայ՝ զՋանխաթուն եւ զորդիքն իւր. ամէն: զԽախաթուն եւ զորդիքն իւր. ամէն: Ա/// անկեալ աղաչեմ զամենեսեանք, հանդիպիք սուրբ Աւետարանիս, լի բերանով եւ ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէ՛[ք] Ներսէս /// սուրբ ա/// վերջնոցն եւ առաջնոցն. ամէն, ինչ մարդ աշխարհական կա[մ] կարդաւոր, որ զԱւետարանիս /// Աւետարանն ///իւ ///դրա ///ն կամ զնորս /// Արարիչն /// զիս /// յիշեցէ՛ք այս ///նէ կարէ. ամէն, ով որ լի բերանով Աստուած ողորմի ասէ Քրիստոս Աստուած իւրն ո[ղ]որմի. ամէն:

3. 4բ (ԺԸ. դ., անարուեստ բոլորգիր) Յիշատակ Մաթէոսիս Աւետ<ար>ա-նի յարութենէ մէջն է:

ԳՐՉԱՓՈՐՁ 1ա՝ թուաբանական հաշուարկ՝ «1947/1655»:

ՆՇՈՒՄՆԵՐ 1ա՝ «N 65/106, N 137, Ձեռագիրք Նոր-Բայազիդի, N 40, Աւետարան 1655 թուից առաջ», 3ա՝ «N 65/106»:

ՁԵՌԱԳԻՐ Բ.

ՀԻՉԱՆ ՁԾՁ. - 1507

ԳՐԻՉ՝ Յովաննէս, Անանուն: ԾԱՂԿՈՂ՝ Մկրտիչ: ՍՏԱՑՈՂ՝ Յովաննէս (այլ) եւ իր հօրեղբօրորդի Մարտիրոս:

ԹԵՐԹ՝ 322 (թ. 14-335). չգրուած՝ 14ա, 29ա, 113ա: ՊՐԱԿ՝ 2x8+Ա-Պx12 (Լ 6, Ա, Պ 11, Ը 16): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 26x17,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (19,5x12,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 19ա): ՏՈՂ՝ 21:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ - Զոհաբերումն Իսահակայ՝ 14բ, Աւետումն՝ 15ա, Ծնունդ՝ 15բ, Ընծայումն տաճարի՝ 16ա, Մկրտութիւն՝ 16բ, Պայծառակերպութիւն՝ 17ա, Հարսանիք ի Կանայ՝ 17բ, Բժշկումն անդամալուծին, Յարութիւն Ղազարու՝ 18ա, Մուտք Երուսաղէմ, Ոտնլուայ՝ 18բ, Մատնութիւն, Զղջացող Յուդա՝ 19ա, «Պիղատոսը լուանում է ձեռքերը», «Ծնրադիր Քրիստոսը եւ քահանայապետները, Քրիստոս առ ոտս Պիղատոսի՝ 19բ, Խաչելութիւն, «Քրիստոս հանէ զԱդամ»՝ 20ա, Իւղաբեր կանայք Տիրոջ գերեզմանի մօտ՝ 20բ, Համբարձումն՝ 21ա, Հոգեգալուստ 21բ, Աղերս առ Քրիստոս (ծնրադիր պատուիրատուները՝ Յովհաննէս, Մարտիրոս)՝ 22ա, Յարուցեալ Յիսուսի յայտնութիւնը աշակերտներին (Երկրորդ գալուստն Քրիստոսի), Երեք մանուկ հնոցում՝ 22բ, Եւսեբիոս՝ 23բ (խորանի վերնազարդի վրայ՝ շրջանակի մէջ), Կարպիանոս՝ 24ա (խորանի վերնազարդի վրայ՝ շրջանակի մէջ), ի լուսանցս – Յիսուս Քրիստոս (գծանկար)՝ 32ա, Յովսէփ Արեմաթացի՝ 256բ: Մատթէոս՝ 29բ, Մարկոս՝ 113բ, Ղուկաս՝ 169բ, Յովհաննէս եւ Պրոխորոն՝ 262բ: Խորան՝ 23բ-8ա: Կիսախորան՝ 30ա, 114ա, 170ա, 263ա: Լուսանցազարդ՝ բուսական, յուշկապարիկ, թռչնային, տաճար, խաչ, կենդանական: Զարդագիր՝ մարդագիր, կենդանագիր, թռչնագիր, հանգուցագիր: Գոյներ՝ դեղին, կարմիր, կապոյտի, կանաչի բոլոր երանգները, նարնջի, մանուշակագոյն, վարդագոյն, շագանակագոյն, օխրա, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար: Տարբեր էջերի (թ. 119-70-ի կենտրոնական մասում) մոմի եւ խոնաւութեան հետքեր, լուսանցակողերը սեւացած, թ. 14-22՝ ստորին եւ վերին եզրերը նորոգուած ԺԹ. դարի թղթով, մանրանկարները որոշակիօրէն խունացած, որոշ թերթերի եզրերին էջանիշ թելեր: 26ա, 28բ էջում եղծուած, անընթեռնելի-անընկալելի յիշատակարաններ, թ. 249 աւելացրած հետագայում՝ բովանդակութեան պակասը լրացնելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. 23բ-4ա Թուղթ Եւսեբեայ:

2. 24բ-8ա Համաբարբառ (նաեւ լուսանցային):

3. 30ա-110բ Աւետարան Մատթէոսի: 111ա Թելադրութիւն. «Մարկոս [ի-մա՛ Մատթէոս] աւետարանիչն յետ էլթն ամի վէրանալոյ Փրկչին գրէ...»:

4. 111բ-2բ Գլուխք: 114ա-65բ Աւետարան Մարկոսի (164բ-5բ Յարուցեալ Յիսուս): 165բ Թելադրութիւն. «Մարկոս աւետարանիչն աշակերտեալ Պետրոսի առաքելոյ գրեաց զիւր Աւետարանն...»:

5. 166ա-7բ Գլուխք: 170ա-261ա Աւետարան Ղուկասու: 261ա Թելադրութիւն. «Ղուկաս արուեստիւ բժիշկ գոլով, սա աշակերտացաւ Փրկչին...»:

6. 261աբ Նախադրութիւն: 261բ Գլուխք: 263ա-332բ Աւետարան Յոհաննու (331բ-2բ Իրք կնոջն շնացելոյ): 332բ Թելադրութիւն. «Յովհաննէս աւետարանիչն, որ եւ որդի Որոտման զվերինն որոտալով պատմեաց մեզ...»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 333ա Փա՛ռք անսկզբան եւ սկզբանն ամենայնի, անեղ էին եւ գոյացուցչին բնաւից, անվախճան եւ անսահման էացուցչին, սահմանիչ եւ կատարումն բոլոր էիցս, երիցս միակին, եզակի եւ միում աստուածութեանն, որ անշարժ գոլով՝ շարժէ զարարածս ի կեանս եւ ի փրկութիւնս, էիցս էակն, կենդանեաց կեանքն, որ անփոփոխ գոլով միշտ յէութեան, անեզրն եւ անվայրապակն, լրումն եւ բովանդակիչ ամենայնի եւ յամենեայնս է եւ յամենայնէ անհաս է, որպէս ի մասունս եւ ի բոլորս, եւ ինքն ո՛չ մասն եւ ո՛չ բոլոր, որպէս թէ զմասն եւ զբոլոր զամենայն ինքն ունելով եւ կրէ զամենայն բանիւ զաւրութեանն իւրոյ, գերալիր գոլով՝ ընու զամենայն, եւ անհաս է յարարածոց, որում բան եւ իմաստութիւն եւ լեզու տուեալ բոլոր էիցս՝ հանցուք զաւրհ/333բ/նութիւն եւ փառք Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ՝՝: Իսկ չորից աւետարանչացն խորհուրդ բազմաւրինակ իմն ցուցմամբ տեսանի, զի ոմանք ասեն, թէ չորից աւետարանչացն են աւրինակ չորք անկիւնք արարածոց՝ արեւելք, արեւմուտք, հիւսուս, հարաւ. պարտ է համասփիւռ քարոզել զԱւետարանն, իսկ ոմանց հաճոյ թուեցաւ ըստ չորից աւետարանչացն մշտահոս գետոցն յադենական յաղբիւրէն յառաջ խաղացեալ առ ի տիեզերաց ոռոգումն՝ Փիսոն, Գեհոն, Տիգրիս, Եփրատէս. եւ սոցա գոլով նմանապէս թուով ուռճացեալք, ի կենդանական աղբիւ-

ըէն առոգանել զպասքեալ միտս մարդկային բնութեանս, նոյն աւրինակ ըստ տեսութեանն Եզեկիելի /334ա/ քառակերպեան աթոռոյ՝ մարդ, առեւծ, եզն, արծիւ, զանմարմնոցն Տէր տեսանելով բազմեալ ի փառացն աթոռ, իմանալի ցուցմամբ զինամս բոլոր բնութեանս զակնարկումն, որ աստուածապէս եւ տիրաբար բերմամբ նշանակէ զլինելն առ ի հողածինս հրեղինացն, անմահից զմահկանացուս առնել հաղորդս եւ եւս ի դերակատար հանել ի փառս, ուստի եւ տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ քրիստոսասէր տանուտէր, ոմն ի լուսածնեալ զարմից սրբոյն Սիոնի, Յովաննէս անուն կոչեցեալ, զոր ի վաղուց հետէ ցանկայր այսմ աստուածախաւս սուրբ Աւետարանիս, զի հաւատարիմ տանուտէրն այս ետուր զսուրբ Աւետարանս գրել փափաքանօք եւ ո՛չ հասաւ տեսութեան սուրբ Աւե/334բ/տարանիս, եւ մեք[19] աւարտեցիք զսա յետ մեռանելոյ սորա, հրամանաւ հաւրեղբօր որդոյ սորա Մարտիրոսին: Արդ, յիշեցէ՛ք յերկնաթռիչ յաղաւթս ձեր զստացաւղ սուրբ Աւետարանիս զՅովաննէսն եւ զծնաւղսն իւր՝ զԲաղշաւն եւ զմեր յիշէն եւ զհաւրեղբայրն՝ զՄկրտիչն եւ զորդի Մկրտչին՝ զՄարտիրոսն: Յիշեցէ՛ք եւ Աստուած ողորմի ասացէ՛ք Յովանիսին եւ ամենայն արեան մերձաւորաց սորա. ամէն, զոր ճշմարիտ եւ աստուածն Բան միածին Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս ի վախճան աւուրցս այսոցիկ կատարեաց զնշանս եւ զարուեստ, որպէս զի որք ընթերցցին՝ ի միտ առցէն եւ ծանիցեն, թէ Տէր է, որ Մովսէսի հրամայեաց առնուլ գառն տարեւոր եւ յիշել զերախտիս աստուածութեանն, որ յԵգիպտոս: Արդ, կատարե/335ա/ցաւ աստուածախաւս եւ տիեզերաքարոզ Աւետարանս ի քաղաքիս, որ կոչի Հիզան, ընդ Հովանէաւ սուրբ Աստուածածնին [եւ] Սուրբ Յարութեան եւ [Սուրբ] Սարգիսի եւ որդոյն Մարտիրոսի եւ Գէորգեա, որ է սակաւ մի հեռի, եւ կաթուղիկոսութեան (կաթողիկոսի անունը չգրուած), ի թվ. ՉԾԶ. (1507). եւ մի՛ ոք իշխեսցէ զսա [գրաւել] կամ ծա[խել], ոք յանդրքնի ///ցս առնէ, նա պատիժն Յուդային առցէ. ամէն: Եւ արդ, գրեցաւ սա ձեռամբ մեղսամած եւ փծուն գրչի Յովանիսի եւ Մկրտչի. եւ մերոցս խոշորութեան եւ սխալանացս անմեղադի՛ր լերուք, զի կար մեր այս է: Արդ, կրկին անգամ յիշեցէ՛ք յաղաւթս ձեր զստացաւղ սուրբ Աւետարանիս զՅովաննէս եւ ամենեքեան Աստուած ողորմի՛ ասացէք ամենայն. եւ կացցէ սա ընդ իշխանութեան Յովաննէս քահանային եւ որդոյն՝ Մկրտչի. ամէն:

111ա Քրիստոս Աստուած, քո սուրբ աւետարանչիս բարեխաւսութեամբ ողորմեա՛յ ստացողի սուրբ Աւետարանիս Յովանիսին եւ ծնողաց իւրոց եւ ամենայն արեան մերձաւորացն. ամէն:

3. 16բ (ծաղկողի) Քրիստոս Աստուած, քո սուրբ մկրտութեամբդ լուա՛յ զմեղս իմ զանարժան ծաղկողիս:

---

19 Բուն գրչի՝Յովհաննէսի մահից յետոյ շարունակողն է, որի անունը մնում է անյայտ:

2. 22ա (սպացողի, խաչի ձախ եւ աջ թեւերի տակ) Յովաննէս՝ Աւետարանիս տէրն առաջի խաչին, '/ Մարտիրոսն է:

29բ [Վ]ահ դերեցայ զիս յէրակայ, / որ ի չարեաց ես խուլացայ, / աւրի յաւուր յորդ[ան]անայ, / թէ ելաֆին ու կաւ կուդայ, / աղաչեսցէք զմեզ ///այ (հաւանաբաբ անունը ջնջուած),/ յոր կորուսցէ Աստուած զնա / եւ զմեզ փրկէ ի ձեռաց նորա, / պեղծէ եւ ժողով նորայ:

113բ Որք հանգիպիք ի սայ հալէլ, / զՄկրտիչ ծաղկաւղս յիշել / առ սուրբ Աստուած մեր եւ ձեր, / եւ զողորմին դուք մեզ ասել, / եւ պարտ է մեզ զվարպետն յիշել, / որ խաչատուր անուն ասել, / 'ւ իմ չետեսեալ մարմնով նստել, / այլ աւրինակ ի նորայն ստուգել:

262բ Ո՜հ թէ քանի ցուրտ է, եղի ձոյն եւ կու աւերի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 169ա (1774 թ., անարուեստ բոլորգիր) Յիշեցէ՛ք ի Քրիստոս զԴարուն-նից Տէր Կարայպետ եւ Տէր Յակոբ եւ զիւրանաց ծնող՝ Տէր Նէրսէս եւ Ղու-մաշ եւ զիւրանաց կողակից՝ Գոհարն եւ զխաչբէկն եւ զիուրանցն որդիքն՝ զԱւէտիս եւ զՍահակն եւ զիւրանցն տայն արնիան մերձայուրն. ամէն, որ այս Աւետարան վաղրնջուց ժամանայակէ փրփրտեր էր, ետ կազմել. Աստու-ած զիւրանցն մեղքրն թողն[ո]ւ. ամէն, որ հանգիպի եւ կարգայ, լի բերա-նով եւ ուղիղ սրտու ողորմնի՛ այսէ, Աստուած իւր ողորմնի. ամէն. ի թվին ՌՄ. ու ԻԳ. (1774), Աստուած ուլնծ եկամ բարով վայելել ըտի. ձեռն տիրա-ցու Յարութին, տացէ. ամէն:

2. 335բ (1775 թ., անարուեստ չղագիր) Ի թվին [Ռ]ՄԻԴ. (1775) Տէր Կա-րապետն աշխատեցաւ:

ԸՆՏԱՆԵԿԱՆ-ՏԱՐԵԳՐԱԿԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. 23ա (1810 թ., անարուեստ նոտրգիր) Ես՝ Տէր Պետրոս օրհենեայ անա-ռակ որդոյ չաբաթոմ թվ. ՌՄԾԸ. (1810):

(1811 թ., անարուեստ նոտրգիր) Ես՝ Տէր Պետոս, ես՝ Տէր Պետրոս գնացի ի Ստամբոլ թվ. ՌՄԾԲ. (1803), եկայ ի Ստաբոլայ թվ. ՌՄԿ. (1811):

(1813 թ., անարուեստ նոտրգիր) Այն տարին, որ թա[ն]կուքեն արաց՝ կօտ հաց Դ. (4) ղորուշ. թվ. ՌՄԿԲ. (1813):

(1833 թ., անարուեստ նոտրգիր) Աստուած բաշխէ զՊողոս՝ որդի Մար-տիրոսին, որ ծենաւ ի մօրէն թվին ՌՄՁԲ.ին (1833):

(1849 թ., անարուեստ նոտրգիր) Այն տարիս, որ ես՝ Տէր Մովսէս, Տէր Պետրոսէս Լաթարցի օրհնվայ ի Սուրբ Էջմիածին, թվիս 1849-ին, յունիսի 12-ին:

2. 24ա (1788 թ., անարուեստ նոտրգիր) Ես՝ Տէր Պողոս էկա ի Լաթարն թուին ՌԲ. հարիւր ԼԷ.-ին (1788):

(1784 թ., անարուեստ նոտրգիր) Ես՝ Տէր Պողոս օրհնուա թուին ՌԲ. հարիւր ԼԴ.ին (1784):

3. 27բ (1801 թ., անարուեստ նոտրգիր) Թ. ՌՄԾ. (1801) ես՝ Տէր Պետրոս, որ:

4. 168ա (1774 թ., անարուեստ նոտրգիր) Ծաղկամ գիւղացի ես Տէր Յարութիւնն՝ Տէր Կարապետի որդին, առայ այս սուրբ Աւետարան ի Ցիզան քաղաքից՝ ի Տէր Յովանէսից, իմ հալալ վաստակօք եւ վասն զաւակաց իմոց եղիցի մինչ ի յաւիտեան ի յասկիս իմոյ ամի ազկական ՌԲ. հարիւր ԻԴ.ին (1774):

(1808 թ., անարուեստ նոտրգիր) Ես՝ Տէր Պողոս՝ Տէր Յարութենի որդի օրհնվայ ի Բաղէշ քաղաք Արմրտոլ վանկ, ՌՄԼԴ. (1804): Ես՝ Տէր Պողոս, տիրացու Պետրոս՝ որդիք Տէր Յարութենի եկանք Ծաղկամայ ի գիւղն Լաթար, որ է Մանձկերտ մահալ, եղեկան պասին ՌՄԼԷ. (1808):

(1809 թ., անարուեստ նոտրգիր) Ես՝ Տէր Պետրոս՝ Տէր Յարութենի որդին օրհնվայ ի սուրբ Կարապետ վանկ ձեռամբ Մարտիրոս եպիսկոպոսին թվին ՌՄԾԸ. (1809) անառակ որդոյ շաբաթ օր:

(1833 թ., շղագիր) Ես՝ տիրացու Մովսէս Տէր Պետրոսովս Լաթարայ եկանք Սպարկերտու երկիրն, երիցի ըսկիզբ բնակցանք ի Գեղարքունի մահալ, որ է Գօքչէն ի գիւղն Գեօզալդարէն թվին ՌՄՁԲ. (1833) եւ քսան ամաց էի եկայ, 25 ամացն պսակվայ:

(1849 թ., անարուեստ նոտրգիր) Ես՝ Տէր Մովսէս Տէր Պետրոսով օրհնվայ ի ժամանակ Ներսէս Կաթողիկոսին ձեռամբ ծաղկարար Սահակ եպիսկոպոսին ի Երիզան քաղաք Յոհանու եկեղեցին 1849 ամի տեառն յունիսի 12 օր:

(1848 թ., անարուեստ նոտրգիր) Աստուած բաշխէ, զՄկրտիչ Տէր Մովսէսով ծնաւ ի մօրէ 1848 ամի դեկտեմբերի 12 օրն: /168բ/

(1896 թ., անարուեստ նոտրգիր) Աստուած բաշխէ, զԿարապետ Տէր Մովսէսով ծնաւ ի մօրէ 1896 ամի յունվարի 25 օրն:

(1860 թ., անարուեստ նոտրգիր) Աստուած բաշխէ, զմէր զԴաւիթ Տէրն Մովսէսով ծնաւ ի մօրէն 1860 ամի մարտի 12:

5. 168բ (1945 թ., շղագիր) 1. Ռաֆիկ Մովսիսեան ծնվել է 1924 թ.:

2. Հրանդիկ Մովսիսեան ծնվել է 1926 թ.:

3. Սուրեն Մովսիսեան ծնվել է 1937 թ.:

Ռաֆիկ բանակ գնաց 1943 թ. սեկտեմբերի:

Հիշատակ Հրանդիկ Մովսիսյան:

1941 թ. յունիսի 22-ին Գերմանական պետութիւն պատերազմ սկսեց Սովետական միութեան դեմ: Այն ժամանակից նա սկսեց գրավել Սով. Հողը եւ ոչնչացնել ժողովուրդին մինչեւ 1943 թ.: 1944 թվին Անգլիան, միանալով Ռուսաստանի հետ, նա հետ շպրտեցին Գերմանիային, քաջարի Կարմիը

բանակի շնորհիվ վերցրվեց Բեռլին: Պատերազմ սկսվելուց 41 թ. ժողովուրդ, հատկապես Գյոքչան մատնվեց սովի, ոչինչացան հաց չլինելու պատճառով, կորան նաեւ երիտասարդներ, դաղթն սկսվեց մղվել դեպի Կարաբաղ, պատերազմի ժամանակ ոչինչացան, 1945 թ. մայիսի 9-ին վերջացավ պատերազմ, ժողովուրդի դրությունը սկսվեց լավանալ:

6. 262ա (1979 թ., շղագիր) Ռաֆիկ Վաղարշակի Մովսիսյան ծնվել է 1925 թ.: 1943 թ. սեպտեմբեր ամսի 28-ին մեկնեց Կարմիր բանակ, մասնակցել է Հայրենական պատերազմին եւ մինչեւ այժմ չի վերադարձել, չկա ոչ մի տեղեկություն:

Վաղարշակ Մկրտչի Պետրոսեան ծնուել է 1886 թ. եւ մահացավ 1954 թ. մարտի 29-ին առավոտվա ժամը 10-ին:

Ալխաս Խաչոյի Պետրոսյան ծնվել է 1899 թ. եւ մահացել է 1948 թ. հունվարի 1-ին:

(կարմիր թանաքով) Մկրտիչ Տեր-Պետրոսյան ունեցել է 2 տղա:

Վաղարշակ Տեր-Պետրոսյան 1886-1954:

Շավարշ Տեր-Պետրոսյան 1880-1945 թ:

Վաղարշակ ունեցել է 3 տղաներ: Ռաֆիկ ծնվել է 1925 թ., զոհվել է 1943 թ. Հայրենական մեծ պատերազմում: Հրանտ ծնվել է 1926-1960 թ., ավարտել է Երեւանի պետական համալսարան: Սուրեն ծնվել է 1937 թ., ավարտել է Երեւանի գյուղ. ինստիտուտը, աշխատանքը գրեցի 1979:

ՆՇՈՒՄՆԵՐ՝ 22բ՝ «Գաբրիէլ, կողքին վրացերէն հետագայ ձեռքով գրուած Գաբրիէլ հրեշտակապետ»:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբապատ կոնդակով ապրիլ ամսին

«**Սբ Ներսէս Շնորհալի**» շքանշանով պարգեւատրուել են.
Պաոլօ սրկ. Մկրտիչեան - ԱՄՆ Արեւմտեան թեմ
Գէորգ Ղազարեան – Ուկրաինայի թեմ

«**Օրհնութեան գիր**» է տրուել.
Գեղամ ծ. վարդապետ Զաքարեան - ԱՄՆ Արեւմտեան թեմ
Արշակ աւագ քահանայ Խաչատուրեան - ԱՄՆ Արեւմտեան թեմ
Արթուն քահանայ Սմբատեան - ԱՄՆ Արեւմտեան թեմ
Միքայէլ քահանայ Կիւրեղեան - ԱՄՆ Արեւմտեան թեմ
Վարդիդեր Տարմոյեան - Իրաքի թեմ
Սիրանուշ Խաչատուրեան - Իրաքի թեմ
Սերգէյ Պոնամարենկո -Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ
Լեոն Տէրտէրեան - Ուկրաինայի թեմ
Իւան Շելեպնիցկիյ - Ուկրաինայի թեմ
Պետրոս Գասիւկ - Ուկրաինայի թեմ
Վիկտոր Դաւիդովիչ - Ուկրաինայի թեմ
Նիկոլայ Խարաբարա - Ուկրաինայի թեմ
Իլիաս Շախմասազեան – Ուկրաինայի թեմ
Մարգար Մանուկեան - Ուկրաինայի թեմ
Գէորգ Մարգարեան - Ուկրաինայի թեմ
Վլադիմիր Կուլիշ - Ուկրաինայի թեմ
Պատգամաւորական ժողով - Աւստրալիայի թեմ
Մարի Նուբար ուսանողների տուն - Ֆրանսիայի թեմ

Լանջախաչի իրաւունք է տրուել.
Վարազ քահանայ Եապարեան – Ուկրինայի թեմ
Շնորհք քահանայ Չեքիջեան - Շուեցարիայի Հայոց թեմ

ՆԱԶԱՐ ԵՒ ԱՐՏԵՄԻՍ ՆԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ ՄԵԾԱՐՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 5-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապան բացման հանդիսավոր արարողություն եւ դիվանապան կառուցման բարերարներ տեր եւ տիկին Նազար եւ Արտեմիս Նազարյանների մեծարման հանդիսությունը:

Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ տեր եւ տիկին Նազար եւ Արտեմիս Նազարյանները եւ հանդիսության հրավիրյալները մուտք գործեցին դիվանապան շենք, ուր կատարվեց նորամուտի արարողություն, ապա դիվանապան սրահում գեղարվեստական հայտագրով հանդես եկան Էջմիածնի Հայորդյաց տան սաները:

Հավարտ համերգի Հայակական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ Պերճ Սեդրակյանը ներկայացրեց Նազարյան ամուսիններին՝ նշելով, որ 400 տարվա պատմություն ունեցող Նազարյանների ընտանիքն այսօր ի դեմս Նազար եւ Արտեմիս Նազարյանների շարունակում է ընտանեկան բարի ավանդույթը՝ բարեգործություններով զորակցելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, Մայր Հայրենիքին եւ Սփյուռքի տարբեր գաղթօջախներին:

Այնուհետեւ մեծարյալներին իր օրհնությունը եւ գնահատանքը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ անդրադառնալով Նազարյան ընտանիքի բարեգործ ոգուն եւ հայրենաշեն ձեռնարկներին: Նորին Սրբությունը նաեւ ընդգծեց նորակառույց դիվանապան կարեւոր նշանակությունը Մայր Աթոռի աշխատանքների արդյունավետ կազմակերպման գործում: «Ուրախ ենք, որ այդպիսի արժանավոր հայորդիներ ունենք, ովքեր գիտեն նվիրաբերել եւ ընծայաբերել Աստծուց իրենց պարգեւած բարիքներն ազգին, Հայրենիքին եւ Առաքելական Մայր Եկեղեցուն: Շնորհիվ այդպիսի զավակների է, որ շենանում, պայծառանում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը եւ ազգային մեր կյանքը»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքը հայտնեց շենքը նախագծած ամերիկաբնակ ճարտարապետ Արմանդ Ավագյանին, «Հորիզոն 95» շինարարական կազմակերպության տնօրեն Գագիկ Գալստյանին եւ Մայր Աթոռի Ճարտարապետական խորհրդի անդամներին:

Վերջում իրենց սրտի խոսքն ասացին Նազար եւ Արտեմիս Նազարյանները:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ Տ. Արսեն արք. Բերբերյանը, Տ. Եզնիկ արք. Պետրոսյանը, Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, Տ. Արշակ եպս. Խաչատրյանը, Տ. Արարատ եպս. Գալթագճյանը, ՀԲԸՄ վարչության անդամներ եւ բարերար հայորդիներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԸ ՆՇՎԵՑ «ԱԲՈՎՅԱՆ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ

Ապրիլի 7-ին ՀՀ արդարադատության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում անցկացվեց միջոցառում՝ նվիրված մայրության եւ գեղեցկության տոնին: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ միջոցառումը կազմակերպվել էր քրեակատարողական հիմնարկների հոգեւոր ծառայության պատասխանատու Արամ սարկավագ Սիմոնյանի եւ Նոր Նորքի Հայորդյաց տան սաների կողմից:

Հանդիսությունը բացվեց Տերունական աղոթքով, որից հետո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Տաճատ աբեղա Ծատուրյանն ընթերցեց Ամենայն Հայոց Հայրապետի շնորհավորական ուղերձը Ավետման տոնի առիթով:

Այնուհետեւ ժողովրդական պարային համարներով, ազգագրական երգերով եւ կրկեսային առանձին ներկայացումներով հանդես եկան Նոր Նորքի Հայորդյաց տան սաները:

Միջոցառման ավարտին ներկաներին իր օրհնության խոսքը բերեց Նոր Նորքի Ս. Սարգիս եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Նորայր ավագ քահանա Բաղդասարյանը՝ հորդորելով կանանց մշտապես վառ պահել եւ իրենց կյանքում իբրեւ օրինակ ունենալ Սուրբ Աստվածածնին:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, քրեակատարողական հիմնարկների վարչության պաշտոնյաներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԾԱՌԱՏՈՒՆԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՆՏԱՌՈՒՄ

Ապրիլի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մերձակայքում գտնվող Ներսիսյան անտառում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակի տնօրեն Դոֆինա Գերչեւայի, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի եւ «ԷԿԼՕՖ» հիմնադրամի մասնակցությամբ տեղի ունեցավ ծառատունկ:

Ծառատունկը նախաձեռնել էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակի, «Կլոր սեղան» հիմնադրամի եւ «Ծառատունկ Հայաստան» կազմակերպությունը:

Ծառատունկի կազմակերպիչները մասնակցեցին Մայր Տաճարում Ս. Պատարագի արարողությանը, հավարտ որի մեկնեցին Ներսիսյան անտառ, ուր Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ եւ Մայր Աթոռի միաբանների մասնակցությամբ կատարվեց Անդաստանի արարողություն:

Այնուհետեւ բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը, ապա «Կլոր

սեղան» հիմնադրամի տնօրեն Կարեն Նազարյանը հանգամանալից ներկայացրեց ծառայունկի այդ նախաձեռնությունը: Ըստ նրա՝ սույն ձեռնարկը մի մասն է «Կրոնները հանուն բնապահպանության» միջկրոնական ընկերակցության նախաձեռնության:

Բնապահպանությանը եւ երկրի կանաչապատման վերականգնմանն ուղղված ջանքերի կարեւորությանն անդրադարձավ նաեւ ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակի տնօրեն Դոֆինա Գերչեան:

Մինչ ծառայունկը ներկաներին իր օրհնությունը բաշխեց Վեհափառ Հայրապետը: «Փառք եւ գոհություն Աստծուն, որ տարիներ առաջ մեր ունեցած մտահղացումը՝ վերականգնել Ներսես Աշտարակեցի Ամենայն Հայոց Հայրապետի ձեռաց գործն հանդիսացող եւ մեզ համար նվիրական Ներսիսյան անտառը, այսօր կարողանում ենք կյանքի կոչել: Եկեղեցին իր առաքելության մեջ կոչում ունի նաեւ հոգատարություն ցուցաբերելու բնության նկատմամբ, որ արարչատեղծ է: Հոգատարություն ցուցաբերելու այս կոչումը մարդկությունը ստացել է Աստծուց: Այս ծառայունկը նման մի ձեռնարկ է: Մենք օրհնում ենք բոլոր նման ձեռնարկներն ու միջոցառումները եւ Աստծո զորակցությունն ենք հայցում նման միջոցառումների կազմակերպիչներին»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Ապա տեղի ունեցավ ծառայունկը, որն անցավ ներկաների մեծ խանդավառությամբ:

Ներսիսյան անտառը հիմանդրվել է Ամենայն Հայոց Ներսես Ե Աշտարակեցի Հայրապետի կողմից եւ ընդգրկել է ավելի քան 100 հեկտար տարածք՝ պարունակելով 30 հազարից ավելի ծառեր, հիմնականում թեղիներ, ինչի պատճառով հաճախ կոչվել է Ներսիսյան թեղուտ: Անտառը մեծապես տուժել էր Ի դարասկզբին եւ նույն դարավերջին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում իր աշխատանքն սկսեց «Կոմունիզմի «դասերն» Եկեղեցիներին» միջազգային գիտաժողովը: Գիտաժողովի բացումը կատարեցին Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը եւ Գերմանիայի Գոթինգենի համալսարանի պրոֆեսոր Յուկո Մարտիկայնեն՝ անդրադառնալով գիտաժողովի անցկացման մտահղացմանը: Կազմակերպիչները նաեւ շնորհակալություն հայտնեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ գիտաժողովի մասնակիցներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հյուրընկալելու համար: Ապա ներկայացվեց Ֆինլանդիայի Լյութերական Եկեղեցու առաջնորդ, Տուրկուի եւ Ֆինլանդիայի արքեպիսկոպոս Ջուկկա Պաարմայի ողերձը գիտաժողովի մասնակիցներին:

Նույն օրը բանախոսություններով հանդես եկան Հելսինկիի համալսարանից պրոֆ. Էինո Մուրտորինեն («Արեւելյան եւ Կենտրոնական Եւրոպայի Եկեղեցիներն ու կրոնները կոմունիստական ճնշման ներքո»), Ֆինլանդիայի Ավետարանական Լյութերական Եկեղեցու գիտահետազոտական կենտրոնի տնօրեն դոկտ. Կիմո Կարիանեն («Կրոնի ընդհանուր հասկացությունը եւրոսոցիալիստական երկրներում»), ՀՀ Ազգային արխիվի տնօրեն դոկտ.

Ամատունի Վիրաբյանը («Հայ Եկեղեցին Խորհրդային Հայաստանում 1920-1930 թթ.»), Գերմանիայի Գոթթինգենի համալսարանի պրոֆեսոր Յուկո Մարտիկայնեն («Բախում իսլամի եւ կոմունիզմի հետ. Ջանալով դասեր քաղել հայոց պատմության՝ 1300-ամյա դաժան փորձառություններից»), Կարլսրուի համալսարանի դասախոս դոկտ. Քեթրին Քանտերը («Ակտիվ ընդդիմության միջեւ՝ երկխոսություն եւ հավատարմություն, Եկեղեցիները Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում 1970-1989/90 թթ.»):

Երեկոյան Գեւորգյան հոգեւոր ճեմարանում գիտաժողովի մասնակիցները դիտեցին «Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց» ֆիլմը եւ ունկնդրեցին Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանի բանախոսությունը «Հայ Եկեղեցին Ի դարում» թեմայով:

Ապրիլի 14-ին գեկույցներով հանդես եկան պրոֆ. Յուկո Թալոնեն («Եկեղեցին կոմունիստական ռեժիմի ներքո. Լատվիայի Ավետարանական Լյութերական Եկեղեցու զարգացումը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո»), Արքեպիսկոպոս Յանիս Վանագսը («Պրոֆ. Թալոնենի հոդվածի մեկնաբանություն»), Լատվիայի Ավետարանական Լյութերական Եկեղեցու անդամ դոկտ. Ուգիս Սիլդեգսը («Գերտոյի ապտվածաբանությունը. Նիկոլայ Պլատեն որպես Խորհրդային Լատվիայի ապտվածաբան») եւ Մոսկվայի Պատրիարքության արտաքին հարաբերությունների բաժնի աշխատակից Տ. Ալեքսանդր քահանա Վասյուտինը («Ռուս Ուղղափառ Եկեղեցին Ի դարում. Խորհրդային ժամանակաշրջանից քաղած դասերը»):

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՄԱՄՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում տեղի ունեցավ վարդապետական թեզի բանավոր պաշտպանություն:

Մասնավոր վարդապետության աստիճանի համար թեզ էր ներկայացրել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Հովնան աբեղա Հակոբյանը («Թոնդրակեցվոց կեղծ աղանդը»):

Հանձնաժողովը, որի կազմում էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանն իբրեւ նախագահ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը, Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Մկրտիչ վարդապետ Պռոշյանը եւ տիար Պարգեւ Բարսեղյանը, քննելով ներկայացված թեզը, արտոնել էին բանավոր պաշտպանության:

Ապրիլի 20-ին Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տեղի ունեցավ մասնավոր վարդապետական աստիճանի տվչության արարողություն: Ձեռամբ Մայր Աթոռի կալվածոց տեսուչ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանի՝ Մայր Աթոռի միաբան Տ. Հովնան աբեղա Հակոբյանը, ստացավ մասնավոր վարդապետական չորս աստիճանները:

Տվչության արարողությանը մասնակցում էին Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանը, Մայր Աթոռի միաբաններ եւ հյուրեր:

Նույն օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Տ. Հովնան վարդապետ Հակոբյանին: Շնորհավորելով նորընծա վարդապետին եւ բերելով հայրական իր օրհնությունը՝ Նորին Սրբությունը Հայր Հովնանին շնորհեց վարդապետական լանջախաչ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ Ս. ՀՈՎՀԱՆ ՕՁՆԵՑԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇԻՐԻՄԻՆ

Ամեն տարի ապրիլի 17-ին Գուգարաց թեմը մեծ հանդիսավորությամբ նշում է Սուրբ Հովհան Իմաստասեր Օձնեցի հայրապետի ուխտի օրը:

Այս տարի եւս թեմական առաջնորդ Տեր Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի օրհնությամբ եւ առաջնորդությամբ հազարավոր ուխտավորներներ Օձունում մասնակցեցին սուրբի հիշատակությանը նվիրված Պատարագին եւ ապա այցելեցին Արդվի գյուղի բարձունքում գտնվող սուրբ Հայրապետի շիրիմին:

Վանաձորից, Սպիտակից, Ալավերդուց, Տաշիրից, Ստեփանավանից, Հաղպատից, Մարգահովտից, Երեւանից, Արարատից, Գյումրիից բազում ուխտավորներ՝ իրենց հոգեւոր հովիվների առաջնորդությամբ, առաջինը հանգրվանեցին Օձունի Ս. Աստվածածին եկեղեցում, ուր հաղորդությամբ մասնակից դարձան Սուրբ եւ Անմահ Պատարագին: Պատարագիչն էր Օձունի հոգեւոր հովիվ Տեր Վրթանես քահանա Բաղալյանը:

Հավարտ Պատարագի գյուղապետ Արսեն Տիգրանյանի կողմից հավատացյալներին բաժանվեց ուխտի մատաղ, ապա Օձունի կիրակնօրյա դպրոցի սաներն իրենց կատարումներով ելույթ ունեցան Օձնեցու արձանի մոտ: Թեմական առաջնորդը Պատարագի ավարտին եւ Սուրբի մատուռի մոտ իր հայրական օրհնությունն ու բարեմաղթանքները հղեց բոլոր ուխտավորներին:

Օձունից ուխտավորները մեկնեցին Արդվի, ուր ամփոփված է Սուրբի աճյունը: Սրբազան հոր գլխավորությամբ եւ հոգեւոր հայրերի մասնակցությամբ Սուրբի շիրիմին կատարվեց մաղթանքի արարողություն:

Ուխտագնացությանը մասնակցում էին նաեւ Գուգարաց թեմի Եկեղեցասեր երիտասարդաց միության անդամներ, տարբեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ուսանողներ եւ բազում հավատացյալներ:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Ապրիլի 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգստ-

յան արարողություն՝ ի հիշատակ ավիավթարի հետեւանքով զոհված Լեհաստանի Հանրապետության նախագահ Լեխ Կաչինսկու եւ նրա տիկնոջ Մարիա Կաչինսկու, Լեհաստանի պետական այրերի եւ եկեղեցականների:

Մինչ արարողության սկսվելը հանուն Ամենայն Հայոց Հայրապետի եւ Մայր Աթոռի միաբանության խոսք ասաց Մայր Աթոռի միաբան Տ. Փառեն եպս. Ավետիքյանը:

Արարողության ընթացքին հոգեւորականներն ու մյուս ներկաները իրենց աղոթքը բարձրացրեցին առ Բարձրյալն Աստված՝ հայցելով Երկնավորից հանգստություն զոհերի հոգիներին եւ մխիթարություն հարազատներին:

Հավարտ արարողության ներկաներին իր խոսքով դիմեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցություն հայտնելով լեհ ժողովրդին ու Լեհաստանի իշխանություններին: Հոգեհանգստին ներկա էին Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված օտարերկրյա դեսպաններ, դիվանագիտական առաքելությունների եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, Հայաստանի լեհ համայնքի անդամներ:

Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ ցավակցական գիր էր հղել Լեհաստանի Սեյմի նախագահ Բրոնիսլավ Կոմորովսկուն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՕԾՈՒԵՑ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱԼԼԷ ՔԱՂԱՔԻ «ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ» ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Շաբաթ եւ կիրակի, 17 եւ 18 ապրիլ 2010 թթ. տեղի ունեցաւ Գերմանիայի Հալլէ քաղաքի «Սուրբ Յարութիւն» հայկական եկեղեցու օրհութեան եւ օծման արարողութիւնը: Օծման արարողութիւնը հանդիսապետեց գերմանահայոց առաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Բէկչեանը՝ մասնակցութեամբ Երեւանի պետական համալսարանի Աստուածաբանական ֆակուլտէտի դեկան Տ. Անուշաւան եպս. Ժամկոչեանի:

Համաձայն Հայ Եկեղեցու կանոններին՝ սրբազան հայրերի գլխաւորութեամբ, եկեղեցականաց դասն ու ժողովուրդը խմբուեցին եկեղեցու բակում եւ «Բա՛ց մեզ, Տէր» շարականի երգեցողութեամբ կատարուեց Դռնբացէքի արարողութիւն: Այնուհետեւ հոգեւորականաց դասն ու ժողովուրդը մուտք գործեցին եկեղեցի: Սաղմոսների ընթերցանութեամբ եւ շարականների երգակցութեամբ եկեղեցու Սուրբ Խորանը նախ լուացուեց գինով եւ ջրով: Այնուհետեւ գոյգ սրբազանները Սրբալոյս Միւռոնով օծեցին Եկեղեցու սուրբ սեղանը, սիւները, մկրտութեան սուրբ աւազանը եւ սրբանկարները:

Արարողութեան աւարտին առաջնորդ սրբազանը հայերէնով եւ գերմաներէնով իր խօսքն ուղղեց ներկաներին: Գարեգին Սրբազանն իր հոգեկան մեծ ուրախութիւնն արտայայտելուց յետոյ շնորհակալական խօսք ուղղեց Հալլէի եւ շրջակայքի ողջ հայութեանը, որոնք թէեւ փոքրաթիւ, այնուհանդերձ ամէն ջանք ներդրեցին, որ ունենան իրենց սեփական եկեղեցին եւ համայնքային կենտրոնը, որոնք էլ այսօր նորոգուած ու բարեգարդուած իր դռներն են բացում հաւատացեալ մեր ժողովրդին: Առաջնորդ Սրբազանը շնորհակալութեան մասնա-

ւոր խօսք ուղղեց համայնքի առաջին հոգեւոր հովիւ Անուշաւան եպս. Ժամկոչեանին որն իր հովւութեան տարիներին մեծապէս նպաստեց երիտասարդ այս համայնքի կազմաւորմանն ու կազմակերպմանը: Օծման արարողութեանը բացի Անուշաւան սրբազանից Վեհափառ Հայրապետի տնօրինութեամբ մասնակցում էր նաեւ Տ. Արիստակէս աբդ. Այուազեանը, որը նոյնպէս շուրջ երկու տարի եղել է այս համայնքի հոգեւոր հովիւը:

Առաջնորդ Սրբազանը մասնաւորապէս նշեց. «Ժողովրդական խօսքն ասում է՝ դպրոց մը բացողը բանտի դուռ մը կը գոցէ, իսկ եկեղեցու բացումով կը գոցուին դռներն անհաշտութեան եւ անհամերաշխութեան, չարի եւ անապտուածութեան: Ես կը մաղթեմ, որ մեր ժողովուրդի զաւակներուն համար այս եկեղեցին դառնայ աղօթքի տուն, Աստուծոյ եւ մարդուն հանդիպավայր, բայց նաեւ մեր ինքնութիւնն ու մշակոյթը պահպանելու եւ յաջորդ սերունդներուն փոխանցելու ամուր կռուան ու յենարան»:

Օծման արարողութիւնից յետոյ յարակից համայնքային կենտրոնի մէջ Սաքսոնիա-Անհալթի հայ համայնքի վարչութեան կազմակերպմամբ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որի ընթացքում ողջոյնի եւ շնորհաւորանքի խօսքով հանդէս եկան Գերմանիայում ՀՀ դեսպան պրն Արմէն Մարտիրոսեանը, Սաքսոնիա-Անհալթ նահանգի կաթողիկէ առաջնորդ Գերհարդ Ֆայգէ եպիսկոպոսը, Աւետարանական Եկեղեցու երկրամասային առաջնորդ Մարթին Հերշէ եպիսկոպոսը, Հալլէի քաղաքապետուհու ներկայացուցիչ պրն. Թոբիաս Քոգգէն (գլխաւոր քաղաքապետուհի տիկ. Դագմար Սցարադոսը յարգելի պատճառով չկարողացաւ ներկայ լինել հանդիսութեանը), նահանգային իշխանութիւնների ներկայացուցիչ պրն. Բերնհարդ Բէօնիշը, Սաքսոնիա-Անհալթի միջեկեղեցական խորհրդի ատենապետ վերապատուելի Եուրգէն Դիտրիխը:

Բացի վերոյիշեալներից օծման արարողութեանը ներկայ էին նաեւ նահանգային եւ քաղաքային իշխանութիւնների, քոյր եկեղեցիների, ինչպէս նաեւ թեմական եւ գերմանահայ տարբեր համայնքների ներկայացուցիչներ: Ընդունելութեան աւարտին Սերովբէ վրդ. Իսախանեանը գերմանահայոց առաջնորդարանի եւ համայնքի վարչութեան կողմից շնորհակալութիւն յայտնեց բոլորին՝ գերմանահայութեան համար այս երջանիկ ու պատմական իրադարձութիւնը միասին ապրելու եւ վայելելու առիթն ընծայելու համար:

Յաջորդ օրը նորաւոծ եկեղեցու մէջ ձեռամբ Տ. Անուշաւան եպս. Ժամկոչեանի մատուցուեց անդրանիկ Ս. Պատարագը: Քարոզի ընթացքում Անուշաւան սրբազանը նախ ներկաներին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի հայրական օրհնութիւնները, ապա յայտնեց իր անսահման ուրախութիւնը, որ Աստուած իրեն հնարաւորութիւն ընձեռեց այս հիասքանչ առիթով ընկերակից լինելու Գարեգին սրբազանին եւ միասին կատարելու եկեղեցու օծումը ու նաեւ արժանի դառնալու անդրանիկ Ս. Պատարագը մատուցելու նորաւոծ եկեղեցու մէջ:

Յետ Ս. Պատարագի Հալլէ քաղաքի «Մարիթիմ» հիւրանոցի մէջ համայնքի վարչութեան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ պաշտօնական ճաշկերոյթ, որին ներկայ գտնուեցին շուրջ երկու հարիւր հրաւիրեալներ: Բացման խօսքով հանդէս եկաւ համայնքի վարչութեան ատենապետ պրն. Յարութիւն Մանուկեանը: Ճաշկերոյթի ընթացքին ասմունքով ու պարերով, ջութակի ու դաշնամուրային կատարումներով հանդէս եկան համայնքի միօրեայ դպրոցի աշակերտներն ու հայ ուսանողներ:

Առաջնորդ սրբազանը առաջնորդութեան օրհնութեան գրերով պատուեց Գերասիմ Բարսեղեան, Համօ Գրիգորեան եւ Լարիսա Թովմասեան անձերը, որոնք իրենց անձնական ու դրամական մեծ մասնակցութիւնն էին բերել եկեղեցու եւ համայնքային կենտրոնի նորոգման աշխատանքներին:

* * *

«Սուրբ Յարութիւն» եկեղեցին կառուցուել է որպէս գերմանական կաթոլիկ եկեղեցի: Եկեղեցու բացումը տեղի է ունեցել 1901 թ. մայիսի 27-ին եւ կոչուել է «Սուրբ Մարիամ» եկեղեցի: Եկեղեցին աւելի քան 100 տարի ծառայել է Հալլէ քաղաքի Ամմենդորֆ թաղամասի գերմանական-կաթոլիկ համայնքին:

Այս համայնքը 1984 թուականին մերձակայ մի այլ վայրում կառուցել է «Սուրբ Մարիամ» անունով մի նոր եւ աւելի մեծ եկեղեցի: Դրանից յետոյ հին եկեղեցին վերանուանուել է «Սուրբ Հեդվիգ» եկեղեցի եւ շուրջ երկու տասնամեակ շարունակել է ծառայել որպէս համայնքի աղօթատեղի: 2005 թ. վերջին այն պաշտօնապէս փակուել է:

Մէկ տարի անց Գերմանիայի Հայոց Առաջնորդարանն ու Սաքսոնիա-Անհալթի հայ համայնքը գնել են այս եկեղեցին իր յարակից շինութեամբ, որոնք առաջնորդարանի եւ համայնքի ջանքերով նորոգուել են: Յարակից շինութիւնը ծառայում է որպէս հովուատուն եւ համայնքային հաւաքատեղի: Համայնքի շաբաթօրեայ դպրոցի դասընթացները նոյնպէս տեղի են ունենում այս շէնքում:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ՀԱՅՈՑ ԳԵՐՄԱՆԻՈՅ

ՆՇԱՆԱԿՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը նշանակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Կալվածոց տեսուչ:

Կալվածոց տեսչությունն իրականացնում է Մայր Աթոռի կալվածքների հոգատարությունը, կառավարումն ու տնօրինությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

СОДЕРЖАНИЕ

РЕДАКЦИОННОЕ.....3

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ. БЛАГОСЛОВИТЕЛЬНЫЕ ГРАМОТЫ

Наставление Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян по случаю праздника Святого Воскресения.....6

Поздравительное послание Его Святейшества Верховного Патриарха и Католикоса всех армян Гарегина Второго по случаю праздника Благовещания.....10

Речь Его Святейшества Верховного Патриарха Гарегина II, в честь памяти жертв геноцида армян.....11

Послание благословения и признательности Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян Господину Эдуарду Тер-Казаряну по поводу вручения ордена "Св. Саак-Св. Месроп".....13

Послание благословения и признательности Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян Господину Зорию Балаяну по поводу вручения ордена "Св. Саак - Св. Месроп".....15

ОФИЦИАЛЬНОЕ

Праздник Святого Воскресения в Первопрестольном Святом Эчмиадзине.....17

Заседание Верховного Духовного Совета в Первопрестольном Святом Эчмиадзине.....18

Католикос всех армян дал аудиенцию заместителю премьер-министра Туркмении.....19

Католикос всех армян дал аудиенцию участникам международного симпозиума.....20

Его Святейшество дал аудиенцию лидеру Христиано-демократической фракции парламента Словакии.....21

Епископское рукоположение в Первопрестольном Святом Эчмиадзине.21

24 апреля - день памяти жертв Геноцида армян.....27

Его Святейшество Гарегин II, Католикос всех армян принял участие в саммите религиозных лидеров в Баку.....27

РЕЛИГИОЗНЫЕ ИССЛЕДОВАНИЯ

ДИАКОН АРТУР САРГСЯН - Эсхатологическая проповедь Св. Иоанна Крестителя и крещение Иисуса Христа.....33

ИЕРОМОНАХ ТИРАН ПЕТРОСЯН - История армянского календаря с начала до реформы Католикоса Симеона Эриванци.....49

ИСТОРИКО - ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

АВЕТИС АРУТЮНЯН - Продовольственная политика Ванской губернии (май-июль 1915 г.).....56
АКОП ПЕТРОСЯН - Вопрос индоктринации в повести Сейлана ''Айта-Фират''.....63
ЛИЛИТ АКОПЯН - Стилистические обработки сборника Даниела Варужана ''Сердце нации''.....70
ХАЧИК САМВЕЛЯН – Из хронологии жизни и деятельности Комитаса.....76
АРШАК БАЛЯН - Первый поход Араратского отряда.....85
ВАРУЖАН ПОГОСЯН - Преданные армянскому народу европейцы по оценке Католикоса Геворга V.....95

СООБЩЕНИЯ

ИЕРОМОНАХ СМБАТ ПОГОСЯН – Заха.....102
ГАЯНЕ МЕЛКОНЯН - Архиепископ Сион Манукян.....112

РЕЦЕНЗИЯ: БИБЛИОГРАФИЯ

АРШАК МАДОЯН - Докт. проф. Георг Хрлопян, Геноцид.....116
ТАТЕВИК МАНУКЯН - Варденикское ''Шек'' Евангелие.....122

ЦЕРКОВНЫЕ НОВОСТИ.....138

"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY REVIEW OF
HOLY ETCHMIADZIN

ETIDORIAL..3

PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING
Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the feast of Christ's Holy Resurrection....6
Message of congratulation of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the feast of Annunciation....10
Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the Commemoration Day of the Armenian Genocide....11
Letter of blessings and appreciation of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians to Mr. Edward Ter - Ghazaryan on the occasion of his decoration with the medal of "St. Sahak - St. Mesrop"....13
Letter of blessings and appreciation of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians to Mr. Zory Balayan on the occasion of his decoration with the medal of "St. Sahak-St. Mesrop"...15

PONTIFICAL AUDENCES, COMMUNICQUES AND EVENTS
The feast of Easter in the Mother See of Holy Etchmiadzin....17
Meeting of the Supreme Spiritual Council in the Mother See of Holy Etchmiadzin....18
Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the Deputy Prime Minister of Turkmenistan....19
Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the participants of the international conference....20
Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the leader of Christian-Democratic Party of the Parliament of Slovakia....21
Episcopal ordination in the Mother See of Holy Etchmiadzin....21
April 24 – Commemoration Day of the Armenian Genocide....27
His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, participated in the World Summit of Religious Leaders in Baku....27

RELIGIOUS STUDIES
DEACON ARTHUR SARKISSYAN – The eschatological preaching of John the Baptist and the baptism of Jesus Christ....33
REV. FR. TIRAN PETROSSYAN – The history of the Armenian Feast Calendar from its origin to the reform made by Catholicos Simeon of Yerevan....49

HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES
AVETIS HAROUTIOUNYAN – Food strategy of Van province (May-July of 1915)....56
HAKOB PETROSSYAN – The issue of apostasy in the "Hayta-Firat" novel by Seylan....63
LILIT HAKOBYAN – The linguistic-stylistic elaborations of the "Heart of the Tribe" work-selection by Daniel Varouzhan....70
KHACHIK SAMVELYAN – From the chronicles of Komitas' life and works....76
ARSHAK BALYAN – The first march of the Araratian detachment....85
VAROUZHAN POGHOSSYAN – The European devotees of the Armenian nation by Catholicos Gevork V....95

ESSAYS AND NOTES
REV. FR. SMBAT POGHOSSYAN – Zagha....102
GAYANE MELKONYAN – Archbishop Sion Manoukian....112

LITERARY REVIEW
ARSHAK MADOYAN – Prof. Dr. Gevork Kherlopian: Genocideology....116
TATHEVIK MANOUKYAN – "Shek" Gospel of Vardenik....122

Brief Church News....138

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ....3

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը Քրիստոսի Սուրբ Յարութեան տօնի առիթով....6

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհաւորական ուղերձը Աւետման տօնի առիթով....10

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի խոսքը Հայոց ցեղասպանության հիշատակի օրվա կապակցությամբ....11

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեան եւ գնահատանաց գիրը Տիար Էդուարդ Տէր-Ղազարեանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգեւատրուելու կապակցութեամբ....13

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեան եւ գնահատանաց գիրը Տիար Զօրի Բալայեանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգեւատրուելու կապակցութեամբ....15

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Սուրբ Հարության տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում....17

Գերագոյն հոգեւոր խորհրդի ժողով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում....18

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Թուրքմենստանի փոխվարչապետին....19

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց միջազգային գիտաժողովի մասնակիցներին....20

Վեհափառ Հայրապետն ընդունեց Սլովակիայի Խորհրդարանի Քրիստոնեա-դեմոկրատական խմբակցության առաջնորդին....21

Եպիսկոպոսական ձեռնադրություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում....21

Ապրիլի 24՝ Հայոց եղեռնի զոհերի հիշատակի օր....27

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Բաքվում մասնակցեց կրոնապետների համաշխարհային գագաթնաժողովին....27

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐԹՈՒՐ ՄԱՐԿԱՎԱԳ ՄԱՐԳԱՅԱՆ - Ս. Հովհաննես Մկրտիչի վանքաճանաչական քարոզչությունը եւ Հիսուս Քրիստոսի մկրտությունը....33

Տ. ՏԻՐԱՆ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ - Հայոց Տոնացույցի պատմությունը սկզբնավորումից մինչեւ Սիմեոն Երեւանցի Կաթողիկոսի բարեփոխումը....49

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՎԵՏԻՍ ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - Վանի ճակատագրության պարենային քաղաքականությունը (1915 թ. մայիս - հուլիս)....56

ՅԱԿՈԲ ՊԵՏՐՈՍԵԱՆ - Դաւանափոխութեան հիմնախնդիրը Սէյլանի «Հայթա-Ֆիրատ» վի պակում....63

ԼԻԼԻԹ ՆԱԿՈԲՅԱՆ - Դանիել Վարուժանի «Ցեղին սիրտը» ժողովածուի լեզվաոճական մշակումները....70

ԽԱՉԻԿ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ - Կոմիտասի կեանքի եւ գործունէութեան տարեգրութիւնից....76

ԱՐՇԱԿ ԲԱԼԵԱՆ - Արարատեան ջոկատի առաջին երթը....85

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ - Հայ ժողովրդի եւրոպացի նվիրյալները՝ Գեորգ Ե Կաթողիկոսի գնահատմամբ....95

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Տ. ՍՄԲԱՏ ԱԲԵՂԱ ՊՈՂՈՍՅԱՆ - Զաղա....102

ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ - Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան....112

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԵԱՆ - Փրոֆ. դոկտ. Գէորգ Խրլոպեան, Ցեղասպանագիտութիւն....116

ՏԱԹԵՒԻԿ ՄԱՆՈՒԿԵԱՆ - Վարդենիկի Ծէկ Աւետարանը....122

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ....138

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԵ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ»
ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала “Эчмиадзин”.
Republic of Armenia, Etchmiadzin, Redaction of Review “Etchmiadzin”.

էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com

ԴԱՍԻՉ՝ 77764

Սպորագրուած է տպագրութեան՝ 21.08.2010թ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ